

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

1801 – 1850

Գիրքն ընդգրկում է XIX դարի առաջին կեսի գրական-հասարակական և պատմական անցքերը, կապված հայ նոր գրականության զարգացման ընթացքի հետ: Նշված են գրական գործիչների կյանքի կարևորագույն տարեթվերը, գրական-մշակութային կազմակերպությունները, պարբերական մամուլն ու գրքերի հրատարակումները:

Ներկա հատորը ընդգրկում է 1801-1850 թթ. գրական-մշակութային կյանքը Հայաստանում ու հայկական համայնքներում, և այդ կյանքի հետ առնչվող պատմա-քաղաքական, հասարակական կարևոր իրադարձությունները: Որոշ իմաստով սույն ժամանակագրությունը կարելի է համարել հայ նոր գրականության սկզբնավորման, ձևավորման ու զարգացման պատմություն՝ թվերի ու փաստերի լեզվով: Հատորում տեղ են գտել համառոտ, բայց կարևոր տեղեկություններ գրական-մշակութային գործիչների մասին, ժամանակի պարբերական մամուլը, հրատարակված գրականությունը, ուսումնա-կրթական ու հասարակական կազմակերպությունները, պատմա-քաղաքական էական դեպքերը:

Գրական-մշակութային գործիչներից աշխատել ենք ընդգրկել ոչ միայն նշանավոր դեմքերին, այլև «երկրորդական» անձանց, որոնց ավանդը հայ գրականության համընդհանուր գանձարանը անհամեմատ ավելի համեստ է: Վերջիններիս մասին համապատասխան փաստեր ու տեղեկություններ գտնելու համար պահանջվել է երկարատև որոնումներ կատարել, թերթել բազմաթիվ գրքեր, տարեգրություններ, պարբերականներ, օրացույցներ, այլևայլ տեղեկատու ձեռնարկներ և ուղեցույցներ: Գործը բարդանում է նաև նրանով, որ «երկրորդական» դեմքերի մեջ կան և այնպիսիները, որոնք մասնագիտությամբ անմիջապես չեն առնչվում գրականության

* «Հայ նոր գրականության ժամանակագրության» առաջին հատորի ներկայացված էլեկտրոնային տարբերակում ներգրավված է միայն փաստագրական նյութը: Մեջբերումները միտումնավոր կերպով դուրս են թողնված, էլեկտրոնային ծավալը խնայելու նպատակով:

հետ (բժիշկ, իրավաբան, գյուղատնտես և այլն), բայց չեն զլացել կատարելու նաև «գրականության մշակի սև ու պատվավոր գործը» (Լեո): Բոլոր գրական-մշակութային գործիչները դասավորված են ժամանակագրական կարգով, ըստ ծննդյան թվականների: Սակավաթիվ մի քանի անձինք, որոնք ծնվել են XVIII դարում, սակայն գործել են հիմնականում XIX դարի սկզբներին և այդ ժամանակ էլ մահացել են, – նշված են ըստ մահվան թվականների: Տրվում է գործչի ծննդյան տարեթիվը, ամիսն ու օրը, ծննդավայրը, հայ մշակույթի հետ ունեցած առնչությունը (արձակագիր, բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, խմբագիր, գրական-մշակութային գործիչ և այլն), գրական կեղծանունը կամ կեղծանունները, ինչպես նաև մահվան տեղը, ամիսն ու օրը: Հիշյալ բնույթի նշումները կատարված են հիմնականում հին տոմարով, որը, ինչպես հայտնի է, XX դարում տալիս է 13 օրվա տարբերություն, XIX դարում՝ 12, XVIII դարում՝ 11 օրվա և այսպես յուրաքանչյուր նախորդող դարում մեկական օր պակաս: Այն դեպքում, երբ տվյալ անձնավորության ծննդյան կամ մահվան վայրը ստույգ հայտնի չէ և կարող է տարակարծությունների տեղիք տալ (Եմինիկ, Պաշպալով, Հնչեշտ, Թալաս, Լոսքվից, Պրուսա և այլն), փակագծերում նշել ենք այն շրջանը, անհրաժեշտության դեպքում՝ նաև այն երկիրը, որի մեջ մտնում է տվյալ բնակավայրը կամ քաղաքը: Եթե այս կամ այն գործիչը ծնվել և մահացել է միևնույն վայրում, իսկ այդպիսիք շատ էլ հազվագյուտ չեն, ապա ավելորդ կրկնությունից խուսափելու համար նշել ենք միայն ծննդյան վայրը: Եթե հատկապես նշված չէ, թե տվյալ անձնավորությունը որտեղ է վախճանվել, ապա պետք է եզրակացնել, որ նա վախճանվել է այնտեղ, որտեղ որ ծնվել է: Եթե հիշյալ կարգի նշումներից որևէ մեկը բացակայում է (այդ հատկապես վերաբերում է ծննդյան և մահվան թվականների հետ կապված մանրամասնություններին), նշանակում է ավելին անել մեզ չի հաջողվել: Այն դեպքում, եթե տվյալ փաստի կամ երևույթի մասին ընդհանրապես չի հաջողվել հավաստի տվյալներ գտնել (տե՛ս 1843 թ. մայիս), – հարցական նշան (?) ենք օգտագործել:

Կրոնական միաբանության անդամ հանդիսացող անձանց մասին փաստական տեղեկություններ հաղորդելիս (խոսքը հատկապես վերաբերում է Էջմիածնի, Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի և այլ միաբանություններին), նշել ենք նաև նրանց կրոնական

աստիճանները (վարդապետ, սարկավագ, քահանա): Բանն այն է, որ վերջիններս պարբերականներում տպագրված իրենց գործերը բազմիցս ստորագրել են ոչ թե անուն-ազգանունով, այլ անունով և կրոնական աստիճանով: «Արարատ»-ում, «Միոն»-ում և այլուր ինչքան ասեք կարելի է գտնել հոդվածներ, որոնք ստորագրված են, օրինակ, «Արիստակես արքեպիսկոպոս», «Վահան վարդապետ», «Գրիգոր եպիսկոպոս», «Արսեն քահանա» և այլն: Հասկանալի է, որ եթե հիշյալ անձինք նշվեին միայն անուն-ազգանունով, ապա աշխատությունից օգտվողի համար դժվար կլիներ կռահել, որ Արիստակես Սեդրակյանը նույն Արիստակես արքեպիսկոպոսն է, Վահան Բաստամյանը՝ Վահան վարդապետը, Գրիգոր եպիսկոպոսը՝ Գրիգոր Տեր-Մաթևոսյանը, Արսեն քահանան՝ Մխիթարյան միաբանության միաբան Արսեն Բագրատունին և այլն: Սա էլ, իր հերթին, նորանոր շփոթությունների պատճառ կդառնար: Սրա հետ սերտորեն առնչվում է նաև մի ուրիշ երևույթ, որը դարձյալ չէր կարելի աչքաթող անել: Կրոնական միաբանության անդամ լինելը զուտ պայմանական, կամ տեղագրական հասկացողություն չէ: Այդ նախ և առաջ որոշակի ձևավորված աշխարհայացք է, մտածողության սիստեմ, կարծիքների ու գնահատությունների ինքնուրույն եղանակ: Այսպես, երբ անցյալ դարի կեսերին Գարիբալդին հաղթական արշավով անցավ ամբողջ Իտալիայի վրայով, Վենետիկի Մխիթարյանները Իտալիայի ազգային հերոսի և նրա սխրանքների մասին խոսում էին առհասարակ սառը տոնով և նույնիսկ որոշ բացասական երանգով, որովհետև վերջինս իր հաղթարշավների ընթացքում ցրում էր նաև կրոնական-կաթոլիկական հաստատությունները: Էջմիածնի միաբանությունն, ընդհակառակը, գովաբանելով Գարիբալդիի գործունեությունը, գտնում էր, որ իր ժողովրդին միավորելու ամենաբանական եղանակը «գարիբալդիական» ձևն է, հետևաբար՝ հային էլ անհրաժեշտ են իր գարիբալդիները: Եվ վերջապես երրորդ՝ Երուսաղեմի միաբանությունը այդ հարցին անդրադառնալիս ցուցաբերում էր անտարբեր վերաբերմունք: Հիշյալ օրինակները, իսկ այդպիսիք բազմաթիվ են, հստակորեն ցույց են տալիս այն մտայնությունները, որոնց, իրենց տարբեր հասարակական-քաղաքական բնույթի հետևանքով, զինվորագրված էին հայ կրոնական կազմակերպությունները և նրանց մեծ ու փոքր ներկայացուցիչները: Այս պատճառով էլ,

անդրադառնալով կրոնական աստիճան ունեցող մշակութային գործիչներին, մյուս փաստերից բացի, նշել ենք նաև տվյալ միաբանությանն անդամագրվելու տարին, հնարավորության դեպքում նաև ամիսն ու օրը:

1801-1850 թթ. ընթացքում հրատարակված հայկական պարբերականների հիշատակումը մեծ դժվարությունների հետ չկապվեց: Դրա կարևոր պատճառներից մեկն այն է, որ հիշյալ ժամանակահատվածում թերթեր ու ամսագրեր անհամեմատ ավելի քիչ են լույս տեսել, քան, ասենք, դարի երկրորդ կեսին, և սա ինչ որ չափով հեշտացնում էր նրանց հավաքման, բնութագրման և ներկայացման գործը: Եվ երկրորդ, որ ավելի կարևոր է, նախորդները այս բնագավառում բավական լայն ու համակողմանի գործունեություն էին ծավալել և կարողացել էին համեմատաբար գոհացուցիչ մակարդակ ապահովել: Հայ պարբերականների ուսումնասիրությանը նվիրված գործերից ուշագրավ է Գրիգորիս Գալեմքյարյանի «Պատմություն հայ լրագրության» (Վիեննա, 1893, 226 էջ) աշխատությունը, ուր հեղինակը ըստ ժամանակագրական հաջորդականության դաստասել է սկզբից (1794) մինչև XIX դարի 60-ական թթ. հրատարակված մեր բոլոր թերթերն ու ամսագրերը և արել իր դիտողություններն ու նկատումները, որոնք զուրկ չեն հետաքրքրությունից: Ձեռքի տակ ունենալով Վիեննայի Մխիթարյան միաբանության պարբերականների հարուստ հավաքածուները, Գալեմքյարյանը կարողացել է արժեքավոր մանրամասներ հաղորդել նաև այնպիսի հրատարակությունների մասին («Եղանակ բիզանդեան-բազմավեպ», Փարիզի «Արևմուտք»-ի պակասող համարներ), որոնց վերաբերյալ որևէ ուրիշ տեղեկություն առ այսօր հայտնի չէ: «Պատմություն հայ լրագրության»-ը, անկասկած, կդառնար իր տեսակի գործերի մեջ աչքի ընկնողներից մեկը, եթե հեղինակը կարողանար այն ավարտին հասցնել: Ցավոք, հրատարակված է աշխատության առաջին հատորը միայն, իսկ երկրորդ կամ հաջորդ հատորները լույս չեն տեսել:

Գալեմքյարյանի գրքի այդ պակասող մասը ինչ-որ չափով ասես գալիս է լրացնելու Մկրտիչ Պոտուրյանի «Հայ մամուլը տասնևհինգ տարվան մեջ» (Վենետիկ,

1909, 302 էջ) աշխատությունը, որն ընդգրկում է 1894-1908 թթ. ժամանակահատվածը և կազմված է նախորդի ձևով ու սկզբունքներով:

Ուշագրավ է Գարեգին Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը (Պատմական տեսություն)», Ալեքսանդրապոլ, 1895, 570 էջ և «Հայոց պարբերական մամուլը (Լիակատար ցուցակ)», Երևան, 1934, 228 էջ աշխատությունները, որոնց դերն ու նշանակությունը հայ պարբերական մամուլի պատմության գիտական ուսումնասիրության բնագավառում հազիվ թե հնարավոր լինի գերազնահատել:

Եվ վերջապես, արդեն մեր օրերում, հրատարակվեցին Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» սովորաձավալ աշխատության առաջին (Երևան, 1956, 498 էջ) և երկրորդ (Երևան, 1960, 636 էջ) հատորները, որտեղ առաջին անգամ փորձ է արվում գիտական վերլուծության ենթարկել հայ պարբերական մամուլի անցած ամբողջ պատմությունը, սկսած ամենասկզբնական ժամանակներից մինչև XIX դարի վերջը: Առաջին և երկրորդ հատորները, չնայած որոշ վիճելի դրույթներին, ցույց են տալիս, որ հեղինակը գովելի բժախնդրությամբ կարողացել է ընթանալ վերոհիշյալ ուղիով և հանգել է ինքնատիպ ու ուշագրավ եզրակացությունների: Եվ երբ ավարտվեն «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության»-ը (ըստ հեղինակի, աշխատությունը ունենալու է նաև երրորդ հատոր, ըստ որում՝ երկու գրքից), հայ մշակույթն, անշուշտ, կհարստանա հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված մի նոր աշխատությամբ:

Չհաշված այլևայլ մեծ ու փոքր գրքույկները, զանազան տեղեկատվական բնույթի աղբյուրները՝ հիմնականում սրանք են եղել այն աշխատությունները, որոնցից օգտվել ենք մենք, աշխատելով, իհարկե, ըստ հնարավորության, խուսափել նրանց թույլ տված կամա թե ակամա սխալներից: Նշել ենք պարբերականի հրատարակության տարեթիվը, ամիսն ու օրը, տևողությունը, խմբագիրը կամ խմբագիրները, տվել ենք պարբերականության մեջ կատարված փոփոխությունները և մինչև երբ գոյություն ունենալը: Անհրաժեշտության դեպքում, լրիվ կամ քաղվածաբար բերել ենք առաջաբաններ, կամ մեջբերումներ ենք արել այս կամ այն հոդվածներից, որոնք օգնում են ավելի հստակ

պատկերացնելու պարբերականի ուղղության, բնույթի, դավանած սկզբունքների հետ կապվող հարցերը: Քանի որ մեր պարբերականներից քչերի վրա է նշված խմբագիրը, իսկ երբեմն էլ (սա առանձնապես նկատելի է դարասկզբին) պարզապես չի նշված («Բազմավեպ», «Շտեմարան պիտանի գիտելյաց»), աշխատել ենք ուշադիր լինել խմբագիրներին հայտնաբերելու գործում:

Ժամանակագրական խիստ հաջորդականություն է պահպանված 1801-1850 թթ. ընթացքում տեղի ունեցած պատմա-քաղաքական և հասարակական դեպքերը հիշատակելիս (պատերազմների ազդարարում, ռազմական առավել նշանավոր գործողություններ, պատերազմների ավարտ, մշակութային այլևայլ նախաձեռնություններ, պետական անձանց ուղերձներ): Քանի որ պատմական ընդհանուր երևույթներից բացի, Հայաստանն ունեցել է նաև իր ներքին, միայն իրեն վերաբերող հատկանշական խնդիրները (Դավիթ-Դանիելյան պայքարը, կաթոլիկ-լուսավորչական ազգապառակտիչ ընդհարումները, Շուշիում տեղավորված Բազելի կրոնավորների գործունեությունը), ապա հիշատակված են նաև այդ դեպքերը, այնքանով, իհարկե, որքանով որ դրանք առնչվում են հայ մշակույթի հետ:

Հայ նոր գրականության ձևավորման ընթացքը քննելիս, առկա է մի հետաքրքրական օրինաչափություն, որը, դարձյալ, պետք է իր արտացոլումը գտներ մեր ժամանակագրության մեջ: Ամեննին էլ հազվագյուտ չեն այն դեպքերը, երբ մեկ բանաստեղծությունը (Արսեն Բագրատունի, «Ի սրինգն», տե՛ս 1818 թ.), կամ մեկ պոեմը (նույնի «Դաշտիկն յաւար, եղերերգ մշակի», տե՛ս 1816 թ., Ալիշան «Պլպուլն Ավարայրի», տե՛ս 1847 թ.), կամ նույնիսկ մեկ քառյակը (Մ. Թաղիադյան, «Երբ թքամանն թանաքաման...», տե՛ս 1838 թ.) ոչ միայն հաստատուն ու հիմնավոր կերպով ապահովել են իրենց տեղը հայ նոր գրականության մեջ և, բնականաբար, դարձել երևույթ, այլև սկիզբ են հանդիսացել նման բնույթի ու բովանդակության մի ամբողջ շարք այլ գործերի համար: Այս կարգի ստեղծագործությունները, հասկանալի է, պետք է նշվեին ժամանակագրության մեջ: Ինչպես և նախորդ դեպքերում, այստեղ էլ հիմք է ընդունված նրանց գրության ժամանակագրական հաջորդականությունը:

Զգալի դժվարությունների հետ կապվեց 1801-1850 թթ. ընթացքում հրատարակված գիտա-գեղարվեստական գրականությունը ժամանակագրության մեջ արտացոլելը: Գաղտնիք չէ, որ հայերեն հրատարակված գրականության՝ քիչ թե շատ լիակատար ու համակողմանիորեն ճշտված մատենագիտություն առ այսօր գոյություն չունի: Եթե չհաշվենք տարբեր ժամանակներում լույս տեսած՝ տվյալ հրատարակչական կազմակերպությունների գրական արտադրանքն արտացոլող մեծ ու փոքր զանազան գրացուցակները («Ցուցակ գրոց Մխիթարեան տպարանի ի Վենետիկ», Վենետիկ, 1823, 1869, 1888, 1910, 1960 թթ., «Ցուցակ գրոց դրոշմելոց ի Մխիթարեան տպարանի ի Տրիեստ և ի Վիեննա», Վիեննա, 1859, 1864, 1895, 1936 թթ., «Գրացուցակ Զարդարյան գրատան», Պոլիս, 1863 թ., և այլն), որոնք, անշուշտ, իրենց ընձեռած հնարավորությունների սահմաններում օգտակար են եղել մեզ, ապա վերոհիշյալ բնույթի առաջին՝ համեմատաբար ամբողջական գործը Գարեգին Զարբհանայանի «Հայկական մատենագիտություն» աշխատությունն է, որը հրատարակվել է Վենետիկում, 1883 թվականին: Հեղինակը հավաքել և, վերնագրերի այբբենական հաջորդականության սկզբունքից ելնելով, դասավորել է հայերեն հրատարակված բոլոր գրքերը, առանց խտրության, ընդգրկելով տպագրության սկզբից՝ 1512 թ. մինչև անցյալ դարի 80-ական թթ. եղած ժամանակահատվածը: Զարբհանայանին մեծապես օգնել է այն, որ նրա ձեռքի տակ եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության ճոխ գրադարանը, որը, ինչպես հայտնի է, դասվում է աշխարհով մեկ սփռված հայկական գրադարաններից հարստագույնների շարքը և ապա, որ ոչ պակաս կարևոր է, ձեռնամուխ լինելով իր «Հայկական մատենագիտությանը», հեղինակը նամակներով դիմել է իր ծանոթ-բարեկամներին, խնդրելով համապատասխան տեղեկություններ իրեն հետաքրքրող գրքի, հեղինակի, հրատարակչի կամ թարգմանչի ով լինելու և այլ՝ այս բնույթի անթիվ-անհամար հարցերի մասին: Եվ չնայած գրքում տեղ գտած սխալներին, թերի բնութագրումներին, մի դեպքում ըստ վերնագրի, մի այլ դեպքում՝ հեղինակների ազգանունները ըստ այբբենական հաջորդականության դասավորված լինելուն, Զարբհանայանի «Հայկական մատենագիտությունը» մինչև այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքն ու նշանակությունը:

Զարբհանայանի գրքից քսանվեց տարի հետո, 1909 թ. դարձյալ Վենետիկում, լույս աշխարհ եկավ Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» աշխատության առաջին հատորը, որը դարագլուխ կազմեց գիտամատենագիտական բնույթի գրականության անդաստանում: Եվ, չնայած, հրատարակվեց աշխատության առաջին հատորը միայն, որն ընդգրկում է Ա-ից մինչև Ն տառը ներառյալ, բայց այս էլ բավական եղավ, որպեսզի Ղազիկյանի աշխատությունը «Մատենագիտական գանձ» (Լեո), «Գեղեցիկ և հսկայական գործ» (Հ.Առաքելյան), «Ամեն դրվատանքի արժանի աշխատություն» (Ա. Չոպանյան) և այլ դրվատական խոսքերով պիտակավորված, հաստատուն տեղ ապահովի իր համար, դառնալով հայագիտությամբ զբաղվող յուրաքանչյուրի ամենաառաջին ուղեցույցը:

Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը» դարձյալ կազմված է անունների այբբենական հաջորդականության սկզբունքով: Օգտվողների գործը ավելի դյուրացնելու նպատակով, հեղինակը որոշ, առավել աչքի ընկնող աշխատություններ գետեղել է նաև ըստ վերնագրերի այբբենական հաջորդականության, հղելով օգտվողին դեպի տվյալ գործի հեղինակը (օրինակ, նշված է «Աստղիկ և Ադոնիս». տե՛ս Շեքսպիր. կամ «Աստված գիտե արդարն ու մեղավորը». տե՛ս Տոլստոյ Լ.): Այսպիսով քիչ թե շատ կարևոր ցանկացած գիրքը, կամ գոնե, այդ գրքերի մեծագույն մասը հնարավոր է լինում «բռնել» մոտեցման տարբեր կողմերից, որն, իհարկե, մեծ առավելություն է «Հայկական նոր մատենագիտության» համար: Մշակութային տվյալ գործչի ազգանուն-անունից հետո գետեղված է նրա գործերի ըստ հնարավորին լիակատար ցանկը, այդ գործերի գիտա-բանասիրական բնութագրականները, այլևայլ լեզուներով կատարված թարգմանությունները, և որ ամենակարևորն է՝ մեր և օտարագրի պարբերականներում լույս տեսած գրեթե բոլոր մեծ ու փոքր գրախոսականները, որոնք գրվել են տվյալ գործչի կամ նրա գրքերի առիթով: Այս բոլորին ավելացնենք, որ Ղազիկյանը կարողացել է բացահայտել բազմաթիվ գրական կեղծանուններ, գտնել հրատարակված մի շարք գրքերի հեղինակներին, որոնց անունները ինչ-ինչ պատճառներով գրքերի վրա նշված չեն եղել, իրենց արխիվները պրպտելու միջոցով հայտնաբերել է հայ դասականների (Հովհաննես Օձնեցի, Ներսես Լամբրոնացի, Վարդան վարդապետ պատմիչ, Կիրակոս

պատմիչ) քննական բնագրերը պատրաստած Մխիթարյան վարդապետներից շատերի ով լինելը, մի բան, որը եթե չաներ Ղազիկյանը, մենք հավանորեն երբեք չէինք կարող իմանալ: Առանց լրացուցիչ մեկնաբանումների էլ պարզ է, որ հայ մշակութային գործիչների՝ գրքին տրված դրվատական գնահատությունները, որոնցից մի քանիսը բերվեց վերևում, հեռու էին չափազանցություն լինելուց: Եվ չնայած իր անավարտ վիճակին, Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությունը» շարունակում է մեծապես օգտակար լինել բոլորի համար: Մեր աշխատանքի ընթացքում 1801-1850 թվականների գրականության ժամանակագրության հետ առնչվող փաստական ու աղբյուրագիտական բնույթի շատ նյութեր վերցրել ենք այդ աշխատությունից:

Տեղեկատվական բնույթի հաջորդ աշխատությունը, որից, թեև փոքր չափով, բայց այնուամենայնիվ օգտվել ենք, Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» բազմա-հատորյակի առաջին հատորն է, որը հրատարակվել է Երևանում, 1959 թ. (1228 էջ) և ընդգրկում է միայն Ա տառը (նյութերը դարձյալ դասավորված են անունների այբբենական հաջորդականությամբ), այն էլ՝ ոչ լրիվ (հասցված է մինչև Առաքել Սալաձորեցի): Աշխատությունը մեզ քիչ է պիտանի եղել հիմնականում այն պատճառով, որովհետև հեղինակը անբավ նյութ հավաքած լինելով հանդերձ հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության մասին, տալով նրանց մատենագիտական ու քննական բնութագիրը, բացահայտելով նրանց գիտա-բանասիրական արժեքները և այլն, այդ ամենը բերում-հասցնում է մինչև XVIII դարի վերջերը, այսինքն՝ ավարտում է հենց այնտեղ, որտեղից սկսում է մեր «Ժամանակագրությունը»: Եվ, չնայած Հ. Անասյանը ինչ-ինչ առիթներով անդրադառնում է հետագա շրջանի իրադարձություններին (Ագաթանգեղոսի, Ամիրդովլաթ Ամասիացու, Անանիա Շիրակացու առթիվ տրված են նրանց գործերի՝ հայ և օտարալեզու բոլոր հրատարակությունները, ընդհուպ մինչև մեր օրերը, տվյալ նյութի կապակցությամբ բերված գրականության ցանկերում հիշատակվում են աշխատություններ, որոնք նույնպես հետագա շրջանի գործեր են, և այլն), բայց հեղինակի ուշադրության կենտրոնում հետևողականորեն մնում է միայն «իր» ժամանակաշրջանը, այսինքն՝ անմիջականորեն մեր աշխատանքի հետ չկապվող ժամանակաշրջանը: Դրանով հանդերձ՝ որոշ հեղինակների (Վարդան Այգեկցի, Առաքել

Բաղիշեցի, Առաքել Դավրիժեցի, ինչպես նաև վերնում հիշատակվածները) հետ կապված մեծ ու փոքր այլևայլ փաստերի, մի շարք ինքնուրույն ու թարգմանական աշխատությունների («Աղվեսագիրք», «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ», «Այբբենարաններ» և այլն) վերնագրերի, հրատարակության տեղի ու թվականի, բովանդակությունների ճշգրտման և այս բնույթի զանազան «շտկելիքներ» կատարելիս, ձեռքի տակ ենք ունեցել Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտությունը»:

Եվ վերջապես՝ մեր կողմից օգտագործված վերջին աղբյուրը Հայկ Դավթյանի «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտական բնույթի աշխատությունն է, որը հրատարակվել է Երևանում, 1967 թվականին: Այն վերնում մեր հիշատակած՝ համանման բնույթի բոլոր գործերից տարբերվում է նաև նրանով, որ հեղինակը անդրադարձել է բացառապես վերոհիշյալ ժամանակաշրջանում հրատարակված գրքերին, դուրս թողնելով մյուս կարգի հարցերը (ասենք՝ հեղինակների կենսագրություններ, կամ պատմա-քաղաքական կարևոր իրադարձություններ, կամ օգտագործելի գրականության հաղորդում), որն էլ, իր հերթին, հնարավորություն է տվել հեղինակին ավելի նեղ շրջանների մեջ ամփոփելու իր ուսումնասիրած նյութը: Ապա, որ ոչ պակաս կարևոր է, հեղինակն իր նյութը դասավորել է ոչ թե ըստ անունների կամ ըստ գրքերի վերնագրերի այբբենական հաջորդականության, ինչպես այդ արվել է նախորդների մոտ, այլ հիմք է ընդունել հրատարակության թվականը: Այսպիսի պարբերացման առավելությունն այն է, որ հնարավոր է լինում որոշակիորեն տեսնել գրական-հրատարակչական պրոցեսի բնականոն աճն ու զարգացումը, իսկ սա էլ՝ իր հերթին, թույլ է տալիս խուսափել մի քանի սխալներից, որոնք անխուսափելի էին լինում նախորդ դեպքերում: Դավթյանը ջանասիրաբար պրպտել է ոչ միայն հանրապետության ու միության մեծ ու փոքր զանազան գրադարաններում ու գրապահոցներում, այլև նամակագրական կապեր ստեղծելով արտասահմանի մտավորական կենտրոնների հետ (Վենետիկ, Վիեննա, Փարիզ, Երուսաղեմ), կարողացել է ստանալ մեկից ավելի կարևոր տեղեկություններ այս կամ այն հարցի վերաբերյալ և դրանք գործին տեղյակ մարդու հստությամբ օգտագործել իր մատենագիտության մեջ: Եվ եթե ավելացնենք, որ հեղինակը աշխատել է անձամբ օգտվել այն գրքերից, որոնց մասին մատենագրելու է՝

շատ փոքր հավատ ընծայելով, կամ պարզապես հավատ չընծայելով նախորդ և ուրիշ այլ աղբյուրներին, ապա հասկանալի կդառնա, որ «Հայ գիրքը...» համեմատաբար քիչ սխալներ ունեցող գործն է նախորդների համեմատությամբ: Ահա թե ինչու Հ.Դավթյանի գիրքն իր բնույթի գործերի շարքում համարվում է լավագույններից մեկը և որպես այդպիսին լայն կիրառություն ու գործածություն ունի: «Հայ նոր գրականության ժամանակագրության» վրա աշխատելիս, գրքերի հրատարակությունները, զանազան վերնագրերը, հրատարակությունների տեղերն ու թվականները և այլ՝ այս կարգի հարցերի վերաբերյալ ճշգրտումներ կատարելիս օգտվել ենք Հ. Դավթյանի «Հայ գիրքը 1801-1850 թվականներին (մատենագիտություն)» աշխատության տվյալներից:

Մատենագիտական բնույթի այս աշխատություններում, անգամ ամենահաջողվածների մեջ իսկ առկա էին սխալներ, հակասություններ, որոնք մեզ մոտ հնարավորին չափ աշխատել ենք ճշտել, ամեն ինչ անելով, գեթ ամենափոքր գրական-բանասիրական արժեք ունեցող գրքերն անգամ հիշատակելու համար:

Անկարևոր չէ նաև այն հանգամանքը, որ գրքերի մի շարք հրատարակությունների կողքին, որոնց վրա անփոփոխ նշվում են նրանց հետ առնչվող բոլոր մանրամասնությունները (հրատարակության տեղ, թիվ, հեղինակ), Վիեննան, Պոլիսը և մասնավորապես Զմյուռնիան ու Շուշին հրատարակել են ոչ քիչ թվով գործեր, որոնց վրա նշված չէ հրատարակության թիվը, տեղը, երբեմն՝ հեղինակի կամ թարգմանչի անունը: Այդ կարգի հարցերը ճշտելու համար հարկ եղավ անդրադառնալ կողմնակի աղբյուրների և հայերեն ու օտար լեզուներով օժանդակ գրականությանը, թեև նման «անհասցե» գրքերից մի քանիսի հետ կապվող մանրամասնությունները այդպես էլ մնացին չվերծանված: Ժամանակագրության մեջ նշել ենք գրքերի հրատարակության տարեթիվը, որը և ելակետ է հանդիսացել նրանց հաջորդականության պահպանման համար, հրատարակության տեղը, հեղինակը, իսկ եթե թարգմանություն է՝ գրքի օտարազգի հեղինակի անուն-ազգանունը, թարգմանիչը և եվրոպական կամ ասիական որ լեզվից թարգմանված լինելը: Եթե տվյալ գրքի կամ թարգմանության մասին խոսելիս հատկապես չի նշված նրա աշխարհաբար լինելը, ապա պետք է հասկանալ, որ այն

տավել կամ թարգմանվել է գրաբարով: Երբ նպատակահարմար ենք գտել, բերել ենք առաջաբանները կամ հատվածներ առաջաբաններից, որոնք որոշ լույս են սփռում գրքի ստեղծագործական պատմության և գիրքը ծնող շարժառիթների վրա: Նման մոտեցումն առավել անհրաժեշտ էր մեր դասականների ու պատմիչների քննական հրատարակությունների կապակցությամբ, որոնց առաջաբաններում կազմողներն անպայման նշում են, թե տվյալ հրատարակությունը նախապատրաստելու համար քանի ձեռագիր են ունեցել իրենց ձեռքի տակ, տալիս են այդ ձեռագրերի նկարագիրը, նշում են, թե նրանցից որն են ընդունել որպես հիմք և այլն: Գալով զանազան բնույթի ու բովանդակության ժողովածուներին (Նարեկացու երկերին, Շնորհալու բանաստեղծություններին, Գոշի կամ Այգեկցու առակներին և այլն), որոնցով բավական հարուստ է 1801-1850 թթ. ժամանակահատվածը, ապա, վերոհիշյալ բնույթի բոլոր նշումներից բացի, տվել ենք նաև բովանդակությունը, այսինքն՝ այն գործերի լրիվ ցանկը, որոնք տեղ են գտել տվյալ գրքում:

XIX դարասկզբի հայ հասարակական-քաղաքական կյանքում զգալի տեղաբաժին ունեն կրոնական գաղափարաբանությունը, կրոնա-դավանաբանական պայքարն ու վեճերը, որոնք իրենց արտացոլումն են գտել ժամանակաշրջանի գրականության մեջ: Ըստ որում, կրոնա-դավանաբանական գրքերի թվում կան այնպիսիները, որոնք իրենց բնույթով և ընդգրկած հարցերի խորության ու բազմազանության շնորհիվ դուրս են եկել կրոնական նեղ շրջանակներից (Գաբրիել Ավետիքյանի «Բացատրութիւն շարականաց»-ը, Միքայել Չամչյանի տասնհատորյա «Մեկնութիւն սաղմոսաց»-ը, Մկրտիչ Ավգերյանի տասներկու հատորանոց «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց»-ը և այլն): Հասկանալի է, որ այսպիսի աշխատությունները չէին կարող տեղ չգտնել մեր ժամանակագրության մեջ: Բայց կրոնա-դավանաբանական բնույթ ունեցող գործերից շատերը (դասագրքեր, ավետարաններ, աղոթքների ժողովածուներ, ժամագրքեր) ոչ մի դեր չեն կատարել մեր մշակութային պատմության ընդհանուր պրոցեսում և իրենց աշխարհ գալու օրվանից իսկ մոռացության են դատապարտված եղել: Այդ կարգի գործերը դուրս ենք թողել ժամանակագրությունից:

Եվ վերջապես՝ կրթական-հասարակական բնույթի կազմակերպությունները՝ դպրոցները, գրական կամ գրականության զարգացմանը նպաստող ընկերությունները, որոնցով այնքան հարուստ է մեր մշակութային կյանքի հիշյալ ժամանակահատվածը, նույնպես ընդգրկել ենք ընտրանի սկզբունքով: Նշել ենք կրթական-հասարակական համեմատաբար խոշոր հաստատությունները (Ներսիսյան դպրոց, Լազարյան ճեմարան, Մուրատյան վարժարան, Արարատյան ընկերություն, Համագրյաց ընկերություն), որոնց կատարած պատմական դերն ու նշանակությունը XIX դարասկզբի հայ գրականության ասպարեզում ակներև է: Նշել ենք տվյալ հաստատության հիմնադրման տարեթիվը, ամիսն ու օրը, հիմնադիրներին, մինչև երբ գոյություն ունենալը, տվել ենք մասնագիտական բնույթի մի քանի ծանոթություններ: Հիշյալ հաստատություններին տեղ տալը պատճառաբանված է նախ նրանով, որ վերջիններս իրենց գործունեության ընթացքում աճեցրել են հայագիտական-բանասիրական բազմաթիվ նշանավոր կադրեր, բանաստեղծներ, արձակագիրներ, թարգմանիչներ, հրապարակախոսներ, մշակութային գործիչներ, որոնք վճռական դեր են կատարել հայ գրականությունը զարգացնելու և առաջ մղելու ուղղությամբ: Եվ երկրորդ՝ կրթական-հասարակական կազմակերպություններից շատերը ունեցել են իրենց սեփական տպարանները, հրատարակել են գիտական-գեղարվեստական գրքեր, հովանավորել, խրախուսել են գրողներին, հրատարակիչներին, լրագրողներին:

Ինչպես արդեն ասվեց, ժամանակագրության ներկա հատորն ընդգրկում է 1801-1851 թթ. հայկական գրական-մշակութային կյանքը և այդ կյանքն առաջ մղող պատմա-հասարակական պրոցեսները: Իսկ այդ ամենի մասին առավել ճշգրիտ պատկերացում կազմելու համար, անհրաժեշտ է համառոտակի անդրադառնալ նշված ժամանակաշրջանի մեր մտավոր շարժման՝ Հայաստանից դուրս գտնվող մի քանի կենտրոններին, որոնք մեծ ու շահեկան ծառայություն են մատուցել դարասկզբի և հետագայի մեր մշակութային կյանքին: Հայագիտական այդ կենտրոնների մեջ առաջնությունը թե՛ ժամանակագրական կարգով, և թե՛ իր կատարած պատմական դերով, ամենայն իրավամբ պատկանում է Վենետիկի Մխիթարյան միաբանությանը:

* * *

Հիմնելով հետազայում իր անունը կրող միաբանությունը (1701 թ. սեպտեմբերի 8) Մխիթար Սեբաստացին (1676-1749) նրան հենց սկզբից կաթոլիկական ուղղություն տվեց, թեև, ինչպես վկայում են նրա կենսագիրներ Ստեփանոս Ադոնցն ու Հովհաննես Թորոսյանը «Մեծ հիմնադիրի կետ նպատակը» հայագիտական-բանասիրական կազմակերպություն հիմնելն ու հայրենի աղքատ գիր գրականությանը զարկ տալն էր: Իրողությունն այն է, որ Սեբաստացին իր միաբանության գոյության փաստը հռչակելիս, գրով և բանիվ հայտարարեց, որ իրենք մինչև վերջ հավատարիմ են Հռոմի պապին ու նրա ուսմունքին, կանեն ամեն ինչ՝ կաթոլիկական աշխարհի վստահությանը արժանանալու համար: Դիվանագիտական տեսակետից բավական շրջահայաց մտածված այս քայլը, որը բազմաթիվ և տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել, ուներ հետևյալ ներքին պատճառաբանվածությունը: XVIII դարը, որի ընթացքում իր գործունեությունն էր ծավալել միաբանությունը, մի ժամանակաշրջան էր, երբ ամբողջ քաղաքակիրթ Եվրոպան դեռ շարունակում էր գալարվել «Քրիստոնեական միջնադարի ձմեռային քնում» (Էնգելս): Լարելով վերջին ուժերը, իր գոյությունը պահպանել կարողանալու համար, կանգ չառնելով հնարավոր ոչ մի միջոցի առջև, կաթոլիկության միջնաբերդը՝ Հռոմը, աշխատում էր ամեն կերպ վերականգնել «սրբազան հավատի» ուժն ու հեղինակությունը: Իսկ դա կապված էր լուրջ դժվարությունների հետ, որովհետև օր-օրի աճում ու ամրանում էր ժողովրդական լայն զանգվածների անվստահությունը դեպի կրոնը: Տասնութերորդ և նախորդ դարերում տեղի ունեցած խոշոր գյուտերը, իրար հաջորդող և իրարով պայմանավորվող հայտնագործությունները գիտության ու տեխնիկայի ամենատարբեր բնագավառներում, ժամանակի առաջավոր մտածողներին ավելի ու ավելի էին մղում ամեն ինչ սեփական ուժերով քննելու, անքննելի ու անառարկելի համարվող ճշմարտությունները մարդկային բանականության օգնությամբ բացահայտելու «մեղավոր» գաղափարին: Մասնավորապես ֆրանսիական մատերիալիստների աթեիստական դպրոցի ներկայացուցիչները շարունակելով արթնացող մտքի ռահվիրաներից մեկի՝ Ֆրենսիս Բեկոնի փայլուն տրադիցիաները, անվերապահորեն քննադատում էին կրոնա-կաթոլիկական «բացառիկ ճշմարտություն»

համարվող դոգմաները, դրանք համարելով մարդկության առաջընթացն արգելակող գործոններից ամենահիմնականները: Ահա թե ինչու այնքան կատաղի էր կաթոլիկության ու նրա ճանաչված պարագլուխների պայքարը մտքի առաջադեմ մշակների դեմ. մի պայքար, որի ընթացքում «Աստուծու աղավնակերպ սպասավորները», «Առաքիլության հեզիկ ներկայացուցիչները» (Մարքս) լայնորեն կիրառում էին գաղտնի սպանությունը, մատնությունը, կաշառքը և այլն:

Հասարակական-քաղաքական այս իրադարձությունները ստիպում էին Հռոմին աչալուրջ լինել նորաստեղծ կրոնական կազմակերպություններից ամեն մեկի վերաբերյալ, գոյության թույլտվություն շնորհել միայն նրանց, որոնք անվերապահորեն կանգնած են հավատի «հռոմեական» ուղու վրա և բազմակողմանիորեն ստուգված են: Այս էր պատճառը, որ Միսիթարը բացեիբաց հռչակեց և հետագայում էլ բազմիցս կրկնեց միաբանության կրոնական-կաթոլիկական բնույթը, այլապես կասկած լինել չէր կարող, որ այն ընդհանրապես գոյություն չէր ունենա: Հետաքրքրական է, որ նույնիսկ այս դեպքում գոյության փաստական իրավունք ստանալու արարողությունը բազմաթիվ քննությունների ու ստուգումների հետևանքով ձգձգվեց ամբողջ 17 տարի:

Միաբանության կրոնական-կաթոլիկական բնույթի հռչակումը իր հետ բերեց մի ամբողջ շարք առանձնահատկություններ, որոնք իրենց կնիքը դրեցին Միսիթարյանների գրական արտադրանքի վրա: Միսիթարի և նրա հաջորդների հավաստիացումները կաթոլիկությանը հավատարիմ մնալու մասին պետք է իրենց արտացոլումը գտնեին կոնկրետ գործի մեջ, մանավանդ որ Հռոմի «Հավատո քննության խորհուրդը» դատարկ հավաստիացումներով կերակրվողներից չէր: Դրա հետևանքով առաջին պլան մղվեց կրոնական գրականության հրատարակությունն ու կրոնի պրոպագանդան, որը, մանավանդ սկզբնական շրջանում, կազմում էր Միսիթարյանների գործունեության գլխավոր բովանդակությունը: Գրվեցին բազմաթիվ աշխատություններ, լատիներենից, իտալերենից և եվրոպական այլ լեզուներից հայերեն թարգմանվեցին «եկեղեցու հայրերի» մեծ ու փոքր ստեղծագործությունները, հայ ժողովրդին պարտադրվեցին հարյուրների հասնող գրքեր, որոնց մեջ նորից ու նորից էր դրվատվում կաթոլիկական գաղափարախոսությունը: Այդ բնույթի աշխատությունների մի մասը նշված է մեր

ժամանակագրության մեջ, իսկ դրանց հետ թեկուզ թեթևակի ծանոթանալն անգամ ցույց է տալիս, թե ինչպիսի եռանդ, կարողություն ու գիտելիքներ էին վատնում Մխիթարյանները՝ իրենց վերապահված միսիան կատարելու համար: Միաբաններից պահանջվում էր կրոնի բազմակողմանի ու լայն իմացություն, և Մխիթարյան ավագ սերնդի ներկայացուցիչներն ընդհանուր աստվածաբանության հետ առնչվող հարցերում իրոք հասել են չգերազանցված բարձունքների: Հայտնի է, որ Միքայել Չամչյանը Հռոմի «Հավատո քննության խորհրդի» կողմից ստացել է «Ահավոր աստվածաբան» մականունը, հայտնի է, որ ընդհանուր աստվածաբանության ամենակնճռոտ հարցերը, որոնք ի վիճակի չէր լինում լուծելու նշված խորհուրդը, ուղարկում էին Հարություն Ավգերյանին, որի խոսքը դառնում էր հեղինակություն:

Մխիթարյանների հրատարակած կրոնա-աստվածաբանական գրականությունը, այն էլ նրա մի փոքր մասը միայն, մեզ համար ուշագրավ է ահա այս տեսակետից և այդ պատճառով էլ իր պատմական արժեքը չի կորցրել ուսումնասիրողների համար: Իսկ այդ կարգի աշխատությունների մյուս և զգալի մասը մոռացության է դատապարտված:

Իր հիմնադրած միաբանությանը տալով կրոնական բնույթ, Մխիթարը, սակայն, չմոռացավ հայագիտության բնագավառը, որը, ինչպես ասացինք, սկզբից իսկ եղել էր նրա ուշադրության կենտրոնում: Գոնե իր՝ Մխիթարի գործունեությունն ու գրական արտադրանքը քննելիս, որոշակի է դառնում, որ նա ավելի շուտ հայագետ-բանասեր էր, քան թե կրոնի խորախորհուրդ հարցերը լուծող աստվածաբան: Եվ այստեղ էր, որ Մխիթարյանները հանդես եկան իրենց ամբողջ մեծությամբ, ազգին ու աշխարհին ցույց տվեցին, թե ինչպիսի կոթողներ կարող են կերտել իրենք: Դրան զգալի չափով նպաստում էր աշխարհագրական տեսակետից հաջող գտնված տեղը՝ Վենետիկը, որին ժամանակակիցները տվել են «Ադրիատիկի թագուհի», «Քաղաք-հրաշք», «Քաղաք-գեղեցկուհի» մականունները: Եվ էթե հաշվելու չլինենք քաղաքի գլխով անցած մի քանի փոթորիկները (1800թ. Նապոլեոնի արշավանքը, 1848-1849 թթ. Վենետիկի հեղափոխությունը, 70-ական թվականների կարբոնարիների ապստամբությունը), որոնցից, ի դեպ, միաբանությունը միշտ կարողացավ ճարպկորեն ու նվազագույն կորուստներով խուսանավել, ապա կարելի կլինի ասել, որ Մխիթարի ընտրած տեղավայրը հիանալի

կերպով արդարացրեց իրեն: Ոչ պակաս հաջող էր կատարված նաև միաբանության «անձնակազմի» ընտրությունը. մարդիկ, որոնք կարողացան անսահման աշխատասիրությունը զուգակցել անսահման եռանդի ու մեծ գիտելիքների հետ և հայ մշակույթը հարստացնել այնպիսի գործերով, որոնք չեն հնացել առ այսօր: Այդ գործունեության առաջին օրինակը տվեց հենց ինքը՝ Մխիթար Սեբաստացին, 1730 թ. հրատարակելով իր «Քերականութիւն գրաբար լեզուի հայկազնեան սեռի» աշխատությունը, որը գրաբարը սիստեմավորելու և նրա ընդհանուր օրինաչափությունները հայտնաբերելու առաջին, համեմատաբար ամբողջական փորձն էր: Դրան հաջորդեց «Բառգիրք հայկազնեան լեզուի» 3000 էջանոց հսկայական աշխատության Ա հատորը (երկրորդ հատորը հրատարակվեց հեղինակի մահվանից հետո, 1769 թ.), որն արդեն երևույթ էր հայ բառարանագիտության և հայագիտության բնագավառում: Եթե հիշենք, որ առաջին անգամ էր ներկայացվում գրաբարի ամբողջ բառամթերքը և այն էլ քաղված գերազանցորեն ձեռագրերից (քանի որ տակավին հրատարակված չէին մեր պատմիչներից գրեթե ոչ մեկը, իսկ գրողների գործերից՝ սոսկ հատուկտորներ), ապա գեթ ընդհանուր գծերով պարզ կդառնա «Բառգիրք հայկազնեան լեզուի» աշխատության նշանակությունը: Սրբությամբ պահպանելով Մխիթարի ավանդները, նրա հաջորդները զարգացրին և նոր աստիճանի հասցրին միաբանության գործունեության հայագիտական-բանասիրական բնագավառը: Վերջինս առանձնապես մեծ վերելք ապրեց XIX դարի սկզբներից սկսած, երբ արտաքին ու ներքին պայմանները համեմատաբար նպաստավոր էին դասավորվել միաբանության համար: Հռոմն արդեն չէր ձանձրացնում իր մշտական հարց ու պրպտուքով, որոնք այնքան հաճախակի էին սկզբում, միաբանությունը ամրացել էր թե տնտեսապես, և թե գիտական կադրերի տեսակետից, արդեն ստեղծել էր իր սեփական տպարանն ու կազմակերպել հրատարակությունների գործը, վայելում էր հայության և հատկապես պոլսահայ հարուստների համակրանքը: Եվ ահա, իբրև արդյունք այդ նոր պայմանների, 1801 թ. հրատարակվեց Գաբրիել Ավետիքյանի «Նարեկ աղօթից, հարազատ և զգուշաւոր լուծմամբ, նորոգ բացայայտեալ» աշխատությունը (հայտնի է նաև «Նարեկլուծ» անվամբ), որը նոր խոսք հանդիսացավ նարեկացիագիտության մեջ: Հայտնի է, որ Նարեկացու

անմահ «Մատեան ողբերգութեան» պոեմը և «Տաղեր»ը դժվարամարս գրաբարով գրված լինելու պատճառով տառապում էին անհասկանալիության հասնող բազմաթիվ խրթնաբանություններով: Գործն ավելի էր բարդանում այն սխալների ու թյուրըմբռնումների հետևանքով, որ թույլ էին տվել Նարեկացի արտագրող մեր գրիչները, որոնք այս կամ այն արտահայտությունն «ուղղելու», «սրբագրելու» բարի միտումից ելնելով, հաճախ ավելի էին խճճել ու անհասկանալի դարձրել այն: Եվ տարիների քրտնաջան աշխատանք պահանջվեց Գաբրիել Ավետիքյանից՝ վերածննդի մեր նշանավոր ներկայացուցչի մտքերը առավել ճշգրիտ ձևով մեկնաբանելու: Դրա համար հարկավոր էր Նարեկացու՝ մեզ հասած բազմաթիվ ձեռագրերի, հատվածների ու պատառիկների մանրակրկիտ համեմատությամբ վերականգնել սկզբնական բնագիրը, գտելով այն ներս սպրդած բազմաթիվ անճշտություններից ու ձախուծուռ վրիպակներից. գործ, որ ամենևին էլ հեշտերից չէր: Եվ ապա՝ ձեռքի տակ ունենալով արդեն ճշտված բնագիրը, մեկնաբանել մի քանի հարյուրի հասնող այն բոլոր ոճերը, արտահայտություններն ու դարձվածքները, որոնք հնուց անտի համարվում էին անհասկանալի ու անբացատրելի: Ավետիքյանն այս բոլորը կատարել է այնպիսի մեծ հմտությամբ, որ ավելին անկարելի է պատկերացնել և մինչև այսօր Նարեկացիով զբաղվող մեր բոլոր բանասերները հարգանքով են արտահայտվում նրա մասին:

Նույն թվականին երկրորդ անգամ հրատարակված՝ Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» 600 էջանոց աշխատությունը, որը զանազան քաղաքներում (Թիֆլիս, Շուշի, Կալկաթա), մոտ 12 վերահրատարակություն ունեցավ՝ ակնառու կերպով վկայում է այն մասին, որ բանասիրությունից բացի, լեզվի հարցում էլ Մխիթարյան հաջորդ սերնդի ներկայացուցիչները նոր խոսք ունեին ասելու իրենց հիմնադրից հետո: Ասվեց արդեն, որ իր «Քերականութիւն գրաբար լեզուի հայկազեան սեռի» աշխատությամբ Մխիթար Սեբաստացին առաջին քայլն արեց գրաբարի ներքին

* Չամչյանի հիշյալ աշխատության՝ տարբեր քաղաքներում կատարված հրատարակությունները զգալապես տարբեր են իրարից, որովհետև հրատարակիչները փոփոխել են այն, դուրս թողել կամ ավելացրել ամբողջ գլուխներ ու պարբերություններ, իրենց պահանջներից ելնելով կատարել են այլևայլ հավելումներ: Այնպես որ, վերջիններս արդեն ինքնուրույն գործի արժեք են ստանում: Այդ պատճառով էլ, վերահրատարակությունները նշել ենք որպես ինքնուրույն գրքեր, թեև մշտապես ծանոթագրվում է վերահրատարակություն լինելու մասին:

օրինաչափությունները բացահայտելու և գրով ամրապնդելու բնագավառում, սակայն այս գործում առկա էր մի թերություն, որը նա գիտակցաբար չվերացրեց: Բանն այն է, որ գրել գրաբարի քերականությունը, նշանակում էր առաջին հերթին պայքար մղել այն բազմաթիվ լատինաբանությունների դեմ, որոնք, հայերեն սովորած, բայց մինչև վերջն այն չյուրացրած լատին քարոզիչները և նրանց հայ հետևորդները (Կղեմես Գալանոս, Հակոբ Վիլլոտ, Պողոս Պիրոմալի, Հովհաննես Հոլով, Վարդան Հունանյան) տարբեր ժամանակներում և մեծ առատությամբ խցկել էին այնտեղ: Գրաբարից վտարել լատինաբանությունները, նշանակում էր այսպես թե այնպես դիմագրավել Հռոմին, հակադրվել նրա վարած քաղաքականությանը, և, հետևաբար, վտանգի տակ դնել այնքան դժվարությամբ կյանքի կոչված միաբանությունը: Եվ Մխիթարը ոչ միայն չհամարձակվեց խոսք բանալ այդ անհարկի փոխառությունները, դարձվածքները, ոճերն ու բառերը գրաբարից արտաքսելու մասին, այլև իր գրքում տեղ տվեց և «գիտականորեն հիմնավորեց» դրանց գոյության անհրաժեշտությունը, թեև, ինչպես պնդում են նրա կենսագիրները, ինքն սկզբունքորեն դեմ էր իր իսկ քայլին: Եվ Սեբաստացու այդ աշխատությունը կատարեց հենց այն դերը, ինչ ուզում էր ինքը: Գրքի աշխարհ գալուց մոտ մի տարի հետո Հռոմի «Հավատո քննության խորհուրդը» դրվատանքով արտահայտվեց նրա մասին, գովեց հեղինակին և չզլացավ գնահատանքի խոսքեր ասել միաբանության հասցեին:

Մխիթար Սեբաստացու ճանապարհով չգնաց Միքայել Չամչյանն իր «Քերականութիւն հազկազեան լեզուի» գիրքը գրելիս. ժամանակներն ու պայմանները արդեն շատ էին փոխվել և փոխվել էին հոգուտ միաբանության: Կաթոլիկությունը շարունակում էր թուլանալ, ավելի ու ավելի բացահայտ ու սուր պայքար էր մղվում նրա դեմ, ավելի էր ամրացել Մխիթարյան միաբանությունը, և որոշակի ու կայուն վստահություն էր ստեղծվել նրա նկատմամբ: Այս բոլորն էլ հենց համարձակություն տվեց Չամչյանին՝ պատերազմ հայտարարել բոլոր տիպի լատինաբանություններին, և անխնա վտարել դրանք գրաբարից, առավել հստակ ձևով ներկայացնելով այն: «Ոսկեղենիկ» այդ գրաբարով էր, որով հետագայում իրենց թարգմանությունները

կատարեցին Գաբրիել Ավետիքյանն ու Մանվել Ջախջախյանը և վերջնականապես ամրապնդեցին հղկված գրաբարի տիրապետությունը իրենց և հետագայի համար:

Այնուհետև իրար հաջորդող հայագիտական-բանասիրական զանազան աշխատությունները (Մանվել Ջախջախյանի «Բառարան իտալական լեզուէ ի հայ և տաճիկ բարբառ», Վենետիկ, 1804, 895 էջ. Ստեփաննոս Ագոնցի «Պատմութիւն կենաց և վարուց Մխիթարայ Սեբաստացոյ, բաբունապետի և աբբայի», Անդ, 1810, 351 էջ. Միքայել Չամչյանի «Խրախճան պատմութեան հայոց», Անդ, 1811, 494 էջ. Հարություն Ավգերյանի «Բառարան համառօտ, ի գաղիականէ ի հայ», Անդ, 1812, 583 էջ, և այլն) աստիճանաբար, բայց հետևողականորեն հաստատեցին հիշյալ բնագավառում Մխիթարյան հայրերի հեղինակությունը, հայկական մշակութային մեր մյուս կենտրոնների հանդեպ նրանց անառարկելի առավելությունը:

Զմոռացվեց, իհարկե, նաև դասական հեղինակների հրատարակության դժվարին ու պատվավոր գործը: Հայ ընթերցող ու գիտական հասարակայնությանը առաջին անգամն էին ներկայացվում մեր դասականների գործերը, որոնք ունեին մասնագիտական բնույթի հմուտ առաջաբաններ, ուր տրվում էր տվյալ հեղինակի գործունեության բնութագիրը, սեղմ ու գիտակ ձևով վերլուծվում էր նրա ստեղծագործությունը, բացատրվում տվյալ հրատարակությունը ծնող ներքին կոնկրետ պատճառները: Նշանակալից էին նաև հրատարակիչների կատարած տեքստաբանական աշխատանքները. նրանք ներկայացնում էին բուն տեքստում պատահող ամեն տիպի տարբերությունները, անընթեռնելի կամ անհասկանալի բառերն ու արտահայտությունները, խնամքով ու մանրամասնորեն նկարագրում ձեռքի տակ ունեցած բոլոր ձեռագրերը: Հատորներն ավարտվում էին ծանոթագրությունների բարդ սիստեմով: Հայ դասականների հրատարակության աշխատանքը ավելի կանոնավորվեց և հունի մեջ ընկավ 1826 թ. սկսած, երբ Ստեփաննոս Ագոնց աբբահոր նախաձեռնությամբ և միաբանության ձեռնհաս անդամների օժանդակությամբ ստեղծվեցին «Ընտիր մատենագիրք» և «Մատենագրութիւնք նախնեաց» մատենաշարերը, և աստիճանաբար լույս աշխարհ եկան Եզնիկ Կողբացու (1826), Մովսես Խորենացու (1827), Եղիշեի (1828), Ներսես Շնորհալու (1830), Մխիթար Հերացու (1832), Հովհաննես Օձնեցու (1833), Դավիթ

Անհաղթի (1833), Ագաթանգեղոսի (1835), Ներսես Լամբրոնացու (1847) և այլոց գործերը: Այդ երկու մատենաշարերով և մատենաշարից դուրս իրենց մյուս հրատարակություններով Մխիթարյանները գիտական տեքստ պատրաստելու և այն քննականորեն ներկայացնելու հիմունքները ներբերեցին հայ մատենագրության մեջ, որը իրենք՝ Մխիթարյաններն էլ սովորել էին եվրոպացիներից:

Իհարկե, գիր-գրականություն հրատարակելու մեջ ևս այս կամ այն չափով իր դերն ուներ քաղաքականությունը, Մխիթարյանների ոճով ասած՝ «փոլիթիք ընելը»: Ուսում-նասիրությունների, ինքնուրույն բանաստեղծությունների ու թարգմանությունների մի ամբողջ շարք կա, որոնք աննշան չափով էին անհրաժեշտ մեր ժողովրդին՝ իր գոյության սվյալ ժամանակաշրջանում և շատ փոքր դեր խաղացին հայության հոգևոր մշակույթը հարստացնելու գործում: Բայց դրանք «փոլիթիք ընելու» արտահայտություններն էին, և եթե չլինեք այդ նպատակը, նրանք հավանորեն երբեք աշխարհ չէին գա: Այսպես, երբ 1812 թ. Ռուսաստանի թագավոր Ալեքսանդր Առաջինը այցելեց ս. Ղազար՝ Մխիթարյաններին, Արսեն Բագրատունին անհապաղ գրեց իր հանրահայտ «Պատուեալ յոտին Աղեքսանդրի կայսեր ռուսաց վանք Մխիթարեանց» ներբող-բանաստեղծությունը, որն ի դեպ, կարդացվեց հենց իր՝ թագավորի ներկայությամբ (հետագայում հրատարակվեց «Տաղք Մխիթարեան վարդապետաց» հատ. Ա-ում): Հետևանքն այն եղավ, որ Ալեքսանդր Առաջինը տարբեր առիթներով իր համակրանքը հայտնեց Մխիթարյան միաբանության վերաբերյալ: 1858 թ., Հաբսբուրգների ավստրիական հարստության ներկայացուցիչներից մեկը՝ Ֆրանց-Իոսիֆ կայսրը այցելեց ս. Ղազար, և հենց այդտեղ՝ ս. Ղազարում, նրան նվիրվեց Լատիսլավ Պուրկերի՝ Հաբսբուրգների տոհմի չափածո պատմությունը ներկայացնող «Ռուդոլֆ Հաբսբուրգ» դյուցազներգության հայերեն չափածո գրաբար թարգմանությունը (թարգ. Ղևոնդ Ալիշան), որի ճոխ ներբողական առաջաբանում դրվատանքի ամենամեծ բաժինն էր շոայլվում հիշյալ ամբողջ տոհմի, և անձամբ իր՝ Ֆրանց-Իոսիֆի հասցեին: Հիշատակենք վերջապես, համանման վերաբերմունքը թուրքական ռազմա-պետական ականավոր հայազգի գործիչներից և մեծահարուստ ընտանիքներից մեկի՝ Տյուզյանների նկատմամբ, որոնք սկզբից իսկ և ամեն մի պատեհ առիթով դրվատանքի ու փառաբանության էին արժանանում Մխիթարյան բանաստեղծ-

ների և հատկապես Բագրատունու կողմից (տե՛ս «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Ա, էջ 164-203): Իրենց հերթին Տյուզյաններն էլ՝ ինչ ասել կուզի, լիուլի վարձահատույց էին լինում, շոայրեն ֆինանսավորելով Մխիթարյանների այլևայլ հրատարակությունները: Նման օրինակների բազմաթիվ են, կարելի է հիշատակել ուրիշ ներբողներ, գովքեր, որոնք ձուլված են մի շարք նշանավոր գործիչների, որոնցից ինչ-որ չափով կախված էր միաբանության ճակատագիրը: Սակայն ասվածն էլ բավական է գաղափար կազմելու համար, թե ինչ նպատակադրմամբ էին գրվել կամ թարգմանվել այդ կարգի աշխատությունները: Միաբանության այս մտայնության մյուս արտահայտություններից մեկը ինքնուրույն պարբերականն էր, որը XIX դարի սկզբներից կոնկրետ ձև ու կերպարանք ստացավ «Եղանակ Բիզանդեան-բազմավեպ»-ով: Հրատարակելով այս տարեգիրքը, խմբագիր Ղուկաս Ինճիճյանը մի ուշագրավ հայտարարություն արեց, որը և որոշիչ հանդիսացավ Մխիթարյան մյուս բոլոր պարբերականների համար: Խոսելով «Եղանակ Բիզանդեանի» հրատարակության նպատակների և առաջիկա խնդիրների մասին, Ինճիճյանը նշում էր, որ Մխիթարյանները նպատակ ունեն ամբողջ աշխարհին ցույց տալ, թե ովքեր են իրենք և ինչ են կամենում, նպատակ ունեն պաշտպանել բարին և դատափետել չարը, նպաստել հայ ժողովրդի մտավոր զարթոնքին և հասնել այն բանին, որ բոլոր հայազգիները ճանաչեն Հռոմի պապի սրբազան գերիշխանությունը: Դժվար է ավելի հստակորեն բնորոշել «Եղանակ Բիզանդեան»-ի և ամբողջ միաբանության դեմքը: Այստեղից բխում է, որ այն ամենը, ինչ չէր կարող համակերպվել Հռոմի գաղափարախոսությանը, չէր կարող նաև հետաքրքրել Մխիթարյաններին: Վերջիններիս բոլոր պարբերականներում և ավելի ամբողջացված ձևով 1843 թ. հրատարակվող «Բազմավեպ»-ում, հասկանալի պատճառով, հերձվածող էին հայտարարվում ֆրանսիական մատերիալիստ մտածողները՝ Վոլտերը, Լամետրին, Ռուսսոն, Էնցիկլոպեդիստների ամբողջ վիթխարի գործունեությունից հիշատակվում էր միայն այն, որ վերջիններս կազմել են աշխարհում առաջին լիակատար հանրագիտարանը: Մխիթարյանները հատուկ հոդված նվիրեցին «չարափառ», «որոմնացան» Էոժեն Սյուին, իսկ նրա «Թափառական հրեա»-ն որակեցին ամենախիստ բառերով: Դրա փոխարեն «ԺԹ դարի նշանավոր գրող» հայտարարվեց Կեսար Քանդուն, իսկ Իտալիայի խոշորագույն

արձակագիրը համարվեց Ջիակոմո Լեոպարդին, ջանք չինայվեց դրվատելու ամենասովորական պատմաբան Բուրդալուին, որովհետև վերջինս գրել էր կաթոլիկ հավատի պատմությունը:

Գրելով ու հրատարակելով իրենց բազմաթիվ պատմական, բանասիրական, հայագիտական ուսումնասիրությունները, մոռացության փոշուց հանելով մեր հին ու նոր պատմիչներին, Մխիթարյանները, բնականաբար, չմոռացան և գեղարվեստական գրականության ասպարեզը: Միաբանության ներսում աստիճանաբար ծայր առավ այն երևույթը, որը հետագայում պետք է հասակ նետեր ու ամրանար և նույնիսկ սեփական անուն ունենար՝ «Մխիթարյան գեղարվեստական գրականություն»: Այդ գեղարվեստական գրականության նախակարապետը, որը որոշ իմաստով նաև գրական սկզբունքներ և ուղղություն թելադրեց հաջորդներին, Մխիթար Սեբաստացին էր իր 1727 և հետագա տարիներին հրատարակված տաղերով: Դրսևորելով բանաստեղծելու բնատուր կարողություններ, գեղարվեստական մտածողության որոշակի կուլտուրա, Մխիթարը, սակայն, չկարողացավ քիչ թե շատ նշանակալից խոսք ասել հայրենի գրականության ասպարեզում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ «մեծ հիմնադիրը» յուրօրինակ կարծիք ուներ պոեզիայի դերի ու նշանակության մասին, գտնում է, որ այն կոչված է թարմացնելու, զվարճացնելու միաբաններին՝ օրվա ծանր, լարված աշխատանքից հետո: Այսինքն՝ բանաստեղծությունը նա չէր դիտում որպես օբյեկտիվ իրականության արտացոլման ձևերից մեկը, այլ համարում էր ժամանց, մի տեսակ «պարապ վախտի խաղալիք»՝ հոգնած ուղեղը հանգստացնելու համար: Մխիթարի տաղարաններում կան մեծ ու փոքր ակրոստիքոսներ, բառախաղով ու հանգախաղով գրված գործեր, կան բանաստեղծություններ, որոնց յուրաքանչյուր տունը վերջանում է նույն հանգով, կամ յուրաքանչյուր տան վերջին բառերը վերևից ներքև մի որևէ իմաստ են արտահայտում: Ամբողջ պոեմներ կան, որոնց տողերի առաջին տառերը վերևից ներքև մի իմաստ են արտահայտում, իսկ տողերի վերջին տառերը, դարձյալ վերևից ներքև, մի այլ իմաստ, քառյակներ էլ կան, որոնց մեջ հեղինակի ընդգծած բառերը կարելի է հետևառաջել ու քառյակը դրանից չի տուժի... Մխիթար Սեբաստացու անմիջական հաջորդները, որոշ փոփոխություններ բերելով հանդերձ, գերազանցապես ընթացան նրա նախանշած ուղիով:

Եվ միայն Ալիշան-բանաստեղծի հանդես գալով այդ պոեզիան ազատվեց բառախաղերի ու բռնահանգերի ծիծաղաշարժ շաղփաղփանքներից, լայնորեն ճանաչվեց և ուրույն տեղ գրավեց հայ գրականության զարգացման համընդհանուր շղթայի մեջ: Քիչ ջանք և մտքի ճիգեր չպահանջվեցին դրա համար. տեսական-գրականագիտական քիչ վեճեր չեղան ինչպես միաբանության ներսում, այնպես էլ մշակութային մեր մյուս կենտրոններում, որոնց նպատակն էր պարզել Մխիթարյան պոեզիայի սկզբունքները ծնող պատճառները, զարգացման ուղիները, նրա դերը մեր ընդհանուր գրականության ոսկե ֆոնդում. վեճեր, որոնք աստիճանաբար ընդլայնվելով ու խորանալով, հետագայում պետք է կոնկրետանային «Գրապայքար» ընդհանուր հասկացողության ներքո: Բայց անհերքելի մնաց այն փաստը, որ հետնորդները, հաղթահարելով նախորդների գրական սահմանափակությունները, Մխիթարյանների ջերմոցային, կյանքից կտրված պոեզիան դուրս բերեցին վանքի քարեղեն պատերից և դարձրին հայ ժողովրդի լայն զանգվածների սեփականությունը:

Արդ, գրական ի՞նչ ուղղության էին դավանում Մխիթարյանները: Այս հարցին պատասխանելու համար նախապես անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Մխիթարյանների անցած գրական ուղին հիմնականում կարելի է երեք մեծ շրջանների բաժանել: Սկզբից մինչև XIX դարի կեսերը, այսինքն այն ժամանակահատվածը, որն ընդգրկում է մեր ժամանակագրության ներկա հատորը. XIX դարի կեսերից մինչև դարավերջ, երբ Ալիշանի և մյուսների հանդես գալով Մխիթարյան գեղարվեստական գրականությունը զարգացման նոր փուլ թևակոխեց ու ընդհանուր ճանաչում ստացավ, և դարավերջից մինչև մեր օրերը, երբ միաբանության գրական-գեղարվեստական արտադրանքը աչքի չի ընկնում ոչ քանակով, ոչ էլ, մանավանդ, որակական նորարարություններով, և իբրև այդպիսին, շատ աննշան տեղ ու դեր ունի գրականության համընդհանուր շղթայում:

1720-ական թթ. սկսած, երբ Մխիթարյան միաբանության անդամները սկսեցին հանդես գալ իրենց չափածո և արձակ գեղարվեստական ստեղծագործություններով, Եվրոպայում շարունակում էր իշխել գրական այն ուղղությունը, որը հետագայում հայտնի դարձավ «կլասիցիզմ» անվամբ, և առավել ամբողջական ձևով հանդես եկավ Ֆրանսիայում: Իսկ կլասիցիստական գրականության առաջ քաշած ամենակարևոր

պահանջներից մեկը՝ ամբողջական, ուժեղ, կազմակերպված, մի ընդհանուր ղեկավարությամբ տնօրինվող և մի ընդհանուր նպատակի ձգտող պետականության գաղափարախոսությունն էր: Ըստ որում, պետականությունը պատկերացվում էր հնագանդ ու խոնարհ ծառաների և բարի, հոգատար տերերի մի համամիացության ձևով, դրված միահեծան, ուժեղ ու արդարադատ արքայի ղեկավարության ներքո: Միապետական Վոլտերի համար այս ամենն այնքան պարզ էր, որ նա նույնիսկ նշեց այն դարձվածքներն ու նախադասությունները, որով պետք է տերը դիմեր իր ծառային, կամ բարձրաստիճան անձանց (մինիստրներին, թագավորներին և այլն): Իսկ այդպիսի պետականություն ունենալու, այն ավելի ուժեղացնելու և պահպանել կարողանալու համար, կլասիցիստ հեղինակները առաջ էին քաշում պայքարից ու դժվարություններից չվախեցող, պետության շահերն անձնականից բարձր դասող, անհրաժեշտության դեպքում՝ պետության ու բարձր հասարակության համար իր կյանքը տվող անհատների գաղափարը: Ժամանակակիցներին այդ ոգով և այդ մտայնությամբ դաստիարակելու համար հունա-հռոմեական անտիկ գրականությունից դուրս կոչվեցին արքաների, իշխանների, զինվորական ղեկավարների, ռազմիկների մի ամբողջ համախումբ, որովհետև անտիկ աշխարհը և մանավանդ այդ աշխարհի հասարակական-պետական կառուցվածքը համարվում էր առ այդօր եղածների մեջ ամենադասականը: Հոգեկան այդպիսի բարձր կերտվածք ունեցող անհատը, բնականաբար, պետք է անթերի լիներ նաև արտաքինապես: Եվ կլասիցիստական գրականության բոլոր հերոսները իրոք այդպիսին են. գեղեցկատես, գեղահասակ, հաղթանդամ, աչքի են ընկնում ֆիզիկական արտակարգ ուժով, աներեր վճռականությամբ կարողանում են հանգիստ տանել, ասենք, հարազատի սպանության բոթը, սիրելի ընկերոջ մահը, առանց տատանվելու կարողանում են սպանել ամենամոտիկ բարեկամին, եթե նրա արարքը ինչ-որ չափով հակընդդեմ է ընդհանուրի շահերին և այլն: Ահա թե ինչու, երբ Լյուդովիկոս XVI թագավորը կարողացավ համախմբել բաժան-բաժան եղած Ֆրանսիան, դարձնել այն աշխարհի առաջնակարգ պետություններից մեկը և, ստեղծելով իր միահեծան ղեկավարությունը, հասարակական-տնտեսական հեռանկարային զարգացում ապահովել իր պետության համար, ֆրանսիական կլասիցիստները հիացմունքի

բացականչություններով ընդունեցին այդ ամենը, որովհետև թագավորը և նրա ստեղծած հասարակական կարգը հար և նման էին այն գաղափարներին, որը դավանում, դրվատում և երագում էին իրենք:

Այդպիսին էր, համառոտակի, ֆրանսիական կլասիցիստների գրական հավատամքը, որը, օրենքի կերպարանք ստացած, պետք է հանդես գար Բուալոյի նշանավոր «Պոետական արվեստ» տրակտատում:

Գրականության դերի ու հասարակական նշանակության վերաբերյալ վերը շարադրված սկզբունքները, որոշ տարբերություններով հանդերձ, միանգամայն համապատասխանում էին այն ըմբռնումներին ու պատկերացումներին, որոնք հայ գրականության առջև դնում էին Մխիթարյանները: Համապատասխանում էին նախ՝ պատմա-քաղաքական պայմանների պատճառով. 1750-ական թթ. սկսած, Մերձավոր Արևելքում իր դիրքերն ուժեղացնելու նպատակով Ռուսաստանը, շարունակելով իր նախորդների քաղաքականությունը, պատերազմ սկսեց նաև Կովկասում: Խելացի ու քաղաքագետ Եկատերինա II անհապաղ դիմեց դիվանագիտական քայլերի՝ կովկասյան ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համակրանքը շահելու համար և իրար հետևից հրատարակեց հայերի պետականությունը վերականգնելու, նրանց ազատության ու պրոտեկտորատի սահմաններում անկախություն շնորհելու, հայ վաճառականներին ու առևտրականներին Ռուսաստանում անարգել առևտուր անելու մասին իր հայտնի հրովարտակները, որոնք այնպես խանդավառությամբ ընդունվեցին հայ հանրության կողմից և ազգային զարթոնքի պատճառներից մեկը հանդիսացան: Հայաստանի ազատագրությունը արդեն համարվում էր օրերի հարց, սակայն հենց այդ հանգամանքը խոր և տանջալից մտմտուքի տեղիք էր տալիս. ինչպիսի՞ն պետք է լինի ազատագրված Հայաստանը, ի՞նչ հասարակական-քաղաքական կարգ պետք է ունենա, երկրի կառավարման համար ո՞ր տիպի կառուցվածքն է ամենից ավելի ընդունելին և այլն: Մխիթարյաններն ունեին այս հարցի միանգամայն որոշակի ու գիտակցված պատասխանը՝ ունենալ իշխող ու բարեգութ արքա և հնազանդ հպատակներ: Իրենց բազմաթիվ ստեղծագործություններում, տասնյակ մեծ ու փոքր պոեմներում նրանք պատկերում էին այդ կարգն ունեցող ապագա Հայաստանը, գովերգում էին հոգատար

արքային ու նախարարներին, նկարագրում էին ռամիկների հնազանդությունն իրենց տերերին և տերերի խիստ, բայց բարեհաճ վերաբերմունքը ստորադրյալների նկատմամբ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ ապագա Հայաստանի կառուցվածքի այս սխեման գրեթե նույնությամբ ժառանգված էր ֆրանսիական կլասիցիստներից, մի բան, որ չէին ժխտում նաև իրենք՝ Մխիթարյանները:

Սակայն հայրենի բնօրրանի ազատագրությունը չէր կատարվելու միայն ու բացառապես ռուսների օժանդակությամբ: Իրենք՝ ռուսներն էլ բավականաչափ աներկմտորեն հասկացրին հայությանը, որ չնայած պատերազմի ծանրության հիմնական մասը տանելու են իրենք, բայց այնուամենայնիվ հայ ժողովուրդն էլ ձեռքից եկած ամեն ինչով պետք է օգնի հաղթության համար: Ինչպես հայտնի է, ռուսֆիլ ուղղության պատկանող հայոց բոլոր կաթողիկոսների գործունեությունն ընդհանրապես, իսկ հետագայում՝ Ներսես Աշտարակեցու գործունեությունը հատկապես, հիմնականում դրան էր ուղղված՝ հայկական գնդեր կազմակերպելուն, հարձակվող ռուսական բանակներին օգնելուն, թշնամուն այս կամ այն ձևով խոչընդոտելուն և այլն: Իսկ սրա համար հարկավոր էր ոտքի հանել հայությանը, ազատագրական կռվի, պայքարի կոչել նրան, հայրենիքը ճնշողներից փրկելու դրոշ բարձրացնել, և Մխիթարյան գրողներն ու բանաստեղծները շտապեցին յուրովսանն արձագանքել այս նոր մտայնությանը: Հայությանը հայրենասիրական ոգով դաստիարակելու համար նրանք, եվրոպական կլասիցիստների նման, անդրադարձան պատմական անցյալին և այնտեղից դուրս կոչեցին հայոց փառքը կազմող ռազմիկներին, դրվատեցին նրանց սխրանքները հայրենիքի համար, դատապարտեցին դավաճանությունը, հայրենադավությունը: Մեր ժամանակագրության ներկա հատորի հետ թեկուզ թեթևակի ծանոթությունն անգամ բավական է համոզվելու համար, թե Մեսրոպին ու Սահակին, «Կարմիր» Վարդանին, Վահանին, Ներսեսին, Սմբատ Բագրատունուն, Խոսրով Մեծին և մյուս հայ անվանիներին նվիրված գեղարվեստական ինչպիսի ընդարձակաձավալ գրականություն էին ստեղծել Մխիթարյանները:

Պատմական թեմատիկային անդրադառնալը Մխիթարյանների մոտ ունի նույն տեսական հիմնավորումը, ինչ եվրոպացիների մոտ, այն է՝ ժամանակակից

իրականությունը ժամանակակիցներին հայրենասիրական ոգով դաստիարակելու համար հերոսական ու տոհմիկ տիպեր չի տալիս: Կատարյալն ու լավագույնը մնում է պատմական անցյալը և անցյալից էլ պետք է քաղել ստեղծագործության անհրաժեշտ նյութերը: Այստեղից էլ պարզ է, որ հայրենասիրություն դաստիարակելու, լավի օրինակ ծառայելու համար նախորոշված գրական տիպը, ինքնըստինքյան, չէր կարող «հասարակ» մարդ լինել: Եվ Մխիթարյանների ստեղծած գեղարվեստական կերպարները՝ թե տղամարդիկ և թե կանայք, եվրոպականների նման, աչքի են ընկնում իրենց արտակարգ ուժով, աներեր վճռականությամբ, զարմանք պատճառող հզոր կամքով: Բանը հասնում է, օրինակ, այնտեղ, որ իր «Հայկ դիւցազն» դյուցազներգության մեջ Բագրատունին նկարագրում է, թե ինչպես Հայկ նահապետի դուստր Հայկանուշը, մատները մխրճելով հոր վերքի մեջ, դուրս է քաշում այնտեղ մնացած նետի կտորը, ըստ որում, արյունը հոսում էր աղբյուրի նման և ներկա տղամարդիկ անգամ դարձրել էին երեսները...

Արծարծված հարցերն այնքան լայն են և բազմակողմանի, որ նրանց մասին կարելի է ծավալուն մենագրություն գրել, և մեր շարադրանքը, լավագույն դեպքում, կարող է այս ամենի սոսկ համառոտությունը լինել: Սակայն ասվածն էլ բավական է հասկանալու համար, թե ինչու իրենց գործունեության առաջին շրջանում Մխիթարյան միաբանության գրողները որպես գրական ուղղություն պետք է որդեգրեին եվրոպական կլասիցիզմը, հանդես գային այդ ուղղության, կամ այդ ուղղությանը հարող բազմաթիվ գործերով, ստեղծեին կլասիցիզմի իրենց տեսությունն ու գաղափարախոսությունը, ի դեմս Էդուարդ Հյուրմյուզյանի, Պետրոս Մինասյանի, Մանվել Ջախջախյանի աշխատությունների և, այսպիսով, հանդիսանային գրական այդ ոճը մեր իրականության մեջ ներբերող առաջին ջահակիրները: Հայկական մեր մյուս համայնքներում առկա կլասիցիստական գրականությունը քննելիս, իրենց բոլոր ինքնուրույնություններով հանդերձ, չի կարելի չնկատել Մխիթարյան կլասիցիստ հեղինակների՝ նրանց վրա ունեցած գաղափարական ու գեղարվեստական որոշակի ազդեցությունը:

Իհարկե, Մխիթարյանների կլասիցիզմը եվրոպականի մեխանիկական տեղափոխությունը չէր և չէր էլ կարող լինել: Հայ իրականության պայմաններում

գրական այդ երևույթն ունեցավ իր առանձնահատկություններն ու տարբերությունները, զուտ հայկական ներքին բնականոն օրինաչափությունները: Այդ տարբերություններից առաջինը հետևյալն է. ասացինք արդեն, որ ֆրանսիական կլասիցիզմը ուժեղ, կազմակերպված պետականության գաղափարախոսությունն էր և այդ գաղափարախոսության փիլիսոփայությունը: Իսկ XIX դարի Հայաստանը ոչ միայն ուժեղ պետականություն, այլև առհասարակ պետականություն չունեց, ուստի հայ կլասիցիստներն իրենց գործերում չէին կարող դնել և չէին դնում, ասենք, պետության հանդեպ անհատի ունենալիք վերաբերմունքի, արքայի և նրա ստորադրյալների հանդեպ եղած փոխհարաբերության, երկրի բնականոն ղեկավարման և նման այլ հարցեր, որոնք ոչնչով չէին առնչվի մեր իրականության հետ: Դրա փոխարեն հայերն առաջ էին քաշում ըստ ամենայնի ազատ, անկախ և ինքնուրույն հայրենիք ունենալու, զենքով հայրենիքը փրկելու, կռվով ու արյամբ ազատությունը նվաճելու գաղափարը: Այս էր պատճառը, որ հենց սկզբից հայկական կլասիցիստական գրականությունը աչքի ընկավ իր վառ-հայրենասիրական գաղափարաբանությամբ: Ապա. ասացինք, որ ժամանակի հուզող խնդիրներն արծարծելու համար ֆրանսիական կլասիցիստները ստեղծագործության համար թեմաները վերցնում էին անտիկ աշխարհից, գերազանցապես հունահռոմեական գրականությունից: Խոտորվելով այս կարգից, հայ կլասիցիստ հեղինակները ոչինչ չվերցրին անտիկ թեմատիկայից և բացառապես անդրադարձան հայկական պատմական անցյալին: Չէ՞ որ հային ավելի մոտ ու հասկանալի կլինեին իր ազգային հերոսները՝ Վարդանը, Վահանը, Մուշեղը և այլք, մանավանդ, որ հայոց հին պատմությունը ինչքան ասես նյութ մատակարարում էր այդ կարգի գործիչների համար, և, որ թերևս ավելի կարևոր էր, նշված և չնշված մեր մյուս պատմական հերոսները մարտնչել և իրենց կյանքը տվել են այն նույն գաղափարների ու նպատակների համար, որոնք շարունակում էին ուժի մեջ մնալ նաև XVIII-XIX դարերում: Եվ հայկական կլասիցիստական գրականությունը, իր ամբողջության մեջ վերցրած, սկզբից նեթ ընդունվեց հայ ժողովրդի կողմից, որովհետև ժողովուրդը նրա մեջ տեսավ իր նվիրական գաղափարների պաշտպանությունը:

Ոչ պակաս հետաքրքրական է նաև կրոնի հետ առնչվող հարցը, որը դարձյալ իր ուրույն լուծումը ստացավ մեզ մոտ: Ֆրանսիացիների մոտ կլասիցիզմն իր գոյությունն սկսեց պայքար մղելով կրոնի ու նրա դոգմաների դեմ, վերջիններս հայտարարելով մարդկության առաջընթացը խանգարող հիմնական գործոններից մեկը: Որպես հակակշիռ զենք՝ առաջ քաշվեց ռացիոնալիզմը՝ անհատի անկաշկանդ, ազատ, ոչ մի սահմանափակում չճանաչող և աշխարհի օրինաչափություններն ինքնուրույնաբար, առանց վերուստ տրված կանխակալության բացահայտող մտածողության գովքը, որը որոշ դեպքերում բարձրացվեց նույնիսկ պաշտամունքի աստիճանի:

Տրամագծորեն հակառակ երևույթն ենք նկատում մեզ մոտ: Բանը նրանումն էր, որ հայրենիքի ազատության համար մարտնչելու ելնող հայ ժողովուրդը առաջին հերթին պետք է պայքար մղեր ոչ քրիստոնյա և քրիստոնյաներին մշտապես հալածած թուրքերի և պարսիկների դեմ: Այս պատճառով էլ՝ մեզ մոտ ոչ միայն հարց չդրվեց կրոնի վերացման, կամ որևէ սահմանափակումների մասին, այլ, ընդհակառակը, մեր կլասիցիստները կրոնը դիտեցին իբրև ազատագրական պայքարի կոչող, ժողովրդին համախմբող ու կազմակերպող հիմնական ուժերից մեկը: Եղիշեի նշանավոր Մատյանն այդ տեսակետից հիանալի նյութ էր տալիս ստեղծագործելու համար, և պատահական չէ, որ երևան եկան Վարդանանց հերոսամարտը ներբողող արձակ, չափածո և դրամատիկական բազում ստեղծագործություններ: Կրոնն, այսպիսով, մեզ մոտ չդարձավ կլասիցիստական գրական ուղղությանը արգելակել փորձող գործոն, այլ ավելի նպաստեց նրա կայունացման, հաստատման և որպես երևույթ ձևավորվելուն: Իր հերթին հայկական կլասիցիզմը ստիպված չէրավ իր լինելիության արշալույսից սկսած մարտնչել հզոր ու անխնա հակառակորդի հետ, և այս հանգամանքը պատճառ դարձավ, որ նա սկզբից իսկ զարգանա համեմատաբար ավելի հանգիստ, առանց ներքին լարումների, որով աչքի են ընկնում եվրոպական երկրների կլասիցիստական ուղղության գրականությունները: Ասվածն իր հերթին բանալի է հասկանալու համար, թե ինչու հայ իրականության պայմաններում չէր կարող տեղ գտնել ռացիոնալ մտածողությունը, ռացիոնալիզմը, այս հասկացողության եվրոպական իմաստով, և իրոք, այն խիստ աննշան ձևով դրսևորվեց:

Մի քանի խոսք էլ լեզվի մասին: Իր գործունեության ամենասկզբնական շրջանից իսկ եվրոպական կլասիցիստները ձեռնամուխ եղան լեզուն մաքրելու, առավել գեղեցկացնելու ծանր ու պատվավոր գործին: Հղկվեց ու կատարելության հասցվեց ֆրանսերենը, արխատկրատիկ ու ազնվականական լեզու դարձավ անգլերենը, օտարամուտ ու գեղջկական բառերից մաքրվեց ռուսերենը և այլն: Այս երևույթի տեսական հիմնավորումը տվել է Բուալոն, հետագայում՝ Լեսսինգը: Թագավորի, պետական-կառավարական բարձրաստիճան անձանց, նշանավոր իշխանների ներկայությամբ տրվող ներկայացումներում, ներկայացումներ, որոնց գործող անձինք նույնպես թագավորներ էին, իշխաններ ու բարձրաստիճան մարդիկ, հերոսները չէին կարող խոսել աղավաղ, խառնափնթոր ու գռեհիկ լեզվով: Ահա թե ինչու մաքուր լեզուն և մաքուր գրական լեզվի համար մղվող պայքարը դարձավ առօրյա, կենսականորեն կարևոր հարցերից մեկը, իսկ Ֆրանսիայի պայմաններում այն նույնիսկ սկսեց պաշտոնապես վայելել պետության հովանավորությունը՝:

Լեզուն մաքրելու այդ տենդենցը, ինչպես արդեն տեսանք, նկատվում էր նաև Մխիթարյանների մոտ, սակայն նրանց աշխատանքը սկզբից իսկ տառապում էր մի ճակատագրական սխալով: Մխիթարյանները հայոց լեզու ասելով հասկանում էին գրաբարը, որը համարում էին հայ ժողովրդի հաղորդակցության միակ միջոցը: Աշխարհաբար (արևմտահայերեն) հրատարակվող իրենց հանդեսում նրանք բազմիցս կոչ էին անում չհեռանալ «աստուածապարզն» գրաբարից, հայտարարում էին, որ իրենց նպատակը ոչ միայն այդ լեզուն անտեսելը չէ, այլև այն զարգացնելն ու հայ ժողովրդի համար ընդհանուր հաղորդակցության միջոց դարձնելն է: Հստակվեց և կոկվեց գրաբարը (ինչքան, իհարկե, այդ կարելի էր անել մեռած լեզվի հետ) և ջանասիրաբար պարտադրվեց հայ ժողովրդին, այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ ժողովուրդն սկսում էր ավելի ու ավելի հեռանալ նրանից: Այսպիսով, եթե եվրոպական կլասիցիստների գործունեության հետևանքով ստացվեց մաքուր ու հստակ մի լեզու, որը հոգևոր մշակույթի ուժեղագույն գործոններից մեկը դարձավ, դարձավ արձակագիրների, դրամատուրգների, բանաստեղծների ձեռքին սայրասուր մի զենք, ապա հայերի ունեցած

* Հայտնի է, որ ֆրանսիական կառավարությունը մրցանակ էր սահմանել նրանց, ովքեր կկարողանային ստեղծել լատիներեն տվյալ բառերի (բառերը տրված էին) ֆրանսիական համարժեքները:

մաքուր ու հղկված լեզուն՝ գրաբարը, մեռելածին եղավ հենց սկզբից: Նա չկարողացավ կատարել հայ ժողովրդի համընդհանուր հաղորդակցության միջոց լինելու իր՝ թերևս ամենակարևոր ֆունկցիան: Եվ որքան էլ ճգնեցին վենետիկցիք և նրանց հետևությամբ ուրիշ քաղաքներում գտնվող մեր որոշ մտավորականները, ինչքան էլ ճիգ ու ջանք թափեցին վերականգնելու գրաբարն իր նախկին հնարավորությունների ու իրավունքների մեջ, ինչքան էլ «ռամիկ», «գավառային լեզու» հայտարարեցին օրավուր ամրապնդվող աշխարհաբարը և վերջինիս համար պայքարողներին հռչակեցին հետադիմականներ, պատմությունն արդեն ասել էր իր վճռական խոսքը, իսկ ետ շրջել պատմությունը Մխիթարյաններն անգոր էին: Լեզուն մաքրելու ու վերականգնելու նրանց վիթխարի աշխատանքը ընդամենը պատմական արժեք ու նշանակություն ունեցավ և այս հարցում էլ դրսևորվեց մեր կլասիցիստական գրականության յուրօրինակությունը եվրոպականի համեմատությամբ:

* * *

Մխիթարյանների բանասիրական ու գեղարվեստական այն շրջանի գրականությունը, որի ընդհանուր բնութագրականը համառոտիվ տրվեց վերևում, չէր զարգանում բացարձակապես անկախ ու ինքնաբավ, կտրված մշակութային մյուս կենտրոններից: Ինչքան էլ անմրցակից լինեին Մխիթարյանները, այնուամենայնիվ նրանք ստիպված էին հաշվի նստել մյուսների հետ, նկատի ունենալ այլ քաղաքներում գտնվող մեր մյուս գործիչներին, բանավիճել նրանց հետ, ընդունել կամ մերժել նրանց տեսակետները: Հայտնի է, որ դեռևս XVIII դարասկզբին, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից անկախ և որոշ դեպքերում հակադրվելով նրան, իրենց ինքնուրույն գրական-գեղարվեստական, հայագիտական և հրապարակախոսական գործունեությունն էին զարգացնում Օսմանյան կայսրության իրավասության ներքո գտնվող մշակութային մեր մյուս կենտրոնները, հիմնականում Պոլիսն ու Զմյուռնիան: Հատկապես այս քաղաքներում, Մխիթարյանների հետ գրեթե միաժամանակ, հանդես եկավ գրողների, հրապարակախոսների, քննական բնագրերի հրատարակիչների, հասարակական կյանքի տեսաբանների մի պատկառելի համախումբ, որոնց

գործունեությունը իր որոշակի երանգն էր մտցնում դարասկզբի մեր գրականության պատմության մեջ:

Եթե XIX դարասկզբի եվրոպական պետություններն աշխարհին հիացնում էին իրենց առաջադիմությամբ, պետական կառավարման բնագավառում ձեռք բերած նվաճումներով, գիտության, մշակույթի, արվեստների համընդհանուր և որոշ դեպքերում դարակազմիկ նշանակություն ունեցող վերելքով, ապա Օսմանյան Թուրքիան, այս տեսակետից, դեռևս գտնվում էր միջնադարյան հետամնացության խոր քնում: Թուրքական ռազմա-ֆեոդալական կառավարման սիստեմը, որը հարազատ որդին ու ժառանգորդն էր երկրի հետամնաց, ֆեոդալական կարգի, խարսխված էր բռնության զանազան բնույթի ներպետական հասարակական-քաղաքական հարցերը ուժի օգնությամբ լուծելու, երկրում ծայր առնող այս կամ այն իրադարձությունը սրով ու զենքով ավարտին հասցնելու «մեթոդի վրա»: Կաշառակերությունը, որ լայնորեն տարածված էր կառավարական բոլոր օղակներում, դարձել էր այն հիմնական միջոցներից մեկը, որի օգնությամբ կարելի էր հասնել ցանկացած նպատակին, ձեռք բերել մտադրվելի պաշտոնը, տեր դառնալ այն իրավունքներին, որին հետամուտ էր տվյալ անհատը և ընդհակառակը՝ տապալել դիմացինին, վնասել կամ վերջնականապես շարքից հանել ախոյանին: Եվ չնայած թուրքական կառավարությունը մեկից ավելի անգամ ի լուր աշխարհի ազդարարեց կայսրության մեջ մոտ ապագայում կատարվելիք բարեփոխությունների, երկիր սահմանադրական դեմոկրատիզմի հենքի վրա վերակառուցելու, գիտությանն ու լուսավորությանը զարկ տալու մասին, սակայն կայսրությունը մեկ-երկու աննշան և տեղական բնույթի փոփոխություններով հանդերձ, հիմնականում մնաց այն, ինչ որ էր ի սկզբանե:

Է՛լ ավելի անմխիթար վիճակում էին գտնվում Թուրքիայում բնակվող այլազգիները, կամ, ինչպես կոչում էին նրանց անգամ պաշտոնապես՝ «գյավուրները»: Եթե, այնուամենայնիվ, կային ինչ որ իրավունքներ ու օրենքներ, որոնք պաշտպանում էին, ասենք՝ թուրքին՝ թուրքի ոտնձգություններից, ապա որևէ չափով հաստատուն օրենքներ գոյություն չունեին «գյավուրների» համար: Կրոնական հալածանքների, թալանի, ավարառության նպատակով կատարվող բացահայտ սպանությունների համար

կառավարությունը բավարարվում էր մեղավորի առերես հանդիմանությամբ, քիչ դեպքերում նաև մարմնական թեթև պատիժներ տալիով, դրամական տուգանքների ենթարկելով, մեկ կամ մի քանի շաբաթվա բանտարգելության դատապարտելով:

Օսմանյան կայսրության վարած ներպետական այս քաղաքականությունը պողպատե մամլիչի նման ամենից ավելի ճնշում էր հայ ժողովրդի լայն զանգվածներին: Եվ եթե առանձին հայազգի անհատներ կարողացել էին ժամանակի ընթացքում բավական ակնառու տեղ և դիրք ունենալ պետության ներքում, հասնել Թուրքիայի՝ այժմյան տերմինաբանությամբ ասած՝ ֆինանսների մինիստրի («փողերանոցի պետ»), ռազմական մինիստրի («արքունի վառոդապետ»), շինարարության մինիստրի («արքունի ավագ ճարտարապետ») և ուրիշ բարձր պաշտոնների (և որպես այս բոլորի բնականոն հետևանք՝ 19-րդ դարի սկզբներից սկսած իր ընդհանուր գծերով արդեն ձևավորվել էր հայկական առևտրական բուրժուազիան), ապա դա հետևանք էր ոչ թե պետության ընձեռած հնարավորությունների, այլ իրենց՝ հայերի ձեռներեցությանն ու գործիմացությանը:

Այս պայմաններում նոր-նոր ձևավորվել սկսող հայկական բուրժուազիան բնականաբար պետք է հենարան փնտրեր սեփական ժողովրդի մեջ: Հանրահայտ է այն դրույթը, որ բուրժուազիան զարգացնելով ու ամբողջացնելով այն ազգը, որի արդյունքն է ինքը, այդ ամենն անում է ոչ թե բարձր հայրենասիրությունից և ջերմ ազգասիրությունից դրդված, այլ իր համար ամուր հենարան պատրաստելու և այդ հենարանի շնորհիվ իր գործունեությունների ոլորտն ընդարձակելու համար: Բուրժուական այդ միջավայրի ծնունդ, ժամանակի եվրոպական լիբերալ հայացքներին քիչ թե շատ հաղորդակից հայ մտավորականությունը ազգային համախմբվածության ու առաջադիմության ուղին տեսնում էր լուսավորության մեջ: Դրա հետևանքով էլ, Օսմանյան կայսրության երկու խոշոր կենտրոններում՝ Պոլսում և ապա Զմյուռիայում XIX դարասկզբից հենց, մշակութային կյանքի նկատելի վերելք զգացվեց:

Եվրոպական երկրների հետ վաղուց ի վեր շփման մեջ գտնվող, միջազգային նավագնացության խոշորագույն հանգույցներից մեկում, Պոլսում, դեռևս XVII-XVIII դարերից զարգանում էր հայկական տպագրությունը: Այնտեղ են ապրել ու

ստեղծագործել գրական-հասարակական այնպիսի խոշոր և որոշ իմաստով անփոխարինելի դեմքեր, ինչպիսիք են Երեմիա Քյոմուռճյանը, Հակոբ Նայանը, Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին և ուրիշներ: Ինչպես տեսնում ենք, սկսած XIX դարի սկզբներից, լուսավորական-առաջադիմական շարժման համար արդեն ստեղծվել էին մի շարք նպաստավոր նախապայմաններ: Պոլսում ծայր առավ կրթական գործը, որը նախ և առաջ արտահայտվեց նորանոր վարժարանների հիմնադրումով: 1812 թ. ստեղծվեց պոլսահայ առաջին գրական-հասարակական կազմակերպությունը՝ Արշարունյաց ընկերությունը: Ընկերությունը հրատարակում էր ժողովրդին մատչելի գրքեր, ուներ իր տպագիր օրգանը, որը թեև հրատարակվում էր Վենետիկում, բայց տարածվում էր հայաշատ վայրերում և հատկապես Պոլսում, կազմակերպում էր թատերական ներկայացումներ և այլն: Այստեղ, 1832 թ., Գևորգ Գրիգորյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Լրո գիր մեծի տերությանն օսմանյան» շաբաթաթերթը, որը նշանակալի դեր կատարեց պոլսահայության գրական ճաշակի կազմավորման գործում: Գրական-կրթական ուղղություն ունեցող վերոհիշյալ հաստատությունները, հրատարակվող գանազան բնույթի ու բովանդակության գրքերը մշակութային կյանքի աշխուժացում առաջ բերեցին Պոլսում, համեմատաբար ծաղկուն վիճակ ապահովելով նրա համար:

XIX դարի 20-ական թվականներից սկսած, հայրենի գիր-գրականության ու մշակույթի բնագավառում, Պոլսի հետ միասին աչքի էր ընկնում նաև Օսմանյան կայսրության երկրորդ նշանավոր քաղաքը՝ Ջոյուռնիան: Ջոյուռնիայի հայ վաճառականները գործարար լայն կապեր ունեին ոչ միայն Թուրքիայի վաճառաշահ գանազան քաղաքների հետ, այլև եվրոպական առևտրի այնպիսի կենտրոնների հետ, ինչպիսիք էին Հավրը, Մարսելը, Լիվոռնոն, Ճենովան, Տրիեստը: Ջոյուռնիայում էին գտնվում հայկական հոգևոր կյանքի երկու նշանավոր կենտրոնները՝ Մեսրոպյան արական վարժարանը և Հռիփսիմյան իգական դպրոցը: Ընդհուպ մինչև XIX դարի կեսերը հիշյալ հաստատությունները լավագույններն էին, որոնց մասին դրվատանքով ու հիացմունքով էին արտահայտվում հայ և եվրոպացի բազմաթիվ մտավորականներ: Իրենց ականավոր տեսուչ-ուսուցիչների՝ Հովհաննես Վանանդեցու, Ռուբեն-Անդրեաս Փափագյանի, Ղուկաս Պալդազարյանի, Գրիգոր Կոստանդյանի (վերջին երկուսը

իզական դպրոցի տեսուչն ու օտար լեզվի ուսուցիչներն էին) հոգաձու խնամքի շնորհիվ, Մեսրոպյան վարժարանն ու Հռիփսիմյան դպրոցը, նախկին մտրակով ու ֆալախկայով ուսման փշրանքներ տարածող եկեղեցական կրթարաններին հակընդդեմ, դարձել էին եվրոպական տիպի դպրոցներ և իրենց բարգավաճման գագաթնակետին էին հասել: Այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչու այս կրթական հաստատությունները անհետաձգելի կերպով դնում էին հայերեն գրքեր ունենալու, սովորող երիտասարդությանը դարի հասարակագիտական, տնտեսագիտական, պատմական, բնագիտական, գեղարվեստական մտքի կարևորագույն նվաճումների հետ մայրենի լեզվով ծանոթացնելու հրամայական պահանջը: Զմյուռնիայի, ինչպես և Պոլսի հայկական համայնքի գրական արտադրանքը քննելիս, որոշակիորեն աչքի է զարկում հիշյալ հարցերն արծարծող ինքնուրույն կամ թարգմանական գրականության առկայությունը: Այդ կարգի գործերի վերնագրերն անգամ՝ «Գիրք մեծագին և պատվական ականց», Պոլիս, 1807 (թարգմանություն պարսկերենից), «Տաղարան հարուստ, վայելուչ և գեղեցիկ», Պոլիս, 1816, «Քերականություն անգլիարեն և հայերեն», Զմյուռնիա, 1835, «Արկածք Արիստովնոսի», Զմյուռնիա, 1843 (թարգմանություն ֆրանսերենից), «Մայր որդեխնամ», Զմյուռնիա, 1843 (թարգմանություն անգլերենից), «Համառոտ աստղաբաշխություն», Զմյուռնիա, 1841 (թարգմանություն անգլերենից) և այլն, արդեն բավարար հստակությամբ բացահայտում են հետաքրքրությունների այն սահմանները, որոնք զբաղեցնում էին Զմյուռնիայի ու Պոլսի առաջադեմ հայությանը:

Մեծ ու արգասավոր աշխատանք էր կատարվում նաև հայ ժողովրդի պատմական անցյալին նվիրված գրքեր ստեղծելու և հայ դասականներին հրատարակելու ու մեկնաբանելու ուղղությամբ: Դիտված է, որ բուրժուազիան իր վերելքի ժամանակաշրջանում ազգն ի մի հավաքելու հետ միաժամանակ, սկսում է զբաղվել իր պատմական անցյալի ուսումնասիրմամբ ու դասական համարվող արժեքների գնահատությամբ: Լույս աշխարհ եկան Ագաթանգեղոսի (Պոլիս, 1822), Եղիշեի (Պոլիս, 1823) և հայ հին ու նոր մյուս դասականների գործերը:

Այս ամենի բաղկացուցիչ մասն էր կազմում ինքնուրույն գեղարվեստական գրականության առկայությունը, որը դարասկզբին արդեն որոշակիորեն զգացնել էր

տալիս իրեն: Պոլսի և Ջմյուռնիայի հայ գրողները գերազանցապես շարունակում ու խորացնում էին գրական այն նվաճումները, որոնց արդեն հասել էին Վենետիկի Մխիթարյանները: Այստեղ էլ ստեղծագործության թեման հայ ժողովրդի պատմական անցյալն էր, այստեղ էլ տիրապետող ժանրը չափածո գեղարվեստական ստեղծագործություններն էին, իսկ չափածոյի մեջ՝ ներբողն ու դրվատական բանաստեղծությունները, այստեղ էլ գեղարվեստական արձակի սակավաթիվ նմուշները իրենցից ներկայացնում էին նովելի չափերն ունեցող փոքրակտավ գործեր, որոնք ավելի շուտ անեկդոտի բնույթ ունեին: Մասնակի տարբերությունը թերևս կայանում էր նրանում, որ Պոլսի և Ջմյուռնիայի հայ գրողները ավելի ազատ էին թեմաներ ընտրելու հարցում և ավելի անկաշկանդ, ինքնուրույն և նույնիսկ համարձակ՝ գեղարվեստական խոսքի մեջ: Գալով գրական ուղղությանը, պետք է ասել հետևյալը: Մոցիալ-քաղաքական այն բոլոր պատճառները, որոնք հիմք հանդիսացան վենետիկցիների մոտ կլասիցիզմի՝ որպես գրական ուղղություն ձևավորելու ու զարգանալու համար, նույնությամբ կամ շատ աննշան տարբերություններով առկա էին նաև Պոլսում ու Ջմյուռնիայում: Ուստի զարմանալի չպետք է թվա, որ հիշյալ քաղաքների հայ գրողներն ու արձակագիրներն էլ սկսեցին ստեղծագործել կլասիցիզմի ոճով ու ոգով, սկսեցին հանդես գալ որպես կլասիցիստ հեղինակներ: Գրական այդ ուղղությունը սկզբնական շրջանում այնքան էլ հստակ և իր դրսևորումների մեջ այնքան էլ որոշակի չէր, ինչպես, ասենք՝ Մխիթարյան միաբանության գրողների մոտ: Բայց աստիճանաբար այն ավելի ու ավելի հաստատուն կերպով տեղակայվեց պոլսեցի և զմյուռնիացի հայ հեղինակների մոտ, իսկ Հովհան Վանանդեցին իր «Արփիական Հայաստանի» (Պոլիս, 1836) և «Ոսկի դար Հայաստանի» (Ջմյուռնիա, 1841) դյուցազներգություններով վերջնականապես հաստատեց կլասիցիզմը որպես տիրապետող գրական ուղղություն արևմտահայ գեղարվեստական գրականության մեջ:

Գրական-թարգմանական-հրատարակչական գործի համեմատաբար աշխուժացումը, հայ հասարակական-քաղաքական կյանքի քիչ-շատ բարգավաճումը, ինչպես նաև արտաքին նպաստավոր մի շարք գործոնները ծնեցին ինքնուրույն և սեփական լեզվով պարբերական մամուլ ունենալու գաղափարը, որը մեկ-երկու նախապատրաստական

փորձերից հետո, հիմնավորապես պետք է մարմին առներ Ջոյունիայում՝ 1840 թ. կեսերից, վաճառական ՂուկասՊալդագարյանի ջանքերով ու սատարմամբ: Գործի գլուխ, ինչպես տեսնում ենք, դարձյալ կանգնել էր բուրժուազիան և Ղուկաս Պալդագարյանի թերթը, որն ուներ բավական հաջող գտնված «Արշալույս Արարատյան» վերնագիրը, գերազանցապես հանդիսանում էր հենց այդ կարգի տրամադրությունների ձայնավողը: «Արշալույս Արարատյանը» լայն ընդունելություն գտավ, հասնելով հայաշատ բոլոր անկյունները: Իր շուրջը հավաքելով հիմնականում Ջոյունիայի կարող ուժերին (Տիգրան Մավալանյան, Գրիգոր և Գալուստ Կոստանդյաններ, Արամ և Հարութ Տետեյաններ, Ստեփան Փափագյան, Մատթեոս Մ. Այվատյան և այլն) և ունենալով Ռուբեն Անդեաս Փափագյանի ամենասերտ օգնությունն ու օժանդակությունը, Պալդագարյանը կարողացավ իր թերթը դարձնել հայության համար ուշագրավ և կարևոր երևույթներից մեկը: Շաբաթաթերթը լայն ընթերցողների սեփականությունը դարձնելու համար Պալդագարյանը տպագրում էր հրապարակախոսական բնույթի հոդվածներ, առևտրական և առօրյա մեծ ու փոքր լուրեր, եվրոպական լեզուներից կատարված չափածո և արձակ թարգմանություններ, շուտասելուկներ, անեկդոտներ: Չնայած իր պահպանողական ուղղությանը, «Արշալույս Արարատյան»-ը նշանակալի դեր կատարեց՝ ներբերելով պարբերականի կուլտուրան թուրքահայոց մեջ հատկապես, և հայության համար ընդհանուր առմամբ, նա կարողացավ աճեցնել հայ մտավորականների մի պատկառելի համախումբ: Բավական է ասել միայն, որ իր առաջին քայլերը գրականության անդաստանում Ստեփան Ոսկանյանը սկսեց «Արշալույս Արարատյանում» և հետագայում էլ՝ իր գաղափարական հակառակորդների դեմ պայքարելիս նա հաճախ էր դիմում Պալդագարյանի շաբաթաթերթի օգնությանը, հանդես գալով նրա էջերում:

Ազգային տեսակետից այսպիսի ինքնաճանաչում ապրող և զարգացման ու վերելքի պայմաններում գտնվող արևմտահայ մտավորականությունը, սակայն, շուտով երես առ երես բխվեց այնպիսի վտանգավոր հակառակորդի հետ, ինչպիսին էր կաթոլիկ-լուսավորչական կրոնական պայքարի հիման վրա ծնված ազգային պառակտումը: Կաթոլիկ-լուսավորչական դավանաբանական պայքարը, որն իր ամբողջ

ուժով մոլեգնում էր նաև XIX դարի առաջին կեսին, ազգը փաստորեն բաժանել էր երկու անհավասար, իրար հանդեպ անգուսպ թշնամությամբ լցված հատվածների, որոնք անում էին այն ամենն, ինչ հնարավոր է, իրար ավելի շատ վնասելու ու վարկաբեկելու համար: Բանը հասել էր այնտեղ, որ թունդ կաթոլիկ հայերը պաշտոնապես իրենց հայ չէին համարում, հրաժարվում էին այն ամենից, ինչ հայկական էր և ազգային սրբություն, հրաժարվելով ազգային եկեղեցուց նրանք հրաժարվում էին նաև ազգային լեզվից ու մշակույթից, իրենց երեխաներին չէին ուղարկում հայկական դպրոցները: Իհարկե, կարծել, թե պայքարը գնում էր այնպիսի նեղ-կրոնական հարցերի շուրջ, ինչպիսիք են, օրինակ, աղոթելիս աջ ձեռքը տանել ճակատին թե ոչ, կամ պաշտամունքի արարողություն սկսելուց առաջ նախապես պետք է հայր աստծու անունը հիշատակել, թե նրա որդու՝ Քրիստոսի և այլն, – կլինի սխալներից ամենակոպիտը, որովհետև այդ կարգի հարցերը սկզբից իսկ դրվեցին այնպիսի անէական ձևով, որ հավասարազոր էր նրանց չլինելուն: Պայքարը հիմնականում հանգում էր կաթոլիկության պարագլուխ Հռոմի, հետևաբար ամբողջ կաթոլիկ Եվրոպայի և լուսավորչական Էջմիածնի գերիշխանությունն ընդունելուն, իսկ սա էլ, անխուսափելիորեն բերում էր ազգային կողմնորոշման հետ առնչվող բարդ խնդիրներ: Սկզբնական շրջանում, երբ կաթոլիկ քարոզիչները դեռ զգույշ էին և բավարարվում էին սուկ հայտարարելով, որ իրենց գործունեության միակ նպատակը բազմաչարչար հայ ժողովրդին ըստ իրենց կարողությունների ու գիտելիքների լուսավորելն է և եվրոպական մշակույթին հաղորդակից անելը, այդ պայքարը աննշան էր, ընդհանուր առմամբ բավական մեղմ և համեմատաբար տեղական բնույթ ուներ: Բայց հետագայում, առանձնապես XVIII դարի վերջերից սկսած, երբ կաթոլիկները ավելի ու ավելի բարձրաձայն սկսեցին հայտարարել, որ իրենց նպատակը հայ ժողովրդին Հռոմի պապի «սրբազան իշխանության ներքո» տեսնելն է, այստեղից բխող իր բոլոր հետևանքներով հանդերձ, պայքարն արդեն սուր բնույթ ընդունեց: Այս տեսակետից չի կարելի ուրանալ պոլսահայ մտավորականության դերը, որն ամբողջ հայության համար բացահայտեց «գառնազգեստ գայլության» այդ նենգ քաղաքականությունը, որ վարում էին կաթոլիկները, և այդ քաղաքականության մոտակա ու հեռավոր վնասները հայության համար: Հարցն ավելի սրվեց, բարդացավ և գրեթե

համազգային բնույթ ընդունեց դարի 60-ական թվականներից սկսած, երբ հայ ժողովրդի հոգևոր «փրկության», նրան «ճշմարիտ հավատի բերելու» հոգսերը իր վրա վերցրեց Անտոն Հասունյանը՝ հոգով օտար ու օտարասեր մի գործիչ, որի ծավալած գործունեությունը դարակեսի հայկական կյանքի ամենատխուր և մոայլ էջերից մեկն է:

Վերոհիշյալ պայքարն արտացոլող գործերի ճնշող մասն արտացոլված է մեր ժամանակագրության մեջ, և դրանց հետ ծանոթանալը զգալի չափով կօգնի հետազոտողներին՝ XVIII դարավերջի և XIX դարի կեսի հայկական իրականությունը հուզող դեպքերի և այդ դեպքերը ծնող պատճառների մեջ խորամուխ լինելու համար:

Այս է Օսմանյան կայսրության հովանու ներքո ծվարած արևմտահայության գիտա-գեղարվեստական գրականության, և այդ գրականությունը ծնող պատճառների ընդհանուր բնութագիրը: Իհարկե, այս շրջանի պոլսահայ և զմյուռնիահայ գաղութները դեռ այն չէին, ինչ պիտի դառնային հետագայում, XIX դարի երկրորդ կեսից սկսած, երբ հատկապես պոլսահայ գաղութը աստիճանաբար առաջադիմելով՝ պետք է հասներ իր զարգացման գագաթնակետին և իր գրական-գեղարվեստական, հայագիտական-բանասիրական մտքի խոշոր ներկայացուցիչներով տոն ու ուղղություն տար ամբողջ հայ մշակույթին, գոնե մի քանի հիմնական հարցերում: Բայց այս՝ քննարկված ժամանակաշրջանում են հասունանում և արմատակալում այն սոցիալ-քաղաքական պայմանները, որոնք պետք է վերելք ապահովեին մեր մշակույթի համար: Միաժամանակ, այդ նույն հասարակական-քաղաքական պայմանների հետևանքով էր, որ հետագայում պետք է ծնվեր հայ ժողովրդին բնաջնջող և այդ բնաջնջումը խրախուսող Օսմանյան կայսրության համապետական քաղաքականությունը:

Արևելյան Հայաստանի մշակութային կենտրոններին անդրադառնալիս, անհրաժեշտ է ամենից առաջ նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Դարասկզբի հայ գրականությունը, իր ամբողջության մեջ վերցրած, գերազանցապես զարգանում էր ոչ թե բուն Հայաստանում, այլ Ռուսական կայսրության հայաշատ քաղաքներում, գլխավորապես Աստրախանում, Մոսկվայում, Պետերբուրգում, Նոր Նախիջևանում, ինչպես նաև Թիֆլիսում, Շուշիում և մասամբ միայն՝ Էջմիածնում: Այստեղից էլ

հասկանալի է, որ ռուսահայոց գրականությունը քննելիս պետք է նախ՝ նկատի ունենալ հիշյալ քաղաքների գրական արտադրանքը և այդ արտադրանքը ծնող սոցիալ-քաղաքական պատճառները: Հետագայում միայն, 1850-ական թթ. հետո, փոխվեց նաև վերոհիշյալ կենտրոնների ունեցած տեղը հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Իրենց առաջատար դիրքերն աստիճանաբար կորցրին Աստրախանը, Պետերբուրգը, Նոր Նախիջևանը: Այս բոլորի հետևանքն այն եղավ, որ ռուսահայերի գրական-հասարակական մտքի կենտրոնը Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից աստիճանաբար տեղափոխվեց դեպի հարավ, դեպի Կովկաս, ավելի կոնկրետ՝ Թիֆլիս ու Բաքու:

Մոայլ, անմխիթար պատկեր էր ներկայացնում բուն Հայաստանի գրական-մշակութային կյանքը XIX դարի առաջին կեսին: Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները, որոնք ընդհանուր առմամբ տևեցին տասնութ տարի և հիմնականում տեղի էին ունենում հայկական բնաշխարհում, տնտեսական քայքայման և հոգևոր անկման հասցրին երկիրը: Այդ պատերազմների ընթացքում համայն հայության մշակութային կենտրոնը՝ Էջմիածինը մոտ հինգ անգամ ձեռքից ձեռք անցավ, եղան քաղաքներ (Ելիզավետպոլ, Կարս, Բայազետ, Արդահան և այլն), որոնք կորցրին իրենց բնակչության հայկական տարրի կեսից ավելին: Դրության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ հայ ժողովուրդն անտարբեր դիտող չէր այդ պատերազմներում և հնարավոր ամեն ինչում օգնում ու օժանդակում էր ռուսական բանակներին: Սակայն հետևանքն այն էր լինում, որ երբ ռուսական բանակները զանազան պատճառներից դրդված, ստիպված էին լինում ետ քաշվել, անպաշտպան մնացած հայ ժողովուրդն ունենում էր միանգամից երկու հակառակորդ՝ պարսիկներն ու թուրքերը, որոնք հայերի հետ վարվում էին որպես ռիստերիմ թշնամու:

Դրությունը մխիթարական չէր նաև պատերազմների միջև ընկած խաղաղության սակավատև տարիներին: Ամենայն հայոց կաթողիկոսի՝ Հովսեփ Արղության-Երկայնաբազուկի մահը, որը տեղի ունեցավ ճիշտ դարասկզբին, իրենով նշանավորեց հայկական իրականության մեջ աղմկահույզ ու կրքոտ պայքարի սկիզբը, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Դավիթ-Դանիելյան պայքար» անունով

և որը ծանր հետևանքներ ունեցավ: Պայքարի էությունը, մի պայքար, որի շուրջը ընդարձակ գրականություն է ստեղծվել, կարելի է համառոտակի արտահայտել մեկ նախադասությամբ, այն է՝ ռուսները քաղաքական-հասարակական նպատակներից ելնելով, Էջմիածնի կաթողիկոսական աթոռին կամենում էին տեսնել իրենց կողմնակցին՝ Դանիելին, իսկ պարսիկներն ու թուրքերը, առաջնորդվելով նույն մտայնությամբ, առաջ էին քաշում Դավթի թեկնածությունը: Ըստ որում, այդ պայքարի ընթացքում երեք պետությունների կողմից կիրառվեց հնարավոր ամեն տիպի ճնշում ու բռնություն, ընդհուպ մինչև զինվորական ուժը: Այս պայմաններում զարմանալի չպետք է թվա, որ 1809 թ. կաթողիկոսական աթոռը ժառանգած Եփրեմը, իսելացի, բայց թուլամորթ ու քաղաքականապես կարճատես մի մարդ, է՛լ ավելի պիտի խճճեր ռուս-թուրք-հայ-պարսկական հարաբերությունները, և ի վերջո, նորանոր աղետներից խուսափելու համար, պետք է գլուխն ազատեր հրաժարական տալով: Ռուսահայոց քաղաքական կողմնորոշման հարցն, այսպիսով, դարձել էր անմիջականորեն սահմանամերձ երեք ուժեղ պետությունների դիվանագիտական խաղերի առարկա, և այս հանգամանքը, ասես, գալիս էր լրացնելու պատերազմների հետևանքով ստեղծված անմխիթարական կացությունը, որը տիրում էր երկրում: Հասկանալի է, որ նման իրադարձությունների պայմաններում Հայաստանում գրական-մշակութային որևէ լուրջ շարժում ծայր առնել չէր կարող և որ հայ մտավորականները պետք է աշխատեին իրենց գործունեությունը ծավալել Հայաստանից դուրս, տվյալ դեպքում Ռուսաստանի հայաշատ քաղաքներում: XIX դարասկզբին Ռուսահայաստանում նույնպես առաջին պլան է քաշվում կրթական-դպրոցական տիպի հաստատությունների ստեղծման գործը: Եթե նկատի չունենանք մեկ-երկու աննշան դպրոցները, որոնց մասին նույնիսկ մասնագետները բավարարվում են մեկ-երկու նախադասություններով միայն, ապա 1810 թ. Աստրախանում, Նիկողայոս Աղաբաբյանի օժանդակությամբ հիմնված հայկական «Աղաբաբյան վարժարանը» իրենով նշանավորում էր կրթական գործի սկիզբը: Դպրոցի անունն ու հեղինակությունը մեծապես տարածվում են նաև այն պատճառով, որ առաջին տեսուչը՝ Սերովբե Պատկանյանը ճիգ ու ջանք չէր խնայում իրեն վստահված հաստատությունը ըստ հնարավորին զարգացնելու, կրթական մեծակշիռ հիմնարկ դարձնելու համար: Նման

ջանադիր գործունեության հետևանքն այն եղավ, որ Աղաբաբյան վարժարանը շուտով ունեցավ մինչև 150 աշակերտ: Նրա շրջանավարտների թվում էր Հարություն Ալամդարյանը, մի հեղինակ, որը դարձավ հայ նոր գրականության հիմնադիրներից մեկը: Դժվար է ասել, թե զարգացման ինչպիսի հեռանկարներ կունենար Աղաբաբյան վարժարանը, եթե նրա տեսչի չափազանց մեծ եռանդը՝ վարժարանը հնարավորին չափ ավելի մեծ և ավելի բազմաընդգրկուն տեսնելու, աստիճանաբար չվերածվեր իր իսկ հակադրությանը, որը, իր հերթին, պատճառ դարձավ վարժարանի փակվելուն:

Հայկական հաջորդ երկու դպրոցների հանդես գալը, մեկը Մոսկվայում՝ 1815 թ., և մյուսը՝ Թիֆլիսում, 1824 թ., արդեն նշանակալից իրադարձություն էր մեր ժողովրդի հոգևոր կյանքում: Դրանցից առաջինը՝ հանրահայտ Լազարյան ճեմարանն էր, որի առաջին հոգաբարձուն (տեսուչ) էր նրա ֆինանսական օժանդակողը՝ Հովակիմ Լազարյանը, իսկ մյուսը, ոչ պակաս հանրահայտ Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցն էր, որի տեսչի պարտականությունները կատարում էր Հարություն Ալամդարյանը: Շնորհիվ Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի, հայ ժողովուրդն առաջին անգամ ծանոթացավ եվրոպական դրվածքի բարձրագույն կրթական հաստատությունների հետ, որոնք համալրված էին ժամանակի գիտական-մանկավարժական լավագույն ուժերով: Վերոհիշյալ երկու կրթական հիմնարկները մեծ անուն ու հեղինակություն ձեռք բերեցին, դարձան հայկական ուսումնական հաստատությունների մեջ լավագույնը և, որ ավելի ուշագրավ է, ստեղծվեց հայ մտավորականություն՝ այս հասկացողության լիարժեք իմաստով, որին էլ վերապահվեց հայրենի գրականության անդաստանում որոշիչ խոսքն ասելու պատիվը:

Չափազանց կարևոր և հետաքրքրության արժանի է ճեմարանին և դպրոցին կից ստեղծված տպարանների գոյության հանգամանքը: Ինչպես այս երկու, այնպես էլ Շուշիում, 1827 թ. իր գոյությունն սկսած Շվեյցարիայի քարոզիչների հիմնադրած հայկական տպարանը գալիս են հաստատելու, որ XIX դարի սկզբներից արդեն արևելահայ հրատարակչական գործունեությունը իր հունի մեջ էր ընկել: Մինչև հիշյալ տպարանների հիմնադրվելը, հայերեն լեզվով հրատարակությունները սակավաթիվ էին: Բայց դրությունը փոխվում է, երբ Մոսկվայում, Թիֆլիսում և մասամբ նաև Շուշիում

սկսվում են աստիճանաբար ծավալվել հրատարակչական աշխատանքները: Հրատարակված մի քանի գրքերից ուշադրության առավել արժանին 1821 թ. Մոսկվայում լույս տեսած Հարություն Ալամդարյանի «Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ» («Краткий российско-армянский словарь») աշխատությունն է: Մենք տեսանք, թե քաղաքական պայմանների հետևանքով ինչու էր հայ ժողովրդի մեծամասնությունը հակված դեպի Ռուսաստանը: Ալամդարյանի բառարանը այդ տրամադրությունների ամենաամբողջացված արտահայտությունն էր: Բավական է ասել, որ առաջաբանում հեղինակը ռուս ժողովրդի բարեմասնությունները թվարկելուց հետո, Ռուսաստանը համարում է այն նոր Աթերքը, որտեղից պետք է համայն հայության վրա սփռվեն ուսման և գիտության կենարար ճառագայթները:

Կրթական-հրատարակչական գործը հետագա տարիներին շարունակում է զարգանալ հարաճուն թափով: Դրան խոշոր չափով նպաստում է 1829 թ. Ադրիանապոլսի դաշնագրությունը՝ կնքված Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որի հետևանքով ստեղծվում է համեմատաբար երկարատև խաղաղության մի ժամանակաշրջան: Ամբողջ ուժով իր գործունեությունն է ծավալում Հայաստանի ռուսոֆիլ կուսակցությունը, որը, շնորհիվ իր եռանդուն առաջնորդի՝ Ներսես Աշտարակեցու, կարողացել էր հասնել հայ ժողովրդի մեջ ռուսասիրական տրամադրությունների վերջնական ամրապնդմանը: Դրությունն ավելի բարելավվեց 1830 թ., երբ Ռուսաստանի Լուսավորության մինիստրությունը կարգադրություն արեց գեներալ Պասկևիչին, ըստ որի՝ թույլատրվում էր Հայաստանում մայրենի լեզվով դասավանդվող դպրոցներ բանալ, որոնց ֆինանսավորման գործը կառավարությունը վերցնում էր իր վրա: Պատերազմներից քայքայված երկիրը վերելքի ուղին էր բռնել, ուստի, ինչպես երբեք անհրաժեշտ էր հոգևոր սնունդ, անհրաժեշտ էին գիտական, քերականական, պատմական, գեղարվեստական և այլ բնույթի գրքեր: 1826 թ. Թիֆլիսում, զգալի կրճատումներով ու հավելումներով, հրատարակվում է Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» գիրքը, 1827 թ. Աստրախանում Գաբրիել Պատկանյանի՝ հունարենից կատարված թարգմանությամբ՝ Դիոդորոս Սիցիլիացու «Պատմութիւն մեծին Աղեքսանդրի Մակեդոնացույ» աշխատությունը և այսպիսով, հիմք

է դրվում պատմագիտական գործերի հրատարակմանը ռուսահայ իրականության մեջ: Նույն թվականին Մոսկվայում հրատարակված Միքայել Սալլանթյանի «Քերականութիւն գրաբառ լեզուիս հայոց» աշխատությունը, որը չնայած նախատեսված էր «ի պէտս աշակերտաց գերահռչակ ճեմարանին կառուցելոյ ի Մոսկով», բայց ամեն տեսակետից շատ էր դուրս գալիս այդ սահմաններից, եկավ ապացուցելու, որ ռուսահայերն էլ ունեն այդ ասպարեզի այնպիսի գիտակներ, որոնք կարող են մրցակից դառնալ վենետիկցիներին: 1828 թ. Պետերբուրգում, գրաբար և ռուսերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է «Արձանագրութիւնք, որք վերաբերին առ հաստատութիւն հաշտութեան ընդ Պարսկաստանի» ժողովածուն, որով սկզբնավորվում էր արխիվային մեծարժեք փաստաթղթերի հրատարակման կարևոր գործը, և որը հետագայում պետք է իր բարձրակետին հասներ ի դեմս Սերգեյ Գլինկայի և մանավանդ Ադոլֆ Բերժեի աշխատությունների: Մի տարի հետո, 1829 թ. Թիֆլիսում հրատարակված «Ողբ Եդեսիոյ» պոեմը, որը լույս աշխարհ էր եկել Հակոբ Շահան-Ջրպետյանի ջանքերով, ցույց տվեց, որ Արևելյան Հայստանում ևս գիտական տեքստ պատրաստելու հնարավորություններ կան:

Այս բոլորի կողքին, սակայն, և այս բոլորից ոչ պակաս նշանակալիցը դարակեսին տեղի ունեցած գրական այն իրադարձությունն էր, որին վիճակված էր մի ամբողջ պրոցեսի նախագդարարը հանդիսանալ: 1828 թ. Թիֆլիսում, Հարություն Ալամդարյանի ջանքերով, հրատարակվում է Ներսիսյան դպրոցի սաների բանաստեղծությունների ժողովածուն՝ «Երախայրիք Ներսիսեան դպրոցի», իսկ մի տարի անց, Մոսկվայում, Միքայել Սալլանթյանի ջանքերով, լույս է տեսնում Լազարյան ճեմարանի սաների ստեղծագործությունների ժողովածուն՝ «Մուզայք Արարատեան»: Այս երևույթի պատմական արժեքն ու նշանակությունը հեշտ է հասկանալ: Չնայած այն բանին, որ երկու ժողովածուներն էլ չէին փայլում իրենց մեծարժեք ստեղծագործություններով և հանդես եկած 56 սաներից միայն չորսին (Առաքել Արարատյան, Ստեփաննոս Նազարյանց, Սարգիս Տիգրանյան և Մկրտիչ Էդիլխանյան) էր վերապահված հայ մշակույթի ասպարեզում համեմատաբար աչքի ընկնող գործիչ լինելու պատիվը (ըստ որում ամեննին էլ ոչ այն բնագավառում, որով նրանք հանդես էին եկել վերոհիշյալ ժողովածուներում), այնուամենայնիվ «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» և «Մուզայք

Արարատեան»-ի կատարած դերը ակնհայտ է: Առաջին անգամ ռուսահայությունը ցույց տվեց, որ գեղեցիկ զգալու և գեղարվեստորեն վերարտադրելու կարողությունը մեռած չէ նաև իրենց մոտ, որ այստեղ էլ կան արձակագիրներ, բանաստեղծներ, ժողովրդական բառ ու բան մշակողներ, առակագիրներ և նույնիսկ հանելուկասացներ («Մուգայք Արարատեան»-ում «Հանելուկք» ընդհանուր խորագրի ներքո գետեղված են նաև այս կարգի գործեր), որոնք հետագայում կարող են դառնալ իրենց ընտրած ասպարեզի նշանավոր ներկայացուցիչները: Պատահական չէ, որ նշված երկու ժողովածուները ջերմորեն ընդունվեցին և գնահատվեցին հայության կողմից:

Գրական-մշակութային կյանքի հետագա զարգացումն արդեն հանգեցրեց սեփական հայկական թատրոն ունենալու գաղափարին: Երեսուն-քառասնական թվականներին կազմակերպվեցին առանձին թատերական ներկայացումներ Նոր Նախիջևանում, Թիֆլիսում, Շամախիում: Պիեսների թեման, մեծ մասամբ, վերցվում էր հայ ժողովրդի պատմության հերոսական անցյալից: Վերարտադրվում էին անցյալի փառքը կազմող իրադարձությունները, նորերին ևս այդ ոգով դաստիարակելու համար:

Այսպիսի զարգացումը պետք է անխուսափելիորեն ծներ այդ ամենը տեսական վերլուծման ենթարկելու, ժամանակի գրականագիտական մակարդակի և ըմբռնումների համաձայն ընդհանրացնելու միտումը: Այսպես, ծնվեց Սարգիս Տիգրանյանի՝ Ժան Ռասինի «Գոթոդիա» թարգմանությունը (Մոսկվա, 1834, գրաբար), որն այսօր էլ համարվում է լավագույններից մեկը, իր ընդարձակ (106 էջ) գրաբար առաջաբանով, ուր հեղինակը կլասիցիզմի դիրքերից էլնելով, քննում է թատերական արվեստի պատմության ու տեսության մի շարք հարցեր և հանգում ուշագրավ եզրակացությունների: Տիգրանյանի ուսումնասիրությունը՝ եվրոպական կլասիցիզմը ռուսահայության պայմաններում պատվաստելու և դարասկզբի գրական պրոցեսը այդ տեսանկյունով քննելու ու իմաստավորելու առաջին հաջողված փորձն է: Այն ճանապարհ հարթեց ռուսահայերի մոտ արդեն ձևավորվող կլասիցիզմի համար, ընդհանուր սկզբունքներ ու օրինաչափություններ թելադրեց այդ ուղղությանը դավանող հայ հեղինակներին: Եվ չնայած այն բանին, որ արդեն իրեն զգացնել էր տալիս գրական հաջորդ ուղղությունը՝ ռոմանտիզմը՝ հանձինս Հ. Ալամդարյանի ստեղծագործություն–

ների, որ Աբովյանն արդեն ասել էր իր որոշակի խոսքն այս նոր ուղղության սկզբունքներով, այնուամենայնիվ, ռուսահայոց պայմաններում կլասիցիզմին վիճակված էր որոշ ժամանակ իր ձեռքում պահել տիրապետող բարձունքները:

Մի քանի խոսք էլ կովկասահայոց կրոնական գաղափարաբանության վերաբերյալ:

Ասվեց արդեն, որ մինչև 20-ական թվականների վերջերը Հայաստանը հաջորդաբար ձեռքից ձեռք էր անցնում երեք, հավատի տեսակետից տրամագծորեն տարբեր երկրների՝ ուղղափառ Ռուսաստանի, մահմեդական Թուրքիայի և դարձյալ մահմեդական, բայց նախորդին հակընդդեմ Պարսկաստանի միջև:

Այս հանգամանքը կրոնական գանազան տարըմբոնողությունների համար այնպիսի պարարտ հող էր ստեղծում, որպիսին հազվագյուտ էր նույնիսկ Կովկասի նման բազմակրոն ազգություններ ունեցող երկրի համար: Եվ երբ, վերջապես, Հայաստանում հաստատվեց խաղաղությունը, հայ մտավորականության ներկայացուցիչներն անհապաղ ձեռնամուխ եղան հայ լուսավորչական կրոնի խարխլված դիրքերը վերականգնելու գործին: Երեսնական թվականներից հետո առանձնապես աշխուժանում են կրոնա-դավանաբանական գրականության հրատարակությունն ու պրոպագանդան: Հաջորդաբար և ժամանակի՝ համեմատաբար ոչ մեծ ընդմիջումներով, լույս են տեսնում «Համառոտություն քրիստոնեական վարդապետութեան» (Աստրախան, 1829), «Ընթերցուածք ի սուրբ գրոց հին կտակարանի» (Շուշի, նույն թվ.), «Համառոտ քննութիւն քրիստոնեական հաւատոյ և մահմետական կրօնի» (Մոսկվա, 1831), «Սկզբունք քրիստոնեական վարդապետութեան» (Մոսկվա, 1833), և այլ աշխատություններ: Այսպես էլ շարունակվեց հետագայում, և հազվագյուտ չէին այն դեպքերը, երբ մի տարվա ընթացքում, ասենք, Մոսկվան, Պետերբուրգը կամ Շուշին հրատարակում էին 5-6 անուն կրոնական գրականություն:

Այս բնույթի գործերին ծանոթանալիս, սակայն, աչքից չի վրիպում մի կարևոր հանգամանք, որը խիստ հատկանշական երանգ է մտցնում ռուսահայոց կրոնական գաղափարաբանության էության մեջ: Անդրադառնալով հարևան ժողովուրդների հավատալիքներին և հնարավոր ամեն ձևով հիմնավորելով այն թեզը, թե ինչու հայերը ոչ

միայն չէին կարող համակիր լինել, ասենք, մահմեդական, կաթոլիկ և այլ կրոններին, այլև պետք է գրեին ու գործեին դրանց դեմ: Հայ աստվածաբանները չթաքցված դրվատանքով էին խոսում ռուսական ուղղափառ եկեղեցու մասին: Սսեր Մսերյանն իր «Հրահանգ քրիստոնեական հաւատոյ» աշխատության մեջ (Մոսկվա, 1850) տարբերություն չէր դնում հայկական և ուղղափառ եկեղեցիների հավատների միջև և վերլուծություններ ու տեսական եզրահանգումներ կատարելիս այդ երկուսը դիտում էր որպես մի հավաքական ամբողջություն: Կրոնական մտայնությունն, այսպիսով, արևելահայության պայմաններում ևս, դարձավ ինքնաբավ, հասարակական-քաղաքական կյանքից մեկուսացված երևույթ:

XIX դարի առաջին կեսին հրատարակվեցին մի շարք գործեր, որոնք եկան նպաստելու ռուսական գրականության ու մշակույթի տարածմանը Հայաստանում, հետևաբար՝ հայերին հնարավորին չափ հաղորդակից դարձնելու ռուսական գրական-հասարակական կյանքին: Դրանցից են Խուդաբաշյանի «Գիրք նախակրթութեան հայկական լեզուի» («Учебная книга армянского языка». С.Петербург, 1838), նույնի երկհատորանոց «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» (Մոսկվա, 1838), Ն. Համազասպյանի թարգմանությամբ լույս տեսած «Թարգմանութիւնք արձակ և ոտանաւոր ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի Ժուկովսկիոյ, Պուշկինէ, Լերմոնտավայ, Բարատոնսկոյ և Գնեդիչէ» (Մոսկվա, 1843), Ն. Կոկչյանցի թարգմանած «Ծաղկաքաղ յառակայն Քոիլովի, Տմիթրևի և Խեմնիցերի» (Մոսկվա, 1849) և այլ աշխատություններն ու ժողովածուները, որոնք հաջողությամբ կարողացան կատարել պատմական այն կարևոր դերը, որի համար նրանք լույս աշխարհ էին եկել: Ռուսահայոց գրական-մշակութային գործունեությունն, այսպիսով, չնայած դարասկզբի ծանր պայմաններին, աստիճանաբար ընկնում էր բնականոն զարգացման իր հունի մեջ:

Գանք, վերջապես, հայկական մշակույթի հաջորդ կենտրոնին, հնդկահայ համայնքին:

Քաղաքական դեպքերի բերումով Հնդկաստանի հայաշատ քաղաքներից մեկը՝ Մադրասը, XIX դարի առաջին տասնամյակից հետո, առմիշտ դադարեցնում է իր

գրական-հասարակական գործունեությունը, և տեղի հայ մտավորականությունը տեղափոխվում է Կալկաթա: Այս երևույթի դրական արդյունքն այն էր, որ Կալկաթայի հայկական համայնքը համալրվում է նորանոր և կարող ուժերով, որն էլ, իր հերթին, չէր կարող բարենպաստ չանդրադառնալ տեղի հայկական մշակութային կյանքի վրա: Եվ եթե չմոռանանք, որ Կալկաթայի հայկական համայնքը ամենաբազմամարդն էր, ապա հասկանալի կդառնա, թե ինչու տասական թվականներից սկսած Կալկաթայում պետք է հանդես գար ջանասեր գործիչների մի փոքրիկ, բայց ուժեղ համախումբ, գործիչներ, որոնք պետք է իրենց ուսերին տանեին գրական-մշակութային կյանքի ամբողջ ծանրությունը: Դրանցից՝ Մատթեոս Սուլեյմանյանը, Մկրտում Սիմեոնյանը, Սարգիս Աղավալյանը, Հարություն Սահակյանը, Մարտիրոս Մկրտչյանը և ուրիշներ, հանդիսացան հնդկահայ ինքնուրույն ու թարգմանական գրականության, բանասիրության, պատմիչների հրատարակության գործի նախանձախնդիրները: Այդ վերելքն սկսվեց նրանով, որ 1810 թ. հրատարակվեց Շնորհալու «Ողբ Եդեսիա քաղաքի» (իմա «Ողբ Եդեսիոյ») պոեմը, որից անմիջապես հետո, 1811 թ. «Նոր տետրակ այբուբենական»-ը, որը հայազգի մանուկների համար դասագրքի դեր պիտի կատարեր: 1814 թ. լույս տեսավ Ջենոբ Գլակի «Պատմություն»-ը, որը հրատարակության էր պատրաստել Ջնթլում Ավետյանը, իսկ 1816 թ. տպագրվեց Եղիշեի «Պատմություն»-ը, դարձյալ Ջնթլում Ավետյանի սատարմամբ: Այս հրատարակությունները վկայում են, որ հնդկահայերն էլ սկսում են ուշադրության առնել ազգի պատմական անցյալը և այն դարձնում ուսումնասիրության նյութ, աճող սերնդին՝ ազգաճանաչման ու ազգապահպանման ոգով դաստիարակելու համար: Այս երևույթն ավելի որոշակի դարձավ 1821 թ. սկսած, երբ Կալկաթայում, երկարատև քաջքույններից հետո, իր գոյությունն սկսեց Հայոց մարդասիրական ճեմարանը:

Առանձին և հետաքրքրական ուսումնասիրության նյութ է ճեմարանի պատմությունը, հատկապես այդ պատմության սկզբնական շրջանը. այստեղ նշենք միայն, որ Հնդկաստանի կառավարությունը զանազան քաղաքագիտական միջոցներով աշխատում էր հասնել այն բանին, որ ճեմարանն ընդհանրապես գոյություն չունենա, կամ, լավագույն դեպքում, նրա մակարդակը չգերազանցի տեղական դպրոցների

մակարդակից: Իսկ հայերը, նույնպիսի նուրբ ու քաղաքագետ միջոցներով, ի վերջո կարողացան հասնել այն բանին, որ արգելառիթ բոլոր ջանքերն ի դերն ելան, և ճեմարանը հանդիսավորապես սկսեց իր գործունեությունը: Սա էլ իր հերթին գրական հոգսերի ու հոգածությունների առիթ տվեց հնդկահայ գաղութին: Նախ՝ անհրաժեշտ էին հմուտ ուսուցիչներ, որոնք քաջատեղյակ լինեին հայոց լեզվին և մատենագրությանը, և կարողանային այդ ամենը հասցնել մանուկներին: Անհրաժեշտ էին նոր դասագրքեր, որովհետև նախկինում հրատարակվածները թերատ էին, իսկ մյուս գաղութներինը (Վենետիկ, Պոլիս)՝ հարմարեցված էին իրենց վարժարանների խնդիրներին ու նպատակներին, հետևաբար չէին կարող պիտանի լինել Հնդկաստանի պայմաններում: Հարկավոր էին, վերջապես, մայրենի լեզվով ինքնուրույն կամ թարգմանական ընթերցանության գրքեր: Եվ ճեմարանի բացվելուց հետո մի զարմանալի գրական աշխուժություն է համակում հնդկահայ համայնքին: Իրար են հաջորդում վերոհիշյալ հարցերն ընդգրկող և այդ հարցերին պատասխանող մի շարք աշխատություններ, թարգմանական գեղարվեստական ստեղծագործություններ: Շարունակելով դեռևս Մադրասում սկսված գեղարվեստական գրականության թարգմանության սովորույթը (Մադրասում 1800-1812 թթ. լույս էին տեսել Մարմոնթելի «Բելիսարիոս» վեպը, իտալերենից թարգմանված «Թանգարան բարեգարդ» խորագիրը կրող իտալական զանազան հեղինակների երկհատոր ժողովածուն, Վոլտերի «Մահ Կեսարու» ողբերգությունը, Ֆլորիանի «Նումա Պոմպիլիոս» վեպը), Կալկաթայում աստիճանաբար երևան եկան Շատոբրիանի «Ադալա, օրիորդն սիրագոհ» (թարգմ. Հովհ. Ավդալյան), Ջոնսոնի «Հոասելաս, արքայորդին Եթովպիոյ» (նույնի թարգմանությամբ), Օլիվեր Գոլդսմիտի «Փոխերեցն Վեքվիլդա» ու Բեռնարդեն դը Սեն Պիերի «Պալոս և Վիրգինիա» (թարգ. Թադևոս Ավետույան) գործերը: Այս ամենը մի անգամ ևս վկայում էին, թե թարգմանություններն ընտրելու հարցում ինչպիսի մոտեցում և այն ընթերցող հայազգիներին մատուցելու գործում ինչպիսի նպատակներ էին հետապնդում հնդկահայ մտավորականները: Հնդկահայ գաղութի զարգացումը ու նրա գործունեությունը զգալի վերելք ապրեց 1820-ական թվականներից, երբ սկսվեց հայ ժողովրդի նշանավոր զավակներից մեկի՝ Մեսրոպ Թադիաղյանի գրական-հասարակական գործունեությունը:

Թաղիադյանը Հնդկաստանում մնաց մոտ վեց տարի, որից հինգը Կալկաթայում: Այդ տարիների նրա գործունեությունը ազգանվեր հայրենասիրության վառ օրինակ է: Մարդասիրական ճեմարանում ստանձնելով հայոց լեզվի դասերը (1825), Թաղիադյանն իր սաների մեջ սերմանում էր ազգային ինքնագիտակցություն, նրանց ծանոթացնում էր հայ ժողովրդի փառավոր անցյալին ու նրա գործիչներին, սովորեցնում էր ջերմորեն սիրել հայրենիքը: «Մեր արմատը մեր հայրենիքն է», – ահա Թաղիադյանի գործունեության նշանաբանը, որն այնպես բնութագրական է նրա համար: Դրա գեղեցիկ ապացույցը 1828 թ. երևանցիներին, իսկ 1829 թ.՝ Ներսես Աշտարակեցուն առաքված հայտնի նամակներն էին, առաջինը գրված Թաղիադյանի ձեռքով, իսկ երկրորդը՝ նրա ակտիվ նախաձեռնությամբ, որտեղ տրված էր ազատագրված Հայաստանի հասարակական, քաղաքական և գրական-մշակութային գործունեության մոտակա և հեռանկարային ծրագիրը: Այս բոլորից ոչ պակաս կարևոր էր մի ուրիշ հանգամանք: Հնդկահայ համայնքը XVIII դարի 70-ական թվականներից հետո, արդեն երկրորդ անգամ, հանդես եկավ իր ինքնուրույն ձայնով, ճիշտ կողմնորոշվելով քաղաքական իրադարձությունների մեջ: Նա հասկացավ, որ հայ ժողովրդի փրկությունը գալիս է Ռուսաստանից, որ Հայաստանի համար պայքարող և նրան բարեկամ ձևացող երեք պետությունների մեջ միայն Ռուսաստանի իշխանության ներքո անցնելը կարող է հարատևություն և գրական-մշակութային որոշակի զարգացում ապահովել հայրենի բնօրրանին: Դեպի Ռուսաստանն ունեցած այդ հակումը հնդկահայ համայնքի գրական-հասարակական կյանքում սկսվել էր համեմատաբար վաղուց՝ դեռ Շահամիր Շահամիրյանի ու Բադրամյանի ժամանակներից: Հայաստանի մի մասի Ռուսաստանին միանալու օրվանից այդ առաջադիմական մտայնությունը նորից կենդանացավ Թաղիադյանի և նրա համախոհների շնորհիվ:

Ետ չէր մնում նաև հնդկահայ գաղութի ինքնուրույն, ոչ թարգմանական գրական-հայագիտական գործունեությունը: Կալկաթայում հրատարակված մի շարք աշխատությունների կողքին («Բառարան անգղերեն-հայերեն», 1805, Բադրասար Դպրի «Համառօտ մեկնութիւն տրամաբանութեան», 1822, «Սիրակարկաջ, որ է հանդիսարան հայերեն, պարսկերեն և հնդստանցերեն երգոց», 1830, և այլն) շուտով լույս է տեսնում և

Թաղիադյանի «Դիցաբանութիւն» տեսական-բանասիրական բնույթի աշխատությունը (1830), որը հայոց դիցաբանության առաջին քննությունն է՝ կատարված ժամանակի գիտության պահանջներին համեմատ: Այսպիսի ջանադիր գործունեության հետևանքով, հնդկահայ համայնքը կազմակերպվում ու ամբողջանում է և հայկական մշակութային մյուս կենտրոններում ազգային ճանաչում ու հռչակ է ստանում, մի բան, որ միաձայն հավաստում են շատ պատմաբաններ:

Հնդկահայ գաղութի զարգացման ու բարգավաճման գործում ավելի մեծ եղավ Թաղիադյանի դերը 1839 թ., երբ նա, բազում թափառումներից հետո, նորից վերադարձավ Հնդկաստան և մնաց այնտեղ մոտ 20 տարի, մինչև 1857 թվականը: 1840 թ. միանգամից աշխարհ եկան նրա երկու դասագրքերը՝ «Մեսրոպեան այբբենարան առ ի պէտս դպրոցաց» և «Մեսրոպեան շարադրիչ հայ և անգղիական լեզուաց, ի պէտս դպրոցաց»: Մի տարի հետո, 1841 թ. հրատարակվում է Թաղիադյանի հաջորդ գործը՝ «Պատմութիւն հին Հնդկաստանի, յանհիշատակ դարուց անտի, ցյարձակումն Մահմեդականաց» ուսումնասիրությունը, որը դրական է բնութագրում Թաղիադյան-պատմաբանին: Իրենց ինքնուրույն գործերով հանդես են գալիս հնդկահայ մտավորականության մյուս գործիչները՝ Հովհաննես Ավդալյանը, Թադևոս Ավետուհյանը և ուրիշներ:

Թաղիադյանի երկրորդ շրջանի գործունեությանը բնորոշ է երկու կարևոր հանգամանք, որոնց մասին չի կարելի չխոսել: Դրանցից ամենաառաջինը՝ հեղինակի գեղարվեստական ստեղծագործություններն են՝ «Վէպ Վարդգիսի տեառն Տուհաց» (1846), «Սոս և Սոնդիպի» (1847) և «Վէպ Վարսենկան» (1847), բոլորն էլ հրատարակված Կալկաթայում: Դրանք, հեղինակի չափածո գործերի հետ մեկտեղ, նոր էջ բացեցին հայ գրականության մեջ: Հայտնի է, թե ինչպիսի կրթություն ունեցող, և գրական ո՛ր ուղղության դավանող անհատներ էին ձևավորել նրա աշխարհայացքն ու գրական-գեղարվեստական ըմբռնումները, ուստի զարմանալի չպետք է թվա, որ Թաղիադյանի բոլոր գործերը գրված են կլասիցիզմի ոճով ու ոգով: Գրական այդ ուղղությունը Հնդկաստանում հարատևեց մինչև XIX դարի երրորդ քառորդը:

Մյուս կարևոր իրադարձությունը, որը բնորոշում է Թաղիադյանի այս շրջանի գործունեությունը, Կալկաթայում հիմնադրած նրա «Ազգասէր», հետագայում՝ «Ազգասէր Արարատեան» պարբերականներն են: Նոր չէր, որ հնդկահայությունը պետք է ծանոթանար պարբերականի կուլտուրային: Հայտնի է, որ հայ միտքն առաջին անգամ նույն Հնդկաստանում հղացավ սեփական լեզվով ինքնուրույն «կազեթա» ունենալու գաղափարը, որը «Ազդարար»-ի կերպարանքով հրատարակ եկավ 1794 թվականին: Բայց ոչ «Ազդարար»-ը, ոչ էլ հետագայում հրատարակված թերթերը չունեցան այն ժողովրդականությունը, չչարժեցին այնպիսի հետաքրքրություն, և, որ ավելի կարևոր է, չբարձրացրին թեր և դեմ մտքերի այնպիսի փոթորիկ, ինչպես այդ արեցին Թաղիադյանի պարբերականները: Իրեն հատուկ անմիջականությամբ Թաղիադյանը դրեց հնդկահայ բուրժուազիայի՝ դեպի իր ժողովուրդն ունենալիք վերաբերմունքի հարցը, բացահայտորեն գրեց, որ հնդկահայ բուրժուաները «խորթացեալ խորշեն յայնն ամենէ» ինչ կապ ունի տեղի հայերի հետ: Պահանջեց, որ նրանք ժլատ չգտնվեն դրամի հարցում և հնարավորին չափ առատորեն ֆինանսավորեն հայկական դպրոցները, գրքերի հրատարակությունները, ազգայիններին «ի տար աշխարհ» ուսումնառության ուղարկելը, հասարակական-մշակութային բնույթ ունեցող զանազան ընկերությունները: Նույն անմիջականությամբ Թաղիադյանը մտրակում էր նաև հոգևորական դասին, գտնելով, որ հոգևորականները իրենց կոչման բարձրության վրա չեն, չեն կատարում ժողովրդի «հոգևոր հովիվը» լինելու, նրան բարոյապես մաքրելու և առաքինության ճանապարհը ցույց տալու ազնիվ գործը: Գալով հնդկահայ դպրոցներին ու մյուս հաստատություններին, Թաղիադյանը պահանջում էր երեխաներին դաստիարակել հայրենասիրության, ազգասիրության ոգով, նրանց մեջ արմատացնել սեր դեպի հայրենի մշակույթ և մշակութային գործիչները, ծանոթացնել նրանց հայրենի գրականության, մանավանդ հին գրականության կոթողների հետ, որովհետև այդ շրջանի գրականությունն առանձնապես աչքի է ընկնում հայրենասիրական գաղափարախոսությամբ: Այսպիսին էր, խիստ համառոտակի, Թաղիադյանի հրատարակած պարբերականների ոգին, ուստի զարմանալի չպետք է թվա, որ սկզբից ևեթ նա պետք է շարունակաբար աճող քանակով անբարյացակամների համախումբ հաներ իր դեմ, որը,

ի վերջո, հանգեցրեց Թադիադյանի պարբերականների փակմանը և նրա հեռացմանը Հնդկաստանից: Թադիադյանի հեռանալուց հետո, չնայած լույս աշխարհ եկան նոր գործեր, չնայած չդադարեցին թարգմանական-հրատարակչական աշխատանքները, բայց հնդկահայոց գրական-հասարակական կյանքը այլևս չբարձրացավ իր մակարդակից և աստիճանաբար սկսեց վայրէջք ապրել:

* * *

Այսպիսով աշխատեցինք համառոտակի բնութագրել հայկական այն համայնքները, որոնց գործունեությունը որոշիչ դեր է կատարել XIX դարի առաջին կեսի համահայկական մտավոր կյանքում:

Վերջում կուզենայինք նշել հետևյալը.

Ներկա աշխատության «Ժամանակագրություն» վերնագիրը փաստացի բովանդակության համեմատությամբ ըստ ամենայնի նեղ է ու սահմանափակ և չի կարող լրիվ գաղափար տալ կատարված աշխատանքի մասին: Այսուամենայնիվ, նման բնույթի աշխատություններին տրվող ընդունված վերնագրերից («Մատենագիտություն», «Տարեգրություն», «Բիրլիոգրաֆիա», «Տարեցույց» և այլն) ամենանպատակահարմարը համարեցինք «Ժամանակագրությունը», որքան էլ ընդգրկված հարուստ ու բազմակողմանի նյութը դուրս գա այդ վերնագրի նախորոշած և հասարակականորեն արդեն ճանաչում ստացած սահմաններից: Իսկ թե ինչպիսի դժվարություններ ենք հաղթահարել աշխատությունը կազմելիս, կարող են պատկերացնել նրանք, ովքեր ծանոթ են այս կարգի աշխատություններին: Իրավացի էր Արսեն Ղազիկյանը, երբ գրում էր, թե ինքը «ծանր» բառից ավելի ծանր բառ չի գտել մատենագիտական բնույթի գործերը որակելու համար: Բայց նույն Ղազիկյանը նախագուշացնում էր, որ «ամենածանր» մատենագիտական աշխատությունն անգամ մեծապես կկորցնի իր կշիռն ու արժեքը, եթե նրանում սպրդած լինեն սխալներ ու անճշտություններ: Մեր ներկա ժամանակագրությունն էլ, անշուշտ, չի կարող անթերի ու կատարյալ լինել, թեև ջանք չենք խնայել

* Հիշենք, որ վերջերս (1955) հրատարակված Շ. Հարությունյանի աշխատությունը նույնպես վերնագրված է «Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն», թեև նրանում տեղ են գտել փաստեր ու իրողություններ, որոնք դուրս գալով բուն պատմության սահմաններից, մտնում են գրականության, արվեստի, մատենագիտության ոլորտները, մի բան, որ ինքնին հասկանալի է:

անճշտություններից խուսափելու համար: Հնարավոր վրիպումներն ու թերությունները վերացնելու գործում մեծ անելիքներ ունի անկողմնակալ քննադատությունը, որի օգնությանը սպասում ենք սիրով:

1 8 0 1

Տարեկիզբ. Կալկաթայում Հարություն Գալուցյանը հիմնում է հայկական դպրոց, որը կրում էր «Վարժոց» անունը: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1825 թվականը:

«Ազգասեր», 1847, № 74:

«Ազգասեր Արարատեան», 1848, № 6:

Մարտի 9. Թիֆլիսում վախճանվեց Ամենայն հայոց կաթողիկոս Հովսեփ Երկայնաբազուկ –Արղությանը (Հովսեփ IV): Ծնվ. 1743 թ. մայիսի 23-ին Սանահինում, կաթողիկոս է ընտրվել 1800 թ. հուլիսի 31-ին:

Հովսեփի մահից հետո, կաթողիկոսական աթոռի համար սկսվում է աղմկահույզ մի պայքար, որին միջամտում էին Ռուսաստանը, Պարսկաստանն ու Թուրքիան, յուրաքանչյուրն առաջ քաշելով իր շահերին հարմար թեկնածու: Այդ պայքարը հայտնի է «Դավիթ-Դանիելյան» անունով, որի շուրջ ընդարձակ գրականություն է ստեղծվել:

Երիցյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 19, 62:

Մսերեան Ս., Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, ի Սիմեոնէ մինչև ցՅովհաննէս Ը, Մոսկուա, 1876:

Օրմանյան Մ., Ազգապատում, Պոլիս, 1914, մասն Բ, էջ 3349-3369. (§§ 2290-2305):

Օգոստոսի 7. Պրուսայում (Թուրքիա) ծնվեց աստվածաբան, հայագետ, (ֆրանսերենից-հայերեն), գրական-հասարակական հետադեմ գործիչ Հովհաննես Պրուսացի Տերոյենցը (Չամուռճյան): Վախճ. 1888 թ. հունիսի 24-ին, Պոլսում (Սկյուտար):

1846-1852 թթ. Մկրտիչ Աղաթոնի հետ միասին Պոլսում հրատարակել է «Հայաստան» շաբաթաթերթը, իսկ 1857-1886 թթ. միայնակ՝ «Երևակ» հանդեսը:

«Հանդես ամսօրյա», 1898, № 12 («Տերոյենց Պատվելի»):

Մրմրյան Հ., 19-րդ դար և Հովհաննես Պրուսացի Տերոյենց, Պոլիս, 1908, 253 էջ:

Օգոստոսի 12. Գլախատւյում (Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ Հուլիոս-Հայնրիխ Պետերմանը (Julius Henrich Petermann): Վախճ. 1876 թ. Պատ-Նաուհայմում:

Աղայան Էդ., Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, 1958, էջ 172-175:

Սեպտեմբերի 12. Ալեքսանդր I-ի մանիֆեստը՝ Վրաստանը Ռուսաստանին միացված ճանաչելու մասին: Վրաստանի հետ մեկտեղ Ռուսաստանի տիրապետության ներքո են անցնում Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադնի, Քարվանսարայի գավառները՝

«Акты собранные Кавказской Археографической комиссией, Изд. под редакцией Адольф Берже», Тифлис, 1866, т. 1, ст. 432-433, 461-474»:

-Աղաբազարում (Թուրքիա) ծնվեց եկեղեցական գործիչ, լրագրող Ստեփաննոս արքեպիսկոպոս Մաղաքյանը: Վախճ. 1865 թ. օգոստոսի 24-ին, Պարտիզակում:

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, մասն Բ, Պոլիս, 1893, էջ 7-10:

-Այնթափում ծնվեց լեզվագետ, թարգմանիչ (իտալերենից, արաբերենից-հայերեն) Հարություն Մուրատ Պոյաճյանը (Միաչեն): Վախճ. 1848 թ. հունիսի 25-ին, Պարտիզակում:

Անդ. մասն Գ, էջ 172-174:

-Ծնվեց գրական-հասարակական գործիչ Աղաթոն Ակիմյանը: Վախճ. 1853 թ. հուլիսի 27-ին, Պետերբուրգում:

Լենինգրադի Սմոլենսկյան հայկական գերեզմանատան արխիվ, «Ակիմով»:

-Վենետիկում հրատարակվում է «Նուագարան օրհնութեանց» ժողովածուն: Տեքստաբանական աշխատանքները, համեմատությունները (հույն, լատին և եբրայեցերեն բնագրերի հետ), մեկնությունները՝ Միքայել Չամչյանի: 600 էջ:

Տրված են կրոնական գործիչների (Մովսես, Հովհաննես, Եզեկիել, Հակոբ և այլն) օրհներգություններն ու դրանց քննական վերլուծությունները:

-Վենետիկում վերահրատարակվում է Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատությունը: 600 էջ:

Նույնը՝ 1843 թվականին:

* Ալեքսանդր I-ը, որին Պուշկինը բնութագրել էր որպես «властитель, слабый и лукавый, плешивый щеголь, враг труда», ծնվ. 1777 թ. դեկտեմբերի 12-ին, Պետերբուրգում, գահակալել է 1801 թ. մարտի 12-ից, հոր՝ Պավել I-ի դավադրաբար սպանությունից հետո, մի դավադրություն, որի մեջ մասնակցություն ուներ նաև ինքը: Վախճ. 1825 թ. նոյեմբերի 19-ին, Տազանրոգում:

** Այսուհետև՝ «Акты...».

-Վենետիկում հրատարակվում է «Նարեկ աղօթից, հարագատ և զգուշաւոր լուծմամբ, նորոգ բացայայտեալ» գիրքը: Տեքստաբանական աշխատանքները, հմտալից ծանոթագրությունները՝ Գաբրիել Ավետիքյանի: 586 էջ:

Նույնը՝ 1827, 1859 թվականներին:

Հայտնի է նաև «Նարեկլուծ» անվամբ: Առաջին հրատարակության մեջ տրված է նաև «Գումարք խմբից» ներբողականի մի հատվածի մեկնությունը, որը հետագա վերահրատարակությունների ժամանակ դուրս է թողնվել:

-Պոլսում, Պողոս Արապյանի տպարանում, վերահրատարակվում է «Երաժշտականք երգեցմունք հոգևորականք» խորագրով շարականների ժողովածուն: 560 էջ:

Գրքի հաջորդ էջն ունի «Ձայնաքաղ շարական, յօրինեցեալ և կարգադրեցեալ հանդերձ իւրովք քաղուածովք» խորագիրը և հաճախ այս վերնագրով էլ հիշատակվում է բանասիրական գրականության մեջ: Ընդգրկում է V-XVI դդ. ստեղծագործող հեղինակների գործերը (Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Հովհաննես Մանդակունի, Անանիա Շիրակացի, Կոմիտաս կաթողիկոս, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Օձնեցի, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Հովհաննես Պլուզ և այլոց):

-Պոլսում, Մատթևոս Դպրի տպարանում, հրատարակվում է Աթանաս Աղեքսանդրիացու, Եպիփան Կիպրացու և Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն Սաղմոսաց» ժողովածուն: 112 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Սաղմոսարան սրբոյ Դավթի երջանիկ մարգարէի հոգէնուագ երգոցն իմաստից: Նախ՝ յառաջաբանութիւն մեկնութեան և զանազանութիւն իւրաքանչիւր դիտաւորութեան, ասացեալ ի սրբոյն Աթանասէ եպիսկոպոսապետէ Աղեքսանդրացոյ: Ապա՝ վերնագրացն մտաց մտահանգոյց մեկնութիւն յԵպիփանէ սրբոյ եպիսկոպոսէ Կիպրացոյ: Եւ զկնի՝ Համառօտ իմն մեկնութիւն ևս ի Դաւթայ Անյաղթ փիլիսոփայէն մերմէ սրբոյ: Եւ եւս՝ Ներբողեան ինչ ի Սաղմոսն, զորս արտահանեալ ի սաղմոսարանէ վաղեմնականէ յօրինակելոց ի ՊԶԵ թուականի մերում»:

1802

Հունվարի 24. Փարիզում ծնվեց ֆրանսիացի հայագետ, ակադեմիկոս (1836) Մարի Ժան Բրոսսեն (Marie Jean Brosset): Վախճ. 1880 թ. օգոստոսի 22-ին, Շաթըլլոոյում (Հար. Ֆրանսիա):

Զարբհանայան Գ., ՈՒսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 187-218:

Փետրվարի 26. Թիֆլիսում ծնվեց պատմաբան, բանաստեղծ, գրական գործիչ Գաբրիել Սերոյվրեի Պատկանյանը: Վախճ. 1889 թ. ապրիլի 13-ին, Պետերբուրգում:

1850-1851 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Արարատ» շաբաթաթերթը:

«Արձագանք» 1889, № 14, 18:

Շահագիգ Եր., Տեր Գաբրիել քահանա Պատկանյան, Թիֆլիս, 1910, 141 էջ:

Սեպտեմբերի 12. Պոլսում ծնվեց պատմաբան, լեզվագետ Պողոս Հովնանյանը: Վիեննայի Միխրայան միաբանության անդամ 1824 թ. հոկտեմբերի 24-ից: Վախճ. 1884 թ. հունվարի 9-ին, Վիեննայում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 23:

Սեպտեմբերի 22. Թիֆլիսում իր գոյությունն է սկսում 45 աշակերտ ունեցող առաջին ռուսական երկդասյա դպրոցը՝ Թիֆլիսի Ազնվականական ուսումնարանը («Тбилисское Благородное училище»): Զինվորական կադրեր պատրաստելու նպատակով 1820-ական թթ. վերակառուցվում է և անվանվում Թիֆլիսի ազնվականական ռազմական ուսումնարան («Тбилисское Благородное Военное училище»): Ոչ ռուս սովորողներ ընդգրկելու նպատակով 1830 թ. մարտին վերակառուցվում է երկրորդ անգամ և անվանվում Թիֆլիսի Գիմնազիա:

«Акты...», т. I, стр. 510 (док. № 612), т. 8, стр. 96 (док. № 65, 67).

Հոկտեմբերի 9. Սեպենիքոյում (Դավաթիա) ծնվեց իտալացի հայագետ, թարգմանիչ (հայերենից-իտալերեն), Նիկոլա Թոմմազեոն (Nicolo Tommaseo): Վախճ. 1874 թ. մայիսի 1-ին, Ֆիրենցեյում (Հւ. Իտալիա):

«Բազմավեպ», 1902, № 11 («Թոմմազեո Նիկոլայոս»):

Դեկտեմբերի 14. Կեսարիայում ծնվեց մանկավարժ Հակոբ Մանվելյանը: Վախճ. 1870 թ. օգոստոսի 27-ին, Պոլսում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Բ, Կահիրե, 1937, էջ 2052:

-Պոլսում ծնվեց քերականագետ, օրացույցներ կազմող Վրթանես վարժապետը (հետագայում՝ Երեմիա քահանա Խասգյուղի): Վախճ. 1889 թ. ապրիլի 19-ին:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1909, էջ 38-40:

-Վենետիկում, Ստեփաննոս Ագոնցի և Ղուկաս Ինճիճյանի համատեղ հեղինակությամբ սկսում է հրատարակվել «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» բազմահատոր աշխատությունը: Հրատարակությունն ավարտվում է 1806 թ.:

Հրատարակությունն ընթացել է հետևյալ կերպ.
 Մասն Ա, Ասիա Հատոր Ա, 1806, 424+38 էջ
 Հատոր Դ, 1805, 452 էջ
 Մասն Բ, Երոպիա Հատոր Ա, 1802, 640 էջ
 Հատոր Բ, 1802, 678 էջ
 Հատոր Գ, 1802, 500 էջ
 Հատոր Դ, 1802, 406 էջ:
 Հատոր Ե, 1804, 200 էջ
 Հատոր Զ, 1804, 518 էջ

Մասն Գ, Ափրիկե, 1802, 627 էջ

Մասն Դ, Ամերիկա, 1802, 654 էջ

«Ասիա» մասի առաջին հատորը և «Երոպիա» մասի հինգերորդ և վեցերորդ հատորները գրել է Ինճիճյանը: Մյուսները պատկանում են Ագոնցի գրչին:

Առաջին մասի Բ և Գ հատորները մեզ չհաջողվեց գտնել Երևանի գրապահոցներում, և կամ պարզել լույս տեսնել են արդյոք, թե ոչ:

-Տրիեստում հրատարակվում է «Երեք գիրք Սողոմոնի, այսինքն՝ Առակաց Իմաստութեան և Ժողովողի» աշխատությունը: 237 էջ:

Սողոմոնի՝ վերոհիշյալ բնույթի առակներից բացի, վերջում գետեղված են Շնորհալուստանավորները:

-Պոլսում հրատարակվում է «Պրակ որ կոչի հայելի ծանօթութեան, տետրակ հակառակութեան ներհակաթոռ կաթողիկոսներուն, Դավթի և Դանիելի» գիրքը: 43 էջ:

Վերջում գետեղված է Էջմիածնի Մինողի անդամների լիակատար ցուցակը:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Նարեկ. գիրք աղօթից, ասացեալ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ՝ հրեշտակական վարդապետի» ժողովածուն: 640 էջ:

1803

Հունվարի 3. Չորագյուղում (Երևանի գավառ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, գրող, մանկավարժ Մեսրոպ Դավթի Թաղիադյանը: Վախճ. 1858 թ. հունիսի 10-ին, Շիրազում (Պարսկաստան):

«Ազգասէր», 1846, № 40, 1847, № 102, 105, 112:

«Արշալույս Արարատեան», 1858, № 583 («Մահագույժ»)

Նանուկյան Ռ., Մեսրոպ Թաղիադյան, Երևան, 1947, 149 էջ:

Հոկտեմբերի 18. Պոլսում ծնվեց քերականագետ, մանկավարժ, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Վրթանես Չալիսյանը: Վախճ. 1834 թ.:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 21:

Նոյեմբերի 10. Պոլսում (Ղալաթիա), Վենետիկի Մխիթարյան միաբանության ուժերով և Պողոս Թընկլըրյանի նախաձեռնությամբ, հիմնվում է արական դպրոց՝ «Մանկանց

դպրատուն» անվամբ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև երեսնական թվականները և ուներ 50 աշակերտ:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

Տարեվերջեր. Հրատարակվում է Ֆաթի-Ալի շահի հրովարտակը՝ ռուսների հետ սրբազան պատերազմ սկսելու մասին:

Առավելապես նշանավոր ռազմական գործողությունները ընթացել են հետևյալ կերպ՝ 1804 թ. հունվարի 3-ին, ռուսական բանակը (ընդհանուր հրամանատար Պ. Դ. Ցիցիանով)՝ գրավում է Գանձակը, հունիսի 19-ին՝ Գյումրին, հունիսի 27-ին՝ Էջմիածինը: Հունիսի 30-ից սկսում են մարտերը Երևանի բերդի համար, որոնք ավարտվում են անհաջողությամբ: Հուլիսի 24-ին ռուսները պարտվում են և սեպտեմբերի 3-ին դադարեցնում բերդի պաշարումը:

1808 թ. սեպտեմբերի սկզբներին ռուսական բանակը (ընդհանուր հրամանատար Ի.Վ. Գուդովիչ) մտնում է Փամբակ, և սեպտեմբերի 26-ին գրավում Աբարանը, 29-ին՝ Աշտարակը, 30-ին՝ Էջմիածինը: Հոկտեմբերի 3-ից սկսում է Երևանի բերդի պաշարումը, որը, սակայն, հաջողություն չի ունենում: Նոյեմբերի 30-ին, կրելով նշանակալից կորուստներ, ռուսները դադարեցնում են պաշարումը:

1810 թ. հունիսի 12. ռուսները գրավում են Մեղրին, սեպտեմբերի 5-ին՝ Ախալքալաքը:

1812 թ. հոկտեմբերի 20, ռուսական բանակը (ընդհանուր հրամանատար Ն.Ֆ.Ռոտիշչև) գրավում է Ասլանդուզը, դեկտեմբերի 31-ին՝ Լենքորանը:

"Акты...", т. 2, стр. 802 (документ №1652), стр. 929 (документ № 11), стр. 572 (документ № 1128), стр. 832 (документ № 1714), стр. 674 (документ № 1366).

Порто В., Кавказская война, в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. I (вып. 1, 2, 3), СПб., 1885.

* Ցիցիանովը ծնվել է 1754 թ. սեպտեմբերի 8-ին, Մոսկվայում, Կովկասի կառավարչապետ է նշանակվել 1802 թ. սեպտեմբերի 11-ին: Դավադրաբար սպանվել է 1806 թ. փետրվարի 8-ին, Բաքվի բերդի տակ, երբ ուղևորվում էր Բաքու, Հուսեյն Կուլի խանի հետ բանակցելու համար:

-Շիրագում (Պարսկաստան) ծնվեց քանասեր, թարգմանիչ, մանկավարժ, հնդկահայ մշակութային գործիչ Հովհաննես Ավդայանը: Վախճ. 1870 թ. հուլիսի 11-ին, Կալկաթայում:

Mirsaian A. The church of Nasareth in Calcutta. Calcutta, 1951.

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 171-172:

-Սուչավայում (Հունգարիա) ծնվեց փիլիսոփա, մշակութային գործիչ (մասնագիտությամբ բժիշկ) Անդրեաս Փոփովիչը: Վախճ. 1858 թ. սեպտեմբերի 17-ին Պոլսում:

«Մասյաց Աղավնի», 1856, № 11:

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 281:

Հարությունյան Էդ., Հայ փիլիսոփայական միտքը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1965, 322 էջ:

-Ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ Հովհաննես Մեթյանը: Վախճ. 1873 թ. հունիսի 30-ին, Պոլսում (Գուզգունճուկ):

«Արարատ», 1873, № 7 («Մահագույժ»):

-Վենետիկում հրատարակվում է Հովհաննես Զոհրաբյանի «Պատմութիւն Աստուածաշունչ գրոց, հին և նոր կտակարանաց, համառօտեալ դիրամարս ոճով, ի լեզու աշխարհաբար յուսումն պարզամտաց և համբակաց» աշխատությունը: 672 էջ:

Նույնը՝ 1805, 1841, 1854, 1873 թթ.:

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Գապասախայանի «Գիրք երաժշտական, յորում պարունակին Հայերէն, Հունարէն և Պարսկերէն հարցմունք և պատասխանատուութիւնք համառօտաբար» աշխատությունը: 144 էջ:

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Գապասախայանի «Գրքոյկս կոչեցեալ երգարան» ստեղծագործությունների ժողովածուն: 160 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Գապասախայանի «Նուագարան երաժշտական» երգարանը: 65 էջ:

Տիտղոսաթերթի վրա ունի «Վերստին տպագրեցեալ» նշումը, որը նշանակում է վերահրատարակությունն է 1794 թվականի «Գրքոյկ որ կոչի նուագարան»-ի, թեև արտատպված է ոչ թե նույնությամբ, այլ ընտրանի սկզբունքով, և բերված տաղերի ու ներբողների շատ տների կրճատումներով:

-Պոլսում հրատարակվում է «Բուն տոմար հայոց և հռովմեացվոց, Պարզատոմար և Տաղ Հովասափու մարմնախաղաց և երագահան. հավելյալ առ այսուսիկ մշտնջենավոր

գուշակմունք տարեկան պատահմանց և ամսական եղանակացն փոփոխմանց»

աշխատությունը: 448 էջ:

Նույնը՝ 1818, 1831 թթ., ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով: Վերջին հրատարակության մեջ ավելացված է Առաքել Բաղիշեցու «Տաղ ի վերայ Յովասափու» գործը:

-Մադրասում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Մկրտում Սիմեոնյանի «Բառգիրք փոքրիկ, անգղիոցուց լեզուէ թարգմանեալ ի հայ բարբառ» գիրքը: 142 էջ:

1804

Մարտ. Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից-հայերեն) Արիստակես Ալթուն-Տյուրրին: Վախճ. 1858 թ. հունվարի 2-ին:

Եղել է Ալեքսանդրիայում հրատարակվող հայատառ թուրքերեն «Էլ-Մասր» (Եգիպտոս) թերթի խմբագիր:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., հատ. Գ, Պոլիս, 1934, էջ 19-20:

Մարտի 30. Պեղլեն գյուղում (Կեռլայի մարզ, Հունգարիա) ծնվեց պատմաբան, լեզվագետ Խաչիկ Լուքայանը (Լուքաչի): Վախճ. 1876 թ. հոկտեմբերի 24-ին:

«Հանդես ամսօրյա», 1894, № 10 («Զաքարիա Կապրուշյան և Խաչիկ Լուքայան»):

-Շամշուղա գյուղում (Բորչալուի գավառ) ծնվեց աշուղ Զարուրին (Դավիթ Երեցյան): Վախճ. 1898 թ. Պոլսում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1556:

-Պոլսում վերահրատարակվում է «Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի և կնոջն Թագուհույ և որդույ նորին Դիոկղետիանոսի և եօթանց իմաստասիրաց» ստեղծագործությունը: 328 էջ:

«Հանդես ամսօրյա», 1921, № 9-10, էջ 472-485: (**Ալիմյան Ն.** «Պատմութիւն եօթն իմաստասիրաց հայ գրականութեան մեջ»):

-Վենետիկում, գրաբար մեկնություններով, հրատարակվում է «Այբբենարան համառօտ, արարեալ յուսումն նորահաս տղայոց»: 32 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Գրիգոր Նարեկացու ճառերից կազմված ծաղկաքաղը՝ «Աղօթամատոյց պատկերազարդեալ» խորագրով: 296 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Աղօթամատոյց պատկերազարդեալ Գրիգորի Նարեկայ վանից վանականի և հոգեկիր հռետորի, քաղեալ ընտրանաւ ի գրոց նորայ,

կարգեալ ըստ աւուրս եօթնեկի և ըստ պէսպէս պիտոյից հարցուածոց:
Յաւելեալ յայսմ երկրորդ տպագրութեան և զգանձս տօնից տէրունականաց,
զմեղեղիս և զտաղս ի նորին սրբոյ ասացեալ»:

-Վենետիկում հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը:
600 էջ:

-Վենետիկում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Մանվել
Չախչախյանի «Բառարան յիտալական լեզուէ ի հայ և ի տաճիկ բարբառ» գիրքը:
895 էջ:

Նույնը համառոտ՝ («Բառարան համառոտ, յիտալական լեզուէ ի հայ և ի
տաճիկ» խորագրով) 1829 թ.: 282 էջ:

1805

-Պոլսում (Միջագյուղ) ծնվեց գրական-հոգևորական գործիչ Պողոս Պոյնուէրիյանը:
Վախճ. 1880 թ.

Իր աշխատությունները ստորագրում էր «Հ. Ասկերյան» ձևով:

Պարոնյան Հ., Երկերի ժողովածու (տաս հատորով), հատ. II, Երևան, 1964, էջ 187-195:

-Պոլսում հրատարակվում է Հակոբ Նալյանի և մի քանի այլ բանաստեղծների փոքրիկ
ժողովածուն՝ «Տետրակ զունայնութենէ կենցաղոյս» խորագրով: 55 էջ:

-Պոլսում հրատարակվում է «Տետրակ զովասանաց, առ համօրեն տնօրինական
ուխտատեղիսն, որք են յաստուածահրաշ քաղաքն Ս. Երուսաղէմ» խորագիրը կրող
բանաստեղծությունների գրքուկը: 64 էջ:

Նույնը անփոփոխ՝ Կ.Պոլիս, 1815 թ., և որոշ փոփոխություններով՝
Երուսաղէմ, 1847 թ. (76 էջ), 1850 թ. (80 էջ), 1857 թ. (82 էջ), 1859 թ. և 1860 թ. (72
էջ), 1862 թ. (130 էջ), 1893 թ. և հետո՝ 120 էջ:

Երուսաղէմին ու նրա սրբավայրերին նվիրված գրաբար և հայատառ
թուրքերեն այս տաղերի ու ներբողների մեջ, որոշ դեպքերում գործածվում են
նաև արևելյան-աշուղական ձևեր և արտահայտություններ, ինչպէս. «Ի վերայ
Երուսաղէմի, որպէս վարսախ, խօշմա», «Այս ևս վարսախ, թենսիֆ, ուսուլ»,
«Այս ևս վարսախ»:

Որոշ տաղերի վերնագրերում կամ աքրոստիկոսի ձևով հիշատակվում են հեղինակները. «Տաղ Յակոբ Պատրիարքի Կոստանդնուպոլսեցոյ (ի՛մա. Հակոբ Նայյան – Ս.Շ.) ասացեալ» կամ «Տաղ Պօղոս վարդապետէ ասացեալ» և այլն:

-Վենետիկում, Ստեփաննոս Ագոնցի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանութեամբ, հրատարակվում է «Սկզբնագիրք տումարի սրբոյն Լևոնի և սահմանի ժողովոյն Քաղքեղոնի» աշխատությունը: 44 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Եղիա Թովմաճանյանի «Դպրութիւն նամակաց ի լեզու գրաբառ և աշխարհաբառ» աշխատությունը: Է+408 էջ:

1806

Ապրիլի 11. Պոլսում (Խասպոլո) ծնվեց գրական-հասարակական գործիչ, մի քանի լեզուների գիտակ, թարգմանիչ (ֆրանսերենից, իտալերենից) Ռուբեն Անդրեաս Փափագյանը: Վախճ. 1857 թ. մարտի 6-ին, Զմյուռնիայում:

Փափագյան Ստ., Կենսագրություն Ռուբեն Անդրեաս Փափագյանի, Պոլիս, 1859:

Դեկտեմբերի 18. Անատոլիի զորաբանակի հրամանատար Յուսուֆ-զիա փաշայի կոչը՝ Ռուսաստանի հետ պատերազմական վիճակի մեջ համարվելու մասին: Սկսում է ռուս-թուրքական պատերազմը:

"Акты...", т. 3, стр. 527 (док. № 921), стр. 542 (док. № 944), стр. 548 (док. № 957), т. 5 стр. 201 (док. № 269), стр. 191 (док. № 262).

Порто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, СПб., 1885, т. I.

-Պոլսում (Բերա) ծնվեց գրական-հասարակական գործիչ Հակոբ Կրճիկյանը: Վախճ. 1865 թ. հոկտեմբերի 15-ին:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 103-107:

-Վենետիկում հրատարակվում է Գաբրիել Ավետիքյանի «Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի առաքելոյ» աշխատության առաջին հատորը: ԺԶ+1102 էջ:

Երկրորդ հատոր՝ 1811, Ը+918 էջ:

Երրորդ հատոր՝ 1812, 703 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Իգնատիոս Փափագյանի «Գիրք քաղաքաւարութեան, յորում աւանդին կանոնք մարդկային կենակցութեան»-ը: 171 էջ:

Վերջում աշխարհաբար տրված է նույն գործի համառոտությունը:

-Վենետիկում, աշխարհաբար լեզվով հրատարակվում է Հովակիմ Օղուլլուխյանի «Նյութ բժշկական» աշխատությունը: 260 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 402 էջ:

Վերջում, ընտրանի սկզբունքով, գետեղված են Մխիթար Գոշի մի քանի առակները:

-Պոլսում, գրաբար և հայատառ թուրքերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Սողոմոնի Առակների ժողովածուն: 228 էջ

Լրիվ վերնագիրն է. «Գիրք առակաց Սողոմոնի, որդույ Դաւթի, որոյ իւրաքանչիւր երեսաց հայերէն պարբերութեանցն հանդէպ ի դիւրիմանալի լինել փափագողաց սորին ոսկեղէն բանից, պարզապէս թարգմանութեամբ տաճկէվարն ի ինդրոց տպագրողին»:

Ենթադրվում է, որ ակնարկվող թարգմանիչը Գևորգ Պալատեցին է:

Այվազյանց Ա., Շար հայ կենսագրությանց, Կ. Պոլիս, 1893, էջ 45:

-Պոլսում, Գևորգ Պալատեցու՝ հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Աղաբիդոս (ճիշտ ձևը՝ Ագապետոս) Սարկավագի «Բացատրութիւն յորդորական գլխոցն Աղաբիդոսի սարկավագի» աշխատությունը: 39 էջ:

Հիշյալ աշխատության հետ կապված արժեքավոր մանրամասնությունները տե՛ս **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, էջ 222-226:

-Մադրասում հրատարակվում է «Անցք կամ գործք քառասուն երեք և քառասուն և չորսերորդ ժողովոց Մադրասիս հայոց» գրքույկը: 29 էջ:

Դավթյան Հ., Հայ գիրքը 1801-1850 թթ., էջ 26:

1 8 0 7

Հունվարի 27. Տուլուզում (Հար. Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլյորիեն (Eduard Dulaurier): Վախճ. 1881 թ. դեկտեմբերի 9-ին, Փարիզում:

«Արձագանք», 1882, № 1, 2, («Հայագետ Էդուարդ Դյուլյորիեն»)

Զարբհանայյան Գ., Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 136-161:

Դեկտեմբերի 6 (առավոտյան ժ. 8 ^{1/2}) – Վենետիկի Մխիթարյան միաբանության արքահայր Ստեփաննոս Ագոնցն իր խնդրանքով ունկնդրության է արժանանում Նապոլեոն Առաջին կայսեր մոտ (վերջինս Վենետիկ էր եկել 1807 թ. նոյեմբերի 27-ին և այնտեղ մնաց մինչև դեկտեմբերի կեսերը) և նրան տեղեկացնում է ֆրանսիացիների վարած քաղաքականության հետևանքով միաբանության համար ստեղծված անելանելի վիճակի մասին:

Մարգիսյան Բ., Երկուհարյուրամյա գրականական գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկ Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1905, էջ 352:
«Բազմավեպ», 1921, № 8 («Նապոլեոն Ա և Մխիթարյան միաբանություն»):

-Աշտարակում ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, բանասեր, Էջմիածնի միաբանության անդամ Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանը: Վախճ. 1882 թ. մայիսի 22-ին, Աստրախանում:

«Գևորգ Արքեպիսկոպոս» ստորագրությամբ հանդես էր գալիս «Արարատ»ում:
«Արարատ», 1882, № 6:

-Նոր-Ջուղայում ծնվեց եկեղեցական գործիչ, բանասեր Հովհաննես Խաչկյանը: Վախճ. 1897 թ. հունիսի 26-ին, Կալկաթայում:

Արկաճք տեառն Յովհաննու Խաչկեան խաչակիր աւագ քահանայի և ասպետի, Կալկաթա, 1863, 286 էջ:
ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆ. (Հ. Սեթյանի՝ 1897 թ. հունիսի 17-ի նամակը Հով. Մկրյանին):

-Վենետիկում, Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հիշատակարան» քաղաքական և բանասիրական տարեգրությունը: Շարունակվում է մինչև 1808 թ.:

-Պոլսում վերահրատարակվում է Պաղտասար Դպրի «Օրինակք բարևագրաց, նորապես շարադրեցեալ» գիրքը: 148 էջ:

-Պոլսում, Հակոբ Աբեղայի և Գասպար Մուրադյանի ջանքերով, հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը: 792 էջ:

-Պոլսում հրատարակվում է Աբրահամ Աստապատցու «Ներբողեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի» ստեղծագործությունը: 204 էջ:

-Վենետիկում, աշխարհաբար և հայատառ թուրքերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Իգնատիոս Փափագյանի «Հանգանակ հաւատոյ, որ է բացատրութիւն բանից հաւատամքին» աշխատությունը: 318 էջ:

- Վենետիկում վերահրատարակվում է «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ զիրք աղօթից որ կոչի Նարեկ, տպագրեալ ըստ ընտրելագոյն օրինակաց» զիրքը: 442 էջ:
- Վենետիկում հրատարակվում է Հովհաննես Օձնեցու «Ճառ ընդդէմ երևութականաց»-ը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրութիւնները՝ Մկրտիչ Ավգերյանի: Ի+85 էջ:
- Պոլսում վերահրատարակվում է «Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձե քաղաք: Եւ բանք խրատականք և օգտակարք Խիկարայ իմաստնոյ, եւ այլ բանք պիտանիք» զիրքը: 205 էջ:
- Պոլսում հրատարակվում է Գևորգ դպիր Պալատեցու կողմից դեռևս 1779 թ. պարսկերենից թարգմանած՝ «Գիրք մեծագին և պատուական ականց և այլոց պէսպէս հանքական և կենդանական քարանց, նաև եօթանց հրահալելեաց և զանազան ազնուագոյն իրաց» զիրքը (հայտնի է նաև «Ականց զիրք» անունով), 314 էջ:

1 8 0 8

Օգոստոսի 10. Պոլսում ծնվեց արձակագիր, բանաստեղծ Մովսես Ամպերպոյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ է դարձել 1831 թ. նոյեմբերի 10-ից: Վախճ. 1898 թ. մարտի 13-ին:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 222:

Մեպտեմբերի 13. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Առաքել Աստվածատուրի Արարատյանը: Վախճ. 1887 թ. փետրվարի 3-ին:

Տեր-Աստվածատրյանց Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ Ա, Թիֆլիս, 1904, էջ 140:
ԳԱԹ, Ա. Արարատյանի ֆոնդ:

Նոյեմբերի 30. Անկյուրայում (Թուրքիա) ծնվեց բառարանագիր Հակոբոս Պոզճյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ: Նույն միաբանության արքահայր (III) է ընտրվել 1855 թ. օգոստոսի 6-ին: Վախճ. 1883 թ. հոկտեմբերի 1-ին, Վիեննայում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 12:

Դեկտեմբերի 20. Զմյուռնիայում ծնվեց աստվածաբան, բանասեր, պահպանողական գործիչ Մսեր Գրիգորի Մսերյանցը: Վախճ. 1873 թ. օգոստոսի 2-ին, Մոսկվայում:

1858-1862 թթ. Մոսկվայում, իր որդու՝ Ջարմայր Ստերյանցի հետ միասին հրատարակում էր «Ճոռաբաղ» ամսագիրը, 1861-1864 թթ. «Համբավաբեր Ռուսիո» կիսամյա լրագիրը: «Փարոս», 1873, տետր Բ, էջ 63-65: «Արշալույս Արարատեան», 1873, № 977 («Վեպ Ստուրայ»):

1808 (?) Էրզրումում (Կարին) ծնվեց քանասեր, մանկավարժ, թատերական քննադատ, դրամատուրգ Հակոբ Կարենյանցը: Վախճ. 1872 թ. մարտի 30-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1872, № 13:

-Ադրիանապոլսում (Թուրքիա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Ավետիս Պարտիզպանյանը: Վախճ. 1904 թ. նոյեմբերի 22-ին, Պոլսում:

«Հանդես ամսօրյա», 1905, № 11 («Ավետիս էֆ. Պարտիզպանյան»)

-Մոզդոկում ծնվեց մանկավարժ, աստվածաբան Հովսեփ քահանա Օրբելին: Վախճ. 1891 թ. սեպտեմբերի 24-ին, Թիֆլիսում:

«Արձագանք», 1891, № 28 («Տեր Հովսեփ ավագ քահանա Օրբելի»):

-Աստրախանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ռուսերենից-հայերեն), դրամատուրգ Միքայել Սերովբեի Պատկանյանը: Վախճ. 1895 թ. դեկտեմբերի 3-ին, Թիֆլիսում:

1846-1847 թթ. Հակոբ Կարենյանցի հետ Թիֆլիսում խմբագրել է «Կովկաս» շաբաթաթերթը:

«Արձագանք», 1895, № 140, 1896, № 5-7:

1801 (?) Պոլսում (Գում-Գաբու) ծնվեց մեմուարիստ (մասնագիտությամբ բժիշկ) Սենեքերիմ Տեր-Մինասյանը: Վախճ. 1853 թ. ապրիլի 14-ին:

«Հանդես ամսօրեա», 1898, № 1 («Բժիշկ դոկտ. Սենեքերիմ Տեր-Մինասյան»):

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, քանասեր Հովսեփ Թավուզճյանը: Վախճ. 1844 թվականին:

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 285:

-Պոլսում (Բերա), Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մինաս Բժշկյանի ջանքերով, հիմնվում է հայկական դպրոց: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1828-1830 թվականները:

Սարգիսյան Բ., Երկուհարյուրամյա կրթական գործունեություն Վենետիկի Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1936, էջ 44-47:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

-Պոլսում (Ղալաթիա) Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Սուքիաս Սոմալյանի ջանքերով, հիմնվում է հայկական դպրոց: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1828-1830 թվականները:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայեյան վարժարանաց»):
«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 62-64:

-Վենետիկում, Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Եղանակ Բիզանդեան-Բազմավեպ» խորագիրը կրող տարեգիրքը: Որոշ ընդհատումներով իր գոյությունը շարունակում է մինչև 1820 թ.:

Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, Երևան, 1960, էջ 126-156, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2 («Ղ. Ինճիճյանի «Եղանակ Բյուզանդյան» տարեգիրքը»):

-Պոլսում հրատարակվում է Մեսրոպ Տեր-Հարությունյանի «Քերականութիւն համառօտ պարզաբանութեամբ յաշխարհաբառ լեզուէ ի գրաբառն, հետզհետէ յառաջացուցեալ ի դիրութիւն ուսանողաց» աշխատությունը: 374 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Ներսես Շնորհալու «Ներբող սրբոց հրեշտակապետաց և ամենայն երկնային զօրաց» չափածո ստեղծագործությունը: 79 էջ:

1809

Մարտի 7. Ղրիմի Կարա-Սու (նաև՝ Կարասուբազար, այժմ՝ Բելոգորսկ) քաղաքում ծնվեց երաժշտագետ, հայ երաժշտության տեսաբան Անդրեաս Քաղցածյանը: Վախճ. 1856 թ. մարտի 13-ին, Սիմֆերոպոլում:

«Բազմավեպ», 1881, էջ 37 («Անդրեաս վարժապետ»):

Մարտի 20. Պաշպալովում (Հունգարիա) վախճանվեց աստվածաբան-բանասեր Բարսեղ Լուսլովյանը: Ծնվ. 1735 թ. ապրիլի 3-ին, Կեռլայում (Հունգարիա), Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1760 թ. հուլիսի 12-ից:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 218:

Հուլիսի 24. Անժերում (Արևմտյան Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի հայագետ Էոժեն (կամ Եվգենի) Բորեն: Վախճ. 1878 թ. ապրիլի 21-ին, Փարիզում:

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 229-232:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1907, էջ 61:

Օգոստոսի 2. Կալկաթայում վախճանվեց հայկական ազատագրական շարժման խոշոր գործիչ, մեմուարիստ Հովսեփ Էմինը: Ծնվ. 1726 թ. Համադանում (Պարսկաստան):

Иоаннисян А., Иосиф Эмин, Ереван, 1945, 353 стр.

Հոկտեմբեր. Քանաքեռում ծնվեց հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ, հայ նոր գրականության և գրական լեզվի հիմնադիր Խաչատուր Ավետիքի Աբովյանը: Անհետ կորավ 1848 թ. ապրիլի 2-ին, Երևանից:

«Դիվան Խաչատուր Աբովյանի» (կազմեց և ծանոթագրեց Երվանդ Շահազիզ), հատ. 1, Երևան, 1940, 371 էջ, հատ. 2, Երևան, 1948, 283 էջ:

Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան, կյանքը, գործը, ժամանակը, Երևան, 1967, 798 էջ:

Նոյեմբերի 14. Պոլսում (Իսկյուտար) ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (իտալերենից, ֆրանսերենից-հայերեն) Խաչատուր Պարտիզպանյանը: Վախճ. 1856 թ. հուլիսի 20-ին, Զմյուռնիայում:

«Մասյաց աղավնի», 1856, № 9 («Փոխումն յաստեաց պարոն Խաչատրոյ Պարտիզպանյան»):
Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, 283 էջ:

-Մադրասում, Պետրոս Բուռնազյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությանը, հրատարակվում է Ժան-Ֆրանսուա Մարմոնթելի «Բելիսարիոս, յարացոյց անյիշաչարութեան» վեպը: 285 էջ:

-Մադրասում, Պետրոս Բուռնազյանի՝ իտալերեն բնագրից կատարված թարգմանությանը, հրատարակվում է «Թանգարան բարեգարդ, կամ հաւաքումն զուարճալի և քաղցրալուր բարոյական պատմութեանց» երկհատոր ժողովածուն: Հտ. Ա, է+176 էջ:
Հտ. Բ, 176 էջ:

Նույնը՝ 1872 թ. մեկ հատորով, աշխարհաբար թարգմանությամբ և հավելումներով:

-Մադրասում Սարգիս Ծատուր Աղավելյանցի տպարանում հրատարակվում է «Տետրակ այբուբենական վայելուչ կարգաւ դասաւորեալ և պէսպէս իրօք ճօխացուցեալ, ի յուսումն մանկանց մերագնեից» գիրքը: Ե+152 էջ:

1 8 1 0

Հունվարի 12. Վենետիկում վախճանվեց լեզվագետ, թարգմանիչ (լատիներենից, հունարենից-հայերեն և հայերենից-լատիներեն), աստվածաբան Վրթանես Ասկերյանը: Ծնվ. 1720 թ. մարտի 15-ին, Պոլսում, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր դարձել 1743 թ. մարտի 9-ին:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 217:

Փետրվարի 21. Պոլսում (Սամաթիա) ծնվեց տպագրիչ-հրատարակիչ Հովհաննես Գևորգի Մյուհենտիսյանը: Վախճ. 1891 թ. նոյեմբերի 17-ին:

«Արևելք», 1891, №№ 2346, 2349:

«Գեղունի», Վենետիկ, 1905 («Հովհաննես Մյուհենտիսյան»):

Մայիսի 10. Թեոդոսիայում ծնվեց հայագետ, բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից, անգլերենից, իտալերենից, ռուսերենից-հայերեն), պահպանողական գործիչ Գաբրիել Կոստանտինի Այվազովսկին: Վախճ. 1880 թ. ապրիլի 8-ին, Թիֆլիսում:

«Արարատ», 1880, № 4 («Մահ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանի»):

Առակք Քոնիովի յինն գիրս, Վաղարշապատ, 1896, էջ 402 (Առաջաբանը):

Օգոստոսի 17. Նապոլեոն I կայսեր հրովարտակը. ի հակադրություն 1810 թ. ապրիլի 25-ի իր իսկ հրովարտակի՝ բոլոր տիպի կրոնական հաստատությունները Ֆրանսիայի և նրա նվաճած երկրների սահմաններում չէղյալ հայտարարելու մասին, թույլատրվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության գոյությունն իբրև բացառություն:

«Բազմավեպ», 1921, № 8:

Դեկտեմբերի 8. Փարիզում, «Արևելյան կենդանի լեզուների դպրոցում», Հակոբ Շահան-Ջրպետյանի ղեկավարությամբ, սկսվում են հայոց լեզվի փորձնական պարապմունքները: 1811 թ. փետրվարի 15-ից, Նապոլեոն I կայսեր հրովարտակի համաձայն, պարապմունքները դառնում են հիմնական և ստեղծվում է հայագիտության ամբիոն: Ամբիոնի վարիչի պարտականությունները Հակոբ Շահան-Ջրպետյանից հետո հաջորդաբար վարել են Էդուարդ դը Ֆլորիվալը, Էդուարդ Դյուլյորիեն, Օգյուստ Կարիերը, Անթուան Մեյյեն, Ֆրեդերիկ Սակլերը, Գեորգ Դյումեզիլը: Հայագիտական ամբիոնը որոշ մեծ ու փոքր ընդհատումներով իր գոյությունը շարունակում է մինչև այսօր:

Ջարբհանայան Գ., ՌԻսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 107-111:

«Բազմավեպ», 1942, № 6:

Դեկտեմբերի 12. Աստրախանում, Նիկողայոս Աղաբաբյանի օժանդակությամբ, հիմնվում է ռուսահայոց առաջին հայկական դպրոցը՝ «Աղաբաբյան վարժարանը»: Վարժարանը սկզբում ուներ 83 աշակերտ, առաջին տեսուչն էր Սերովբե Պատկանյանը: 1896 թ. վարժարանը ենթարկվում է Ռուսաստանի լուսավորության

մինիստրությանը, վերանվանվում «Աստրախանի հայոց գավառական ուսումնաբան» և շարունակում իր գոյությունը մինչև 1814 թ.:

«Սովետական մանկավարժ», 1956, № 3 («Աստրախանի հայկական Աղաբաբյան դպրոցի պատմությունից»):

-Եղինդ գյուղում (Պարսկաստան) ծնվեց եկեղեցական-հասարակական գործիչ, պատմաբան Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը: Վախճ. 1879 թ. հոկտեմբերի 16-ին, Թիֆլիսում:

«Կենսագրություն և կտակ Սարգիս Արքեպիսկոպոսի Հասան-Ջալալյանց», Թիֆլիս, 1884, 39 էջ:

-Պոլսում (Բերա), Վենետիկի Մխիթարյան միաբանության ուժերով և Պողոս Թընկրյանի նախաձեռնությամբ, հիմնվում է հայկական արական դպրոց, որն ուներ 80 աշակերտ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1920 թ.:

«Հանդես ամսօրյա», 1929, № 2 («Ծանոթությունք Սթամպոլի պատմության»):

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

-Պոլսում ստեղծվում է «Կղեմեսյան եղբայրություն» կաթոլիկական ընկերությունը: Ընկերության նպատակն էր դպրոցներ բանալու և հրապարակային ընթերցանություններ կազմակերպելու միջոցով զարգացնել և լուսավորել հայ ժողովրդին: «Կղեմեսյան եղբայրությունը» գոյություն ունեցավ մինչև 1827-1830 թթ.:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. 1, Վիեննա, 1957, էջ 21-22:

-Զմյուռնիայում ծնվեց գրական-հասարակական գործիչ Ղուկաս Գասպարի Պալղազարյանը: Վախճ. 1878 թ. մայիսի 28-ին: 1840 թվականից մինչև իր մահը խմբագրել է «Արշալույս Արարատյան» թերթը:

«Մասիս», 1878, № 2135:

«Արշալույս Արարատյան», 1878, № 1039:

-Վենետիկում ծնվեց իտալացի հայագետ Հովսեփ Կապյուլետտին: Վախճ. 1876 թ. փետրվարի 2-ին:

«Բազմավեպ», 1876, էջ 60:

-Բասրայում (Հար. Իրաք) ծնվեց բանասեր, գրող, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Թադևոս Խաչիկ Ավետումյանը: Վախճ. 1863 թ. փետրվարի 13-ին, Կալկաթայում:

«Հանդես ամսօրյա», 1896, № 6 («Սարգիս բժիշկ Թադևոսյան Ավետումյանց»)

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ Ա, Թիֆլիս, 1904, էջ 178-179:

- Արցախում (?) ծնվեց աշուղ Սեյադը (Պետրոս Տեր-Հովսեփի Մադաթյանց): Վախճ. 1872 թ. մայիսի 1-ին, Պոլսում:
«Մասիս», 1872, №№ 1233, 1270:
- Հին-Նախիջևանում ծնվեց աշուղ Միսկին Բուրջին: Վախճ. 1847 թ. հունիսի 7-ին, Ասկարանում (Լեռնային Ղարաբաղ):
«Հայ աշուղներ» (հավաքեց և կազմեց Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյանի), Երևան, 1937, էջ 141, 508:
- Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրատարակիչ, Թադեոս Տիվիթճյանը:
Վախճ. 1878 թ.:
Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 85:
- Վենետիկում հրատարակվում է Սկրտիչ Ավգերյանի «Լիակատար վարք և վկայաբանություն սրբոց» աշխատության առաջին հատորը: 640 էջ:
Երկրորդ հատոր, 1811, 568 էջ:
Երրորդ հատոր, 1812, 528 էջ:
Չորրորդ (491 էջ), հինգերորդ (432 էջ), վեցերորդ (621 էջ), յոթերորդ (579 էջ), ութերորդ (504 էջ), իններորդ (536 էջ) հատորները՝ 1813 թ:
Տասներորդ հատոր, 1814, 424 էջ:
Տասնմեկերորդ հատոր (Հավելված տաս հատորների), 1814, 264 էջ:
Հավելված (տասնմեկերորդ հատորի), 1814, 98 էջ:
Տասներկուերորդ հատոր, 1815, 416 էջ:
Նույնը՝ մեկ մեծադիր հատորով, առանց ծանոթագրությունների, 1810, 1167 էջ:
- Վենետիկում հրատարակվում է Ստեփաննոս Ագոնցի «Պատմություն կենաց և վարուց Տեառն Մխիթարայ Սեբաստացոյ, րաբունապետի և աբբայի» աշխատությունը:
ԺԵ+336 էջ:
- Վենետիկում հրատարակվում է Սկրտիչ Ավգերյանի «Քրիստոնեական վարդապետություն ոտանալորեալ առ հեշտին մտառություն համբակաց դպրատան Լուսաւորչի» ստեղծագործությունը: 48 էջ:
- Վենետիկում, աշխարհաբար լեզվով, հրատարակվում է Սկրտիչ Ավգերյանի «Դեղ կենաց, որ է հոգևոր բժշկարան» աշխատությունը: 319 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հակոբ Ստեփանյանի (Վարատինեցի) «Տեսարան աշխարհի, բովանդակիչ բնական և բարոյական գիտութեանց» աշխատությունը: 452 էջ:

-Վենետիկում վերահրատարակվում է Մխիթար Սեբաստացու «Չայն Քրիստոսի և հաւատացեալ հոգւոյն» խորագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն: 106 էջ:

-Վենետիկում վեց լեզվով հրատարակվում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը:

Տրված են. Հայերեն, թուրքերեն, հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն թարգմանությունները:

-Վենետիկում հրատարակվում է Մկրտիչ Ավգերյանի «Դիմառնութիւն չորից վերջնոց» պոեմը: 136 էջ:

Նույնը աշխարհաբար, նույն թվականին՝ «Բանաստեղծություն չորս ետքերնուս վրա. գրաբարեն ետն աշխարհաբար ռամկորեն գրված, ամեն մարդու պետք ըլլալու համար» խորագրով: 135 էջ:

-Պետերբուրգում, Հովսեփ Հովհաննիսյանի՝ գրաբար բնագրից կատարված ռուսերեն թարգմանությամբ և գրաբար-ռուսերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մաղթանք գիշերայինք»-ը: 3 էջ:

-Մաղրասում հրատարակվում է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիա քաղաքի» պոեմը, որին տպակից են նաև Վարդան Եդեսիացու (Բաբունի) «Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց» և Ներսես Լամբրոնացու «Ներբողեան առ սուրբն Ներսէս Շնորհալին» ստեղծագործությունները:

-Տրիեստում, Աստվածատուր Բաբիկյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում են Կառլոս Պիլուարտի «Բովանդակութիւն բովանդակութեան Ս. Թովմայի» եռահատոր աշխատության առաջին և երկրորդ հատորները:

Հատոր Ա, 406 էջ, հատոր Բ, 568 էջ:
Հատոր Գ, Վիեննա, 1813, 501:

Փետրվարի 18. Վիեննայում իր գոյությունն է սկսում Վենետիկի Մխիթարյան միաբանությունից պառակտված միաբանների խումբը՝ Աստվածատուր Բաբիկյանի առաջնորդությամբ: Ավստրիայի կայսր Ֆրանցիսկոս Ա-ն նույն թվականի հունվարի 8-ին պաշտոնապես ճանաչել էր նրանց գոյությունը: Վիեննայի Մխիթարյան միաբանությունն իր գոյությունը շարունակում է առ այսօր: 1811 թ. վերջերին հիմնադրվում է նաև տպարանը, առաջին գիրքը լույս է տեսնում 1812 թ.:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 8, 42-47:
«Հանդես ամսօրյա», 1889, № 8 («Տապարանական»):

Հոկտեմբերի 21. Կարինում ծնվեց բանահավաք Սիմեոն Ճուլարտյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր դարձել 1834 թ. սեպտեմբերի 8-ից: Վախճ. 1884 թ. փետրվարի 14-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1884, էջ 59 («Հանգիստ... Սիմեոնի Ճուլարտեան»):

-Բավարիայում (Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ Ֆրիդրիխ Վինդիշմանը (Friedrich Windischmann): Վախճ. 1861 թ.:

Ադայան Էդ., Հայ լեզվաբանության պատմություն, հատ. 1, Երևան, 1958, էջ 175-177:

-Վենետիկում հրատարակվում է Միքայել Չամչյանի «Խրախճան պատմության հայոց» աշխատությունը: 494 էջ:

Նույնը՝ Կալկաթայում, 1824:

Նույնը՝ հայատառ թուրքերեն 1812 և 1850 թթ.:

-Վենետիկում, Ջնթլում Ավետյանի սատարմամբ, հրատարակվում է «Նոր տետրակ այբուբենական վայելուչ կարգաւ դասաւորեալ և պէսպէս իրօք ճոխացուցեալ, ի յուսումն մանկանց մերագնէից» դասագիրքը: Ը+160 էջ:

Վերջում զետեղված է. «Կրթութիւն քրիստոնէական», ապա՝ «Դուռն քերականութեան, զոր պատշաճաւոր է ուսուցանողին, զի հնարիք՝ ըստ հարմարութեան մանկանցն...» տեսական բաժինը, որից հետո «Յաղագս դիւրիմաց եւ կարճառօտ քերականութեան նաև գրոց բաժանման» հատվածը:

-Պոլսում հրատարակվում է «Կանոնական կոնդակ հարսանեաց» գրքույկը: 19 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Կանոնական կոնդակ հարսանեաց, յորում աւանդին քսանեւինն կանոնք բարեկարգութեան վասն ամենայնի, ևս և յատուկ հանդերձանք ըստ չորս աստիճան որոշեալ անձանց»:

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է. «Տերունականք» պոեմի առաջին մասը («Ի ծնունդ Տեառն»):

«Տաղք Մխիթարեան վարդապետաց», Ա:

1 8 1 2

Ապրիլի 22. Ճենովայում (Հս. Իտալիա) ծնվեց անգլիացի հայագետ Սոլոմոն Մալանը (Solomon Malan): Վախճ. 1895 թ. նոյեմբերի 25-ին, Բորնմուտում (Հար. Անգլիա):

«Բազմավեպ», 1895, № 3 («Սոդոմոն Կեսար Մալան»):
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1907, էջ 61:

Մայիսի 16. Բուխարեստում, ռուսական պատվիրակության ղեկավար Միխայիլ Կուտուզովի և թուրքական պատվիրակության ղեկավար Մեծ վեզիր Ահմեդ փաշայի միջև կնքվում է 16 հոդվածներից բաղկացած ռուս-թուրքական հաշտության պայմանագիր:

Юзефович Т., Договоры России с Востоком, политические и торговые, СПб., 1869, стр. 49-58.

Հունիսի 12. Առանց պաշտոնապես պատերազմ հայտարարելու, ֆրանսիական բանակի ավանգարդային զորամասերը սկսում են անցնել Ռուսաստանի արևմտյան սահմանագիծը՝ Նեման գետը: Սկսվում է Հայրենական պատերազմը, որն ավարտվում է նույն թվականի դեկտեմբերի 12-ին, ռուս ժողովրդի հաղթանակով:

Лависс и Рамбо, История XIX века, т. 2, М., 1938, стр. 238-282.

Օգոստոսի 1. Վենետիկում աշխարհաբար սկսում է հրատարակվել «Դիտակ բյուզանդյան պատմություն քաղաքական ու պատերազմական, բանասիրական ու եկեղեցական դիպվածներու, որ հիմակվան ատեննիս կըլլան աշխրբիս վրա» երկշաբաթաթերթը (հետագայում՝ շաբաթաթերթ): Իր գոյությունը շարունակում է մինչև 1816 թ. վերջը:

Խմբագիրներ

Գապարաճյան Գրիգոր, 1812-1813 թթ., Փյունկյուլճյան Մադաթիա, 1813-1814 թթ., Ջախջախյան Մանվել, 1815-ից մինչև վերջ: Հրատարակությանն օժանդակել են. Խաչատուր Սյուրմեյանը և Հարություն Ավգերյանը:

Գալեմքյայան Գ., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 30-34:

Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Բ, Երևան, 1960, էջ 156-185:

-Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայ երաժշտության տեսաբան Արիս Հովհաննիսյանը:
Վախճ. 1878 թ. ապրիլի 13-ին:

Զարդարյան Վ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 187:

-Աստրախանում ծնվեց պահպանողական հրապարակախոս Հովսեփ Չերքեզյանը:
Վախճ. 1863 թ. նոյեմբերի 30-ին:

Նալբանդյան Մ., Անտիպ երկեր (խմբ. և ծանոթ. Աշոտ Հովհաննիսյանի), Երևան, 1935, էջ 756:

Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, Երևան, 1949, էջ 290:

-Պոլսում ծնվեց (1812 ?) գրական-հասարակական գործիչ, լրագրող (մասնագիտությամբ բժիշկ) Հակոբ Դավուդյանը: Վախճ. 1878 թ. օգոստոսին, Մեծ կղզում (Բրինկիբո):

«Հանդես ամսօրյա», 1898, № 3 («Բժ. տոքթ. Հակոբ Դավուդյան»):

-Պոլսում (Պալաթի) վախճանվեց պատմաբան, բառարանագիր, թարգմանիչ (եբրայերենից, արաբերենից, պարսկերենից, հունարենից՝ հայերեն) Գևորգ Տեր-Հովհաննիսյան-Պալատցին: Ծնվ. 1737 թ. Պոլսում:

«Հանդես ամսօրյա», 1912, № 10 («Տեղագրական»):

Չուգասյան Բ., Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963, էջ 169-200:

-Նոր-Ջուղայում ծնվեց պատմաբան, բանասեր, թատերական գործիչ Գալուստ Շերմագանյանը: Վախճ. 1891 թ. նոյեմբերի 10-ին, Ջալեսնոյե գյուղում (Օղլովի նահանգ, Ռուսաստան):

«Արձագանք», 1891, № 41:

«Արևելք», 1891, № 2352 («Պատմագետ Գալուստ Շերմագանյան»):

Շերմագանյան Գ., Նյութեր ազգային պատմության համար, Ռոստով, 1891, 400 էջ:

-Նոր-Նախիջևանում ծնվեց թատերագետ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Սարգիս Տիգրանյանը: Վախճ. 1873 թ. Եյսկում:

«Արձագանք», 1891, № 10 («Սարգիս Տիգրանյան»):

Արշարունի Ա., Հայ թատերագիտական մտքի պատմությունից, Երևան, 1956, էջ 139:

Տարեկեսերին. Պոլսում (Գուրուչեշմե), Ղուկաս Ինճիճյանի նախաձեռնությամբ և Հակոբ, Մկրտիչ, Հովհաննես Տյուզյանների անդամակցությամբ ու ֆինանսական օժանդակությամբ, ստեղծվում է «Արշարունյաց ընկերություն» գրական-հասարակական կազմակերպությունը: Գոյություն ունեցավ մինչև 1819 թ. վերջերը և ծաղկուն ժամանակ ուներ 40-45 անդամ:

«Բազմավեպ», 1912, № 1-4 («Ղուկաս Ինճիճյան»):

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. Ա, Վիեննա, 1957, էջ 279-283:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Գրիգոր Գապարաճյանի «Գիսավոր աստղ, կամ պատմություն գիսավոր աստղերու» գիրքը: 128 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Մկրտիչ Ավգերյանի «Բան գործնական, որ է միայն ինդրելին ամենայն բանաւորի և գործ բանական» չափածո ստեղծագործությունը: 216 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հարություն Ավգերյանի «Բառարան համառօտ ի գաղղիականէ ի հայ»-ը: ԻԳ+570 էջ:

Տիտղոսաթերթի վրա նշված է հատոր առաջին: Երկրորդ հատորը հեղինակի հայերեն-ֆրանսերեն բառարանն է, որը լույս է տեսել 1817 թ.:

-Վենետիկում հայերեն, լատիներեն և իտալերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է «Ընտրութիւն աստուածաբանից, վասն ճառին Յովհաննու Օձնեցոյ ընդդէմ երևութականաց» գիրքը:

Պարունակում է Օձնեցու հիշյալ ճառը և այդ ճառի վերաբերյալ Հռոմի աստվածաբանական ժողովի դրվատական վճիռը:

-Վենետիկում, Հարություն Ավգերյանի՝ գրաբար բնագրից կատարված իտալերեն թարգմանությամբ ու առաջաբանով, հրատարակվում է «Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացոյ» աշխատությունը: Համատեղ տրված են գրաբար և իտալերեն տեքստերը: 192 էջ:

-Վենետիկում տաս լեզուներով հրատարակվում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը:

Տրված են. Հայերեն (գրաբար), թուրքերեն, հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, Տրանսիլվանիայի հայոց, գերմաներեն, հունգարերեն, սերբերեն թարգմանությունները:

-Վենետիկում, Հովսեփ Բաղդասարյանի՝ իտալերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ալփոնսո Լիգուորիի «Գանձարան շնորհաց ամենասուրս կուսին բաժանեալ յերկուս գիրս» աշխատությունը: 518 էջ:

-Փարիզում հրատարակվում է Մ. Բելլոդի «Փորձառութիւն հայկական լեզուին» հայերեն-ֆրանսերեն այբբենարանը: 94 էջ:

-Փարիզում, ֆրանսերեն և գրաբար համատեղ տեքստերով, առաջաբանով ու ծանոթագրություններով (բոլոր աշխատանքները կատարել է Հակոբ Շահան-Ջրպետյանը) հրատարակվում է «Հատուած ի երկու ձեռագրաց հայոց, որ պարունակէ պատմութիւն և քաղուածք պատմութեան Մատթեոսի երիցու Ուրհայեցոյ, յաղագս ժամանակացն առաջին խաչակրացն արշավանաց» աշխատությունը:

-Պետերբուրգում հրատարակվում է Մարգար Խոճենցի (Գեղամյան) «Բարառնական դիմառնութիւն բարոյական, այսինքն՝ րօման մօրալէ ի դիմաց վարդոյ եւ լուսինեկի, այն է պլպուլի» վիպակը: Ձեռնեղված են հայերեն և ռուսերեն (ռուս. թարգմ. Հովսեփ Հովհաննիսյան) համատեղ տեքստերը: XIII+118 էջ:

Նույնը՝ Փարիզ, 1826 (վիմատիպ), 25 էջ:

Նույնը՝ Էդուարդ Լը Վայյան դը Ֆլորիվալի ֆրանսերեն թարգմանությամբ, Փարիզ, 1832 (վիմատիպ) և 1838, ապա նաև՝ իտալերեն թարգմանությամբ, Վենետիկ, 1879:

Երկար ժամանակ Խոճենցի սույն աշխատությունը համարվում էր ինքնուրույն ստեղծագործություն, սակայն Արշակ Չոպանյանը ապացուցեց, որ «Բարառնական դիմառնութիւն բարոյական»-ը թուրք գրող Ֆազլիի համանուն խորագիրը կրող գործի թարգմանությունն է, թեև թարգմանիչը կատարել է զանազան կրճատումներ ու հավելումներ:

Տե՛ս **Ա.Ղազիկյան**, «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի», Վենետիկ, 1909-1912, էջ 1195-1198:

-Մադրասում, ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Պիեր Կլարիս Ֆլորիանի «Նումա Պոմպիլիոս» պատմական վեպը: 318 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Նումայ Պոմպիլիոս. բարոյական բանաստեղծություն: Յօրինեալ ի ներհուն Ֆլորիանա Գաղղիացոյ. եւ թարգմանեալ ի գաղղիական բնագրէ ի մերս, յաշխատասիրութեամբ ուրումն բանասիրի, ի զուարճութիւն և ի զբօսանս բարեմիտ պատանեկին, պարոն Աբրահամու՝ որդոյ պարոն Յարութիւն Սահակեան Ջուղայեցոյ: Արդեամբ և ծախիւք բարեպաշտօն ադա Վարդանին Գասպարեան, յարգոյ և տեառն՝ նորուն Աբրահամու: Ի հայրապետութեան տեառն Եփրեմայ ամենայն հայոց կաթողիկոսին: Ի Մատրաս, ի տպարանի Յակոբայ և Յովսէփայ Նազար Շամբեանց»:

-Մադրասում, Հակոբ Նազար Շամբյանի՝ անգլերենից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Վոլտերի «Կեսարի մահը» ողբերգությունը: ԺԴ+99 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Ողբերգութիւն ի վերայ մահուան Յուլիոս Կեսարոսի: Արարեալ ի ներհուն Վոլտերայ Գաղղիացոյ: Ի մերս վերածեալ հայկական բարբառ ի պարոն Յակովբայ Նազար Շամբեան, յանգլիական բնագրէ, ի զբօսանս ընթերցասէր պատանեկացն մերազնէից: Ի հայրապետութեան տեառն Եփրեմի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց: Ի Մատրաս, ի տպարանի երկոցունց հարազատացն պարոնաց Յակոբայ և Յովսէփայ Նազար Շամբեանց»:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Նարեկ գիրք աղօթից, բաշխեալ յինսուն և հինգ բանս» պոեմը: 441 էջ:

«Մատեան ողբերգութեան» պոեմից հետո զետեղված են Նարեկացու կենսագրությունը, և խրթին բառերը մեկնող բառարան:

1 8 1 3

Մեպտեմբերի 26. Պոլսում ծնվեց արձակագիր, գրական-հասարակական գործիչ, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ թուրքերեն) Հովսէփ Վարդանյանը (Վարդան փաշա): Վախճ. 1879 թ. մարտի 28-ին:

1852-1863 թթ. Պոլսում հրատարակել և խմբագրել է «Մեճմուայը հավատիս» («Հավաքածո լուրերի») հայատառ թուրքերեն թերթը: 1877-ից մինչև կյանքի վերջը՝ «Թերճեմանը էֆթյար» («Մտքերի թարգման») թերթը:

«Հանդես ամսօրյա», 1890, № 3 («Հովսեփ Վարդան փաշա»): «Բազմավեպ», 1901, № 8 («Վարդան փաշա»):
«Ազգապի», Երևան, 1953 (Գ. Ստեփանյանի առաջաբանը):
ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 8, 1956, № 11 (Ս.Շտիկյան, «Պարզաբանումներ «Ազգապի»-ի մասին»):

Հոկտեմբերի 12. Գյուլիստան բերդում (Ղարաբաղ) ռուսական պատվիրակության ղեկավար Ն. Թ. Ռոտիշչևի և պարսկական պատվիրակության ղեկավար Միրզա-Աբդուլ Հասան-խանի միջև կնքվում է 11 հոդվածներից բաղկացած ռուս-պարսկական հաշտության պայմանագիր:

Юзефович Т., Договоры России с Востоком, политические и торговые, СПб., 1869, стр. 208-214.

-Պոլսում ծնվեց (1813?) եկեղեցական հետադեմ գործիչ Անտոն Հասոյի Հասունյանը:
Վախճ. 1884 թ. փետրվարի 17-ին, Հռոմում:

«Արձագանք», 1884, № 8 («Կարդինալ Անտոն Հասունյան»):
«Բազմավեպ», 1885, էջ 75 («Մեծանուն վախճանյալք»):

-Կեսարիայում (Թուրքիա) ծնվեց աշուղ Էլֆազին (հաջի Պետրոս): Վախճ. 1863 թ.:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, հատ. Բ, էջ 1558-1560:

-Հազարչըրիք գյուղում (Փերիայի նահանգ, Պարսկաստան) վախճանվեց աշուղ Ստեփաննոս Երեցը: Ծնվ. 1746 թ.:

Մինասյան Լ., Փերիայի հայ աշուղները, Թեհրան, 1964, էջ 73:

-«Եղանակ Բիզանդեան-Բազմավեպ» տարեգիրքը սկսում է հրատարակել Ղուկաս Ինճիճյանի «Գիտելիք բանասիրականք յաղագս բանաստեղծութեան» ուսումնասիրությունը: 169 էջ:

Շարունակվում է տարեգրքի 1816 թ. (էջ 275-284), 1819 թ. (էջ 152-153) և 1820 թ. (էջ 212-213) համարներում: Չնայած յուրաքանչյուր հատվածը պոեզիայի տեսությանը նվիրված ինքնուրույն ուսումնասիրություն է, բայց մեկը մյուսի շարունակությունն է կազմում:

-«Եղանակ Բիզանդեան-Բազմավեպ» տարեգիրքը սկսում է հրատարակել Ղուկաս Ինճիճյանի «Վարդան Մամիկոնյան» պոեմը: 170 էջ:

Շարունակվում է տարեգրքի 1815 թ. (էջ 250), 1817 թ. (էջ 92), 1819 թ. (էջ 154) և 1820 թ. (էջ 213) համարներում:

-Պոլսում (Պեյքոզ), Թուրլաճի Մարտիրոսի նախաձեռնությամբ, հիմնվում է հայկական երկսեռ վարժարան: 1853 թ. Պետրոս Թիրաքյանի նախաձեռնությամբ վարժարանը

ընդարձակվում է, դառնալով յոթդասյա: 1912 թ. այն անվանվում է «Հայկազյան» և պահպանում իր գոյությունը մինչև 1920 թ.

«Հանդես ամսօրյա», 1935, № 3-4 («Ծանոթությունք Ստամբոլը պատմության»):

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Իգնատիոս Փափազյանի «Մանրանկարք, որ է մինիաթուրայ. արհեստ մանրակրկիտ ներկերանգ նկարագրութեան» աշխատությունը: 120 էջ:

- Կալկաթայում հրատարակվում է Ջնթլում Ավետյանի «Ծաղկակալ» գիրքը: 96 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Տետրակ, որ կոչի ծաղկակալ. ի սմայ պարունակին համառօտ աշխարհագրութիւնք և պատմութիւնք երկնային լուսաւորաց, նաև ժամանակագրութիւնք և աստիճանք և այլ հարկաւոր նշանակութիւնք երկրեաց, այլև ամիսք հոռմայեցոց, ազարիայի, աւուրք լուսնի, ձայնք օրհնութեան, տօնք տերունական և սրբոց, իսաւարուն արգեական, անունք բովանդակ Կալկաթայ հայոց ազգի բնակչացն, դատաւորաց, ատենաբանից փոխանորդաց և այլ զանազան պիտոյից»:

-Պետերբուրգում ռուսերեն հրատարակվում է Հարություն Արարատյանի "Жизнь Артемия Арапатского уроженца селения Вагаршапат" ինքնակենսագրական երկը:

Նույնը՝ գերմաներեն, 1821-ին, անգլերեն՝ Լոնդոնում, 1822 թ.: Հայերեն՝ 1893 թ., Պ. Պռոշյանի համառոտած թարգմանությամբ:

1 8 1 4

Մայիսի 14. Համադանում (Պարսկաստան) ծնվեց պատմաբան-բանասեր, հրատարակիչ, լրագրող Կարապետ Շահնագարյանը: Վախճ. 1865 թ. օգոստոսի 29-ին, Պոլսում (Խասազյուղ):

1864-65 թթ. Մանչեստրում (Անգլիա) հիմնադրել և խմբագրել է «Երկրագունդ» ամսագիրը: «Լուսմ», 1910, № 5-6 («Կարապետ վարդապետ Շահնագարյան»): «Հանդես ամսօրյա», 1927, № 10 («Տեղագրական»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 626:

Մայիսի 15. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս, թարգմանիչ (գերմաներենից, պարսկերենից, ֆրանսերենից՝ հայերեն) Ստեփաննոս Եսայու Նազարյանցը: Վախճ. 1879 թ. ապրիլի 26-ին, Մոսկվայում:

1858-1864 թթ., Մոսկվայում, հրատարակել է «Հյուսիսափայլ» ամսագիրը, ուր հանդես է եկել նաև «Ծատուր Չելեպի» կեղծանունով (ամսագիրը 1863 թ. չի հրատարակվել):
Լեռ, Ստեփաննոս Նազարյանց, հատ. I, 224 էջ, հատ. II, 406 էջ: Թիֆլիս, 1902: «Տեղեկագիր», 1941, № 2 («Մի ճշտում»):

Հունիսի 26. Պոլսում ծնվեց աշխարհագրագետ, պատմաբան-բանասեր Ալեքսանդր Պալճյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ: Վախճ. 1884 թ. դեկտեմբերի 5-ին, Հռոմում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 21:

Դեկտեմբերի 1. Պոլսում վախճանվեց կենսագիր Պողոս քահանա Կաղզվանցին: Ծնվ. Կաղզվանում (?).

«Բազմավեպ», 1928, № 11-12 («Հայ գրականությունը տապանաքարերու վրա»):

-Սանգիբարան գյուղում (Փերիայի նահանգ, Պարսկաստան), ծնվեց աշուղ Օհան օղլին (Կարապետ Օհանի Պողոսյան-Բաղումյան): Վախճ. 1897 թ. մարտի 16-ին:

Մինասյան Լ., Փերիայի հայ աշուղները, Թեհրան, 1964, էջ 93:

-Թիֆլիսում ծնվեց (1814 ?) գրական-հասարակական գործիչ, բանասեր Դավիթ Ռոստոմյանը: Վախճ. 1869 թ. հոկտեմբերի 17-ին, Բաքվում:

«Հանդես ամսօրյա», 1914, № 5 («Կենսագրական»):

-Սիբվիզում (Հունգարիա) դադարեցնում է իր գոյությունը տեղի հայկական դպրոցը: Դպրոցը գոյություն ուներ 1797 թ., հիմնադիրն էր Ալեքսանդր Միքայելյանը և ծաղկուն շրջանում ուներ 55-60 աշակերտ:

Սարգիսյան Բ., Երկուհարյուրամյա կրթական գործունեություն Վենետիկո Մխիթարյան միաբանության: Վենետիկ, 1936, էջ 33-34:

-Կալկաթայում Ջնթլում Ավետյանի ջանքերով վերահրատարակվում է Ջենոբ Գլակի «Պատմութիւն երկրին Տարօնոյ» գիրքը: 247 էջ:

Վերջում գետեղված են (186-րդ էջից հետո). Պաղտասար Դպիրի «Առ սուրբն Յովհաննէս մեծն ի մարգարէս», «Նորին յետնեցելոց ասացեալ առ սուրբն Գրիգորիս Լուսաւորիչն Հայաստանեայց» բանաստեղծությունները:

-Վենետիկում հրատարակվում է Գաբրիել Ավետիքյանի «Բացատրութիւն շարականաց, որք պաշտին ի հասարակաց ժամակարգութեան Հայաստանեայց Եկեղեցոյ» աշխատությունը: ԺԴ+807 էջ:

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է. «Ի պատճառսն լուսաւորութեան ազգիս»
բանաստեղծությունը:

Տե՛ս «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Ա:

-Վենետիկում, Արսեն Բագրատունին հունարեն բնագրից թարգմանում է Հումերոսի
«Իլիականի» ութերորդ հագներգությունից մի հատված:

Մի հատված էլ (առաջին հագներգության սկիզբը)՝ Բագրատունին թարգմանել է 1847 թ.:
Տե՛ս «Տաղք...», հատ. Ա:

-Վենետիկում, Արսեն Բագրատունին լատիներեն բնագրից չափածո թարգմանում է
կտորներ Վիրգիլիոսի (Հատված «Մշակականք»-ի առաջին գրքից), Կատուլլի («Ով
սիրելիք...»), Ֆեդրոսի («Մրջիմն և ճանճ», «Հպարտն ճայ և սիրամարգ», «Գայլ և
կռունկն», «Էջ և առեւծ որսորդք»), Միլտոնի («Դրախտ կորուսեալ»-ի Ա երգից մի
հատված), Օսսիանի («Որպես մռայլ մրրիկք») գործերից:

Տե՛ս «Տաղք...», հատ. Ա:

1 8 1 5

Հունվարի 19. Պոլսում ծնվեց աշխարհագրագետ, քերական, թարգմանիչ, բանասեր
Ստեփան Յազըճյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1836 թ.
մայիսի 22-ից:

Մահվան վերաբերյալ մանրամասնություններ մեզ չհաջողվեց գտնել:
«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 222:

Ապրիլի 25. Պաշպալովում (Հունգարիա) վախճանվեց բանասեր Բարդուղիմեոս
Գապտիպովը: Ծնվ. 1738 թ. մարտի 31-ին, Պաշպալովում: Վենետիկի Մխիթարյան
միաբանության անդամ էր 1761 թ. նոյեմբերի 15-ից:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 218:

Մայիսի 12. Մոսկվայում իր գործունեությունն է սկսում Լազարյան ճեմարանը, որի
առաջին տեսուչն էր ճեմարանի հիմնադիրներից մեկը՝ Հովակիմ Լազարյանը:
Ճեմարանն սկզբում ուներ 24 աշակերտ, իսկ ծաղկուն ժամանակ նրանց թիվը
հասավ 200-ի: 1827 թ. դեկտեմբերի 26-ից, ճեմարանը կոչվեց «Արևելյան լեզուների
Լազարյան ճեմարան», իսկ 1828 թ. մարտից՝ «Արևելյան լեզուների հայկական
ճեմարան»: Լազարյան ճեմարանը գոյություն ունեցավ մինչև 1918 թ. վերջերը:

Թաղևոսյան Հ., Պատմություն Լազարյան տոհմի և Լազարյան ճեմարանի Արևելյան լեզվաց, Վիեննա, 1953, 516 էջ:

Իգիթյան Ա.Հ., Լազարյան ճեմարան, Երևան, 1969, էջ 354:

ԳԱԹ, Լազարյան ճեմարանի ֆոնդ, № 177:

Հուլիսի 8. Անկյուրայում (Թուրքիա) ծնվեց աստվածաբան-բանասեր Մադաքիա Սամվելյանը: Վախճ. 1886 թ. նոյեմբերի 20-ին, Պոլսում:

«Հուշարձան» (գրական ժողովածու,) Վիեննա, 1911, էջ 21:

Հուլիս. «Դիտակ Բյուզանդյան»-ը, ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ հրատարակում է Շատոբրիանի «Գիշերապահ Գաղղիացի» բանաստեղծությունը:

Սեպտեմբեր. Պոլսում (Իսկյուտար) ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (հունարենից, ֆրանսերենից՝ հայերեն) Խաչատուր Միսաքյանը: Վախճ. 1891 թ. մարտի 15-ին:

«Անահիտ» 1931, էջ 144:

Մրմրյան Հ., Պուևտ Խաչատուր Միսաքյան և իրեն ժամանակակից իմացականին վրա հայացքներ, Պոլիս, 1907, 133 էջ:

Նոյեմբեր. «Դիտակ Բյուզանդյան»-ը իտալերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ հրատարակվում է Ջոն Պաստորինիի «Նուագ Իտալական» բանաստեղծությունը:

Նոյեմբեր. Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանասեր (մասնագիտությամբ բժիշկ) Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն): Վախճ. 1887 թ. հոկտեմբերի 3-ին:

«Հանդես ամսօրյա», 1893, № 11 («Բժ. տոքթ. Սերվիչեն էֆենդի»):

«Ընդարձակ օրացույց», 1901, էջ 64:

Նոյեմբերի 25. Նոր Ջուղայում (Պարսկաստան) ծնվեց հայագետ, բանասեր, թարգմանիչ (հայերենից-ռուսերեն) Մկրտիչ Հովսեփի Էմինը: Վախճ. 1890 թ. դեկտեմբերի 13-ին, Մոսկվայում:

ԳԱԹ, Մկրտիչ Էմինի ֆոնդ, № 50:

«Մշակ», 1890, № 149 («Մկրտիչ Էմին»):

«Լուսմա», 1900, № 1 («Մկրտիչ Հովսեփյան Էմին»):

Դեկտեմբերի 22. Վենետիկում վախճանվեց աստվածաբան-բանասեր Հովսեփ Գասպարյանը: Ծնվել է Դիարբեքիրում, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ է դարձել 1773 թ. հոկտեմբերի 24-ին:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 218:

-Թիֆլիսում իր գոյությունն է սկսում Հակոբ Մամուլովի հիմնադրած կաթոլիկական դպրոցը, որը սովորեցնում էր հայերեն, ռուսերեն, վրացերեն և լատիներեն: Դպրոցը գոյատևեց մինչև 30-ական թվականների վերջերը:

Երիցյան Ա., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 271:

-Վենետիկում, Մադաթիա Փյունկուլճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Ճամբորդություն դեպ ի Արևելեան Հնդստան» գիրքը: 87 էջ:

Գիրքն ունի նաև «Ճամբորդություն, որ ըրաւ Թաշառ անունով երևելի ֆրանսրզ ճիզվիթ մը, Լուիճի չորեքտասաներորդ ֆրանսիացի թագաւորին հրամանաւր դեպ ի Շիամ, որ է մեկ երևելի թագաւորութիւն մը Արևելեան Հնդստանին մեջ» վերնագիրը:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց, որ է համառօտ տեղեկութիւն հարկաւոր գիտութեանց ազատական արուեստից» չափածո ստեղծագործությունը: 380 էջ: Նույնը՝ 1818 թ.՝ անփոփոխ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Ղուկաս Ինճիճյանի «Ազգասէր. ճառ ասացեալ ի փոյթ յորդորանաց՝ յընտրելութիւն սորոյ ազգի և ի զգուշութիւն նորին ընդդիմակցաց ախտիցն հակառակաց» գիրքը: 226 էջ: Նույնը՝ 1902 թ. համառոտ: 133 էջ:

Գիրքը նախորոշված էր անվանել «Հայրենասեր», սակայն միաբանության ղեկավարությունը գտնում է, որ այդպիսի անվանումը կարող է չարիքների պատճառ դառնալ, իսկ հեղինակի անվան հիշատակությունը, հեղինակ՝ որն իր հայրենասիրական քարոզներով արդեն թուրքական կառավարության կասկածանքն էր հարուցել, կարող է խափանել գրքի հրատարակությունը, – որոշում է գիրքը լույս ընծայել փոխված վերնագրով և առանց հեղինակի ով լինելը նշելու:

-Վենետիկում, տասնչորս լեզուներով հրատարակվում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը:

Տրված են. Հայերեն (գրաբար և Տրանսիլվանիայի հայոց բարբառով), տաճկերեն, հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն,

գերմաներեն, հունգարերեն, սերբերեն, իռլանդերեն, իսպաներեն, դադմատերեն թարգմանությունները:

-Վենետիկում հրատարակվում է Միքայել Չամչյանի «Մեկնություն Սաղմոսաց» աշխատության երկրորդ հատորը (598 էջ): Հրատարակությունն ավարտվում է 1823 թ. և այդ ժամանակամիջոցում լույս է տեսնում 10 հատոր:

Մյուս հատորները հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ:

Հատոր Ա, 1813, 728 էջ:

Հատոր Գ, 1817, 818 էջ:

Հատոր Դ, 1818, 800 էջ:

Հատոր Ե, 1819, 581 էջ:

Հատոր Զ, 1819, 636 էջ:

Հատոր Է, 1820, 588 էջ:

Հատոր Ը, 1820, 603 էջ:

Հատոր Թ, 1821, 560 էջ:

Հատոր Ժ, 1823, 608 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Գաբրիել Ավետիքյանի «Քերականություն հայկական, նորոգ քննությամբ և կարգաւ աշխատասիրեալ» ուսումնասիրությունը: ԺԴ+580 էջ:

Բաղկացած է երկու՝ Ա և Բ մասերից, որոնցից առաջինն աշխարհաբար է, իսկ երկրորդը՝ գրաբար:

Նույնը՝ համառոտ (համառոտումը կատարված է հիմնականում գրաբար հատվածի հաշվին), դպրոցական կարիքների համար, 1823 թ.: 248 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մարգար Խոճենցի (Գեղամյան) «Համառոտ որպիսություն եկեղեցւոյ» աշխատությունը: 136 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Հարություն Աղանուրյանցի՝ ութվանկյա բանաստեղծական տողերով ու միօրինակ հանգավորմամբ չափածոյի վերածված սաղմոսները՝ «Գիրք սաղմոսաց Դարթի, որդւոյ Յեսսեայ. Հոմերական ոտիւք չափեալ» խորագրով: 315 էջ:

-Աստրախանում, Կղեմես Շահվերդյանի՝ ռուսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ և ռուսերեն-գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է «Ռուսաց և հայոց այբբենական տետրակ, արարեալ յուսումն դեռահաս տղայոց հայկազնեաց» դասագիրքը: 47 էջ:

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է «Ի սրինգն» բանաստեղծությունը:

«Տաղը Մխիթարյան վարդապետաց», հատ. Ա:

1816

Հունվար. Աստրախանում, «Восточная Известия» (1813-1816 թթ.) ռուսերեն շաբաթաթերթին կից, սկսում է հրատարակվել նրա հայերեն տարբերակը՝ «Արևելյան ծանուցմունք» խորագրով: Վերջինս հրատարակվում է մինչև 1816 թ. հուլիսը (27 համար) և դադարում է իր ռուսական բնօրինակի հետ մեկտեղ: Խմբագիրներն էին Իոսիֆ ֆոն Վեյսհոպֆենը (1779 թ. Տիրոլ (Ավստրիա)-1816 թ. հուլիսի 2, Աստրախան) և Կղեմես Շահվերդյանը:

Государственная Публичная библиотека им. М.Е. Салтыкова-Щедрина (Ленинград). Отд. литературы народов СССР. Русский журнальный фонд
«Հայրենիքի ձայն», 1970, 11 փետրվարի («Հայտնաբերվել է հայերեն լրագրերի հավաքածու»):
«Սովետական գրականություն», 1957, № 3 («Ռուսահայոց առաջին պարբերական «Արևելյան ծանուցմունք»-ը):

Հունվարի 14. Կովկասի կառավարչապետ, գեներալ Ն.Թ. Ռոտիշչևի զեկուցագիրը Ալեքսանդր I կայսրին Ներսես Աշտարակեցու անձնվիրության և առ Ռուսաստան ունեցած սիրո ու նվիրվածության մասին:

«Акты...», т. 5, стр. 443 (док. № 523).

Մայիսի 29. Պոլսում (Սամաթիա) ծնվեց հայագետ, բանասեր Թադևոս Միհրդատյանը: Վախճ. 1873 թ. հոկտեմբերի 20-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 666:

Հունիսի 13. Հաթ բերդաքաղաքում (Բելգիա) ծնվեց բելգիացի հայագետ Ֆելիքս Նեվը (Felix Nève): Վախճ. 1893 թ. մայիսի 23-ին, Լուվենում (Բելգիա):

Զարբհանայան Գ., ՌԻսումնասիրությունը հայ լեզվի և մատենագիտության, Վենետիկ, 1895, էջ 248-262:
«Հանդես ամսօրյա», 1936, № 1-3 («Բելգիա և հայերը»):

Դեկտեմբերի 2. Աշխարհահռչակ գրող Ջորջ Բայրոնը Վենետիկում, Մխիթարյանների մոտ ձեռնամուխ է լինում հայոց լեզվի և հայ հին գրականության ուսումնասիրությանը (Բայրոնը Վենետիկ էր ժամանել 1816 թ. նոյեմբերի վերջերին): Բայրոնի ուսուցիչն էր Հարություն Ավգերյանը, ուսումնառությունը տևում է մինչև 1817 թ. մարտի վերջը:

«Բազմավեպ», 1934, № 4 («Լորդ Պայրոն ի ս. Ղազար»)

-Փարաքյար գյուղում (Էջմիածնի շրջան Հայկական ՍՍՀ) ծնվեց աշուղ Ազբար Ադամը: Վախճ. 1844 թ. Երևանում:

«Հայ աշուղներ» (կազմեց Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյան), Երևան, 1937, էջ 80, 505-506:

-Պոլսում (Պալաթի) իր գոյությունն է սկսում չորսդասյա արական «Խորենյան» վարժարանը: 1849 թ. վարժարանը տեղափոխվում է Նազրլ Գաբու (Պոլսի արվարձան) և վայելելով 1847-ին հիմնադրված «Խորենյան ընկերության» հովանավորությունը, վերանվանվում է «Խորենյան-Վարվառյան ազգային երկսեռ վեցդասյա վարժարան»: 1866 թ. վարժարանը վերակառուցվում է, վերանվանվում «Խորենյան երկսեռ վարժարան» և պահպանում իր գոյությունը մինչև 1912 թ.:

«Մասիս», 1854, № 131, «Հանդես ամսօրյա», 1910, № 10, 1912, № 12:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Գաբրիել Ավետիքյանի «Տեսարանք արարեալ աշխարհօրէն ոճով, ի պիտանի զբօսանս մանկանց դպրանոցի» գիրքը:

Հրատարակվել է երեք տետր.

Տեսարան Ա, «Հայու տառից հնչման վրա»:

Տեսարան Բ, «Գրաբառ խոսակցութիւն»:

Տեսարան Գ, «Զանազան սովորութիւնք վարժապետաց»:

-Վենետիկում, գրաբար և լատիներեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Հովհաննես Օձնեցու «Ճառ ընդդէմ երկութեանաց»-ը: Տեքստաբանական աշխատանքները, լատիներեն թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մկրտիչ Ավգերյանի: 16+ԺԲ+XVII+115 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հովհաննես Զոհրաբյանի «Գաղափար հայկական Մեսրոպյեան գրոց, որ այժմ անվանի գլխագիր» վայելչագրության ալբոմը: 8 տախտակ:

-Վենետիկում, Վրթանես Ասկերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությունամբ, հրատարակվում է Շարլ Ռոլենի «Պատմութիւն Հռովմէական»-ի առաջին հատորը: 750 էջ:

Երկրորդ (756 էջ) և երրորդ (793 էջ) հատորները՝ նույն թվականին: Չորրորդ (785 էջ), հինգերորդ (792 էջ) և վեցերորդ (818 էջ) հատորները՝ 1817 թ.:

Թարգմանությունը ֆրանսերեն բնագրի հետ համեմատել և ծանոթագրել է Սանվել Ջախջախյանը: Աշխատությունն ընդգրկում է Հռոմի պատմությունը, սկսած նրա հիմնադրումից (VIII դար մ.թ.ա) մինչև հանրապետության անկումը (մ.թ.ա. III դար):

-Վիեննայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է «Համառօտ քերականութիւն գաղղիական լեզուի, աւանդեալ ի հայ բարբառ, հանդերձ տաճկական թարգմանությամբ» գիրքը: Ը+248 էջ:

-Կալկաթայում, Ջնթլում Ավետյանի ջանքերով վերահրատարակվում է Եղիշեի «Պատմութիւն վարդանանց» գիրքը: 234 էջ:

-Պոլսում հրատարակվում է «Տետրակ այբբենական, որ է դուռն ընթերցողական ուսման: Շարադրեցեալ սակս դեռաբուսիկ և նորաբողբոջ տղայոցն, նան ամենից դեռես ոչ ուսելոց զգիր, որք ունին զջան ուսանելոյ» դասագիրքը: 32 էջ:

-Պետերբուրգում, Հովսեփ Հովհաննիսյանի՝ ռուսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Բան առ հայկազնեայ քրիստոնեայս, ընկերակցութենէ ռուսաց Աստուածաշունչ ժողովոյն, որ ի Ռուսաստան» գրքույկը: 15 էջ:

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է «Առ ուծացեալն ի սիրոյ և եղբայրութեանն» բանաստեղծությունը և «Դաշտիկն յաւար եղերք մշակի» պոեմը:

Տե՛ս «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Ա, էջ 120, 122:

1 8 1 7

Մարտի 13. Պոլսում ծնվեց քերական, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Քերովբե Սպենյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր դարձել 1838 թ. սեպտեմբերի 8-ին: Վախճ. 1886 թ. դեկտեմբերի 2-ին, Վիեննայում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 25:

Օգոստոսի 1. (Նոր տոմարով) Թեոդոսիայում (Ղրիմ) ծնվեց աշխարհահռչակ ծովանկարիչ, Ռուսաստանի Արվեստից ակադեմիայի անդամ (1844 թ.) Հովհաննես Կոստանտինի Այվազովսկին: Վախճ. 1900 թ. մայիսի 2-ին, իր ծննդավայրում:

Барсамов Н.С., Иван Константинович Айвазовский, М.-Л., 1941.

Մարգարյան Մ., Հովհաննես Այվազովսկի, Երևան, 1967, 63 էջ:

Հոկտեմբերի 22. Ղզլարում ծնվեց հասարակական գործիչ Հովսեփ Իզմիրյանը: Վախճ. 1883 թ. նոյեմբերի 15-ին, Պետերբուրգում:

«Մշակ», 1908, № 2 («Իզմիրյան մրցանակ»):

Հոկտեմբերի 23. Պոլսում Գրիգոր պատրիարքի նախաձեռնությամբ, Գրիգոր Չելեպի Տյուզյանի, Մատթեոս Կարնեցու, Անտոն Խլճյանի և Հակոբ Թընկրյանի մասնակցությամբ, տեղի է ունենում ընդհանուր ժողով, որի նպատակն էր միավորել կաթոլիկ և լուսավորչական հայերին: Չնայած ժողովը միաձայն ընդունում է Կոնդակ՝ միավորման մասին (Կոնդակը պաշտոնապես հրապարակվում է նույն թվականի նոյեմբերի 22-ին), բայց փաստացի միավորումը չի կայանում:

Համանման մի փորձ էլ կատարվել է 1810 թ. հուլիսի 3-ին, որը դարձյալ անցել է անհաջող:

Պերպերյան Ավ., Պատմութիւն հայոց..., Պոլիս, 1871, էջ 89-92, 449:

Հոկտեմբերի 28. Պոլսում (Բերա) ծնվեց լեզվագետ, բանասեր, մի շարք լեզուների քաջաձանթ (հունարեն, ֆրանսերեն, թուրքերեն) Ղևոնդ Հովնանյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ է դարձել 1840 թ. նոյեմբերի 1-ին: Վախճ. 1897 թ. հունվարի 26-ին, Վիեննայում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 32:

-Երևանում ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ Մկրտիչ արքեպիսկոպոս Բաբամյանը: Վախճ. 1892 թ. հունվարի 23-ին, Էջմիածնում:

«Մրարատ», 1892, № 1 («Մահացուցակ»):

-Կեսարիայում ծնվեց (1817 ?) աշուղ Իզանին (Մկրտիչ Գասպարյան): Վախճ. 1889 թ. իր ծննդավայրում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Բ, էջ 1561:

-Տրապիզոնում, Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ Մինաս Բժշկյանի նախաձեռնությամբ, հիմնվում է հայկական դպրոց, որն ուներ 60 աշակերտ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1821 թ.:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայեյան վարժարանաց»):

-Վենետիկում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Հարություն Ավգերյանի «Բառարան համառօտ ի հայէ ի գաղղիական»-ը: 24+684 էջ:

Գրքի վրա նշված է երկրորդ հատոր: Առաջին հատորը ֆրանսերեն-հայերեն բառարանն է, որ լույս է տեսել 1812 թ.:

-Վենետիկում հրատարակվում է Ստեփաննոս Ազոնցի «Հասարակախօսութիւն աշխարհագրութեան, որ բովանդակէ զընդհանուր գիտելիս աշխարհի, զուսումնականս, զբնականս և զքաղաքականս» գիրքը: 399 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հարություն Ավգերյանի «Քերականութիւն անգղիական և հայերէն» աշխատությունը: 183 էջ:

Այս բառարանի հրատարակման աշխատանքներին մասնակցել է նաև Ջորջ Բայրոնը:

-Վենետիկում, Մինաս Բժշկյանի՝ ֆրանսերենից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Պատմություն վարուց Ռոպենսոնին Քռուզոյե, ի խրատ և ի կրթություն մանկանց» վեպը: 400 էջ: Նույնը՝ 1836, 1858, 1875, 1886 թթ.:

-Վիեննայում հրատարակվում է Աստվածատուր Բաբիկյանի «Համառօտ յայտ յանդիմանութիւն» աշխատությունը: 108 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Համառօտ յայտ յանդիմանութիւն երկուց ճշմարտութեանց, ընդդէմ երկուց մոլար դրութեանց առաջինն Միքայելի Չամչեան, թէ Օձնեցին իցէ իմաստասէր հայրապետն հայոց՝ վկայեալն ի սրբոց հարց մերոց. երկրորդն՝ Մկրտչի Ավգերեան թէ տետրակն Օձնեցոյն իցէ ուղղափառ վարդապետութիւն և գրութիւն վերոգրեալ իմաստասիրի»:

-Պոլսում հրատարակվում է Մովսես Խորենացու «Ճառ ներբողական ի հանդէս երջանիկ կուսանացն սրբոց Հռիփսիմեանց» գրքույկը: 47 էջ:

Առաջաբանում հրատարակողը (Անդրեաս Պոլսեցի) նշում է, որ ձեռքի տակ ունեցել է մեկ ընտիր օրինակ ՉԿՁ (= 1317) թվականի:

Փետրվարի 11. Պոլսում ծնվեց պատմաբան, բանասեր, մանկավարժ Անտոն Մատաթիա

Գարագաշյանը: Վիեննայի Միխիթարյան միաբանության անդամ էր 1840 թ. նոյեմբերի 1-ից, հրաժարվեց 1856 թ.: Վախճ. 1903 թ. նոյեմբերի 19-ին:

1886-1889 թթ. Պոլսում, Հակոբ Գուրգենի հետ մեկտեղ, հրատարակել է «Ճաշակ ոսկեղեն դպրութեան» միամսյա գրաբար հանդեսը:

Շաքարյան Հր., Գարագաշյանի աշխարհայացքը, Երևան, 1962, էջ 26-39:

Ապրիլի 10. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Սկրտիչ Սանասարյանը:

Վախճ. 1890 թ. մայիսի 19-ին, Փարիզում:

«Արձագանք», 1890, №№ 14, 15, 17: «Հանդես ամսօրյա», 1890, № 7, («Սկրտիչ Սանասարյան»):

Մայիսի 27. Կալկաթայում, Սարգիս Հովհաննեսի Սարգսյանի, Հովհ. Ավդալյանցի,

Սկրտիչ Հարությունի Ազնաուրյանցի և այլոց նախաձեռնությամբ, կազմակերպվում է «Իմաստախնդրեան միաբանութիւն» ընկերությունը, որն իր առջև նպատակ էր դրել ազգի մեջ «Ուսումնասիրություն, ընթերցանություն և բարեսիրություն» տարածել: «Իմաստախնդրեան միաբանութիւն»-ը գոյություն ունեցավ մինչև 1820 թ. վերջերը:

«Բազմավեպ», 1907, №№ 1, 2 («Հայկական հին լրագրության էջ մը»):

Հունիսի 5. Թիֆլիսում ծնվեց բանահավաք, Մայաթ-Նովայի ստեղծագործությունների

գիտական հրատարակիչ Գևորգ Թեոդորի Ախվերդյանը: Վախճ. 1861 թ. նոյեմբերի 17-ին:

«Կռունկ հայոց աշխարհին», 1861, № 11 («Գևորգ Հախվերդյան»):

Ավետիսյան Ա., Գևորգ Ախվերդյան, Երևան, 1963, էջ 151:

Հուլիսի 31. Բեռլինում ծնվեց գերմանացի հայագետ Հենրիխ Կիպերտը (Heinrich Kiepert):

Վախճ. 1899 թ. ապրիլի 21-ին:

«Հանդես ամսօրյա», 1899, № 5 («Հենրիկոս Կիպերտ»):

Նոյեմբերի 25. Պոլսում (Պալաթի) ծնվեց լեզվաբան, բանասեր Հովհաննես

Հյունքյարպեյենտյանը: Վախճ. 1894 թ. դեկտեմբերի 28-ին:

«Արևելք», 1894, № 3720 («Հանգիստ ... Հովհաննես Հյունքյարպեյենտյանի»), 1895, № 3273-3275 («Կենսագրական»):

- Կեմ գյուղում (Վանի շրջան) ծնվեց աշուղ Զահրին (Կարապետ): Վախճ. 1888 թ.
Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական):
«Հայ աշուղներ» (հավաքեց և կազմեց Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյանի), Երևան, 1937, էջ 148, 510:
- Նոր-Նախիջևանում ծնվեց գրական գործիչ, թարգմանիչ (ռուսերենից-հայերեն) Հարություն քահանա Կյոկչյանը: Վախճ. 1875 թ. Մոսկվայում:
Լինելով Հարություն Ալամդարյանի աշակերտը, Կյոկչյանը ջերմ սեր էր տածում առ նա, և իր գրական բեմելի ժամանակ, նույնիսկ ստորագրում էր «Հարություն Ալամդարյան»:
Նալբանդյան Մ., Անտիպ երկեր (խմբ. և ծան. Աշոտ Հովհաննիսյանի), Երևան, 1935, էջ 735:
- Պետերբուրգում ծնվեց ցարական կառավարության պետական գործիչ Հովհաննես Դավթի Դելյանյանը (Իվան Դելիանով): Վախճ. 1898 թ. դեկտեմբերի 23-ին:
1885 թ. մինչև մահը վարել է Ռուսաստանի լուսավորության մինիստրի պաշտոնը:
«Արարատ», 1898, № 1 («Իվան Դելիանով»):
- Պոլսում (Խասգյուղ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող-հրատարակիչ Մկրտիչ Աղաթոնը: Վախճ. 1890 թ. նոյեմբերի 23-ին, Միդիլիում (Թուրքիա):
1846-1849 թթ., Պոլսում, Հովհաննես Տերոյենցի (Չամուռճյան) հետ միասին հրատարակել է «Հայաստան» շաբաթաթերթը:
1849 թ. հուլիսի 2-ից մինչև դեկտեմբերի 17-ը՝ շաբաթաթերթը հրատարակել է իր ուժերով:
Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 134:
- Պոլսում ծնվեց բանասեր, հասարակական գործիչ, հրատարակիչ Խաչատուր Ոսկանյանը: Վախճ. 1900 թ. Ամերիկայում:
1840-1841 թթ. Պոլսում խմբագրել և հրատարակել է «Ազդարար Բիւզանդեան» շաբաթաթերթը:
Զարդարյան Հ., Հիշատակարան..., հատ. Ա, 1933, էջ 8:
- Վենետիկում հրատարակվում է «Առակ Եզոբոսի, յորում բովանդակին առակք, որ յածին յանուն Եզոբոսի առակախօսի և վարք նորին» ժողովածուն: Ֆրանսերենից աշխարհաբար թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները՝ Մինաս Բժշկյանի: 540 էջ:
Նույնը՝ 1827, 1849, 1860, 1886, 1931 թթ.:
- Զետեղված են** 553 առակներ, որոնք պատկանում են Եզովպոսին կամ վերագրվում են նրան:
- Նուխիում, Եփրեմ կաթողիկոսի հրամանով, բացվում է հայկական դպրոց, ուր սովորեցնում էին հայերեն գրել ու կարդալ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1834 թ.:
- Երիցյան Ալ.**, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 275:

Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 279:

-Վենետիկում, գրաբար, լատիներեն և հունարեն համատեղ տեքստերով, հրատարակվում է «Եւսեբիոսի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանակականք երկմասանեայ» աշխատությունը (մասն Ա, «Ժամանակագրութիւն պատմական», 196 էջ: Մասն Բ, «Քրոնիկոն կամ կանոն», 207 էջ): Տեքստաբանական աշխատանքները, առաջաբանը, լատիներեն թարգմանությունն ու ծանոթագրությունները՝ Մկրտիչ Ավգերյանի:

Նույնը՝ նույն թվականին, երկու հատորով: Հատ. Ա, 408 էջ, հատ. Բ, 380 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Խաչատուր Սյուրմեյանի «Տօմարագիտութիւն ընդհանուր, եկեղեցական և քաղաքական»-ը, 164 էջ:

-Վենետիկում, 16 լեզուներով հրատարակվում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը:

Տրված են. Հայերեն (գրաբար և աշխարհաբար), հին հունարեն, նոր հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, անգլերեն, հոլանդերեն, դադմատերեն, սերբերեն, հունգարերեն, թուրքերեն, թաթարերեն թարգմանությունները:

-Վենետիկում, Եղիա Թովմաճանյանի՝ հին հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Յովհաննու Ոսկեբերանի հատընտիր գիրք և ճառք և ներբողեանք» խորագիրը կրող երկհատոր ժողովածուն: Հատ. Ա, 408 էջ, հատ. Բ, 362 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Վարժություն մանկանց, ի պետս լուսավորչյան մայր դպրատան Ղարասու քաղաքի» ձեռնարկը: 174 էջ:

Նույնը՝ 1824, 1831, 1848, 1860, 1865, 1869, 1873, 1881, 1888 թ., ամեն անգամ որոշ փոփոխություններով:

(Հմմտ. Հ. Դավթյան, Հայ գիրքը... № 304):

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Հմտություն մանկանց» ընթերցարանի առաջին մասը: 190 էջ:

Երկրորդ (156 էջ), երրորդ (224 էջ) և չորրորդ (224 էջ) մասերը՝ նույն թվականին:

Նույնը՝ (չորս մասերը միասին) 1832, 1851 թթ. անփոփոխ: 756 էջ:

-Փարիզում, ֆրանսերեն, պարսկերեն և գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է Դավիթ Մելիք-Շահնազարյանի, Հակոբ Շահան-Ջրպետյանի և Լյուդովիկոս Լանգլեսի «Ընդհանուր ծանոթություն ի վերա աշխարհին Պարսից» աշխատությունը: Տեքստաբանական աշխատանքները, թարգմանությունները Հակոբ Շահան-Ջրպետյանի: 360 էջ:

-Պոլսում հրատարակվում է «Պատմություն անցից, որ եղև ի Կ. Պոլիս, վասն յայտնի կացուցանելոյ զճշմարտութիւն հաւատոյն Հայաստանեայց եկեղեցւոյ» գրքույկը: 35 էջ:

-Վենետիկում, Արսեն Բագրատունին գրում է «Ի թագաւորութիւնն Տրդատայ, յետ բռնակալութեան Սասանեանց» բանաստեղծությունը: («Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Ա, էջ 130):

1819

Մարտի 31. Պոլսում ծնվեց բանասեր, գրական-գիտական գործիչ Ղուկաս Տերտերյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ 1841 թ. մայիսի 26-ից: Վախճ. 1897 թ., Զմյուռնիայում:

«Հանդես ամսօրյա», 1932, № 1-2 («Ղուկաս Տերտերյան»):

Օգոստոսի 3. Պոլսում ծնվեց բառարանագիր, լեզվագետ Փիլիպոս Ճամճյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ 1844 թ. սեպտեմբերի 8-ից: Վախճ. 1853 թ. հունիսի 21-ին, Վիեննայում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 25:

Օգոստոսի 13. Թիֆլիսում ծնվեց մանկավարժ, գրական-հասարակական գործիչ Պետրոս Շանշյանը: Վախճ. 1889 թ. մարտի 9-ին:

«Լուսն», 1897, գիրք Բ («Կենսագրություն Պետրոսի Սամուելյան Շանշյանց»):
Մուրադյան Մ., Պետրոս Շանշյանց (Կենսագրություն), Թիֆլիս, 1898, 110 էջ:

Սեպտեմբերի 1. Պոլսում ծնվեց պատմաբան, թարգմանիչ (հունարենից, լատիներենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Աբրահամ Ճարյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ 1840 թ. հունիսի 7-ից: Վախճ. 1892 թ. հոկտեմբերի 30-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1892, № 11:

Սեպտեմբերի 23. Էֆքերե գյուղում (Կեսարիա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս, բանաստեղծ, թարգմանիչ (ֆրանսերենից-հայերեն) Նահապետ Պավղանդի Ռուսինյանը: Վախճ. 1876 թ. նոյեմբերի 29-ին, Պոլսում:

«Հանդես ամսօրյա», 1902, № 2 («Բժիշկ դոքտ. Նահապետ Ռուսինյան»):

Հոկտեմբերի 16. Վիեննայում լույս է տեսնում «Ծանոթությունք վաճառականության» շաբաթաթերթը (ընդամենը մեկ համար):

Գալեմքյարյան Գ., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 197:

-Պոլսում (Պեշիկթաշ) ծնվեց գրական-հասարակական գործիչ (մասնագիտությամբ բժիշկ) Անդրանիկ Կրճիկյանը: Վախճ. 1894 թ. դեկտեմբերի 3-ին:

Թեղիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1924, էջ 207:

-Թիֆլիսում ծնվեց հասարակական գործիչ (մասնագիտությամբ բժիշկ) Հարություն Հովհաննիսյանը: Վախճ. 1887 թ. դեկտեմբերի 15-ին:

«Արձագանք», 1887, № 47-48 («Հարություն Հովհաննիսյան»):

-Եգիպտոսում ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ Հարություն պատրիարք Վեհապետյանը: Վախճ. 1910 թ. հոկտեմբերի 5-ին, Երուսաղեմում:

«Արարատ», 1910, № 10:

-Վենետիկում հրատարակվում է Ստեփաննոս Ազոնցի «Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ սուրբ գրոց» քառահատոր աշխատությունը: Հատոր Ա, ԺԲ+440 էջ, հատոր Բ, 479 էջ, հատոր Գ, 423 էջ, հատոր Դ, 393 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Մեսրոպ Աղաչրադյանցի «Բնական օրենք, կամ կրթություն առ ի լինել բարի և պարկեշտ քաղաքացի» աշխատությունը: 160 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Պատմություն Պոնտոսի, որ է Մեաւ ծով» գիրքը: 160 էջ:

-Վենետիկում, գրաբար և իտալերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Մկրտիչ Ավգերյանի «Համառօտ նկարագիր Մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ» աշխատությունը: 125 էջ:

-Վենետիկում, Մանվել Ջախջախյանի՝ լատիներեն բնագրից կատարված չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Գայետանո Գոռացցայի «Արհեստ բարոք սիրելոյ» ստեղծագործությունը: 288 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հարություն Ավգերյանի և լորդ Բայրոնի կազմած «Քերականութիւն հայերէն և անգղիական» գիրքը: 336 էջ: Վերջում (175-րդ էջից) «Հրահանգ» խորագրի ներքո, զետեղված է հայ մատենագիրների (Ազաթանգեղոս, Ջենոբ Գլակ, Եղիշե, Եզնիկ, Կորյուն, Խորենացի, Շնորհալի և այլն), գործերից կազմված ընտիր ծաղկաքաղ:

Նույնը՝ 1832 թ. 231 էջ, 1873 թ. 144 էջ, 1907 թ. 150 էջ:

(Վերջին և նախավերջին հրատարակություններում «Հրահանգ» բաժինը դուրս է թողնված):

-Մոսկվայում հրատարակվում է Սերովբե վարդապետ Կարնեցու «Ծաղիկ գիտութեանց» -ը: 280 էջ:

-Պետերբուրգում Մարգար Խոճենց Երևանցու (Գեղամյան) աշխատասիրությամբ հրատարակվում է «Ցանկ կտակարանաց»: 302 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Ցանկ կտակարանաց տրոհեալ յերինս մասունս, յորս պարունակին նախ համառոտութիւնք հարկաւոր գիտելեաց հնոյ Կտակարանի: Ապա վասն գալստեան և տնօրէնութեան փրկչին մերոյ: Եվս և վասն շնորհական օրինաց և սահմանի հաւատոյ ընդհանրական սրբոյն եկեղեցոյն»:

1820

Փետրվարի 19. Պոլսում ծնվեց հայագետ, պատմաբան, թարգմանիչ (հունարենից, ֆրանսերենից՝ հայերեն) Հովսեփ Գաթրըճյանը: Վիեննայն Մխիթարյան միաբանության անդամ 1841 թ. մարտի 30-ից: Վախճ. 1882 թ. հունվարի 9-ին:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 29-32:

Հունիսի 23. Փոքր Ղարաքիլիսայում (Ալեքսանդրապոլի գավառ) ծնվեց բանաստեղծ, բանասեր, եկեղեցական-հասարակական գործիչ Ալեքսանդր Արարատյանը (ըստ այլ աղբյուրների ծնվել է 1930 թ., տե՛ս Հ. Տեր-Աստվածատրյանց, Բառարան հայ

կենսագրությանց, Թիֆլիս, 1904, էջ 138): Վախճ. 1888 թ. մայիսի 23-ին, Ալեքսանդրապոլում:

«Բազմավեպ», 1895, էջ 80 («Կովկասի հայ կաթողիկեայք»):
«Մշակ», 1888, № 79 («Ալեքսանդր Վարդապետ Արարատյան»):

Հովիսի 6. Պոլսում ծնվեց մեծանուն գիտնական, գրող, հայկաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից, իտալերենից), մի շարք լեզուների գիտակ, Ղևոնդ Մարգարի Ալիշանյանը (Ալիշան): Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ 1840 թ. հունիսի 7-ից: Վախճ. 1901 թ. նոյեմբերի 9-ին, Վենետիկում:

«Նահապետ» կեղծանունով հանդես է եկել «Բազմավեպ» ամսագրում:

«Բազմավեպ», 1901, № 12 («Մահ Ալիշանի»):
Երեմյան Ս., Կենսագրություն Ղ. Ալիշանի, Վենետիկ, 1902, 208 էջ:
Շտիկյան Ս., Ալիշանի գեղարվեստական ստեղծագործությունը, Երևան, 1967, 220 էջ:

Օգոստոսի 12. Կալկաթայում, Հովհաննես Տեր-Հակոբյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հայելի Կալկաթեան, որ է վեպք քաղաքականութեան, գրականութեան և այլոց» շաբաթաթերթը (գրաբար, վիմատիպ): Իր գոյությունը շարունակում է մինչև 1821 թ.:

«Բազմավեպ», 1907, № 1, 2 («Հայկական հին լրագրության էջ մը»):

-Երևանում ծնվեց բանասեր, բանահավաք Ոսկան Տեր-Գևորգյան Հովհաննիսյանը (Ոսկան Երևանցի): Վախճ. 1910 թ. մարտի 23-ին, Թիֆլիսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1911, էջ 371:

-Զմյուռնիայում (Բզմիր) ծնվեց տպարանատեր-հրատարակիչ, արձակագիր, բանասեր Ճանիկ Արամյանը: Վախճ. 1879 թ. ապրիլի 16-ին, Պոլսում:

«Փորձ», 1879, № 6 («Ճանիկ Արամյան»):
«Արձագանք», 1891, № 3 («Ճանիկ Արամյան»):

-Լիվապայան գյուղում (Սպահանի նահանգ, Պարսկաստան) ծնվեց աշուղ Ալլահվերդին:
Վախճ. 90-ական թվականներին:

«Հանդես ամսօրյա», 1924, № 56 («Պարսկահայ նորագույն աշուղներ»):

-Կարախան գյուղում (Համադանի նահանգ, Պարսկաստան) ծնվեց աշուղ Մայիֆը (Հարություն Ալեքսանդրյանց): Վախճ. 1895 թ. փետրվարին, Լենքորանում (այժմ՝ Ադրբեջանական ՍՍՀ):

«Մուրճ», 1895, էջ 571, «Արձագանք», 1895, № 26 («Մայիֆ» հայ ժողովրդական բանաստեղծի մահը):

-Նամակերտ գյուղում (Փերիայի նահանգ, Պարսկաստան) ծնվեց (1820 ?) աշուղ Սիմոն օղլին (Փանոս Սիմոնի Ուրդուրյան):

Մինասյան Լ., Փերիայի հայ աշուղները, Թեհրան, 1964, էջ 194:

-Թիֆլիսում ծնվեց աշուղ Քյանհանը (Պետրոս Գնթունյանց): Վախճ. 1886 թ. մարտի 26-ին, Աշտարակում:

«Հայ աշուղներ» (հավաքեց և կազմեց Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյանի), Երևան, 1937, էջ 82, 506:

-Իր գոյությունը դադարեցնում է Ելիզավետպոլի (Հունգարիա) հայկական դպրոցը, որը գտնվում էր Վենետիկի Մխիթարյան միաբանության տնօրինության ներքո: Դպրոցը հիմնվել էր 1746 թ. Մարկոս Պաշապալովցու և Ղազար Ակնեցու ջանքերով և ծաղկուն ժամանակ ուներ 60 աշակերտ:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայեյան վարժարանաց»):

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Գապարճյանի «Բան հրաւեր սիրոյ, որ առաջի առնէ զպատասխանի խնդրոց ինչ-ինչ մասանց հաւատոյ» գրքույկը: 43 էջ:

Նույնը՝ որոշ լրացումներով, Փարիզ, 1857, 66 էջ:

-Աստրախանում, գրաբար բացատրություններով, հրատարակվում է Աբրահամ սարկավազ Աստվածատրյանի (Վաղարշապատցի) «Նորագոյն զրոյցք թարգմանեալ ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ» այբբենարան-ընթերցարանը: 205 էջ:

-Կալկաթայում, Մարտիրոս Մկրտչյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Շտեմարան» ամսագիրը, որը հարատևում է մինչև 1823 թ.:

Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 4:

Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Ա, Երևան, 1956, էջ 228-265:

-Կալկաթայում հրատարակվում է «Յայտարարութիւն յԻմաստախնդրեանց միաբանութենէ որ ի Կալկաթա» գրքույկը:

-Մոսկվայում հրատարակվում է «Ազգօգուտ յայտարարութիւն Յովակիմայ Եղիազարեան, առ լուսաւորչակրօն ազգակիցս իւր ի սակս Եղիազարեան համալսարանին հայոց Մոսկովում» գրքույկը: 10 էջ:

Այս «Յայտարարութիւնը»-ը ամբողջովին տպագրվել է Ջոյուռնիայի «Արշալոյս արարատյան» լրագրի 1857 թ. № 546-ում: Կոչ է արվում լուսավորչական հայազգի երիտասարդությանը գալ ուսանելու Լազարյան ճեմարանում:

1 8 2 1

Ապրիլի 2. Կալկաթայում բացվում է տեղական հայերի նախաձեռնությամբ և Աստվածատուր Մուրադյանի ու Մնացական Վարդանյանի օժանդակությամբ ստեղծված Մարդասիրական ճեմարանը: Այն 11-ամյա էր, սկզբում ուներ 40 աշակերտ: Առաջին տեսուչն էր Հովհաննես Ավդալյանը: Մարդասիրական ճեմարանը գոյություն ունի առ այսօր:

«Բազմավեպ», 1880, էջ 240 («Հայք ի հնդիկս Անգղիացոյ»):

«Հանդես ամսօրյա», 1894, № 12 («Հայելի և շտեմարան լրագիրք հնդկահայոց»):

-Պոլսում ծնվեց մեմուարիստ, բանասեր Տիմոթեոս Սափրիչյանը: Վախճ. 1909 թ. մայիսի 29-ին:

«Արարատ», 1897, № 9-10, («Կ.Պոլսում գտնվող կուսակրոն հայ հոգևորականները»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1900, էջ 47:

-Պոլսում (Գում-Գաբու) ծնվեց գրական-հասարակական գործիչ, տնտեսագետ, թարգմանիչ (իտալերենից և ֆրանսերենից՝ հայերեն) Նիկողայոս Մկրտչի Ջորայանը: Վախճ. 1859 թ. նոյեմբերի 30-ին:

«Օ.Բ.» և «Օ» կեղծանուններով ստորագրում էր Պոլսի «Մասիս» լրագրում, 1852 թ. սկսած:

Զարդարյան Վ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, 187 էջ:

Սաստուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 1-35, 286:

-Ծնվեց (1821 ?) լեզվաբան, բանաստեղծ, տաղաչափության տեսաբան Պետրոս Թընկերյանը: Վախճ. 1881 թ., Ջոյուռնիայում:

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, հատ. Բ, էջ 91-97:

-Կարինում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրատարակիչ Համբարձում Էնֆիաճյանը: Վախճ. 1896 թ. մարտի 16-ին, Սղնախում:

1860-1863 թթ. Թիֆլիսում, Մարկոս Աղաբեկյանի հետ մեկտեղ, հրատարակել է «Կռունկ հայոց աշխարհին» հանդեսը: 1863-1880 թթ., Թիֆլիսում, Պետրոս Սիմոնյանցի հետ մեկտեղ, հրատարակել է «Մեղու Հայաստանի» լրագիրը:

«Մշակ», 1896, № 33 («Համբարձում Էնֆիաճյանց»):

«Արձագանք», 1896, № 32-35 («Համբարձում Էնֆիաճյանց»):

-Զմյուռնիայում ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Գրիգոր Մարկոսյանը:

Վախճ. 1888 թ. հունվարի 13-ին, Պոլսում:

1852-1853 թթ., Պոլսում, Սահակ Ապրոյանի հետ, խմբագրել է «Նոյան աղավնի» շաբաթաթերթը:

Զարդարյան Վ., Հիշատակարան..., Կահիրե, 1934, էջ 17-20:

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Գեորգ Սթիմարձյանը: Վախճ. 1895 թ.

մայիսի 23-ին:

Զարդարյան Վ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, 187 էջ:

-Ղրիմի Ղարասու-բազար քաղաքում (կամ՝ Կարասուբազար, այժմ՝ Բելոգորսկ) Մինաս

Բժշկյանի ջանքերով, հիմնվում է (1821 ?) հայկական դպրոց: 1825 թ. Բժշկյանի հետ

մեկտեղ, տեսուչի պարտականությունները վարում է Վրթանես Պոտոլյանը:

Դպրոցի գոյությունը դադարում է 1850 թ.: Ծաղկուն ժամանակ այն ուներ 58-90

աշակերտ:

Սարգսյան Բ., Երկուհարյուրամյա կրթական գործունեություն Վենետիկ Մխիթարյան միաբանության: Վենետիկ, 1936, էջ 71-74:

-Վենետիկում հրատարակվում է Արսեն Բագրատունու «Քերականութիւն գաղղիական»-

ը: 608 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հարություն Ավգերյանի և Ջոն Պրենտանի «Բառարան

անգղիարեն և հայերեն»-ը: 983 էջ: Գրքի վրա հեղինակները նշել են հատոր առաջին:

Երկրորդ հատորը հայ-անգլերեն բառարանն է, որ լույս է տեսել 1825 թ.:

Երկրորդ հրատարակություն՝ 1868 թ.: ԻԳ+815 էջ:

Երկրորդ հրատարակության լրացումները, իմաստային ճշտումներն և սրբագրությունը կատարել է Մատթիա Պետրոսյանը:

-Վենետիկում հրատարակվում է Հարություն Ավգերյանի «Բացատրութիւն չափուց և

կշռոց նախնեաց, առաջնորդութեամբ Եպիփանու, Խորենացոյ և Շիրակացոյ»

աշխատությունը: 207 էջ:

-Աստրախանում հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Համառօտ

վարդապետութիւն ուղղափառութեան ի պէտս աշակերտաց համօրէն դպրոցաց

Հայկազնեան լեզուի և այլոց բանասէր անձանց» գրքուկը: 49 էջ:

-Աստրախանում վերահրատարակվում է ռուսերենից թարգմանված «Համառոտութիւն վիպասանութեան սուրբ գրոց, յօրինեալ ի ձև հարցման և պատասխանոյ յօգուտ մերազնեայ համբակաց» գրքուկը: 56 էջ:

Գրքուկն առաջին անգամ լույս է տեսել 1785 թ. Պետերբուրգում, «Պատմութիւն սուրբ գրոց» անունով: Թարգմանիչը Հարություն Դավթյան Ջուղայեցին է: Պատկանյանը որոշ կրճատումներ ու փոփոխություններ է կատարել վերոհիշյալ թարգմանության մեջ և վերջում գետեղել է երկու ոտանավոր, որոնցից մեկի երկտողերի սկզբնատառերը հեզում են՝ «Ի Գաբրիէլէ այս»: Պատկանյանի հրատարակությունը հետագայում (1828 և 1832) անփոփոխ վերահրատարակեցին Շուշիի բողոքականները:

-Կալկաթայում, Հովհաննես Ավդալյանի՝ անգլերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Անգիտաց անպէտ, յորում պարագրին քաղուածք պէսպէս գեղեցկապաճոյճ, իրատական և հոգեզուարճ բանից, ի զանազան երևելի անգղիացի մատենագրեաց, գլխաւորաբար դիտեալ ի հրահանգութիւն և ի զբօսանս համբակաց» ժողովածուն: 320 էջ:

Ժողովածուի վերջում (էջ 303-314) համառոտ կենսագրական տեղեկություններ են հաղորդված անգլիացի հեղինակների մասին:

-Կալկաթայում, Մկրտիչ Աղանուրյանի՝ անգլերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Հրիտակ հօր ուրումն առ դստերս իւր» բարոյախոսական վիպակը: 126 էջ:

-Կալկաթայում աշխարհաբար հրատարակվում է «Խտրադիմայ դժրողոյթյան, որ է կատակերգոյթոյն իմն ի չորս գործս բաժանյալ» չափածո պիեսը: 100 էջ:

Գրքի վրա, հեղինակի փոխարեն նշված է «Աշխատասիրեալ ուրումն մատաղ բանաստեղծի»: Ենթադրվում է, որ պիեսի հեղինակն է Մարտիրոս Մկրտչյանը (տե՛ս **Վ.Թերզիբաշյան**, Հայ դրամատուրգիայի պատմություն, գիրք առաջին, Երևան, 1959, էջ 189-265):

-Կալկաթայում հրատարակվում է Մարտիրոս Մկրտչյանի «Հասարակախոսութիւն ի վերայ խտրադիմայի դժրողութեան» քննադատականը: 135 էջ:

Առանձին գրքով լույս տեսած այս առաջին ընդարձակ քննադատական աշխատությունից ոչ մի օրինակ չի գտնվել Հայաստանի և Սովետական Միության որևէ այլ գրադարանում: Հրատարակության մասին տեղեկությունը և տիտղոսաթերթի լուսանկարը բերված է Փարիզի «Վեմ» հանդեսի 1933 թ. նոյեմբեր-դեկտեմբերի համարում գետեղված Հ. Բրազեկի «Հայ անդրանիկ թատերագրությունը («Խտրադիմայ դժրողութեան»)» հոդվածում:

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմը: 390 էջ:

- Վերջում գետեղված են.** «Գումարք խմբից» ներբողականը, Մխիթար Գոշի մի քանի աղոթքները և հատվածներ չորս ավետարանիչներից:
- Մոսկվայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Հարություն Ալամդարյանի «Համառոտ բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ» բառարանը: 287 էջ:
 - Մոսկվայում հրատարակվում է Մանվել վարդապետի «Դպրութիւն մանկանց» այբբենարանը: 82 էջ:
 - Ալամդարյանը Մոսկվայում գրում է «Ամենին ես գեղեցիկ մերձաւոր իմ...», «Կոծ», «Սուգ», «Թշուառութիւն սոխակի» և «Պարերգութիւն» բանաստեղծությունները:
Հրատարակվել են 1884 թ. Պետերբուրգում, Ալամդարյանի «Չափաբերականք» ժողովածուում:

1 8 2 2

Հունվարի 6. Պոլսում (Բերա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանաստեղծ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Գաբրիել Սևյանը: Վախճ. 1905 թ.:

«Հանդես ամսօրյա», 1899, № 6 («Բժ. Գաբրիել Փաշա Սևյան»):
Անդ, 1913, № 7 («Բանախոսական»):

Տարեսկիզբներ. Փարիզում, արևելագետներ Սիլվեստեր դե Սասսիի և Անտուան Ժան Սեն-Մարտենի նախաձեռնությամբ, Հենրիխ-Յուլի Կլապրոտի, Անտուան-Լեոպարդ Շեգիի, Աբել Ռեմյուզայի, Մարի Բրոսսեի, Ջոհրապի (Հովհաննես Ջոհրապյան) ջանքերով, հիմնադրվում է «Ասիական ընկերությունը» («La Société Asiatique»): Վերջինս սկզբնական շրջանում ուներ 30 անդամ (27-ը տեղացիներ, 3-ը՝ արտասահմանից), իսկ ծաղկուն ժամանակ նրանց թիվը հասավ 74-ի: Նույն թվականի հուլիսից ընկերությունն սկսում է հրատարակել «Ժուռնալ Ազիատիկ» («Journal Asiatique») փիլիսոփայական, լեզվաբանական և արևելագիտական ամսագիրը, ուր գետեղված են բազմաթիվ նյութեր հայ մշակույթի վերաբերյալ:

«Մխիթար» (բացառիկ թերթ), Վենետիկ, 1901, էջ 77:
"Энциклопедия (Эфэон-Брокгауз)", т. I, стр. 233.
"Journal Asiatique", 1822, № 1:

Օգոստոսի 18. Պոլսում ծնվեց դրամագետ (նումիզմատիստ) Մերովբե Ալիշանյանը: Վախճ. 1903 թ. նոյեմբերի 25-ին:

«Բազմավեպ», 1904 թ., № 3 («Ալիշանի եղբայրը»):

Մեպտեմբերի 16. Պոլսում ծնվեց պատմավիպասան, հրապարակախոս (մասնագիտությամբ բժիշկ) Ծերենցը (Հովսեփի Մաղաքիայի Շիշմանյան): Վախճ. 1888 թ. մարտի 17-ին, Թիֆլիսում:

ԳԱԹ. Հովսեփի Շիշմանյանի ֆոնդ, № 78:
«Արարատ», 1888, № 3 («Հովսեփի Շիշմանյան»):
Նանուկյան Ռ., Ծերենց, Երևան, 1961, 116 էջ:

Դեկտեմբերի 25. Պոլսում (Բերա) ծնվեց գրական-հասարակական գործիչ (մասնագիտությամբ բժիշկ) Ստեփան Ասլանյանը: Վախճ. 1901 թ. նոյեմբերի 17-ին:

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 286:
«Հանդես ամսօրյա», 1929, № 8-9, («Ծանոթությունք Սթամպոլո պատմության»):

-Վենետիկում, լատիներեն և գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է «Ճառք Փիլոնի Եբրայեցոյ, մնացորդք ի հայս» ժողովածուն: Տեքստաբանական աշխատանքները, լատիներեն թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մկրտիչ Ավգերյանի: 178 էջ:

ՌԻՆԻ նաև «Բանք երեք ձեռք ի լոյս ընծայեալք» ենթավերնագիրը: Ձեռնդրված են «Ճառք յաղագս նախախնամութեան» (2 ճառ) և «Յաղագս կենդանեաց» գործերը:

-Վենետիկում հրատարակվում է Միքայել Բեստեն Տեր-Պետրոսյանի (Պատկանյան) «Բժշկականութիւն» երկհատոր աշխատությունը: Հատ. Ա, 400 էջ, հատ. Բ, 407 էջ:
Երկու հատորը միասին անփոփոխ՝ 1832 թ.:

-Վենետիկում հրատարակվում է Ղուկաս Ինճիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» աշխատությունը: 554 էջ:

Նույն թվականին վերահրատարակվել է անփոփոխ:

-Կալկաթայում հրատարակվում է Աբրահամ Աստապատցու «Ձեն ընդդէմ փորձութեանց» աշխատությունը: 54 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Պաղտասար Դպիրի «Համառօտ մեկնութիւն տրամաբանութեան, որ ըստ Յունաց ասի Տիալիքթիկէս» գիրքը:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Գիրք աղօթից, որ կոչի Նարեկ» ժողովածուն: 488 էջ:

-Պոլսում հրատարակվում է «Բացայայտութիւն մտաց հրաւեր սիրոյ տետրակին» գրքուկը: 33 էջ:

Ընդդիմախոսական է, գրված Գրիգոր Գապարաճյանի «Բան հրաւեր սիրոյ» աշխատության առիթով (տե՛ս 1820 թ.):

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է «Պատուեալ յոտին Աղեքսանդրի կայսեր ռուսաց, վանք Մխիթարեանց» ներբողը:

Նվիրված է Ռուսական թագավոր Ալեքսանդր Առաջինին, որը Վենետիկ էր եկել 1822 թ. գարնանը:

«Տաղք Մխիթարեան Վարդապետաց», հատ. Ա, էջ 158:

1823

Հուլիսի 4. Պոլսում (Խասագյուղ) ծնվեց գրական-հասարակական գործիչ Գրիգոր Աղաթոնը: Վախճ. 1868 թ. ապրիլի 27-ին, Փարիզում (թաղումը՝ մայիսի 4-ին, Պոլսում):

«Բազմավեպ», 1898, № 8 («Գրիգոր Աղաթոն»):

Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, Պոլիս, 1933, հատ. Բ, էջ 13-19:

Հուլիսի 23. Պոլսում ծնվեց լեզվագետ, թարգմանիչ (լատիներենից՝ հայերեն) Սրապիոն Էմինյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ 1845 թ. հոկտեմբերի 26-ից: Վախճ. 1854 թ. դեկտեմբերի 12-ին, Վիեննայում:

«Հանդես ամսօրյա», 1932, № 1-2 («Սրապիոն Էմինյան»):

Օգոստոսի 11. Պոլսում ծնվեց գրականության պատմաբան, բանասեր, բնագետ Մանվել Քաջունին: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ 1843 թ. օգոստոսի 15-ից: Վախճ. 1903 թ. դեկտեմբերի 1-ին:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 223:

«Բազմավեպ», 1904, № 1 («Մանվել Քաջունի»):

Սեպտեմբերի 15. Զմյուռնիայում ծնվեց լրագրող, ֆրանսերեն, իտալերեն, թուրքերեն լեզուների գիտակ Սահակ Ապրոյանը: Վախճ. 1900 թ., Պոլսում:

1852-1853 թթ. Պոլսում, Գրիգոր Մարկոսյանի հետ մեկտեղ, հրատարակել է «Նոյան աղավնի» շաբաթաթերթը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 368:

Հոկտեմբերի 24. Պոլսում (Պալաթի) ծնվեց գրական-հասարակական գործիչ, գրող, բանասեր Կարապետ Ութուջյանը: Վախճ. 1904 թ. հունիսի 28-ին:

1852-1884 թթ. խմբագրել է Պոլսի «Մասիս» շաբաթաթերթը:

«Բյուզանդիոն», 1904, № 2368-2375:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 85-88:

Նոյեմբեր. Շուշիում (Ղարաբաղ) իրենց գործունեությունն են սկսում Բազելի (Շվեյցարիա) «Ավետարանական քարոզչության ընկերության» անդամներ Ավգուստ Դիտրիխն ու Ֆելիցիան Չարեմբան: 1835 թ. հոկտեմբերին ցարական կառավարությունն արգելում է նրանց գործունեությունը:

1822 թ. հունվարի 7-ին Ներքին գործոց մինիստրությունը պաշտոնապես թույլատրում է հիշյալ երկու անձանց հաստատվել «Կասպից և Սև ծովերի միջև ընկած այն վայրում, ուր իրենք նպատակահարմար կգտնեն» և զբաղվել բողոքական-քարոզչական գործունեությամբ: Հաստատվելով Շուշիում, Դիտրիխն ու Չարեմբան սովորում են հայերեն, և վայելելով Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի հովանավորությունը, սկսում են հայերեն թարգմանել Աստվածաշունչը: 1827 թ. հիմնում են դպրոց և տպարան: Իրենց հայ համախոհների հետ մեկտեղ հրատարակում են մի շարք կրոնական գրքեր, որոնք այսօր արժեքավոր են իբրև գրական հայերենի նմուշներ: Լեզվական-բանասիրական արժեք են ներկայացնում նաև նրանց հրատարակած՝ Հովսեփ Արցախեցու զբաբարից աշխարհաբար բառարանը, Պողոս Ղարադաղցու «Համառոտութիւն հայկական քերականութեան» գործը և այլն: Հայ հոգևորականության դրդմամբ (որ իբր Բազելի կրոնավորները հակառուսական գործունեություն են ծավալում) ցարական կառավարությունը 1835 թ. արգելում է նրանց գործունեությունը Շուշիում:

"Акты...", т. 6 (ч. II), стр. 469-474 (док. №632-642), т. 7, стр. 62 (док. № 69), стр. 308 (док. № 255), стр. 309 (док. № 256), т. 8, стр. 247 (док. № 172), стр. 310-312 (док. № 227-242).

Ղուկասյանց Հ., Բողոքականությունը Կովկասու հայոց մեջ (պատմական նյութեր), Թիֆլիս, 1886, 173 էջ:

Նոյեմբերի 18. Մունճուսուն գյուղում (Կեսարիա, Թուրքիա) ծնվեց մանկավարժ, մանկավարժական աշխատությունների հեղինակ Խաչատուր Տևեյանը: Վախճ. 1901 թ. հունիսի 28-ին, Թալասում (Կեսարիա):

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարոյ, Ա հատոր, 1937, էջ 1238:

Նոյեմբերի 30. Պոլսում վախճանվեց պատմաբան, քերականագետ, աստվածաբան Միքայել Չամչյանը: Ծնվ. 1738 թ. դեկտեմբերի 4-ին, Պոլսում: Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ էր դարձել 1762 թ.:

«Միսիթարյան հոբեյան», Վենետիկ, 1901, էջ 218:

Դեկտեմբերի 6. Դեսսաույում (Հարավային Գերմանիա) ծնվեց գերմանացի լեզվաբան, հայագետ Մաքս Մյուլլերը (Max Müller): Վախճ. 1900 թ. հոկտեմբերի 18-ին, Լոնդոնում:

Энциклопедический словарь, т. 20, СПб., 1897 г.
«Մշակ», 1900, № 199 («Մաքս Մյուլլեր»):

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ (մասնագիտությամբ բժիշկ) Հարություն Պալյանը: Վախճ. 1851 թ. նոյեմբերի 2-ին, Փարիզում:

«Հանդես ամսօրյա», 1895, № 3 («Հովսեփ բժիշկ Մելքոնյան Պեյրան»):

-Պոլսում հրատարակվում է Հարություն վարդապետ Եղեսացու «Ներքող որդուցն որոտման» գիրքը: 94 էջ: Վերջում զետեղված են բանաստեղծություններ, որոնք պատկանում են Մարկոս վարդապետի գրչին:

-Պոլսում, Անդրեաս վարդապետ Նարինյանի (Ակնեցի) ջանքերով, հրատարակվում է Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց»-ը: Վերջում՝ «Յաւելուած», ուր տրված է Եղիշեի կենսագրությունը և «Բացատրութիւն անծանօթ և դժուարիմաց բառից այսր մատենի»: 239 էջ:

-Վենետիկում, քսանչորս լեզուներով, հրատարակվում է Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ը: Տեքստերը հրատարակության է պատրաստել Հարություն Ավգերյանը: 422 էջ:

Զետեղված են. Հայերեն (գրաբար և աշխարհաբար) և հին հունարեն, նոր հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, հոլանդերեն, անգլերեն, իռլանդերեն, ռուսերեն, լեհերեն, դադմատերեն, սերբերեն, հունգարերեն, տաճկերեն, պարսկերեն, արաբերեն, եբրայերեն, քաղդերեն, ասորերեն, վրացերեն թարգմանությունները:

-Վենետիկում, Գաբրիել Ավետիքյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆոնսո Ռոտրիկվեցի «Ճառ յաղագս համակերպութեան ընդ կամացն Աստուծոյ» գիրքը: 276 էջ:

-Թիֆլիսում հրատարակվում է Դավիթ Մկրտչյան-Դավթյան Կարբեցու «Պատմութիւն և խրատ բժշկութեան» գրքույկը: 17 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Հովհաննես Ավդայանի «Մշտիկ, որ է բանահիսու-
թին իմն» ստեղծագործությունը: 56 էջ:

-Հարություն Ալամդարյանը Աստրախանում գրում է իր «Ողջոյն հրաժեշտի զաւակաց
իմոց» և Հաղպատում՝ «Սոխակ ի հոգվարս» բանաստեղծությունները:

Հրատարակվել են 1884 թ. Պետերբուրգում, հեղինակի «Չափաբերականք» ժողովածուում:

1824

Հունվարի 29. Վենետիկում վախճանվեց աշխարհագրագետ, աստվածաբան Ստեփան-
նոս Ազոնցը: Ծնվ. 1740 թ. նոյեմբերի 20-ին Ջուռջովում (Տրանսիլվանիա): Վենետիկի
Մխիթարյան միաբանության անդամ էր 1763 թ. հուլիսի 20-ից, իսկ 1800 թ.
նոյեմբերի 9-ից՝ արքահայր (III):

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 53-61, 218:

Հունվարի 30. Պոլսում ծնվեց պատմաբան, բառարանագիր, թարգմանիչ (լատիներենից՝
գրաբար) Եփրեմ Չազրճյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր
1845 թ. նոյեմբերի 1-ից: Վախճ. 1911 թ. դեկտեմբերի 23-ին:

«Հանդես ամսօրյա», 1895, № 3 («Եփրեմ Չազրճյան»):

Փետրվարի 9. (Նոր տոմարով) Մադրասում (Հնդկաստան) վախճանվեց գրական-հասա-
րակական գործիչ, հայկական առաջին պարբերականի խմբագիր Հարություն
քահանա Շմավոնյանը: Ծնվ. 1750 թ. Շիրազում (Պարսկաստան):

1794-1796 թթ. Մադրասում հիմնել և հրատարակել է «Ազդարար» պարբերականը:

«Հանդես ամսօրյա», 1923, № 11-12 («Աղերս»):

Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. Ա, Երևան, 1956,
192-227:

Փետրվարի 17. Պոլսում ծնվեց դրամագետ (նումիզմատիստ), արձակագիր, թարգմանիչ
(ֆրանսերենից՝ հայերեն) Կղեմես Սիպիլյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանու-
թյան անդամ էր 1845 թ. նոյեմբերի 5-ից: Վախճ. 1878 թ. մայիսի 23-ին, Տիգրանակեր-
տում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 35-37:

Մարտի 25. Պոլսում ծնվեց պատմաբան Համազասպ Թերճիմանյանը: Վենետիկի Մխի-
թարյան միաբանության անդամ էր 1844 թ. հունվարի 17-ից: Վախճ. 1862 թ.
սեպտեմբերի 10-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1862, № 10 («Մահ»):
«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 223:

Հուլիսի 4. Նեունդորֆում (Կենտր. Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ Հերման Ադոլֆ Ռիխարդ Գոչեն (Hermann Adolf Richard Goche): Վախճ. 1889 թ. հոկտեմբերի 29-ին, Հալլեում:

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 287-289:

Սեպտեմբերի 3. Թիֆլիսում ծնվեց բանասեր, լրագրող, մշակութային գործիչ Հովսեփ Գաբրիելի Փոնդոյանցը: Վախճ. 1883 թ. հուլիսի 5-ին:

ԳԱԹ, Գաբրիել Փոնդոյանցի ֆոնդ, № 169:
«Արձագանք», 1883, № 28 («Հովսեփ Փոնդոյանց»):

Հոկտեմբերի 18. Պոլսում (Խասգյուղ) ծնվեց մեմուարիստ (մասնագիտությամբ բժիշկ) Բարունակ Քրթիկյան Ֆերուհիսանը: Վախճ. 1868 թ. հոկտեմբերի 5-ին:

«Հանդես ամսօրյա», 1895, № 10, 12 («Բժիշկ Բարունակ պեյ Քրթիկյան»):
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 355:

Դեկտեմբերի 1. Թիֆլիսում, հանդիսավոր պայմաններում, տեղի է ունենում Ներսիսյան հայոց երեքդասյա (հետագայում՝ ութդասյա) հոգևոր դպրոցի պաշտոնական բացումը: Առաջին տեսուչն էր Հարություն Ալամդարյանը: Դպրոցն սկզբում ուներ 140 աշակերտ: Դպրոցը Ներսիսյան էր կոչվում ի պատիվ նրա հիմնադիր Ներսես Աշտարակեցու: Հիմնադրման աշխատանքները սկսվել էին 1821 թ. սեպտեմբերի 16-ից: 1924 թվականի մայիսին, մեծ հանդիսավորությամբ նշվեց դպրոցի գոյության հարյուրամյակը (ողջույնի խոսքով հանդես եկավ Ա.Վ.Լուսաչարսկին), որից հետո Ներսիսյան հայոց դպրոցը դադարեց գոյություն ունենալուց՝

Երիցյան Ալ., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898:

Դեկտեմբեր. Զմյուռնիայում ծնվեց բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերեն-նից՝ հայերեն) Հակոբ Ոսկանը: Վախճ. 1907 թ. հունվարի 13-ին, Պոլսում:

«Մասիս», 1907, № 9, 10, 11 («Համեստ կրպակի մը մեջ»), № 14 («Հակոբ Ոսկան»):
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1915, էջ 120:
«Բազմավեպ», 1936, № 8-12, («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

* Ներսիսյան դպրոցի հետ կապված որոշ մանրամասնություններ մեզ հայտնել են դպրոցի նախկին շրջանավարտներ Գ. Սևակը, Գ. Աբովը, Ա. Բաբայանը, Դ.Դզունին, որոնց հայտնում ենք մեր շնորհակալությունը:

-Շամախիում ծնվեց աշուղ Զարկյարը (Աբրահամ Մարտիրոսի Բաբայան): Վախճ. 1868

թ., Բաքվում:

«Զարկյարի քնարը», Բ տիպ, Բաքու, 1890, ԺԱ+99 էջ:

Տե՛ս նաև «Հայ գուսաններ» ժողովածուն (Երևան, 1957, էջ 283), ուր Զարկյարի մահվան թվականը նշանակված է 1874-ը:

-Պոլսում, Գրիգոր Փեշտիմալճյանի ջանքերով իր գոյությունն է սկսում «Մայր վարժատուն» արական յոթդասյա դպրոցը: Վերջինս հարատևեց մինչև 1834 թ.:

«Մասիս», 1907, № 25 («Գրիգոր պատվելի Փեշտիմալճյան»), № 31 («Բողոքականություն ի հայս»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 638:

-Վենետիկում հրատարակվում է Իզնատիոս Փափազյանի «Կրկնատումար վաճառականութեան» աշխատությունը: 302 էջ:

-Վենետիկում, Հարություն Ավգերյանի՝ անգլերեն բնագրից կատարված գրաբար արձակ թարգմանությամբ, հրատարակվում է Ջոն Միլտոնի «Դրախտ կորուսեալ» դյուցազներգությունը, 503 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Ղուկաս Ինճիճյանի «Դարապատում, որ է աշխարհամար կամ ընդհանուր պատմություն քաղաքական, եկեղեցական, ուսումնական և արվեստական (Դարուց ի դար բաժանյալ)» աշխատության Ա հատորը (ընդգրկում է 1750-1757 թթ. դեպքերը), 435 էջ:

Երկրորդ հատոր (1757-1768), Վենետիկ, 1825, 405 էջ:

Երրորդ հատոր (1768-1780), Անդ, 1826, 430 էջ:

Չորրորդ հատոր (1780-1789), Անդ, 1826, 408 էջ:

Հինգերորդ հատոր (1789-1795), Անդ, 1828, 518 էջ:

Վեցերորդ հատոր (1795-1800), Անդ, 1828, 456 էջ:

Յոթերորդ հատոր, («Դասք ուսումնականց, արվեստավորաց, և այլոց երևելեաց ի կենցաղօգտութիւն և յայլ ամենայն բարեգործութիւնս»), Անդ, 1827, 446 էջ:

Ութերորդ հատոր («Յաւելուած»), Անդ, 1827, 486 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ստեփանոս Ազունցի «Տեսութիւն նոր կտակարանաց Աստուածաշունչ սուրբ գրոց, բացաքննեալ ըստ աստուածաբանական քննութեանց» եռահատոր աշխատությունը: Հատ. Ա, 424 էջ, հատ. Բ, 452 էջ, հատ. Գ, 278 էջ:

-Կալկաթայում վերահրատարակվում է Միքայել Չամչյանի «Խրախճան պատմութեան հայոց» աշխատությունը: 587 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Ներսես Շնորհալու «Գիրք որ կոչի Յիսուս Որդի» ստեղծագործությունը: 106 էջ:

-Պոլսում հրատարակվում է Պողոս Ադրիանապոլսեցու «Թանգարան խրատու» երկհատոր աշխատությունը: Հատ. Ա, 302 էջ, հատ. Բ, 237 էջ: Երկու հատորները միասին, Երուսաղեմ, 1851 թ. (288+222 էջ), 1870 թ (254+192 էջ):

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Լուսավորչի ճառերի ժողովածուն՝ «Գիրք, որ կոչի Յաճախապատում» խորագրով: 400 էջ:

Առաջին հրատարակությունը լույս է տեսել 1737 թ. Պաղտասար Դպրի սրբագրությամբ ու խմբագրությամբ: Մույն II հրատարակությունը խմբագրել է Թագվոր դպիր Ասլանյանը: Պարունակում է Գրիգոր Լուսավորչի, կամ նրան վերագրվող 23 ճառեր: Վերջում զետեղված են ներբողներ, չափածո և արձակ ձևեր՝ նվիրված Լուսավորչին:

-Պոլսում հրատարակվում է Հակոբ Մծբինացու, կամ նրան վերագրվող ճառերի ժողովածուն՝ «Գիրք որ կոչի զգօն» խորագրով: Սրբագրական և տեքստաբանական աշխատանքները՝ Թագվոր Ասլանյանի: 340 էջ:

Զետեղված են 19 ճառեր: Վերջում տրված է Հակոբ Մծբինացու կենսագրությունը:

-Պոլսում հրատարակվում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց»-ը: Տեքստաբանական աշխատանքները, առաջաբանը՝ Ճանիկ մահտեսի Սիմոնյանի: 363 էջ՝:

Լրիվ վերնագիրն է. «Ագաթանգեղոս. յորում պարունակի պատմություն Տրդատայ արքայի և սրբոյն Գրիգորի. և ևս աստուածախօս վարդապետութիւն նորին սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»:

Բացի «Պատմութիւն հայոց»-ից գրքում զետեղված են «Դաւանութիւն ուղիղ հաւատոյ յառաջ բերել յանստերիւր վարդապետութենէ սրբոյն Գրիգորի» և «Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի» գործերը:

-Պոլսում հրատարակվում է Իգնատիոս վարդապետ Սևլեոնցու «Մեկնութիւն աւետարանին որ ըստ Ղուկասու» աշխատությունը: 515 էջ:

* Այս հրատարակության մի քանի օրինակներ ունեն 1822 թ. նշումը:

-Թիֆլիսում հրատարակվում է Ներսես Աշտարակեցու «Համառոտութիւն անցից քրիստոսակերտ մայր աթոռոյ հայոց, սրբոյ Էջմիածնի, տպագրեալ յաղագս համազգային ծանօթութեանց» աշխատությունը: 75 էջ: Նույնը անփոփոխ՝ 1853 թ.:

-Փարիզում, հունարեն, գրաբար և ֆրանսերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է «Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացոյ, հանեալ ի թագաւորական գրատանէ Փարիզոյ՝ ւ լոյս ընծայեալ ի յոյն ի հայ և ի գաղղիացի լեզուս, հանդերձ ծանօթութեամբք և բացատրութեամբք» գիրքը: Տեքստաբանական աշխատանքները, ֆրանսերեն և գրաբար առաջաբանները, ծանոթագրությունները, թարգմանությունները՝ Հակոբ Շահան-Ջրպետյանի: XXXII+92 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Մանվել Ջախջախյանի «Առ Առան Սիսակեան. գանգատ Պառնասեայ և դատաստան Ապոդոնի» բանաստեղծությունը:

1 8 2 5

Հունվարի 7. Պոլսում (Բերա) ծնվեց լեզվագետ, հայկաբան, բանասեր Արսեն Այտընյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1842 թ. մայիսի 3-ից, արբահայր (V)՝ 1886 թ. օգոստոսի 16-ից: Վախճ. 1902 թ. հուլիսի 9-ին, Վիեննայում:

Երկու աստղով (* *) ստորագրությամբ հոդվածներ էր տպագրում «Հանդես ամսօրյա»-ում: «Հանդես ամսօրյա», 1895, № 11 («Հիսնամյա հորեյան Ա. Այտընյանի»), 1902 թ. № 7 («Հանգիստ ... Արսեն Այտընյանի»):

Ապրիլի 18. Վիեննայում վախճանվեց եկեղեցական գործիչ, բանասեր, աստվածաբան Աստվածատուր Բաբիկյանը: Ծնվ. 1738 թ. օգոստոսի 5-ին, Ջուղայում: Վիեննայի Մխիթարյան միաբանության արբահայր (I) է ընտրվել 1803 թ. մայիսի 3-ին:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 5-6:

Մայիսի 9. Եկատերինոգրադում (այժմ՝ Կրասնոդար) ծնվեց բանաստեղծ, մշակութային գործիչ (մասնագիտությամբ բժիշկ) Խաչատուր Ավագյանը: Վախճ. 1862 թ., Թիֆլիսում:

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ. Ա, Թիֆլիս, 1904: «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2, Երևան, 1962, էջ 395-396:

Մայիսի 18. Զմյուռնիայում (Բզմիր) հիմնադրվում է Մեսրոպյան վեցդասյա (հետագայում՝ ութդասյա) վարժարանը, որն իր գործունեությունն սկսում է նույն թվականի նոյեմբերի 15-ից: Այստեղ ուսուցչի կամ տեսչի պաշտոնով զանազան ժամանակ-

ներում աշխատել են Հովհաննես Վանանդեցին, Ռուբեն Անդրեաս Փափազյանը, Ստեփան Ոսկանյանը, Գրիգոր Զիլինկիրյանը, Մատթեոս Մամուրյանը և ուրիշներ: Վարժարանը գոյություն ունեցավ մինչև 1918 թ. (վերջին տարիներին որոշ ընդհատումներով) և իր ծաղկուն ժամանակ ուներ 270 աշակերտ:

«Հանդես ամսօրյա», 1890, № 5 («Զմյուռնիա և ազգային»):

Քոսյան Հ. Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս, հատ. Ա, Վիեննա, 1899, էջ 80 և հետո:

«Զմյուռնիահայ կյանքը զինադարարեն հետո», Աթենք, 1924, 40 էջ:

Հունիսի 29. Թիֆլիսում ծնվեց հայ դասական դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել

Մկրտումի Սունդուկյանը: Վախճ. 1912 թ. մարտի 16-ին:

«Մշակ», 1912, № 60:

Աբով Գ., Գաբրիել Սունդուկյան, Երևան, 1953, 448 էջ:

Հարությունյան Ս., Գաբրիել Սունդուկյան, Երևան, 1960, 509 էջ:

ԳԱԹ, Գաբրիել Սունդուկյանի ֆոնդ, № 142:

Օգոստոսի 11. Պոլսում ծնվեց արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ (ֆրանսերենից և իտալերենից՝ հայերեն) Սեպուհ Լազ-Մինասյանը: Վախճ. 1887 թ.:

«Բազմավեպ», 1904, № 4 («Անձանոթ մնացած ազգային տաղանդավոր պոետ մը»):

Օգոստոսի 14. Սուչավայում (Ավստրիա) ծնվեց գրական գործիչ, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն, հայերենից՝ ֆրանսերեն) Աստվածատուր Ջունդը: Վախճ. 1897 թ. փետրվարի 19-ին, Փարիզում:

«Հանդես ամսօրյա», 1897, № 4 («Ազգային թերթերե ծաղկեփունջ»):

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 125:

Օգոստոսի 26. Պոլսում ծնվեց պատմաբան, բանասեր Բառնաբաս Եսայանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1844 թ. դեկտեմբերի 25-ից: Վախճ. 1892 թ. մայիսի 27-ին, Վենետիկում:

«Բազմավեպ», 1904, № 5:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 223:

-Թալասում (Կեսարիա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Եսայի արքեպիսկոպոս Կարապետյանը: Վախճ. 1885 թ. օգոստոսի 29-ին, Երուսաղեմում:

1872-77 թթ. Երուսաղեմում խմբագրել է «Միօն» ամսագիրը:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Բ, Կահիրե, 1937, էջ 2019-2020:

-Զմյուռնիայում ծնվեց առաջադեմ հրապարակախոս, գրող, լրագրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Ստեփան Ոսկանյանը: Վախճ. 1901 թ. փետրվարի 23-ին:

1855-1856 թթ. Փարիզում խմբագրել է «Արևելք» հանդեսը՝ «Վահե», «Հրանտ», «Հարմա» կեղծանուններով, 1859-1865 թթ.՝ «Արևմուտք» կիսամյա հանդեսը: 1860-1861 թթ. Իտալիայում (Տուրին) խմբագրել է "L'Italie" օրաթերթը: 1867-1897 թթ. Չվեյտլանդիայում խմբագրել է "La Reforme" թերթը:

Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, Երևան, 1960, էջ 431-478:

-Պոլսում (Էտիոնե-գաբու) վախճանվեց բանասեր, տպագրիչ-հրատարակիչ Մատթեոս դպիր Պալատեցին: Ծնվ. 1740 թ.:

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, մասն Ա, Պոլիս, 1893, էջ 108-109:
Թեղդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 64:

-Պոլսում (Թոփ-գաբու) հիմնվում է տղաների չորսդասյա դպրոց, «Լևոնյան նախակրթարան» անվամբ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1915 թ.:

«Հանդես ամսօրյա», 1927, № 3-4 («Ծանոթությունք Ստամպոլո պատմության»):

-Պոլսում (Թոփ-գաբու) հիմնվում է աղջիկների չորսդասյա դպրոց, «Վարդուհյան նախակրթարան» անվամբ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1915 թ.:

Նույն տեղում:

-Պոլսում (Բերա), Վիեննայի Մխիթարյան միաբանության ուժերով և Սերովբե Մերճանճյանի օժանդակությամբ, հիմնվում է տղաների դպրոց՝ «Մխիթարյան վարժարան» անվամբ: Որոշ ընդհատումներով վարժարանը գոյություն ունեցավ մինչև 1927 թ.:

«Հանդես ամսօրյա», 1929, № 6-7 («Ծանոթությունք Ստամպոլո պատմության»):

-Թիֆլիսում իր գոյությունն է սկսում քահանա Եսայի Դանդուրյանի հիմնադրած դպրոցը, որը սովորեցնում էր հայերեն և վրացերեն: Դպրոցը գործեց մինչև 1830-ական թթ. վերջերը:

Երիցյան Ալ., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 271:

-Թիֆլիսում հրատարակվում է Հովհաննես Մեբաստացու «Ներբողական նուագերգութիւնք» ժողովածուն: 21 էջ:

-Թիֆլիսում, Հարություն Ալամդարյանի՝ ռուսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Հրահանգ քրիստոնեական վարդապետութեան, ի պէտս մանկանց Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ» գրքույկը: 94 էջ:

Նույնը անփոփոխ՝ Կալկաթա, 1846, 142 էջ, Էջմիածին, 1868, 132 էջ:

-Վենետիկում, Մանվել Ջախջախյանի՝ գերմաներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Սոլոմոն Գեսների «Քերթուած ի մահն Աբելի» ստեղծագործությունը: ԺԵ+272 էջ:

Նույնը՝ 1835, 1862 թթ., անփոփոխ:

Վերջում (էջ 270-272) **գետեղված է** թարգմանչի բանաստեղծությունը՝ «Երգ ի տապանն Աբելի, ի թարգմանչէն»:

-Վենետիկում, Հակոբոս Ճելալյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ֆենելոնի «Վարք նախնի իմաստասիրաց յունաց» աշխատությունը: 370 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1877 թ.

Տրված են. հույն փիլիսոփաներ Թալեսի, Սոլոնի, Պիտտակոսի, Բիասի, Պերիանդրի, Քիլոնի, Կլեոբուլոսի, Եպիմենիդեսի, Պյութագորասի, Հերակլիտոսի, Անաքսագորի, Դեմոկրիտի, Եմպեդոկլի, Սոկրատի, Պլատոնի, Անտեսթենեսի, Արիստոպոսի, Արիստոտելի, Քսենոկրատեսի, Դիոգինեսի, Կրատեսի, Բյուրոնի, Պիոնի, Էպիկուրի և Ջենոնի կյանքի և գործունեության համառոտ բնութագրերը:

-Վենետիկում, Մկրտիչ Ավգերյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Տարեկան առածք հոգեշահ իմաստից երևելի արանց վեշտասներորդ դարու» գիրքը: 595 էջ:

Պարունակում է ընտիր ասույթներ և կրոնա-աստվածաբանական խորհրդածություններ, գերազանցապես քաղված Իգնատիոս Լոյոլայի և Ֆրանչիսկո Քսավերայի աշխատություններից:

-Վենետիկում, Վրթանես Ասկերյանի՝ իտալերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Էմմանուել Թեսավրոսի «Իմաստասիրութիւն քարոյական» աշխատությունը: 804 էջ:

Վերջում (էջ 605-804) **գետեղված են** թարգմանչի ընդարձակ ծանոթությունները հունական և հայկական դիցաբանության մասին, և նրա մեկ բանաստեղծությունը:

-Վենետիկում, Գևորգ և Էդվարդ Հյուրմյուզյանների՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Շարլ Ռոլենի «Հնախօսութիւն» աշխատության Ա հատորը: 620 էջ:

Երկրորդ հատոր, 1825, 690 էջ:
Երրորդ հատոր, 1826, 526 էջ:
Չորրորդ հատոր, 1827, 810 էջ:
Հինգերորդ հատոր, 1828, 551 էջ:
Վեցերորդ հատոր, 1829, 690 էջ:

-Վենետիկում, գրաբար և լատիներեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Եփրեմ Սեթյանի «Նկարագիր վարուց Ստեփաննոսի Ազոնց Գիւվեռ արքեպիսկոպոսի ընդհանրական աբբայի Մխիթարեան Միաբանութեան» գիրքը: 96 էջ:

-Վենետիկում, Արսեն Անթիմոսյանի (իմա՝ Արսեն Բագրատունի) իտալերեն բնագրից կատարված թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Ֆրանչիսկո Սոավյեի «Արուեստ բանական կամ տրամաբանութիւն» աշխատությունը: 318 էջ:

Նույնը՝ 1857 թ.:

-Վենետիկում, Ջոն Պրենտանի և Հարություն Ավգերյանի համատեղ հեղինակությամբ, հրատարակվում է «Բառարան հայերէն և անգղիական»-ը: 24+640 էջ:

Հեղինակները նախորդ անգլո-հայերեն բառարանը նշել են իբրև Ա հատոր (տե՛ս 1821 թ.), իսկ **ներկա** հայ-անգլերենը՝ Բ. հատոր:

-Կալկաթայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Հովհաննես Ավդալյանի «Բառարան անգղիարեն-հայերեն»-ը: ԻԹ+290 էջ:

1821 թ. Վենետիկում հրատարակված Հարություն Ավգերյանի և Ջոն Պրենտանի համանուն աշխատության համառոտությունն է (տե՛ս 1821 թ.):

-Կալկաթայում հրատարակվում է Հովհաննես Ավդալյանի «Յորդորակ, յաղագս հաստատելոյ հայկեան ճեմարան ի մեծի մայրաքաղաքին Անգղիո ի Լոնդոն»։ 44 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանը՝ Անդրեաս վարդապետ Նարինյանի (Ակնեցի): 234 էջ:

Վերջում, «Դրուատ պատմագրաբար» ընդհանուր խորագրի ներքո զետեղված է Ներսես Լամբրոնացու չափածո ողբը Շնորհալու մահվան առթիվ:

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Մազիստրոսի չափածո գործերի ժողովածուն՝ «Տաղասութիւն ներհուն առն Գրիգորի Մազիստրոսի ուղղափառ իշխանի» խորագրով: 106 էջ:

-Փարիզում, հայերեն-ֆրանսերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Վարդան Այգեկցու «Հատընտիր առակք» ժողովածուն: 96 էջ:

-Վիեննայում, Ռափայել Ռիզունյանի թարգմանությամբ, հրատարակվում է «Հոգեշահ մտածութիւնք աստուածային բանից» աշխատությունը: 297 էջ:

Գրքի հեղինակին թարգմանիչը կոչում է «Հռոսիգնողյան Կարոլոս Գրիգոր, կրօնաւոր Յիսուսեան»: Առաջաբանում ուշագրավ դատողություններ են արվում աշխարհաբար թարգմանության դերի և նպատակների մասին:

-Վենետիկում Մանվել Ջախջախյանը գրում է «ԿտակՄեղուաց» երգիծական բանաստեղծությունը:

«Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Բ:

-Թիֆլիսում Հարություն Ալամդարյանը գրում է «Աղօթք» բանաստեղծությունը:

Հրատարակվել է 1884 թ. Պետերբուրգում, Ալամդարյանի «Չափաբերականք» ժողովածուում:

1 8 2 6

Ապրիլի 5. Այ-Ստեֆանոյում (Կ.Պոլիս) ծնվեց օսմանյան պետական պաշտոնյա, մշակութային գործիչ Հարություն-Գարեգին Տատյանը: Վախճ. 1901 թ. հոկտեմբերի 7-ին, Պոլսում:

«Արարատ», 1901, № 9-10 («Հարություն փաշա Տատյան»), «Հանդես ամսօրյա», 1964, № 1..., (Պողոսյան Ե. «Տատյան գերդաստանը»):

Ապրիլի 4. Բոմբեյում (Հնդկաստան) ծնվեց հնդկահայ գործիչ, իրավագետ (մասնագիտությամբ բժիշկ) Հովսեփ Մարկոսյան Մահտեսի Հովսեփյանը: Վախճ. 1889 թ. հոկտեմբերի 17-ին, Մադրասում:

«Հանդես ամսօրյա», 1895, № 6 («Ժեներալ Հովսեփ բժիշկ Մարկոսյան»):

Հուլիսի 17. Պարսկական 600000-անոց բանակը, գահաժառանգ Աբբաս-Միրզայի հրամանատարությամբ, հանկարծակի ներխուժում է Ղարաբաղ: Սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը:

"Акты...", т. 6 (ч. II), стр. 357 (док. №651), стр. 380 (док. № 690), стр. 378 (док. № 686), т. 7. (предисл.), стр. 553 (док. № 516), стр. 560 (док. № 517), стр. 563 (док. № 521), стр. 568 (док. № 526).

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Երևան, 1955, էջ 39-52:

Հուլիսի 25. Նոր-Ջուղայում (Պարսկաստան) վախճանվեց աշուղ Ամիր Օղլին: Ծնվ. 1740 թ. Բուրվարիում (Սպահանի նահանգ, Պարսկաստան):

«Բազմավեպ», 1930, № 1 («Պարսկահայ աշուղներ»):

Օգոստոսի 24. Պոլսում ծնվեց պատմաբան, թարգմանիչ (ֆրանսերենից-հայերեն), մանկավարժ Ամբրոսիոս Գալֆայանը (հետագայում՝ Գվիդոն Լուսինյան): Վախճ. 1906 թ. Փարիզում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 223:

Օգոստոս (?) Պոլսում ծնվեց ճարտարապետ, արվեստագետ Նիկողայոս Պալյանը: Վախճ. 1858 թ. փետրվարի 27-ին, իր ծննդավայրում:

«Ընդարձակ օրացույց», 1901, էջ 46:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Երևան, 1955, էջ 114:

Ղեկտեմբերի 19. Պոլսում ծնվեց բառարանագիր, եկեղեցական գործիչ Ստեփանոս Ազարյանը: Վախճ. 1899 թ. ապրիլի 19-ին:

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 41:

Ղեկտեմբերի 27. Պոլսում ծնվեց լեզվագետ, բանասեր Օքսենտինիոս Գուրգենյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ 1844 թ. դեկտեմբերի 25-ից: Վախճ. 1900 թ. փետրվարի 7-ին Վենետիկում:

«Բազմավեպ», 1900, № 3 («Հանգիստ... Օքսենտինիոսի Գուրգենյան»):

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 223:

-Պոլսում ծնվեց թատերական գործիչ, դերասան Հովհաննես Գասպարյանը: Վախճ. 1867 թ.:

Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Ա, Երևան, 1962, էջ 65-75:

-Պոլսում (Բերա) ծնվեց թատերական գործիչ, դրամատուրգ, ռեժիսոր Պետրոս Մաղաքյանը: Վախճ. 1891 թ. մարտի 13-ին:

«Արևելք», 1891, №№ 2346, 2349:

Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Ա, Երևան, 1962, էջ 344-348:

-Պոլսում (Ղալաթիա) ծնվեց բանասեր Ռափայել Միասերյանը: Վախճ. 1917 թ. փետրվարի 23-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1915, էջ 113, 1921, էջ 323:

-Կեսարիայում ծնվեց գրական-հասարակական և լրագրական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից, թուրքերենից՝ հայերեն) Կարապետ Փանոսյանը: Վախճ. 1905 թ. մարտի 25-ին, Պոլսում:

1866-1896 թթ. Պոլսում խմբագրել է «Մանգումեի էֆքյար» («Մտածումների շարք») հայատառ թուրքերեն օրաթերթը:

1874-1875 թթ. Պոլսում խմբագրել է «Մօտա» հանդեսը:

Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Քասիմ» կեղծանունով:

«Ծաղիկ» (Պոլիս), 1905, № 16 («Կարապետ Փանոսյան»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1924, էջ 206:

-Կեսարիայում իր գոյությունն է սկսում «Սարգիս Կյումուշյան» արական վարժարանը, որն իր ծաղկուն ժամանակ ուներ մոտ 700 աշակերտ: Վարժարանը գործեց մինչև 1911 թ.:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 1106-1120:

-Թիֆլիսում վերահրատարակվում է Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի» աշխատությունը: 600 էջ:

Նույնը՝ նույն թվականին, անփոփոխ:

-Թիֆլիսում հրատարակվում է Ներսես Աշտարակեցու «Յայտարարութիւն քրիստոնէական պարտաւորութեան, ի հպատակաց ամենաբարեպաշտ կայսերութեան Ռուսաց» գրքույկը: 6 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 410 էջ:

-Պետերբուրգում հրատարակվում է «Քառեակ սակաւապատում բանահիւսութիւնք ի հանդիսի սգալից թաղման հանգուցեալ երջանկահիշատակ մեծի իշխանապետի տեառն Յովակիմեայ Եղիազարեանց ասացեալ, և այժմ յարգահատութիւն ազգասէր բանասիրաց տպագրութեամբ ի լոյս ընծայեալ. ի նորատունկ ուսումնարանէ նոյն աստուածագոր տանն Եղիազարեանց» գրքույկը: 19 էջ:

-Պոլսում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Գևորգ Տեր-Հովհաննիսյանի (Պալաթեցի) «Բառարան պարսկերեն, ըստ կարգի հայկական այբուբենից, յորում ճոխաբար աւանդին իմաստք բառիցն հայերեն և տաճկերեն, բացատրութեամբ և ուրեք արաբական նշանակութեամբ» գիրքը: 715 էջ:

Բառարանին ընդարձակ առաջաբան է գրել և պարսկերեն լեզվի համառոտ քերականություն է կցել Հակոբ Չելեպի Տյուզյանը:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է «Սահման ազգային ժողովոյն, որ եղև ի... Պատրիարքարանս ամենայն հայոց որ ի Կոստանդնուպոլիս» գրքույկը: 21 էջ:

-Պոլսում հրատարակվում է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սրբոց երկոտասան Մարգարէից» աշխատությունը: Տեքստաբանական աշխատանքներն ու առաջաբանը՝ Անդրեաս վարդապետ Նարինյանի (Ակնեցի): 304 էջ:

Առաջաբանում կազմողը նշում է, որ հիշյալ հրատարակությունը պատրաստելու համար ձեռքի տակ ունեցել է երեք օրինակ, բոլորն էլ լի վրիպակներով և տառա-կետադրական սխալներով, և այդ ամենն ինքն ուղղել է, ըստ իր հնարավորության:

-Պոլսում վերահրատարակվում է Մեսրոպ Տեր-Հարությունյանի (Արզրումցի) «Քերականութիւն հայոց լեզուի, նորոգ քնութեամբ յօրինեալ ամբողջ գրաբար յավելեալ ի վերջն և զհամառօտութիւն իմն աշխարհաբար ի դիրութիւն աշակերտելոց» աշխատությունը: 442 էջ:

-Պոլսում հրատարակվում է Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց» աշխատությունը: 702 էջ:

-Պոլսում հրատարակվում է Բարսեղ Ճոնի «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի» գիրքը (Հատ. Բ): Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Անդրեաս վարդապետ Նարինյանի (Ակնեցի): 499 էջ:

Հիշյալ աշխատության առաջին հատորը չի հրատարակվել:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Գևորգ Ոսկյանի «Պատմություն վարուց մեծին Կոստանդիանոսի» աշխատությունը: 304 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Պոդոս Հովնանյանի «Վարժություն մանկանց ի հրահանգս ընթերցանության և բարեկրթության» դասագիրքը: 190 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1851, 1860, 1908 թթ.:

-Կալկաթայում, Հովհաննես Ավդայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ռենե Շատոբրիանի «Ատալա, օրիորդն սիրագոհ» վիպակը: 169 էջ:

-Կալկաթայում, Հովհաննես Ավդայանի՝ անգլերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Սամուել Ջոնսոնի «Հոասելաս, արքայորդին Եթովպիոյ» չափածո ստեղծագործությունը: 268 էջ:

-Վենետիկում, «Մատենագրութիւնք նախնեաց» ընդհանուր խորագրի ներքո, Մխիթարյան միաբանության անդամ հայագետները սկսում են հրատարակել հայկական և օտար պատմիչների ու եկեղեցու հայրերի երկերը, համապատասխան ծանոթագրություններով, տեքստաբանական տարբերություններով ու առաջաբաններով: Մատենաշարի հրատարակությունը տևում է մինչև 1907 թ., որի ընթացքում լույս են տեսնում հին և միջնադարյան 35 հեղինակների գործերը, որոնց գերակշիռ մասը առ այսօր մնում է իր տեսակի մեջ լավագույնը:

Նույն թվականից սկսած, մի այլ՝ «Ընտիր մատենագիրք» մատենաշարով, սկսում է հրատարակվել բացառապես հայ դասական հեղինակների առանձին գործերը: Մատենաշարը հարատևում է մինչև 70-ական թվականները և լույս է ընծայվում տասնմեկ անուն փոքրադիր հատորներ:

Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագիտություն, հատ. Ա, Վենետիկ, 1909-12, էջ 1846, 1850:

-Վենետիկում հրատարակվում է Հովհաննես Ոսկեբերանի գործերի լիակատար ժողովածուի Ա հատորը՝ «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլիսի եպիսկոպոսի յաւետարանագիրն Մատթեոս» խորագրով: 763 էջ:

Երկրորդ հատորը՝ «Մեկնութիւն Մատթէի Աւետարանին» խորագրով, նույն թվականին: 12+448 էջ:

-Վենետիկում, Մանվել Զախջախյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանցիսկոս Ֆենելոնի «Արկածք Տելեմաքայ որդւոյն Ողիսեայ» երկը: 645 էջ:

Թարգմանիչն աշխատությանը կցել է նաև Ֆենելոնի համառոտ կենսագրությունը և ծանոթագրություններ (էջ 569-618):

-Վենետիկում հրատարակվում է «Երզրնկայ Կողբացոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց» գիրքը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու («Ընտիր մատենագիրք», հատ. Ա): 334 էջ:

-Վենետիկում, գրաբար և աշխարհաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է Իգնատիոս Փափազյանի «Պատճենք նամակաց վաճառականութեան» աշխատությունը: 431 էջ:

Տրված են 250 անուն նամակների, փոխանակագրերի, անդորրագրերի, զանազան ելևմտից հաշիվների օրինակներ:

-Վենետիկում, լատիներեն և գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է Փիլոն Եղբրայեցու ճառերի ժողովածուն «Փիլոնի եղբրայեցոյ մնացորդք ի հայս» խորագրով: Տեքստաբանական աշխատանքները, թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մկրտիչ Ավգերյանի: 628 էջ:

Ժողովածուն համարվում է 1822 թ. հրատարակվածի (տե՛ս այդ թվականը) II հատորը:

1827

Փետրվարի 20. Տրապիզոնում ծնվեց բանասեր Հմայակ Պապիկյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1848 թ.: Վախճ. 1880 թ. ապրիլի 14-ին, Պատավիռնում (Բատավիա):

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

Մարտի 24. Կախմխուտ գյուղում (Հաղպատից արևելք) ծնվեց թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Վահան Պոյաճյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1847 թ. մայիսի 13-ից: Վախճ. 1856 թ. հուլիսի 2-ին, Հռոմում:

Անդ, էջ 224:

Մարտի 30. Թիֆլիսի Ղարաբաղ հրապարակում (այժմ՝ Ալեքսանդրյան այգի) տեղի է ունենում հայկական կամավորական գնդի զորահանդեսը, որն ընդունում է Ներսես Աջտարակեցին: Մայիսի 15-ին կամավորական զունդը երդում է տալիս և դրոշ

ստանում: Հայրենասիրական ջերմ ճառով հանդես է գալիս Հարություն Ալամդարյանը:

Հայոց կամավորական գունդը, որը սկզբում երկու հարյուր հոգի էր, հետագայում հասավ հազար հոգու:

Աղանյան Գ., Դիվան հայոց պատմության, Թիֆլիս, 1915, էջ 9-14:
«Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 11:

Ապրիլի 23. Եղիսաբեթպուլում (Տրանսիլվանիա, Ռումինիա), Ռափայել Ղարամյանի նյութական օժանդակությամբ, հիմնվում է աղջիկների չորսդասյա (հետագայում՝ վեցդասյա) դպրոց՝ «Ռափայելյան վարժարան» անվամբ: Դպրոցն իր պարապմունքներն սկսում է նույն թվականի մայիսի 11-ից:

«Հանդես ամսօրյա», 1895, № 2 («Պ. Ղարամյան ու հայազգիք»), 1904, № 2 («Պատմական»):

Մայիսի 8. Վենետիկում վախճանվեց բանասեր, բառարանագիր Խաչատուր Սյուրմեղյանը: Ծնվ. 1751 թ. դեկտեմբերին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1773 թ.:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 105, 219:

Հունիսի 17. Ալեքսանդր I կայսեր կարգադրությունը՝ Ռուսաստանի տիրապետության սահմաններում գտնվող բոլոր հայկական եկեղեցիները, եկեղեցապատկան կավ՝ վաճառները պետական պարտադիր հարկատվությունից ազատելու մասին: Ազատվում էին նաև եկեղեցու սպասավորները, նրանց սեփական հողամասերը, ինչպես նաև թույլատրվում էր եկեղեցուն՝ բնակության տեղ և ուտեստ չտրամադրել կանոնավոր բանակի զորամասերին:

Տեր-Աբրահամյան Հ., Ներսես Ե. վեհափառ կաթողիկոս Ամենայն Հայոց, Թեոդոսիա, 1868:

Հունիսի 24. Պոլսում ծնվեց արձակագիր, բանասեր, լրագրող Հովհաննես Հիսարյանը: Վախճ. 1916 թ. օգոստոսի 9-ին:

1851-1852 թթ. Պոլսում խմբագրել է «Բանասեր...» ամսագիրը:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 331:
Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1921, էջ 323:

Հունիսի 26. Աստրախանում ծնվեց բանաստեղծ, բանասեր, եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ Գրիգոր Աղափիրյանը: Վախճ. 1898 թ. մարտի 23-ին, Ագուլիսում:

«Արարատ», 1898, № 5 («Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրյանց»):
«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Նոյեմբերի 2. Բեռլինում ծնվեց գերմանացի հայագետ Պոլ դը Լագարդը (Paul de Lagarde)
(Բյոտտիլեր): Վախճ. 1894 թ. Գետտինգենում (Կենտ. Գերմանիա):

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք..., Վենետիկ, 1895, էջ 292-295:
Աղայան Էդ., Հայ լեզվաբանության պատմություն, հատ. 1, Երևան, 1958, էջ 187-194:

Դեկտեմբերի 4. Պոլսում ծնվեց գրականագետ, պատմաբան, մատենագետ, բանասեր, թարգմանիչ Գարեգին Զարբհանայանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1848 թ. հունվարի 17-ից: Վախճ. 1901 թ. փետրվարի 13-ին, Վենետիկում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:
«Բազմավեպ», 1901, № 2 (Հավելված) («Գարեգին Զարբհանայան»):

Դեկտեմբերի 24. Վենետիկում վախճանվեց աստվածաբան, բառարանագիր, բանաստեղծ, թարգմանիչ (հունարենից, լատիներենից, իտալերենից՝ հայերեն), քերականագետ Գաբրիել Ավետիքյանը: Ծնվ. 1751 թ. սեպտեմբերի 19-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1773 թ. դեկտեմբերի 30-ից:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 86-94, 218:

Դեկտեմբերի 27. Սուլթան Մահմուդ II-ի գրավոր ուղերձի համաձայն սկսվում են կաթոլիկ հայերի մասսայական հալածանքները և տեղահանությունները:

Պերպերյան Ավ., Պատմութիւն հայոց..., Պոլիս, 1871, էջ 196:

Դեկտեմբեր. Երևանում, Սարդարի հայելապատ դահլիճում, գեներալ Ա.Ի.Կրասովսկու նախաձեռնությամբ և ռուսական սպաների ուժերով, ներկայացվում է Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգությունը: Ներկայացմանը ներկա էր նաև հեղինակը:

1954 թ. մայիսի 30-ին, «Արարատ» գործարանի պատին, հանդիսավոր պայմաններում հուշատախտակ ամրացվեց հետևյալ բովանդակությամբ. «Այստեղ, 1827 թ. հեղինակի ներկայությամբ առաջին անգամ բեմադրվեց ռուս մեծ գրող Ա.Ս.Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» անմահ կոմեդիան»:

Պարսամյան Վ., Ա.Ս.Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 71:

-Կողբ գյուղում (Երևանի գավառ) ծնվեց աշուղ Շիրինը (Հովհաննես Կարապետյան):
Վախճ. 1857 թ. մայիսի 9-ին, Վաղարշապատում:

«Ազգագրական հանդես», 1904, № 11:
«Աշուղ Շիրին» («Հայ նոր գրականության պատմություն»), Երևան, հատ. Ա, 1962, էջ 273-289:

-Շուշիում, Բազել քաղաքի միսիոներներ Ավգուստ Դիտրիխի և Ֆելիցիան Զարեմբայի ջանքերով, սկսում է գործել 130 աշակերտ ունեցող հայկական դպրոցը: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1835 թ. սկզբները:

Լեռ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1915, էջ 87-97:

-Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցի սաների՝ ռուսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Համբալք ի գնդէ որոշեցելոց վասն Կովկասեան սահմանաց» գրքույկը: 12 էջ:

Թարգմանությունը կատարված է «Московские ведомости» ամսագրի 1826 թ. № 76-ից:

-Թիֆլիսում հրատարակվում է Ներսես Աշտարակեցու «Հռչակ ողորմութեան աստուածազօր մեծափառութեան ինքնակալի և կայսեր ամենայն Ռուսաց Նիկողայոսի Առաջնոյ, առ ազգս հայոց որ ի Վրաստան» ատենախոսությունը: 15 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ներսես Շնորհալու «Ողբ Եղասեայ» պոեմը: Տեքստը հրատարակության է պատրաստել Հովհաննես Զոհրապյանը:

Ֆրանսերեն տիտղոսաթերթում հրատարակության տարեթիվը 1828 է, իսկ հայերեն տիտղոսաթերթում՝ 1827:

-Վենետիկում, գրաբար, հունարեն և լատիներեն համատեղ տեքստերով, հրատարակվում է «Իմաստութիւն Սողովմոնի» ժողովածուն: 245 էջ:

Բանասիրական գրականության մեջ հայտնի է նաև «Գիրք իմաստութեան» անվամբ:

-Վենետիկում հրատարակվում է Մովսես Խորենացու «Պատմութիւն հայոց»-ը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանը, ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու («Ընտիր մատենագիրք», հատ. Բ): 632 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների ժողովածուն՝ «Գրիգոր Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք» խորագրով: Տեքստաբանական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու («Մատենագրութիւնք նախնեաց»): 487 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Գրիգոր Նարեկացուն վերագրվող ճառերի ժողովածուն՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ երկրորդ մատեան ճառից» խորագրով: Տեքստաբանական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Գաբրիել Ավետիքյանի: 255 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Միքայել Սալլանթյանի «Քերականութիւն գրաբար լեզուիս հայոց նորակարգ ոճով, ի պէտս աշակերտաց գերահռչակ ճեմարանին կառուցելոյ ի Մոսկով» աշխատության Ա հատորը (Փոքր քերականությունը): 16+433 էջ:

-Մոսկվայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Աբրահամ սարկավազ Աստվածատրյանի (Վաղարշապատցի) «Համառօտ քերականութիւն ի ռուսաց լեզուէ ի հայ» գիրքը: 156 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է «Ներբողեան ի յիշատակ Մնացականի Վարդանեան» գրքույկը:

-Կալկաթայում հրատարակվում է «Ներբողական ի յիշատակ Գեորգայ Մանուկեան» գրքույկը:

-Կալկաթայում հրատարակվում է Պետրոս Բերդումյան-Աղամալյանի «Աստուածանմանութիւն» գիրքը: 340 էջ:

Աշխատությունը վերամշակել և հրատարակության է պատրաստել Մեսրոպ Թաղիադյանը:

-Վիեննայում հրատարակվում է Վրթանես Զալլիսյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի» աշխատությունը: 328 էջ:

Նույնը՝ 1837, 1844, 1848, 1852, 1856, 1862, 1870 թթ.:

-Պոլսում վերահրատարակվում է Վարդան Այգեկցու «Աղուեսագիրք, որ գեղեցիկ առակաբանութեամբ խրատէ զմարդիկ զգուշանալ ի չարեաց և գործել զբարիս» ժողովածուն: 176 էջ:

Պարունակում է 166 առակ: Գրքի հեղինակը երկար ժամանակ սխալմամբ համարվել է Երեմիա Մեղրեցին (տե՛ս **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 1060-1062):

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Փեշտիմալճյանի «Քերական լեզուագիտութեան, հաւաքեալ ի գրաբար լեզուէ տաճկական բացատրութեամբ» գիրքը: 104 էջ:

-Աստրախանում, Գաբրիել Պատկանյանի թարգմանությամբ, հրատարակվում է Դիողորոս Սիցիլիացու «Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի Մակեդոնացույ» աշխատությունը: 218 էջ:

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է «Ի յօրինուած ավսէի և սկահակաց սրճոյ ի ճարտարէ» երգիծական բանաստեղծությունը:

«Տաղք Մխիթարեան վարդապետաց», Ա:

-Թիֆլիսում Հարություն Ալամդարյանը գրում է իր «Տաղերգութիւն» և «Տեսիլ» բանաստեղծությունները:

Հրատարակվել է 1884 թ. Պետերբուրգում, բանաստեղծի «Չափաբերականք» ժողովածուում:

1 8 2 8

Փետրվարի 20. Պոլսում ծնվեց թարգմանիչ (ֆրանսերենից-հայերեն) Վարդան Շիշմանյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1848 թ.: Վախճ. 1901 թ. (?):

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

Մարտի 19. Պոլսում ծնվեց հայագետ, լրագրող Սամվել Գաթրըրճյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1850 թ. հոկտեմբերի 13-ից: Վախճ. 1895 թ. սեպտեմբերի 12-ին, Տրիեստում:

«Հանդես ամսօրյա», 1932, № 1-2 («Հովսեփ Գաթրըրճյան»):

Հուլիսի 28. Պետերբուրգում ծնվեց հնագետ, պատմաբան-հնախույզ Ադոլֆ Պետրովիչ Բերժեն: Վախճ. 1886 թ. հունվարի 30-ին, Թիֆլիսում:

Բերժեի խմբագրությամբ ու անմիջական նախաձեռնությամբ, 1866 թ. Թիֆլիսում սկսում է հրատարակվել "Акты собранные Кавказскою Археографическою Коммиссией" ժողովածուն (12 հատոր), ուր բազմաթիվ կարևոր փաստեր են հաղորդվում հայ ժողովրդի և նրա մշակույթի մասին: Հրատարակությունն ավարտվում է 1904 թ.:

Кобяков, Адольф Берже, СПб., 1886.

«Մշակ», 1886, № 12 («Ներքին լուրեր»):

«Արձագանք», 1886, № 4: («Ադոլֆ Պ. Բերժեն»)

Օգոստոսի 15. Պոլսում ծնվեց հայկաբան, բանասեր Եղիշե Գաֆթանյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1853 թ. մայիսի 1-ից: Վախճ. 1912 թ. դեկտեմբերի 17-ին, Վիեննայում:

«Հանդես ամսօրյա», 1903, № 5 («Հիսնամյա հոբելյան մը»), 1913, № 1-2 («Սահագույժ»):

Սեպտեմբերի 19. Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայկական երաժշտության տեսաբան Համբարձում Չեչյանը: Վախճ. 1901 թ. հունվարի 5-ին, Արմաշում:

«Հանդես ամսօրյա», 1902, № 4 («Մատենախոսական»):
Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 187:

Նոյեմբերի 1. Մեսրոպ Թաղիադյանը Կալկաթայից նամակով դիմում է հայ ժողովրդին («Նամակ երևանցիներին»), հնդկահայոց անունից ողջունում է նրանց պարսկական բռնապետությունից ազատվելու առթիվ և նշում մի շարք ուղիներ Հայաստանում ուսման և գրականության զարգացման համար:

-Պոլսում ծնվեց երաժշտագետ, երաժշտության տեսաբան Գաբրիել Օհանի Երանյանը:
Վախճ. 1862 թ. հոկտեմբերի 13-ին, Պոլսում:

1857-1863 թթ. (ընդհատումներով) Պոլսում խմբագրել է «Քնար արևելյան» երաժշտական ամսաթերթը:

1861-64 թթ. (ընդհատումներով) Պոլսում խմբագրել է «Քնար հայկական» կիսամյա երաժշտական հանդեսը:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 78:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1916-1920, էջ 89, 1923, էջ 255:

-Պոլսում (Բերա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանաստեղծ, թատերագիր Մկրտիչ Ռափայելի Պեշիկթաշյանը: Վախճ. 1868 թ. նոյեմբերի 29-ին:

«Հանդես ամսօրյա», 1930, №5-6 («Ծանոթությունք Սթամպոլո պատմության»):

Չոպանյան Ա., Մկրտիչ Պեշիկթաշյանի կյանքը և գործը, Փարիզ, 1907:

Պեշիկթաշյան Մ., Տաղեր, Երևան, 1961 (Ա.Ինճիկյանի առաջաբանը):

-Պոլսում ծնվեց դերասան, դրամատուրգ Հովհաննես Աճեմյանը: Վախճ. 1871 թ.:

«Արևելյան Մամուլ» (բացառիկ թիվ), 1908, պրակ Ա («Հովհաննես Աճեմյան»):

-Տրնհայում (Անգլիա) ծնվեց անգլիացի հայագետ Յոզեֆ Լայֆուտը (Ioseph Lighfoot):
Վախճ. 1890 թ.:

Զարբհանյան Գ., Ուսումնասիրությունք..., Վենետիկ, 1895, էջ 353-356:

-Նոր-Ջուղայում ծնվեց Ամենափրկչյան վանքի ատենադպիր, պատմաբան Հարություն Թաղևոսի Տեր-Հովհանյանը: Վախճ. 1871 թ. մարտի 26-ին:

Արտավազդ Արքեպիսկոպոս, Տաթև Տարեցույց 1927 թ., Հալեպ, 1926, էջ 217-223:

-Վենետիկում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Քերականութիւն ռուսերէն-հայերէն» աշխատությունը ("Российско-армянская грамматика"): 445 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Իգնատիոս Փափագյանի «Հաշուետումար պարզագիր»-ը: 72 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց պատերազմին» գիրքը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանը և ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու («Ընտիր մատենագիրք», հատ. Գ): 408 էջ:

-Թիֆլիսում, հրատարակվում է Մելքիսեդեկ քահանա Ղամազյանցի «Բան ի վերայ առման քաջակառոյց ամրոցին Երևանայ» ճառը: 16 էջ:

Ճառը կարդացվել է Թիֆլիսի Առաջնորդարանում, 1827 թ. հոկտեմբերի 9-ին:

-Թիֆլիսում հրատարակվում է Ներսիսյան դպրոցի սաների ստեղծագործությունների ժողովածուն «Երախայրիք Ներսիսեան դպրոցի» խորագրով (գիրք Ա, 54 էջ, գիրք Բ, 56 էջ):

Ա գիրքն ընդգրկում է աշակերտների և ուսուցիչների կրոնա-բարոյական բնույթի արձակ թարգմանությունները:

Բ գիրքը՝ դպրոցի 10 սաների 21 անուն բանաստեղծությունները, մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ:

Երկու գրքերն էլ հրատարակության է պատրաստել Հարություն Ալամդարյանը:

-Պետերբուրգում, գրաբար և ռուսերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է «Արձանագրութիւնք, որք վերաբերին առ հաստատութիւն հաշտութեանն ընդ Պարսկաստանի» փաստաթղթերի ժողովածուն: 10 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Թեոդորոս Խատամյանցի «Պատասխանիք առ անիրաւ գրպարտութիւնս իմաստակի ուրումն ընդդէմ նոր Քերականութեանն գրաբար լեզուիս հայոց» աշխատությունը: 107 էջ:

-Փարիզում, ֆրանսերեն-գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսեայ» պոեմը: Տեքստաբանական աշխատանքները, թարգմանությունն ու առաջաբանը՝ Հովհաննես Զոհրապյանի:

-Պոլսում վերահրատարակվում է Սիմեոն Երևանցու «Տօնացոյց»-ի Ա («Տօնք, պահք և ընթերցուածք») հատորը՝ 317 էջ, և Բ («Շարականք և տեղափոխութիւնք տօնից») հատորը՝ 227 էջ:

Նույնը՝ (երկու հատորները միասին)՝ 1834, 1835 և 1849 թթ.:

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է «Ի հերիսայն» երգիծաբանությունը, իսկ Եղիա Թովմաճանը՝ «Առ Հայաստան խրախոյս» բանաստեղծությունը:

«Տաղք Մխիթարյան վարդապետաց», Վենետիկ, հատ. Ա,Բ:

-Թիֆլիսում Հարություն Ալամդարյանը գրում է իր «Տաղաչափութիւն» և «Աղերս ան ամենօրինեալ Տիրամայրն» բանաստեղծությունները:

Հրատարակվել են 1884 թ. Պետերբուրգում, «Չափաբերականք» ժողովածուում:

1829

Հունվարի 16. Թել-Էրմեն գյուղում (Թուրքիա, Մերդինի գավառ) ծնվեց եկեղեցական գործիչ, եկեղեցու պատմաբան Պողոս եպիսկոպոս Էմմանուելյանը: Վախճ. 1904 թ. ապրիլի 18-ին, Կեսարիայում:

«Մշակ», 1889, № 142 («Հայ կաթոլիկների պատրիարքի ընտրությունը»):

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Բ, Կահիրե, 1937, էջ 1041-1043:

Հունվարի 30. Թեհրանում, անգլիացիների դրդմամբ, Ալլահ-յար խանի կողմից գրգռված պարսիկ ամբոխը զազանաբար սպանում է Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովին: Ծնվ. 1795 թ. հունվարի 4-ին, Մոսկվայում:

«Акты...», т. 7, стр. 671-675 (док. № 651-655). "А.С.Грибоедов, его жизнь и гибель в мемуарах современников", 1929.

Պարսամյան Վ., Ա.Ս.Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947:

Փետրվարի 8. Կալկաթայի հայերը նամակով դիմում են Ներսես Աշտարակեցուն և հույս հայտնում, որ գտնվելով Ռուսաստանի հովանավորության ներքո, Հայաստանը վերջապես ազատ կլինի ոչնչացման սպառնալիքներից և կկարողանա զարգացնել իր հոգևոր մշակույթը: Իր կողմից՝ հնդկահայությունը խոստանում է անել այն ամենը, ինչ հնարավոր է՝ նորանոր հայրենասեր սաներ և ժողովրդի ազատագրության պայքարին նվիրված անձնվեր գործիչներ աճեցնելու համար:

«Акты...», т. 7, стр. 266-268 (док. № 220).

Մարտի 15. Թիֆլիսում ծնվեց բանաստեղծ, երկար ժամանակ ժողովրդի կողմից երգվող «Դարեդար» երգի հեղինակ, ուսուցիչ Միքայել Ֆրիդունյանը: Վախճ. (?):

«Լուսն», 1903, № 6 (**Լ.Տիգրանյան**, Գերմանական Դորպատ համալսարանը և նորա հայ ուսանողությունը):

Մարտի 20. Դյեպում (Հւ. Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուան (Victor Langlois): Վախճ. 1869 թ. մայիսի 2-ին, Փարիզում:

«Բազմավեպ», 1869, օգոստոս («Կենսագրություն Վ. Լանգլուայի»):

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 219-230:

Ապրիլի 14. Կեսարիայում վախճանվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Ավետիս Եպիսկոպոս Մունճուսունցին: Ծնվ. 1770 թ. Պոլսում:

«Մասիս», 1886, № 3847:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 935:

Մայիսի 8. Վերսալում (Ֆրանսիա) վախճանվեց գրական-հասարակական գործիչ, բանասեր, թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն) Հովհաննես Զոհրապյանը (Զոհրայ): Ծնվ. 1756 թ. Պոլսում:

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 112-120:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 219:

Հուլիսի 20. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, Գևորգ Սողոմոնի Աքիմյանը: Վախճ. 1911 թ. ապրիլի 26-ին, իր ծննդավայրում:

Album Academicum, Dorpat, 1889, s. 387.

Օգոստոսի 3. Հրապարակվում է Անդրկովկասում ուսումնարաններ ստեղծելու և այդ ուսումնարաններում դասավանդման մեկ ընդհանուր համակարգ մտցնելու մասին կանոնադրությունը:

Ըստ այդ կանոնադրության, նախատեսվում էր Անդրկովկասում ունենալ մեկ գիմնազիա (Թիֆլիսում) և 20 գավառական ուսումնարաններ: Ուսումնարաններից 4-ը գործելու էին Հայկական մարզում (Երևանում, Նախիջևանում, Օրդուբադում և Կողբում):

Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 46 և հետո:

Սեպտեմբերի 26. Դորպատի (այժմ՝ Տարտու, Էստոնական ՄՍՀ) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի գլխավորած արշավախումբը (Ալեքսեյ Զորովենկո, Մատվեյ Չելպանով, Մուրադ Պողոսյան, Հովհաննես Այվազյան) թարգմանիչ Խաչատուր Աբովյանի հետ մեկտեղ սկսում է վերելքը դեպի Արարատի գագաթը: Գագաթին են հասնում միայն Պարրոտն ու Աբովյանը (սեպտեմբերի 27-ին) և նույն օրն էլ սկսում են վայրէջքը:

«Դիվան Խ.Աբովյանի», Երևան, 1940, էջ 222-244:

«Акты...», т. 7, стр. 503-504 (доку. № 458).

Հոկտեմբերի 15. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Հակոբ Տեր-Միքայելյանը: Վախճ. 1852 թ.:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Նոյեմբերի 2. Նոր Նախիջևանում ծնվեց հեղափոխական-դեմոկրատ, գրող, քննադատ, փիլիսոփա, հրապարակախոս Միքայել Ղազարի Նալբանդյանը: Վախճ. 1866 թ. մարտի 31-ին արքունավայրում՝ Սարատովի նահանգի Կամիշին գյուղում:

Աճյունը տեղափոխվում է Նոր Նախիջևան և նույն թվականի ապրիլի 14-ին թաղվում Երևանում:

Իր հասարակական գործունեության ընթացքում օգտագործել է «Ա.Ա.Ե.», «Ալֆոնսո Ռաթթի», «Բլումենթալ Ադոլֆ», «Խաչատրյան Սերովրե», «Ս.Շահբեգ», «Կոմս Էմմանուել», «Մանիկյան Սիմոն», «Պողոսյան Ծատուր», «Սառաֆյան Մարտիրոս», «Վարչամյան Սարգիս», «Տեր-Գրիգորյան Միքայել», «Փառախոտ Յուլակյան», «Ուստայանց», «Դարբինյան», «Գ.Յ.Պախալյան» կեղծանունները:

Ինձիկյան Ա., Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, 498 էջ:

Նալբանդյան Մ. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-4 (կազմեց և ծանոթագրեց Նշան Մուրադյան), Երևան, 1940-1949:

Հովհաննիսյան Աջ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Ա, Երևան, 1955, 598 էջ: Գիրք Բ, Անդ, 1956, 614 էջ:

«Գրական թերթ», 1967, № 13 («Մի առեղծվածային ազգանվան շուրջ»):

-Թիֆլիսում ծնվեց դրամատուրգ, թատերական գործիչ Միքայել Մովսեսի Տեր-Գրիգորյանը: Վախճ. 1869 թ. հոկտեմբերի 19-ին:

«Հանդես ամսօրյա», 1938, № 9 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»):

-Թիֆլիսում ծնվեց հայագետ, բանասեր Միքայել Մեսրոպի Միանսարյանը: Վախճ. 1880 թ. ապրիլի 5-ին:

«Արձագանք» 1891, № 4 («Միքայել Միանսարյան»):

-Պոլսում ծնվեց բանասեր, լրագրող, մշակութային գործիչ Հարություն Ֆրնտրգյանը: Վախճ. 1891 թ. փետրվարի 4-ին:

«Արևելք», 1891, № 2118,2120:

-Մոսկվայում հրատարակվում է Լազարյան ճեմարանի սաների չափածո և արձակ ստեղծագործությունների գրաբար ժողովածուն՝ «Մուգայք Արարատեան» խորագրով: Ժողովածուն հրատարակության է պատրաստել Միքայել Սալլանթյանը: 368 էջ:

Զետեղված են 46 սաների 68 անուն գործերը, գերազանցապես աշխարհիկ բովանդակությամբ:

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Փեշտիմալճյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի» աշխատությունը: 280 էջ:

Նույնը՝ 1835, 1845 թթ.:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Գրիգոր Փեշտիմալճյանի «Կրթություն քաղաքավարության» գիրքը: 142 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 407 էջ:

-Շուշիում հրատարակվում է Պողոս Ներսիսյան Ղարադաղցու «Համառոտութիւն հայկական քերականութեան» աշխատությունը: 130 էջ:

-Թիֆլիսում հրատարակվում է Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոեմը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանը Հակոբ Շահան-Ջրպետյանի: 110 էջ:

-Թիֆլիսում հրատարակվում է Գևորգ Արծրունու «Դարաստան իրատուց, քաղեալ ի գրոց իմաստասիրաց... ի վայելս մանկաց Հայաստանի» գիրքը: 217 էջ:

Նույնը՝ անփոփոխ՝ 1830 թ.:

Սկզբում զետեղված է. «Բան ժողովրդին առ վերձանողս» ոտանավորը, ուր հեղինակը կենսագրական բնույթի տեղեկություններ է հաղորդում:

-Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Հոգոն Գրովտիոսի «Ճշմարտութիւն քրիստոսական հաւատոյ» աշխատությունը: ԺԶ+286 էջ:

-Կալկաթայում, Մարդասիրական ճեմարանի հրատարակությամբ, լույս է տեսնում օրացույց՝ «Ցուցակ վասն ամի տեառն 1829» խորագիրը կրող: 100 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Վեցմատնյանի «Ստորագրություն կայսերանիստ քաղաքին Վիեննայի ու իրեն արվարձաններուն» գիրքը: 272 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Վրթանես Չալրիսյանի «Կրթություն գործնական հայկական գրոց բարբառո, ըստ յուրաքանչյուր կանոնաց նորոգ քերականության» աշխատությունը: 91 էջ:

Նույնը՝ 1837 թ., անփոփոխ:

-Վենետիկում, Հովսեփ Կապյուլետտիի՝ բնագրից կատարված լատիներեն թարգմանությունամբ և գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական առ համօրեն հայաստեռ ազինս, որոյ տեսչութին հաւատացաւ նմա ի տեառնէ» գործը: 182 էջ:

-Թիֆլիսում Հարություն Ալամդարյանը թարգմանում է Տորկվատո Տասսոյի «Ազատեալ Երուսաղեմից» մի հատված:

Թարգմանվել է IV Երգի «Ստորագրութին Արմիդեայ» հատվածը: Հրատարակվել է 1884 թ. Պետերբուրգում, Ալամդարյանի «Չափաբերականք» ժողովածուում:

1830

Տարեսկզբներ. Ցարական կառավարության կարգադրությունը գեներալ Պասկևիչին՝ Վրաստանում և Հայաստանում գավառական դպրոցներ բանալու մասին: Դպրոցների ֆինանսավորումը կառավարությունը վերցնում էր իր վրա:

«Акты...», т. I, стр. 63 (док. № 74).

Հունվարի 6. Սուլթան Մահմուդ II-ը հրատարակում է կաթոլիկ հայերին ներում շնորհող և նրանց իրենց նախկին բնակավայրերը վերադառնալ թույլատրող հրավարտակը (տե՛ս 1827 թ. դեկտեմբերի 27): Հայ կաթոլիկները պաշտոնապես ճանաչվում են ինքնուրույն և այսպիսով ավելի է խորացվում հայ ժողովրդի ազգային երկպառակությունը:

Հիշյալ հարցում զգալի դեր էր կատարում ֆրանսիական կառավարությունը, հանձին Պոլսում իր դեսպան, գեներալ Կլոդ-Անդրիան Սեբաստիանիի: Նույն թվականի հուլիսի 8-ին, Պիոս VIII պապի կոնդակի համաձայն, հայ կաթոլիկներին շնորհվում էր սեփական առաջնորդ (արքեպիսկոպոս) ունենալու իրավունք: Արքեպիսկոպոսը կրոնական և հասարակական բոլոր հարցերում հավասարազոր էր ճանաչվում հայ լուսավորչական եկեղեցու պատրիարքին:

Պերպերյան Ավ., Պատմութիւն Հայոց..., Պոլիս, 1871, էջ 212, 483:

Խաչկունց Դավիթ, Պատկերագարդ հայոց պատմություն, Պոլիս, 1910, էջ 238:

Փետրվարի 17. Գոգենլո գյուղում (Սիմֆերոպոլից արևմուտք, Ղրիմ) ծնվեց բանաստեղծ, մանկավարժ, Գևորգ Աստվածատուրի Դոդոխյանը: Վախճ. 1908 թ. հունիսի 8-ին, Սիմֆերոպոլում:

ԳԱԹ, Դոդոխյանի ֆոնդ, № 38:

Դոդոխյան Գևորգ, Երկեր, Թիֆլիս, 1939:

Փետրվարի 28. Պոլսում (Գում-Գաբու), իր գործունեությունն է սկսում հայկական երկսեռ դպրոցը՝ «Պեզճյան ուսումնարան» կամ «Պեզճյան մայր վարժարան» անվամբ: Վարժարանի ստեղծման պաշտոնական իրավունքը տրվել էր 1828 թ. փետրվարի 3-ին, առաջին տեսուչն էր Գրիգոր Փեշտիմալճյանը: Վարժարանը ծաղկուն ժամանակ ուներ 150 աշակերտ:

Վարժարանը գոյություն ուներ մինչև 1930 թ.: Հետագա մանրամասնությունները մեզ չհաջողվեց պարզել:

Ազատյան Թ., Հարյուրամյա հոբելյան Պեզճյան մայր վարժարանի, Պոլիս, 1930, 135 էջ:

Մարտի 12. Վենետիկում վախճանվեց բանասեր, աստվածաբան, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Օղուլլուխյանը: Ծնվ. 1742 թ., Տրապիզոնում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 219:

Օգոստոսի 18. Պոլսում ծնվեց հայագետ, բանասեր Գրիգորիս Մերճանճյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1848 թ. օգոստոսի 15-ից: Վախճ. 1902 թ. նոյեմբերի 11-ին, Պոլսում:

«Բազմավեպ», 1902, № 12 («Գրիգորիս Մերճանճյան»):

Հոկտեմբերի 17. Ջմյունիայում ծնվեց գրող, հրապարակախոս, գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից, անգլերենից՝ հայերեն) Մատթեոս Հովհաննեսի Մամուրյանը: Վախճ. 1901 թ. հունվարի 2-ին:

1871 թ. մինչև իր մահը, Ջմյունիայում խմբագրել է «Արևելյան մամուլ» ամսագիրը, ուր հանդես է եկել «Շահնուր» կեղծանունով: «Վ.» և «Վրոյր» կեղծանուններով հանդես է եկել «Մեղու», «Կիլիկիա», «Ծաղիկ» (Ջմյունիայի) պարբերականներում (1864-1867):

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 119-135, 281-287:

Ղազարյան Հ., Մատթեոս Մամուրյան, Երևան, 1961, 195 էջ:

Նոյեմբերի 7. Աշտարակում ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ, Դորպատի համալսարանավարտ Վահան Ասկարյանը: Վախճ. 1858 թ. ապրիլի 1-ին, Դորպատում (այժմ՝ Տարտու, Էստոնական ՍՍՀ):

«Լուսա», 1903, № 6 («Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողները»):

Նոյեմբերի 8. Նոր-Նախիջևանում ծնվեց նշանավոր բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հրապարակախոս Ռափայել Գաբրիելի Պատկանյանը: Վախճ. 1892 թ. օգոստոսի 22-ին:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Աշուղ Կարապետ», «Միքայել Վայելյան», «Գամառ-Քաթիպա», «Ախտամերկյան», «Սյուլյուկ», «Խամչի», «Պիզ», «Պալթա», «Փյունիկ», «Ճանկով Սամուկ», «Տամդա» կեղծանուններով:

ԳԱԹ, Ռափայել Պատկանյանի ֆոնդ, № 137:

Մուրադյան Հր., Ռափայել Պատկանյան, Երևան, 1956, 267 էջ:

Դեկտեմբերի 3. Նոր Նախիջևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Պետրոս Սիմոնի Սիմոնյանցը: Վախճ. 1911 թ. հունվարի 19-ին, Թիֆլիսում:

1863-1866 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Մեղու Հայաստանի» լրագիրը:

Թեղդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 350:

«Հանդես ամսօրյա», 1941, № 6-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

ԳԱԹ, Պետրոս Սիմոնյանցի ֆոնդ, № 147:

Դեկտեմբերի 20. Թիֆլիսում ծնվեց տպարանատեր-հրատարակիչ և գրական գործիչ (մասնագիտությամբ բժիշկ) Մարկիանոս Ռոտինյանցը: Վախճ. 1898 թ. դեկտեմբերի 31-ին:

«Մշակ», 1899, № 1, 3:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Դեկտեմբերի 26. Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանաստեղծ Համբարձում Փափազյանը: Վախճ. Թիֆլիսում:

"Album Academicum, Dorpat", 1889, s. 397.

«Լուում», 1903, № 5 («Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողությունը»):

-Զմյուռնիայում ծնվեց գրական-հասարակական գործիչ, պատմաբան, դրամատուրգ Մարկոս Ադաբեկյանը: Վախճ. 1908 թ. օգոստոսի 4-ին, Պոլսում:

1860-1863 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Կոունկ հայոց աշխարհին» ամսագիրը,

իսկ 1866-1867 թթ.՝ «Ծիլն Ավարայրի» ամսագիրը (Պոլսում):

«Հանդես ամսօրյա», 1908, № 1 («Զգալի կորուստներ»):

Պետրոսյան Հ., Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, էջ 23-25:

-Ագուլիսում ծնվեց (1830?) բարբառագետ, լեզվաբան Սարգիս Սարգսյանը: Վախճ. 1892 թ. մարտի 30-ին, Մոսկվայում:

«Արձագանք», 1892, № 42 («Սարգիս Սարգսյան»):

-Կերմիրում (Կեսարիայի շրջան) ծնվեց գրական-հասարակական գործիչ, լեզվագետ Ստեփան Դավթյանը: Վախճ. 1890 թ. Փարիզում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 1195:

- Ռուսերում (նաև՝ Ռուսչուկ, Բուլղարիա) վախճանվեց երգիծաբան Գրիգոր Մահտեսի Անուշյանը: Ծնվ. 1760 թ., Ագուլիս:
- Զարդարյան Հ.**, Հիշատակարան..., հատ. Ա, Պոլիս, 1933, էջ 5:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1914, էջ 170:
- Ծնվեց (1830 ?) դերասանուհի Կատարինե Եվանգուլյանը: Վախճ. 1895 թ. սեպտեմբերի 2-ին, Թիֆլիսում:
- «Արձագանք», 1896, № 9 («Կատարինե Եվանգուլյան»):
- Պոլսում (Պեշիկթաշ) ծնվեց բանաստեղծուհի, լրագրող Էլպիս Կեսարացյանը (Տողրամաճյան): Վախճ. 1911 թ., Ալեքսանդրիայում (Եգիպտոս):
- 1862 թ. օգոստոսի 1-ից մինչև 1863 թ. փետրվարի 1-ը, Պոլսում խմբագրել է «Կիրթառ» հանդեսը, ուր հոդվածներ է գետեղել «Է.Կ.Տ. Հայկուհի» կեղծանունով:
- Պողոսյան Ե.**, Հայ խմբագրուհիներ, Վիեննա, 1953, 64 էջ:
- Չիկոսանլու գյուղում (այժմ՝ Ազատավան, Արտաշատի շրջան, ՀՍՍՀ) ծնվեց աշուղ Սարդար օղլին (Ավետիս): Վախճ. 1898 թ.:
- «Հայ աշուղներ» (կազմեց Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյանի), Երևան, 1937, էջ 178-179, 513:
- Ախալցխայում իր գործունեությունն է սկսում տեղական հոգևոր ուսումնարանը, որն իր հիմնադրի՝ Կարապետ եպիսկոպոսի անունով կոչվում էր «Կարապետյան ուսումնարան»: Վերջինս գոյություն ունեցավ մինչև 1930-ական թթ. և ծաղկուն ժամանակ ուներ 300 աշակերտ:
- Մանթրոսյան Մ.**, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 253:
- Շուշիում սկսում է գործել Առաքել սարկավազի մասնավոր հայկական դպրոցը: Դպրոցն իր գործունեությունը դադարեցրեց 1834 թ.: Ծաղկուն ժամանակ ուներ 50 աշակերտ:
- Երիցյան Ալ.**, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 273:
Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 279:
- Շուշիում իր գործունեությունն է սկսում Հովհաննես Հարությունյանի դպրոցը, որտեղ սովորում էին հայերեն գրել և կարդալ: Դպրոցը գործեց մինչև 1834 թ.: Ծաղկուն ժամանակ ուներ 40 աշակերտ:
- Երիցյան Ալ.**, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 273:
Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 279:

-Թիֆլիսում (Հավլաբար) սարկավագ Վարդան Հարությունյանի հայկական մասնավոր դպրոցը սկսում է իր գործունեությունը, որը ծաղկուն ժամանակ ուներ 40 աշակերտ: Դպրոցը փակվեց իշխանությունների կարգադրությամբ, 1834 թ.:

Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 249:

-Կալկաթայում հրատարակվում է Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազնեան լեզուի» աշխատությունը: 476 էջ:

Հանդիսանում է 1779 թ. Վենետիկում հրատարակված Միքայել Չամչյանի համանուն գրքի վերահրատարակությունը, որը համառոտել և տպագրության է պատրաստել Հովհաննես Ավդալյանը:

-Կալկաթայում աշխարհաբար հրատարակվում է Սկրտում Կարապետյանի «Մարգարան մանկանց, որ է այբուբենարան ինչ համառոտ, ճոխացուցեալ բարոյական ընտիր օրինակօք» դասագիրքը: 128 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է «Սիրակարկաջ, որ է հանդիսարան հայերեն, պարսկերեն և հնդստանեցերեն երգոց» ժողովածուն: Այն հրատարակության է պատրաստել Ստեփաննոս Ջնթլումյան-Ավետյանցը: 128 էջ:

Զետեղված են 70 հայերեն, 33 պարսկերեն (հայատառ) և 59 հնդկական (հայատառ) բանաստեղծություններ, որոնք ժամանակին երգվել են: Այստեղ հրատարակվել է Թաղիադյանի «Մեսրոպյան աշնան առաւօտ» բանաստեղծությունը, որը հեղինակի առաջին տպագիր ստեղծագործությունն է (էջ 40) և Նաղաշ Հովնաթանի «Վրաստանայ զօզալներն» բանաստեղծությունը (էջ 69-70): Մյուսները մեզ անհայտ հեղինակների գործեր են:

-Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի՝ անգլերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ռիջինալդ Հեբերի «Պաղեստին» պոեմը: Տրված են հայերեն և անգլերեն համատեղ տեքստերը: ԻԹ+76 էջ:

-Կալկաթայում, Թադևոս Ավետումյանցի՝ անգլերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Բեռնարդեն դը Սեն-Պիերի «Նավակոծություն կամ Պալոս և Վիրգինեա» վիպակը: 194 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Հովհաննես Ավդալյանի «Վերջին աւուրք բարեյիշատակ տիկին Մերջանին Ստեփաննոսեայ» գրքույկը: 8 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Դիցաբանութիւն» աշխատութիւնը: 161 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Հովհաննես Արճիշեցու «Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սրբոյ պատարագի, արտահանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անձնացեայց եպիսկոպոսի և Ներսիսի Լամբրոնացոյ, վերատեսչին Տարսնի» աշխատութիւնը: Հրատարակության է պատրաստել Հովհաննես Ավդայանը: 166 էջ:

Վերջում գետեղված է հատորի տպագրությանը հովանավորած Ստեփաննոսյան Մերջան տիկնոջ կենսագրութիւնը:

-Վենետիկում, Մանվել Չախչախյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանութեամբ, հրատարակվում է Հռոմի Սինդրոնիոսի «Եղերերգութիւնք ի չարչարանս Քրիստոսի» պոեմը: 163 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հարություն Հինդոլու (Կուտինացի) «Քերականութիւն գերմանացի բարբառոյ» աշխատութիւնը: 292 էջ:

Վերջում գետեղված են. «Զրուցատրութիւնք» գերմաներեն. հայերեն, տաճկերեն լեզուներով խոսելու և «Բառգիրք» նշված երեք լեզուներով:

-Վենետիկում հրատարակվում է «Սեբերիանոսի Եմեսացոյ Գաբաղացոց եպիսկոպոսի ճառք» ժողովածուն: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրութիւնները՝ Սկրտիչ Ավգերյանի («Մատենագրութիւնք նախնեաց»): 221 էջ:

Պարունակում է Սեբերիանոսի կրոնա-աստվածաբանական բնույթի 15 ճառերը:

-Վենետիկում հրատարակվում է «Թատերախաղք տարւոյս 1830, ի նորընծայարանի վանաց Ս. Ղազարու» գրքուկը: 8 էջ:

Ղազիկյանը գրում է. «Ցուցակն է հիշված տարվոյն խաղացած խաղերուն»:

Ղազիկյան Ա., Հայկական մատենագիտութիւն, հատ. Ա, էջ 738:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Մեսրոպ Աղաչադյանի «Համառոտ արվեստաբանութիւն և նորանոր հնարք» աշխատութիւնը: 244 էջ:

Կենցաղային բնույթի այլևայլ խորհուրդներ է տալիս ընթերցողներին (նոր տիպի պտուղ աճեցնել, վարդերի տեսակներ ստանալ, ճարպից մոմ պատրաստել, ներկերը և նրանց ստացման ձևերը և այլն), հաղորդելով նաև պատմա-բանասիրական տեղեկութիւններ:

-Վենետիկում հրատարակվում է Բարսեղ Կեսարացու «Ճառք վասն վեցօրեայ արարչութեան» գիրքը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու («Մատենագրութիւնք նախնեաց»): 201 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոյ ի նախնեաց Անի քաղաքին» ուղեգրությունը: 424 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ներսես Շնորհալու ստեղծագործությունների ժողովածուն «Չափաբերականք» խորագրով («Ընտիր մատենագիրք»): 620 էջ:

Զետեղված է 87 անուն գործ:

-Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ հին հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է հույն փիլիսոփա Թեոփրաստոսի «Նկարագիրք» աշխատությունը: 120 էջ:

-Մոսկվայում տասներկու լեզուներով հրատարակվում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ը: 116 էջ:

Զետեղված են հայերեն, ռուսերեն, հունարեն, վրացերեն, սերբերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, լատիներեն, իտալերեն, հունգարերեն և թուրքերեն թարգմանությունները:

-Մոսկվայում, բողոքականների ջանքերով, աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Երեք խոսակցությունք մին քահանայի մին աշխարհական մարդո հետն» գրքույկը: 54 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1840 թ.:

Նույնը 1844 թ. Չմյուռնիայում: 94 էջ:

-Մոսկվայում աշխարհաբար թարգմանությամբ հրատարակվում է «Ավետարանի գորություն, կամ մին արաբ ծառայի պատմություն» գրքույկը: 47 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1840 թ.:

-Մոսկվայում հրատարակվում է «Կարգադրութիւնք կայսերական հովանաւորութեամբ պաշտպանեալ հայկական ճեմարանին Արևելեան լեզուաց, կառուցելոյ ի Մոսկով քաղաքի» փաստաթղթերի ժողովածուն: 82 էջ:

- Վերջում զետեղված են** ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն, հայերեն, հունարեն, թուրքերեն (արաբական) և վրացերեն տառատեսակները:
- Պոլսում վերահրատարակվում է «Ձայնաքաղ շարական»: 562 էջ:
 - Շուշիում հրատարակվում է Հովսեփ Արցախեցու «Համառոտ բառգիրք ի գրաբարե յաշխարհաբառն, ի պէտս համբակաց» գիրքը: 397 էջ:
 - Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է «Ի մահ սոխակին, եղերերգ հովուի» պոեմը:
 - «Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Ա:

1 8 3 1

Փետրվարի 29. Թիֆլիսում ծնվեց բնագետ, բանասեր, մանկավարժ և հասարակական գործիչ Գաբրիել Խատիսյանը: Վախճ. 1898 թ.:

«Լուսն», 1903, № 5 («Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողները»):
Մ.Նալբանդյան, Անտիպ երկեր (խմբ. և ծան. Աշոտ Հովհաննիսյանի), Երևան, 1935, էջ 733-734:

Տարեկգրներ. Երևանում ծնվեց բանասեր, գրական գործիչ Գևորգ Նազարի Գեղամյանը: Վախճ. 1858 թ. փետրվարի 16-ին, Մոսկվայում:

«Հյուսիսափայլ», 1858, № 2 («Մահացուցակ»):

Մեպտեմբերի 10. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանաստեղծ Գևորգ Միրիմանյանը (ըստ այլ աղբյուրների՝ ծնվել է 1832-ին: Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2, 1962, էջ 307): Վախճ. 1853 թ. փետրվարի 10-ին:

Album Academicum, Dorpat, 1889, s. 395.
 «Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Մեպտեմբեր. Նոր Ջուղայում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հայագետ, բանասեր Հովհաննես Սարգսյանը: Վախճ. 1904 թ. փետրվարի 16-ին Կալկաթայում:

ԳԱԹ, Թորոս Ազատյանի ֆոնդ (Մեթյանի 1904 թ. փետրվարի 9/22-ի գրած նամակը Մկրյանին):

Հոկտեմբերի 22. Պոլսում (Խասգյուղ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Հարություն Գրիգորի Սըվաճյանը: Վախճ. 1874 թ. ապրիլի 22-ին:

1856-1874 թթ. Պոլսում խմբագրել է «Մեղու» կիսամյա հանդեսը, ուր հոդվածներ է գրել «Մեչուխեչա» կեղծանունով:

«Մասիս», 1874, № 1523-1525: **Գասպարյան Գ.**, Հարություն Սվաճյան, Երևան, 1958, էջ 147:
Ասատրյան Աս., Հարություն Սըվաճյան, Երևան, 1967, Երևան, 1967, 282 էջ:

Հոկտեմբերի 29. Մինիստրների կոմիտեի (իսպ' Լուսավորության մինիստրություն – Ս.Շ.) որոշումը՝ Թիֆլիսի գիմնազիայում հայոց լեզվի առարկայի դասավանդում մտցնելու մասին (տե՛ս 1802 թ. սեպտեմբերի 22):

«Акты...», т. VIII, стр. 96.

Դեկտեմբերի 6. Պոլսում ծնվեց բանասեր, հայագետ Սուքիաս Պարոնյանը: Վախճ. 1903 թ. սեպտեմբերի 6-ին, Լոնդոնում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:
«Լուսնա», 1903, № 5 («Մահգույժ»):

-Լոսքվիցում (Հս. Իտալիա) ծնվեց գերմանացի հայագետ Հերման Ալֆրեդ Գուտշմիտը (Hermann Alfred Gutschmid): Վախճ. 1887 թ. փետրվարի 18-ին, Թյուրինգենում (Հար. Գերմանիա):

Զարբհանայան Գ., ՌԻսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 315-320:

-Պոլսում ծնվեց արձակագիր Հովհաննես Մարգարյանը: Վախճ. 1877 թ.:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., հատ. Բ, Պոլիս, 1933, էջ 7-11:

-Պոլսում ծնվեց թատերական գործիչ, դրամատուրգ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Գարեգին Գևորգի Չափրաստճյանը: Վախճ. 1862 թ.:

Ստեփանյան Գ., ՌԻրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. 1, Երևան, 1962, էջ 157-163:

-Պոլսում (Բերա) ծնվեց դերասանուհի Մարիամ Գումբասյանը (Ծաղիկյան): Վախճ. 1909 թ.:

Գումբասյան Ս., Համառոտ կենսագրություն տիկին Մարիամ Գումբասյանի (ծնյալ Ծաղիկյան), Պոլիս, 1909:

-Զմյուռնիայում ծնվեց գրող, գրաբարագետ Սարգիս Պալապանյանը: Վախճ. 1923 թ. ապրիլի 17-ին, Սթենիայում:

Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1925, էջ 373:

-Մունձուսուն գյուղում (Կեսարիա, Թուրքիա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Մաթևոս Մ. Այվատյանը: Վախճ. 1876 թ. դեկտեմբերի 15-ին, Պոլսում:

1869-1872 թթ. Պոլսում հրատարակել է «Արարատ» շաբաթաթերթը:

«Մանգումիե»-ում և «Օրագրում» հրատարակում էր հայագիտական-բանասիրական բնույթի հոդվածներ՝ «Ա», «Զգոն», «Ատոմ», «Գնել», «Զարեհ», «Զ», «Ապահ», «Կրկտիկն», «Քահանա մը» կեղծանուններով:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 2038-2040:
«Մասիս», 1872, № 1212, 1873, № 1449, 1875, № 1683:

-Նոր Զուղայում (Պարսկաստան) ծնվեց պետական գործիչ, հրապարակագիր Հովսեփ Մելքումյանցը (Մելքոն խան): Վախճ. 1908 թ., Շվեյցարիայում:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հովսեփ Մելքումյան»):

-Վենետիկում ծնվեց իտալացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ իտալերեն) Էմիլիո Տեզան: Վախճ. 1912 թ. մարտի 30-ին, Պադուայում (Հս. Իտալիա):

«Բազմավեպ», 1912, № 3 («Էմիլիո Տեզա»):

-Պարտիզակում ծնվեց հայագետ, բանասեր Հովհաննես քահանա Մկրյանը: Վախճ. 1909 թ. սեպտեմբերի 14-ին, Պոլսում (Բերա):

«Բազմավեպ», 1909, № 123 («Հովհ. քահանա Մկրյան»):
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1910, էջ 266, 1911, էջ 366:

-Տրապիզոն մեկնելու ճանապարհին անհայտացավ մեմուարիստ Հարություն Արարատյանը (Артемий Апаратский): Ծնվ. 1774 թ. ապրիլի 20-ին, Վաղարշապատում:

«Հայ նոր գրականության պատմություն», հատ. Ա, Երևան, 1962, էջ 216-235 («Հարություն Արարատյան»):

-Վերին Խոյզան գյուղում (Փերիայի նահանգ, Պարսկաստան) ծնվեց աշուղ Տեր Վրթանեսը (Վրթանես Առաքելի Ամիրյան):

Մահվան ժամանակի ու տեղի վերաբերյալ մանրամասնություններ մեզ չհաջողվեց գտնել:

Մինասյան Լ., Փերիայի հայ աշուղները, Թեհրան, 1964, էջ 157:

-Թիֆլիսում իր գոյությունն է սկսում քահանա Դանիել Ստեփանյանի հայկական դպրոցը: Դպրոցը գործում է մինչև 50-ական թթ. վերջերը:

"Отчет... о действиях и состояниях нерусских школ", СПб, 1896, стр. 8.

-Ախալցխայում, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Եփրեմ Սեթյանի նախաձեռնությամբ, ստեղծվում է հայկական դպրոց, որը ծաղկուն ժամանակ ուներ շուրջ 60 աշակերտ: Դպրոցը փակվում է 1844 թ.:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

-Պոլսում, Անանիա Ճելայանի նախաձեռնությամբ, հիմնվում է հայկական դպրոց, որն իր ծաղկուն ժամանակ ուներ 174 աշակերտ: Դպրոցը դադարում է գործելուց 1870 թ.:

Սարգիսյան Բ., Երկուհարյուրամյա կրթական գործունեություն Վենետիկի Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1936, էջ 48-57:

-Թելավում իր գոյությունն է սկսում տեղի հայ հոգևորականության ձեռքով ղեկավարվող դպրոցը, որտեղ սովորեցնում էին հայերեն, վրացերեն և հաշվապահություն: Դպրոցը հարատևեց մինչև 1834 թ.:

Երիցյան Ալ., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 273:

Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 259:

-Մոսկվայում հրատարակվում է Միքայել Սալլանթյանի «Կրօնագիտութիւն քրիստոնէական, ըստ ուղղափառ դաւանութեան առաքելական եկեղեցւոյ լուսաւորչակրօն հայոց» աշխատությունը: 302 էջ:

-Մոսկվայում, բողոքական քարոզիչները գրաբար և աշխարհաբար համատեղ տեքստերով հրատարակում են «Ս. ավետարան ըստ Մատթեոսի» և «Համառոտ քննություն քրիստոնէական հավատո և մահմեդական կրոնի» գրքերը:

-Մոսկվայում հրատարակվում է Միմեոն Սուլթանշահյանցի «Գաղափար հայկական վայելչագրութեան» ալբոմը: 16 էջ:

-Հաղպատում Հարություն Ալամդարյանը գրում է «Վարդակորոյս», «Կոկովանք վարդի», «Դաւ երևակայութեան» և «Գարուն» բանաստեղծությունները:

Հրատարակվել է 1884 թ. Պետերբուրգում՝ Ալամդարյանի «Չափաբերականք» ժողովածուում:

1832

Հունվարի 14. Երևանում իր գոյությունն է սկսում գավառական երկդասյա արական դպրոցը, որն սկզբում ուներ 37 աշակերտ (հետագայում՝ 94): Դպրոցի բացման նախապատրաստական աշխատանքները սկսվել էին 1831 թ. աշնանից: Այստեղ, 1843-1848 թթ. տեսչի պաշտոնում աշխատել է Խաչատուր Աբովյանը: Երևանի գավառական դպրոցը, որոշ ընդհատումներով, գոյություն ունեցավ մինչև 1868 թ.:

«Սովետական մանկավարժ», 1959, № 9 («Երևանի դպրոցները 1828-ից մինչև 80-ական թթ.»):

Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 72-77:

Փետրվարի 13. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Փիրղուլ Նազարբեկյանը: Վախճ. 1861 թ., Դորպատ (այժմ՝ Տարտու, Էստոնական ՍՍՀ) քաղաքում:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Մարտի 10. Զմյուռնիայում ծնվեց թարգմանիչ (ֆրանսերենից-հայերեն), հրատարակիչ Հարություն Տետեյանը: Վախճ. 1868 թ. դեկտեմբերի 25-ին:

1853-1856 թթ., իր Սարգիս և Կարապետ եղբայրների հետ, Զմյուռնիայում խմբագրել է «Արփի Արարատյան» ամսագիրը:

Զարդարյան Հ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 49:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 136:

Հուլիսի 4. Փարիզում վախճանվեց ֆրանսիացի հայագետ Անտուան-ժան Սեն-Մարտենը (Antoine-Jean Saint-Martin): Ծնվ. 1791 թ. հունվարի 17-ին:

«Լուսնա», 1902, № 7 («Մոռացված յոթանասունամյակ մը»):

Օգոստոսի 16. Պոլսում ծնվեց դրամատուրգ, բանաստեղծ Սրապիոն Հեքիմյանը: Վախճ. 1892 թ. մարտի 7-ին:

«Արևելք», 1892, № 2437 («Սրապիոն էֆ. Հեքիմյան»):

ԳԱԹ, Ս. Հեքիմյանի ֆոնդ:

Հոկտեմբերի 1. Պոլսում (Բերա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, դրամատուրգ, բանաստեղծ, թարգմանիչ (ֆրանսերենից-հայերեն) Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ): (Ըստ այլ աղբյուրների՝ ծնվել է 1831-ին: Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2, 1962, էջ 421): Վախճ. 1892 թ. նոյեմբերի 4-ին:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

«Հանդես ամսօրյա», 1929, № 8-9 («Ծանոթությունք Սթամպոլոս պատմության»):

Դեկտեմբերի 28. Զմյուռնիայում ծնվեց բանասեր, բանահավաք Նիկողայոս Ավգերյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1854 թ. դեկտեմբերի 24-ից: Վախճ. 1907 թ. մայիսի 26-ին:

«Հանդես ամսօրյա», 1907, № 7 («Կենսագրական»):

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Միքայել Առանձար Մարգարյանը: Վախճ. 1893 թ. ապրիլի 22-ին, Թեհրանում:

«Ս. Առանձար» ստորագրությամբ հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

1855-1856 թթ. Պոլսում խմբագրել է «Աստղիկ արևելյան» ամսաթերթը:

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, մասն Բ, Պոլիս, 1893, էջ 218-221:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 627:

-Պոլսում ծնվեց հայ եկեղեցու պատմաբան Սահակ Տեր-Սարգսյանը: Վախճ. 1909 թ. սեպտեմբերի 22-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1910, էջ 80:

-Նոր Նախիջևանում ծնվեց հասարակական գործիչ, թարգմանիչ, թատերագիր Անանիա Պողոսի (Պավելի) Սուլթանշահը: Վախճ. 1896 թ. Ղզլարում:

Մ.Նալբանդյան, Անտիպ երկեր (խմբ. և ծանոթ. Աշոտ Հովհաննիսյանի), Երևան, 1935, էջ 768-769:

-Խանաձախ գյուղում (Շուշու գավառ) ծնվեց պատմաբան, բանասեր, էջմիածնի միաբանության անդամ եպիսկոպոս Սակար Գրիգորի Բարխուդարյանը: Վախճ. 1906 թ. փետրվարի 6-ին, էջմիածնում:

«Սրարատ», 1906, № 2 («Սակար եպիսկոպոս Բարխուդարյան»):
ԳԱԹ, Սակար Բարխուդարյանի ֆոնդ:

-Պոլսում (Էյուբ) հիմնվում է չորսդասյա երկսեռ Պեզճյան դպրոցը: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1905 թ.:

«Տարեցույց ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1905, էջ 329, 1909, էջ 67:

-Պոլսում (Գանլը-Քիլիսե), Հարություն Պեզճյանի օժանդակությամբ, հիմնվում է ազգային վարժարան, որը կրում էր «Ս. Առաքելոց» անունը: Այստեղ աշակերտել են Կարապետ Ութուջյանը, Բարունակ Ֆերուհիանը և ուրիշներ: Վարժարանը գոյություն ունեցավ մինչև 1849 թ.:

«Հանդես ամսօրյա», 1912, № 8 («Տեղագրական»):

-Թիֆլիսում (Հավլաբար) հայ երեխաների համար բացվում է քահանա Տեր-Նիկողոսյանի մասնավոր դպրոցը: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1834 թ.:

"Отчет... о действиях и состояниях нерусских школ", СПб, 1896, стр. 9.

-Վենետիկում Եղիա Թովմաճանի՝ հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Պլուտարքոսի «Զուգակշիռ»-ի առաջին հատորը: 580 էջ:

Հրատարակությունը շարունակվում է մինչև 1834 թ., որի ընթացքում լույս է տեսնում վեց հատոր: Հատորներում զետեղված են հունա-հռոմեական 48 գործիչների բնութագրականները հետևյալ կարգով.

Հատոր Ա. Թեգեոս, Հռոմուլոս, Լիկուրգոս, Նումաս, Սողոն, Պոպոդիկոդաս, Թեմիստոկլես, Կաիմլլոս:

Հատոր Բ (1833, 672 էջ). Պերիկլես, Փարիոս, Մաքսիմիոս, Ակղիբիոդես, Կորիոդանոս, Տիմոկրատոս, Եմիլիոս, Պավոդոս, Պեդոպիդես, Մարկեդոդոս, Փիլոպիմեն, Տիտոս, Փլամինոս:

Հատոր Գ (1833, 712 էջ). Արիստիդես, Մարկոս Կատովն, Պյուռոնոս, Գայոս Մարիոս, Լյուսանդրոս, Սյուդոդոս, Կիմոն, Լուկուդոդոս, Սերտովրիոս, Եվմենես:

Հատոր Դ (1834, 561 էջ). Նիկիաս, Մարկոս Կրասոս, Ագեսիդայոս, Պոմպեոս, Փոկիոն, Կատովն կրտսեր:

Հատոր Ե (1834, 686 էջ). Ադեքսանդրոս, Հուլիոս Կեսար, Ագիս և Կղեմենես, Տիբերիոս և Գայոս, Դեմոսթենես, Կիկերոն, Արատոս:

Հատոր Զ (1834, 648 էջ). Դեմետրիոս, Անտոնիոս, Դիոն, Բրուտոս, Արտաշես, Գալբաս, Օթոն:

-Վենետիկում հրատարակվում է «Փալատոսի Բիզանդացոյ պատմութիւն հայոց ի չորս դարութիւնս»-ը («Մատենագրութիւնք նախնեաց»): 295 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ջենոբ Գլակի «Պատմութիւն Տարօնոյ, զոր թարգմանեաց Ջենոբ Ասորի» գիրքը («Մատենագրութիւնք նախնեաց»): 52 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հովհաննես Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը («Մատենագրութիւնք նախնեաց»): 64 էջ:

Տպակից է նախորդ աշխատությանը:

-Վենետիկում հրատարակվում է Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն»-ը («Մատենագրութիւնք նախնեաց»): 14+150 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Բժշկարան անուամբն Աստուծոյ՝ միայն վասն երեք ազգ ջերմանցն. արարեալ Մխիթարայ իմաստուն բժշկի, որ ի Հեր քաղաքէ ծննդեամբ, և վարժեալ իմաստութեամբն հելլենացոց, հայոց, արաբացոց և պարսից, օգնականութեամբն Աստուծոյ»:

-Վենետիկում, Եղիա Թովմաճյանի՝ իտալերեն բնագրից կատարված թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Մարկոս Հերոնիմոս Վիտայի «Քրիստոսական» դյուցազներգությունը: 429 էջ:

Նույնը՝ անփոփոխ 1877 թ.:

-Վենետիկում հրատարակվում է Ղուկաս Ինճիճյանի «Վարք սրբոց ծաղկաքաղ հաւաքեալ» ժողովածուն: 348 էջ:

Նույնը՝ 1861, 1896, 1921 թթ:

Ջենեղված են 48 կրոնական գործիչների կենսագրականներ:

-Վենետիկում հրատարակվում է Եփրեմ Սեթյանի «Արիեստ ճարտասանութեան» աշխատությունը: 334 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Պողոս Լազարովիչի «Ստորագրութիւն Կալկաթա քաղաքի» գրքույկը: 56 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Ղազարոս Լազարյանի «Նկարագիր գաղթականութեան հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան» աշխատությունը: 104 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Հովսեփ Տեր-Հովակիմյան Օրբելու «Համառոտութիւն սրբազան պատմութեան, հանդերձ համառոտ բառարանիւ ի հայ լեզուէ ի ռուս, վասն բառից նմա պարունակելոց» գիրքը: 176 էջ:

-Վիեննայում հրատարակվում է դեռևս XII դարում հունարենից թարգմանված և 1737 թ. Պոլսում հրատարակված՝ Կյուրեղ Երուսաղեմցու «Կոչումն ընծայութեան» գիրքը: 428 էջ:

-Կալկաթայում խմորատիպ հրատարակությամբ լույս է տեսնում «Լեյլի» կատակերգությունը: Հինգ գործողություն: 122 էջ:

Վ.Թերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 459:

-Կալկաթայում հրատարակվում է Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիա քաղաքի» պոեմը: 216 էջ:

-Պոլսում Գևորգ Գրիգորյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Լրո գիր մեծի տերությանն օսմանյան» շաբաթաթերթը: Իր գոյությունը շարունակում է մինչև 1840 թ., ապա հրատարակվում այլ անուններով:

Առաջին համարն ունի № 12 նշումը, որովհետև շաբաթաթերթը պաշտոնապես համարվում էր թուրքական «Թագվիմ վագայի» թերթի (որը մինչ այդ հրատարակել էր 11 համար) հայերեն տարբերակը:

-Պոլսում վերահրատարակվում է «Նարեկ, գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հռետորի» գիրքը: 439 էջ:

«Մատեան ողբերգութեան»-ից բացի գրքում զետեղված են «Գրիգոր Նարեկացոյ՝ ներբողեան առ սուրբ Աստուածածինն», «Համառոտութիւն աղօթից Մխիթարայ Գոշի ... ասացեալ ի սուրբ պատարագն», «Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան ի Գրիգորի Նարեկացին»:

-Շուշիում, բողոքական քարոզիչների և նրանց հայ համախոհների ջանքերով, թարգմանվում են հետևյալ թարգմանական գրքույկները, աշխարհաբար. «Ժամանակի վերջն»

(26 էջ. Բ տպագրությունը՝ Մոսկվա, 1840), «Շատ հարկավոր հարցմունքներ» (42 էջ. Բ տպագրությունը՝ Մոսկվա, 1840), «Կարճառոտ աղոթքներ» (74 էջ. Բ տպագրությունը՝ Մոսկվա, 1840), «Տասն և վեց կարճառոտ քարոզներ» (Բ տպագրությունը՝ Մոսկվա, 1840):

Վերջին երկու գրքույկների տիտղոսաթերթերում հրատարակության տարեթիվը նշված է 1822, սակայն ապացուցված է, որ վերջիններս հրատարակվել են 1832 թ. (տե՛ս **Դավթյան Հ.**, Հայ գիրքը 1801-1850 թթ. (մատենագիտություն), Երևան, 1967, էջ 106-107):

1833

Հունվարի 5. Լարվիկում (Նորվեգիա) ծնվեց հայազետ Մոֆուս Ալեքսանդրի Բուզգեն (Sophus Bugge): Վախճ. 1907 թ. հունիսի 26-ին, Քրիստիանայում (Նորվեգիա):

«Հանդես ամսօրյա», 1907, № 10 (Մոֆուս Բուզգե):
«Մշակ», 1907, № 128 («Մոֆուս Բուզգե»):

Փետրվարի 14. Տրապիզոնում ծնվեց հայ երաժշտության տեսաբան, հայազետ, թարգմանիչ (լատիներենից՝ գրաբար) Իզնատիոս Կյուրեղյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1854 թ. հունվարի 17-ից, արքահայր (VI) 1876 թ. օգոստոսի 2-ից: Վախճ. 1921 թ. դեկտեմբերի 1-ին, Ջենոնում (Հս. Իտալիա):

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

Մարտի 10. Փորադաշտ գյուղում (Հին Նախիջևանի գավառ) ծնվեց հայազետ-բանասեր, Էջմիածնի միաբանության անդամ Մեսրոպ արքեպիսկոպոս Աբրահամի Սմբատյանը: Վախճ. 1911 թ. փետրվարի 9-ին, Երուսաղեմում:

«Արարատ», 1911, № 2 («Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց»):
«Նկարագիր Շամախույ Թեմի», Թիֆլիս, 1896 թ. («Ցուցակ ծառայությանց» բաժինը):
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 351:

Մարտի 20. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Նիկողայոս Շարոյանը: Վախճ. 1884 թ.:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Մայիսի 4. Նոր-Նախիջևանում ծնվեց բանաստեղծ-թարգմանիչ, հայազետ, բանասեր, պրոֆ. Քերովբե Պետրոսի Պատկանյանը: Վախճ. 1889 թ. ապրիլի 2-ին, Պետերբուրգում:

«Արձագանք», 1889, № 13: («Քերովբե Պատկանյան»):
«Բազմավեպ», 1902, № 4 («Քերովբե Պատկանյան»):

Հունիսի 20. Վենետիկում վախճանվեց բանասեր, բանաստեղծ լրագրող-խմբագիր, աշխարհագրագետ, պատմաբան Ղուկաս Ինճիճյանը: Ծնվ. 1758 թ. Պոլսում, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1779 թ.:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 219:

Հոկտեմբերի 21. Արմաշում (Թուրքիա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Աբրահամ Մուրադի Մուրադյանը: Վախճ. 1903 թ. սեպտեմբերին, Այ-Ստեֆանոյում (Կ.Պոլիս):

1850-1853 թթ. Նիկոմեդիայում հրատարակել է «Հայրենասեր» լրագիրը:

1860-1863 թթ. Փարիզում հրատարակել է «Փարիզ» շաբաթաթերթը:

1863-1872 թթ. Հովհաննես Հովույանի հետ Պոլսում խմբագրել է «Մեղու» հանդեսը:

1865 թ. մարտից մինչև տարեվերջ՝ Կահիրեում հրատարակել է «Արմավենի» կիսամսյա լրագիրը:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 140:

Հոկտեմբերի 24. Թիֆլիսում վախճանվեց մանկավարժ, բանաստեղծ, գրական-մշակութային գործիչ Հովհաննես Մարտիրոսի Ոսկերչյանը (Վաղարշապատցի): Ծնվ. 1761 թ. Էջմիածնում:

Արարատյան Առաքել, Համառոտ վարք և գրաւոր գործք Յովհաննու Մարտիրոսեան Ոսկերչյանց Վաղարշապատեցոյ, Թիֆլիս, 1859, 77 էջ:

Նոյեմբերի 13. Լանկայում (Թուրքիա) ծնվեց աստվածաբան, տպարանատեր-հրատարակիչ Հակոբ Մատթևոսյանը: Վախճ. 1906 թ. հունիսի 22-ին, Պոլսում:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 116:

-Զմյուռնիայում ծնվեց գրական-հասարակական գործիչ Գարեգին Բաբազյանը: Վախճ. (?):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, Պոլիս, էջ 670:

-Պոլսում (Սամաթիա) ծնվեց արձակագիր, հրապարակախոս, խմբագիր-լրագրող Օգսեն Խոճասարյանը: Վախճ. 1878 թ. ապրիլի 21-ին:

1868-69 թթ. Պոլսում խմբագրել է «Օրագիր» օրաթերթը:

1869-1879 թթ «Օրագիր Կ. Պոլսո» (հայերեն և հայատառ թուրքերեն) թերթը:

1874-1879 թթ. Պոլսի «Նոր դար» օրաթերթը:

«Մասիս», 1878, № 2116, 2117:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 102:

-Օնվեց դրամատուրգ, թատերական գործիչ Նիկողայոս Ալադաթյանը: Վախճ. 1875 թ.
հուլիսի 25-ին, Թիֆլիսում:

ԳԱԹ, Թատերական թանգարան, Ալադաթյանի ֆոնդ:

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 44:

-Թիֆլիսում գրեթե միաժամանակ բացվում են քահ. Ս. Հովհաննիսյանի, սարկավագներ Մովսես Սիմոնյանի, Հ. Հովհաննիսյանի, դպիրներ Սողոմոն Սալխանյանցի, Բարդուղիմեոս Պետրոսյանի, քահ. Ն. Առաքելյանի մասնավոր դպրոցները: Բացի Ս. Սիմոնյանի դպրոցից, որը հարատևեց մինչև 50-ական թթ., մյուսները հաջորդ` 1834 թ. փակվեցին Վրաստանի կառավարչապետի կարգադրությամբ:

"Отчет... о действиях и состояниях нерусских школ", СПб, 1896, стр. 9-12.

Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 249:

-Վենետիկում մեկ գրքով և առաջաբանով հրատարակվում են Կորյունի, Մամբրե Վերծանողի և Դավիթ Անհաղթի երկերը` «Մատենագրությունք» վերնագրով: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Ներսես Սարգիսյանի («Մատենագրությունք նախնեաց»): 642 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Դուռն քերականության հայկազնյան լեզվի»: 132 էջ:

Նույնը` 1838 և 1849 թթ.:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Եղիա Թովմաճանյանի «Իմաստություն մարդկային, որ կը սորվեցնէ մարդուս` իսկընդ աղեկի բանեցընել, կատարյալ մարդըլլալ և մեծության հասնիլ» աշխատությունը: ԺԲ+366 էջ:

Նույնը անփոփոխ` 1859 թ.: 344 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Ի սուրս վկայսն Սուքիասանս» պոեմը: 7 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հովհաննես Օձնեցու աշխատությունների ժողովածուն` «Մատենագրութիւնք» խորագրով: 193 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Եփրեմ Սեթյանի «Պատմություն չորից ինքնակալությանց» դասագիրքը: 345 էջ:

Նույնը անփոփոխ` 1848 թ.:

-Վենետիկում հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը («Ընտիր մատենագիրք»): 636 էջ:

-Շուշիում տեղի բողոքականները հրատարակում են հետևյալ աշխարհաբար գրքույկները. «Ավետարանի ճշմարտության և գործության համար» (32 էջ), «Մեղքի մեծանալուն և խորանալուն համար» (26 էջ, Բ տպագրությունը՝ Մոսկվա, 1840), «Մեղքն իսող անելու բան չէ» (14 էջ, Բ տպագրությունը՝ որոշ հավելումներով ու լրացումներով՝ Կալկաթա, 1841, Գ տպագրությունը՝ «Մեղքը իսողալիք չէ» վերնագրով, Զմյուռնիա, 1844), «Հորդորմունք սուտ ասող մարդկանց համար» (26 էջ), «Վարդապետություն Քրիստոսի իսաչին համար» (32 էջ), «Սիրտ մարդու, որ է տաճար աստուծո կամ գործարան սատանայի» (28 էջ):

Վերջին գրքույկի առաջաբանում ասվում է. «Էս գիրքս հին է, և էլ շատ ժամանակից առաջ Ըստամպոլ քաղաքումն տպվեցավ հայերեն և թուրքերեն լեզվով: Բայց հիմիկ թարգմանվեցավ ռուսական լեզվիցն հայոց աշխարհաբար լեզվովն, որ շատ մարդիկ կարենան կարդալ և օգուտ ստանալ սորանով»: Վերոհիշյալ բոլոր գրքույկները նույնպես թարգմանություններ են:

-Շուշիում հրատարակվում է Միքայել Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատությունը: 328 էջ:

Վենետիկում, 1801 թ. Չամչյանի համանուն աշխատության համառոտված հրատարակության վերահրատարակությունն է:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Տեր-Պետրոսյան Պատկանյանի (Բեստեն) «Կրթություն բժշկական արվեստի» աշխատության առաջին հատորը: 416 էջ:

Հետագա հատորները չեն հրատարակվել (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1897, № 11, 1901, № 3-4):

-Նոր Նախիջևանում Ալամդարյանը գրում է «Յորդորակ առ ուխտաւորս» բանաստեղծությունը:

Հրատարակվել են 1884 թ. Պետերբուրգում, Ալամդարյանի «Չափաբերականք» ժողովածուում:

1834

Մարտի 5. Եմնիկում (Բոհեմիա, Չեխոսլովակիա) ծնվեց գերմանացի հայագետ Ֆրիդրիխ Մյուլլերը (Friedrich Müller): Վախճ. 1898 թ. մայիսի 13-ին, Վիեննայում:

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք հայ լեզվի և մատենագրության, Վենետիկ, 1895, էջ 295-305:

«Հանդես ամսօրյա», 1898, № 6 («Ազգային թերթերե ծաղկեփունջ»):

Մարտի 29. Պոլսում (Օրթագյուղ) ծնվեց քանասեր-երաժշտագետ, հայկական երաժշտության տեսաբան Եղիա Տնտեսյանը: Վախճ. 1881 թ. ապրիլի 23-ին:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 104:

Մայիսի 24. Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքում սպանվեց գրական-հասարակական գործիչ, գրող, մանկավարժ Հարություն Ալամդարյանը: Ծնվ. 1796 թ. սեպտեմբերի 25-ին, Աստրախանում:

Այվազյանց Ա., Շար հայ կենսագրությանց, Կ. Պոլիս, 1893, հատ. Ա, էջ 124-143:

«Հայ նոր գրականության պատմություն», հատ. Ա, Երևան, 1962, էջ 290-317:

Օգոստոսի 2. Պոլսում ծնվեց պատմաբան, բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից և անգլերենից՝ հայերեն) Գրիգոր Ճելեյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ՝ 1854 թ. հունիսի 4-ից: Վախճ. 1912 թ. նոյեմբերի 6-ին Վենետիկում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

«Բազմավեպ», 1912, № 11 («Գրիգոր Ճելեյան»):

Օգոստոսի 15. Պաղուայում (Հս. Իտալիա) իր գոյությունն է սկսում Վենետիկի Մխիթարյան միաբանության իրավասության ներքո գտնվող Մուրադյան վարժարանը, որն այսպես էր կոչվում ի պատիվ նրան ֆինանսավորող հնդկահայ վաճառական Սամվել Մուրադյանի: Վարժարանի հետ կապված նախապատրաստական աշխատանքներն սկսել էին նույն թվականի հուլիսի 30-ից, առաջին տեսուչն էր Իզնատիոս Փափազյանը: Վարժարանը գոյություն ունեցավ մինչև 1846 թ., ապա փոխադրվեց Փարիզ (տե՛ս 1846 թ. հոկտեմբերի 25):

«Բազմավեպ», 1936, № 2-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

Օգոստոսի 16. Նոր Ջուղայում (Պարսկաստան) վախճանվեց աշուղ Ղուլ Հովհաննեսը: Ծնվ. 1740-ական թթ. Նոր Ջուղայում:

«Բազմավեպ», 1928, № 11-12 («Աշուղ Ղուլ Հովհաննես»):

Հոկտեմբերի 14. Պոլսում (Իսկյուտար) ծնվեց գրական, հասարակական և պետական գործիչ (մասնագիտությամբ իրավաբան) Գրիգոր Օտյանը: Վախճ. 1887 թ. օգոստոսի 14-ին, Փարիզում:

«Վահրամ» կեղծանունով հանդես էր գալիս «Մասիս»-ում (1879-1884 թթ.):

«Բազմավեպ», 1913, № 9-10 («Գրիգոր Օտյան»):

Հոկտեմբերի 16. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Միքայել իշխան Ամատունին: Վախճ. 1865 թ.:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

-Պոլսում (Օրթագյուղ) դոկտոր Կուտելի գլխավորությամբ գործող ավետարանականներ-
րի (բողոքականներ) խումբը հիմնում է հայկական առաջին բողոքական դպրոցը:

Բողոքականությունը Կ. Պոլսի հայության մեջ սկսել է տարածվել 1831 թ., երբ այնտեղ հաստատված ամերիկացի բողոքականները Կուտելի գլխավորությամբ կառավարությունից գործունեություն ծավալելու իրավունք ստացան: 1836 թ. Պոլսում հաստատվում է առաջին հայկական բողոքական եկեղեցին, որի քարոզիչն էր Սենեքերիմ Տեր-Մինասյանը:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 1046-1048:

-Պոլսում ծնվեց կրոնական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Բարդուղիմեոս վարդապետ Պալճյանը: Վախճ. 1904 թ. մայիսի 31-ին:

«Բյուզանդիոն», 1904, № 2346-2348:

-Տրապիզոնում ծնվեց հայագետ, բանաստեղծ, թատերագիր Մկրտիչ Պալյանը: Վախճ. 1907 թ. հունվարի 13-ին, Երևանում:

«Մշակ», 1907, № 11, 13 («Մկրտիչ Պալյան»):

-Պոլսում (Բերա) ծնվեց թատերական գործիչ Սերովբե Պենկյանը: Վախճ. 1900 թ. Ալեք-
սանդրիայում (Եգիպտոս):

Շարասան, Թրքահայ բեմն ու իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 50-59:

Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Բ, Երևան, 1969, էջ 212-237:

-Պարսկաստանում ծնվեց (1834 ?) լեզվագետ, քերականագետ Ղազար Լազարյանը:
Վախճ. 1884 թ. հունվարի 18-ին, Մոսկվայում:

«Արձագանք», 1884, № 5:

-Պոլսում ծնվեց թատերական գործիչ, դերասան Ստեփան Էքշյանը: Վախճ. 1901 թ.:

Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Ա, Երևան, 1962, էջ 348-352:

-Կեսարիայում ծնվեց հրատարակիչ, օրացույցներ կազմող Գևորգ Զարդարյանը: Վախճ. 1888 թ. մայիսի 30-ին, Երուսաղեմում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Բ, Կահիրե, 1937, էջ 2181-2184:

-Օնվեց դրամատուրգ, թատերական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Նիկո-
ղայոս Փուլիինյանը: Վախճ. 1880 թ. Թիֆլիսում:

Զմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 224:

-Նոր Զուղայում, Գրիգոր Սամյանի օժանդակությամբ, հիմնվում է հայկական դպրոց
«Սամյան (նաև՝ Գրիգորյան) վարժարան» անվամբ: Այստեղ, 1834-1836 թթ. դասա-
վանդել է Մեսրոպ Թաղիադյանը: Վարժարանը գոյություն ունեցավ մինչև 1853 թ.:

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, մասն Բ, Պոլիս, 1893, էջ 74:

Սանթրոսյան Մ. Մեսրոպ Թաղիադյանը մանկավարժ, Երևան, 1959, 128 էջ:

-Թիֆլիսում դադարում է գործել Եղիազար Գասպարյանի դպրոցը, ուր սովորեցնում էին
հայերեն կարդալ և գրել: Դպրոցը գոյություն ուներ 1795 թվից:

Երիցյան Ալ., Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս,
1898, էջ 271:

-Մոսկվայում, Սարգիս Տիգրանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո
թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Ռասինի «Գոթողիա» (Ատալիա)
նորբերգությունը: 214 էջ:

Մինչև այսօր էլ արժեքը չկորցրած առաջաբանում «Ինչ ինչ գեղերբերգութենէ» (էջ 7-106)
թարգմանիչն անդրադառնում է թատերագիտության մի քանի կարևոր հարցերի:

-Մոսկվայում, Լազարյան ճեմարանի տպարանում, Շուշիում հաստատված բազելյան
բողոքական քարոզիչների կողմից, գրաբար և արևելահայերեն համատեղ տեքստե-
րով հրատարակվում է «Նոր կտակարանը»: 1251+XXII էջ:

-Վենետիկում, Մանվել Զախջախյանի՝ լատիներեն բնագրից կատարված աշխարհաբար
թարգմանությամբ, հրատարակվում է Հովհաննես Պոնայի «Առաջնորդ երկնից»
աշխատությունը: 357 էջ:

Նույնը՝ 1856 թ.:

-Վենետիկում հրատարակվում է «Նախակրթութիւն իտալերեն լեզուի, ի պէտս
ուսումնասէր համբակաց» դասագիրքը: 114 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Պետրոս Մինասյանի «Արուեստագրութիւն» գեղա-
գրության ալբոմը: 27 թերթ:

- Վենետիկում, գրաբար և լատիներեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Հովհաննես Օձնեցու ճառերի և կանոնների ժողովածուն՝ «Տեառն Յովհաննու Իմաստասիրի Մատենագրութիւնք»-ը: Տեքստաբանական աշխատանքները, թարգմանությունը, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մկրտիչ Ավգերյանի: 314 էջ:
- Գալկաթայում հրատարակվում է Հովհաննես Ավդալյանի և Գրիգոր Մանուկյանի՝ «Ներբողեան յօրինեալ յիշատակ բարեպաշտին Գալուցեան պարոն Յարութիւնին, երեսուն և հինգամեայ արդիւնաշատ վարժապետին» բանաստեղծությունների գրքույկը: 16 էջ:
- Պոլսում, իտալերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Գեղեցիկ զբօսարան (Հավաքումն բարոյական վիպաց)» գեղարվեստական պատմությունների ժողովածուն: 152 էջ:
- Երուսաղեմում հրատարակվում է Վարդան վարդապետի՝ Խորենացուն վերագրվող մի շարականի մեկնաբանությունը՝ «Տեսութիւն անթառամ ծաղիկ մեծացուցեին» խորագրով: 29 էջ:
- Վիեննայում հրատարակվում է «Հայնակ և մաճրոնակ (Իմա՛ հունգարերեն – Ս.Շ.) այբուբենի թուղթ, շարադրած ի հայաքաղաքն Դրանսիլվանիայ ու տիպեցուցած յուր քաղաքին խարճովն, վասն պիտոյութեան հայ տրդոց» դասագիրքը: 56 էջ:

1835

Հունվարի 5. Վենետիկում վախճանվեց բառարանագիր, բանաստեղծ և թարգմանիչ (իտալերենից, գերմաներենից, ֆրանսերենից, լատիներենից՝ հայերեն) Մանվել Ջախջախյանը: Ծնվ. 1771 թ. մարտի 25-ին Գյումուշխանեում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1791 թ.:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 219:

Փետրվարի 25. Պոլսում ծնվեց արվեստի տեսաբան, լեզվագետ Հովհաննես Սազրզյանը (Սազրզ փաշա): Վախճ. 1912 թ. մայիսի 6-ին:

«Յ. Արշեզ» կեղծանվամբ հանդես էր գալիս «Հանդես ամսօրյա»-ում:

«Հանդես ամսօրյա», 1912, № 8 («Հովհաննես Սազրզ փաշա»):

Մարտի 13. Զմյուռնիայում ծնվեց գրականության պատմաբան, գրող, թարգմանիչ (անգլերենից, հունարենից, իտալերենից, ֆրանսերենից՝ հայերեն և հայերենից՝ ֆրանսերեն) Հակոբոս Իսավերտենցը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1854 թ. հունիսի 4-ից: Վախճ. 1902 թ. օգոստոսի 28-ին, Վենետիկում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:
«Բազմավեպ», 1902, № 11 («Հակոբոս Իսավերտենց»):

Մարտի 15. Պաշպալովում (Հունգարիա) ծնվեց բանասեր, թարգմանիչ (հունարենից՝ հայերեն) Նիկողայոս Չիքին: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1867 թ. նոյեմբերի 1-ից: Վախճ. 1911 թ. դեկտեմբերի 24-ին, Վենետիկում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:
«Բազմավեպ», 1911, № 11-12 («Մահագր»):

Մայիսի 1. Երևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, մանկավարժ Հովսեփ Հարությունի Մեյանը: Վախճ. 1910 թ. հունվարի 5-ին:

«Մշակ», 1910, № 4 («Հովսեփ ավագ քահանա Մեյան»):

Մեյտեմբերի 5. Մոսկվայում ծնվեց բանասեր-արևելագետ Կարապետ Հարությունի Եզյանը: Վախճ. 1905 թ. մայիսի 28-ի, Պետերբուրգում:

«Հանդես ամսօրյա», 1905, № 7 («Կարապետ Եզյան»):
«Արարատ», 1905, № 7-8 («Կարապետ Եզյան»):

Նոյեմբերի 10. Թիֆլիսում ծնվեց բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Գևորգ Նիկողայոսի Բարխուդարյանը: Վախճ. 1913 թ. օգոստոսի 13-ին:

«Լուսնա», 1902, № 1 («Գևորգ Բարխուդարյան»):
«Մշակ», 1913, № 182 («Գևորգ Բարխուդարյան»):

-Փայաջուկ գյուղում (Սալմաստի գավառ, Պարսկաստան) ծնվեց անվանի վիպասան Բաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան): Վախճ. 1888թ. ապրիլի 25-ին, Թիֆլիսում:

«Մշակ»-ում հանդես էր գալիս «Մ», «Մել.», «Մելիքզադե», «Փավստոս», «Անանուն», «* * *» կեղծանուններով:

«Մշակ», 1888, № 48:
Մարինյան Ս., Բաֆֆի, Երևան, 1957, 359 էջ:
Պետրոսյան Ե., Բաֆֆի, Երևան, 1959, 612 էջ:

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, գրող, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Արմենակ Հայկունին (Համբարձում Ճիզմեճյան): Վախճ. 1866 թ. հոկտեմբերի 29-ին:

1857-1858 թթ. Պոլսում հրատարակել է «Մուգայք Մաայաց» թատերական շաբաթաթերթը: 1861-1865 թթ. Չվոյունիայում, Գրիգոր Չիլինկիրյանի հետ մեկտեղ, հրատարակել է «Ծաղիկ» տասնօրյա հանդեսը:

«Տեղեկագիր», 1956, № 12 («Արմենակ Հայկունի»):

-Արաբկիրում (Թուրքիա) ծնվեց եկեղեցական-հասարակական գործիչ, որմնանկարիչ, Երուսաղեմի միաբանության անդամ Մամբրե Էպիսկոպոս Մարկոսյանը: Վախճ. 1907 թ. հունվարի 20-ին, Երուսաղեմում:

Իր անունով գրված աշխատություններից բացի, «Վարդգես» կեղծանունով 1882 թ. Մոսկվայում հրատարակել է մի գրքույկ՝ «Ազգային հառաջադիմության մասին մի քանի խոսք» վերնագրով: Գրել է նաև բանաստեղծություններ:

«Արարատ», 1907, № 2 («Մամբրե Էպիսկոպոս Մարկոսյան»):

Ղազիկյան Ա., Հայկական նոր մատենագիտություն, էջ 1911:

-Քիչնևում (Բեսարաբիա, այժմ՝ Մոլդովական ՍՍՀ) ծնվեց ռումինացի հայագետ, բանասեր Անդրանիկ Յոհաննեսյուն: Վախճ. 1907 թ. հունվարին, Փարիզում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1908, էջ 254:

-Զմշկաձագում (Թուրքիա) ծնվեց բանասեր, բանաստեղծ Սիմեոն Ֆելեկյանը: Վախճ. 1904 թ. Կահիրեում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1921, էջ 202:

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 286:

-Սանահինում ծնվեց եկեղեցու պատմաբան, հնագետ, Էջմիածնի միաբանության անդամ Եղիա վարդապետ Հասան-Չալալյանը: Վախճ. 1910 թ. օգոստոսի 23-ին, Էջմիածնում:

«Արարատ», 1910, № 8 («Եղիա վարդապետ Հասան-Չալալյան»):

-Պոլսում վախճանվեց նշանավոր տպարանատեր-հրատարակիչ Պողոս Արապյանը: Ծնվ. 1742 թ. Ապուչեխ գյուղում (Ակնի մոտ):

Արապյանների գերդաստանի դերը անփոխարինելի է դարասկզբի պոլսահայ մտավորականության կյանքում, հրատարակել են ամենատարբեր բնույթի ու բովանդակության մոտ հարյուր անուն հայերեն գրքեր:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 66-71:

-Սանգիբարան գյուղում (Փերիայի նահանգ, Պարսկաստան) ծնվեց աշուղ Ղուլ Ղազարը: Վախճ. 1919 թ. Խունդ գյուղում (Պարսկաստան):

Մինասյան Լ., Փերիայի հայ աշուղները, Թեհրան, 1964, էջ 25:

-Զմյուռնիայում ծնվեց բանաստեղծ, բանասեր Սմբատ Ստեփան Սարգսյանը: Վախճ. 1854 թ. հունիսի 29-ին, իր ծննդավայրում:

Հոդվածներով ու բանաստեղծություններով հանդես է եկել «Արփի Արարատյան» ամսագրում: «Արփի Արարատյան», 1854, № 3 («Բանաստեղծություն»):

-Վենետիկում հրատարակվում է Ղուկաս Ինճիճյանի «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» եռահատոր աշխատությունը: Հատ. Ա. 12+475 էջ: Հատ. Բ. 427 էջ: Հատ. Գ. 393 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Միքայել Զեմպերեքճյանի «Ի սուրբ վկայսն Սուրբիասանըս» ներբողը: 11 էջ:

-Վենետիկում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Սուրբիաս Սոմալյանի «Համառոտ բառարան յանգղիականէ ի հայ (հատոր Ա)» բառարանը: 274 էջ:

Նույն թվականին հրատարակվել է նաև «Համառոտ բառարան ի Հայէ յանգղիականն (հատոր Բ)» բառարանը: 310 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց»-ը: Տեքստաբանական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու («Ընտիր մատենագիրք»): 686 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Պողոս Հովնանյանի «Աշխարհագրություն ուսումնական, բնական, քաղաքական» աշխատությունը: 396 էջ:

-Զմյուռնիայում գրաբար մեկնաբանություններով հրատարակվում է «Քերականութիւն անգղիարէն և հայերէն» գիրքը: 112 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը՝ «Նարեկ, գիրք աղօթից» խորագրով: 439 էջ:

-Պոլսում հրատարակվում է «Կոնդակ հարսանեաց, սահմանեալ յօգուտ հասարակութեան թագաւորեալ մայրաքաղաքիս, կամօք և հաւանութեամբ ազգային ժողովոց» գրքույկը: 24 էջ:

Նույնը՝ 1843, 1895 թթ., ամեն անգամ որոշ լրացումներով:

-Երուսաղեմում հրատարակվում է «Տետրակ գովեստի, նորոգ և սրբագրութեամբ յօրինեալ ի հայկական և ի տաճկական բարբառ» խորագիրը կրող տաղերի գրքույկը: 48 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1839 թ.:

1836

Փետրվարի 14. Տրապիզոնում ծնվեց բանասեր Աթանագինես Ղափթանյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1859 թ. ապրիլի 24-ից: Վախճ. հուլիսի 3-ին:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

«Բազմավեպ», 1907, № 7-8 («Աթանագինես Ղափթաղյան»):

Մարտի 11. Պետերբուրգում Նիկոլայ I կայսրը վավերացնում է 10 գլխից և 141 հոդվածներից բաղկացած «Բարձրագույն կարգադրություն, Ռուսաստանում գտնվող հայոց լուսավորչական եկեղեցու կառավարության մասին» կանոնադրությունը («Положение»), որով չէղյալ է հայտարարվում մինչև այդ կիրառվող Սինոդական կանոնադրությունը: «Положение»-ն ուժի մեջ է մտնում 1837 թ. հունվարի 1-ից:

"Полное собрание законов", СПб, 1894, т. XI, № 8790.

Մարտի 14. Պոլսում (Սամաթիա) ծնվեց հայագետ, բառարանագիր, թարգմանիչ (հունարենից՝ հայերեն) Դիմիտրիոս Չոլաքիդեսը: Վախճ. 1907 թ. ապրիլի 12-ին:

«Արձագանք», 1891, № 36: («Հայերենագետ Դիմիտրիոս Չոլաքիդես»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1908, էջ 256:

Հունիսի 25. Բոմբեում (Հնդկաստան) վախճանվեց պատմաբան, լեզվագետ, աստվածաբան Իսահակ Աղանուրը: Ծնվ. 1760 թ. Նոր Ջուղայում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 623:

Սեպտեմբերի 11. Վենետիկում իր գոյությունն է սկսում Վենետիկի Մխիթարյան միաբանության տնօրինության ներքո գտնվող Ռափայելյան վարժարանը: Վերջինս այսպես էր կոչվում ի պատիվ նրան ֆինանսավորող հնդկահայ հարուստ Էդուարդ Ռափայելյանի: Վարժարանի առաջին տեսուչն էր Սարգիս Թեոդորյանը: 1873 թ.

մարտի 4-ից վարժարանը վերանվանվում է Մուրատ-Ռափայեյան և, աննշան ընդհատումներով, շարունակում է իր գոյությունը առ այսօր:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայեյան վարժարանաց»):

Հոկտեմբերի 13. Աստրախանում վախճանվեց բանասեր, հայագետ, բանաստեղծ Սերովբե Պետրոսի Պատկանյանը: Ծնվ. 1770 թ. մարտի 19-ին, Պոլսում:

«Երգք Սերովբե վարժապետի Պատկանեան», ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Աւետիքայ Խազեգեանց, Մոսկուա, 1857, 91 էջ:

ԳԱԹ, Պատկանյանների ֆոնդ, նկարներ № 87:

Շահազիզ Եր., Տեր Գաբրիել քահանա Պատկանյանց, Թիֆլիս, 1940, 141 էջ:

-Ղզլարում ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Հովհաննես Քուչուբեկյանը: Վախճ. 1890 թ. մայիսի 7-ին:

«Հյուսիսափայլ»-ում և «Հայկական աշխարհ»-ում հանդես էր գալիս «Հարություն Ոստանիկ» կեղծանունով:

«Արձագանք», 1890, № 16 («Հովհ. Քուչուբեկյան»):

-Ղրիմում ծնվեց թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Մկրտիչ Ղազանձյանը: Վախճ. 1861 թ. հունվարի 1-ին, Մոսկվայում:

1861 թ., № 14 («Մահ Մկրտչի Ղազանձյանց»):

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Համբարձում Ալաճաճյանը: Վախճ. 1907 թ. մարտի 15-ին:

1866-1907 թթ. Պոլսում խմբագրել է «Փունջ» շաբաթաթերթը:

«Փունջ», 1907 թ.:

-Պոլսում (Միջագյուղ կամ Օրթագյուղ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, լեզվագետ Տիգրան Յուսուֆյանը: Վախճ. 1908 թ. հունվարի 17-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1910, էջ 13:

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 287:

-Պոլսում (Բերա) ծնվեց հայ դասական երաժշտության հիմնադիր Տիգրան Գևորգի Չուխաճյանը: Վախճ. 1898 թ. մարտի 10-ին, Զմյուռնիայում:

«Հանդես ամսօրյա», 1898, № 4 («Տիգրան էֆ. Չուխաճյան»):

«Մշակ», 1898, № 49 («Տիգրան Չուխաճյան»):

-Պոլսում (Ղալաթիա) ծնվեց երաժշտագետ, հայ երաժշտության տեսաբան Գրիգոր Սինանյանը: Վախճ. 1914 թ. դեկտեմբերի 24-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 171:

-Հնչեշտ ավանում (Բեսարաբիա) ծնվեց հայագետ, բանասեր Զարմայր Սսերի Սսերյան-
ցը: Վախճ. 1899 թ. մայիսի 12-ին, Մոսկվայում:

1858-1862 թթ. հոր՝ Սսեր Սսերյանի հետ մեկտեղ Մոսկվայում հրատարակել է
«Ճոաքաղ» ամսագիրը, իսկ 1861-1864 թթ. «Համբավաբեր Ռուսիո» կիսամյա լրա-
գիրը:

1872-1876 թթ. Մոսկվայում հրատարակել է «Փարոս» տարեգիրքը, 1879-1866
թթ.՝ «Փարոս Հայաստանի» հանդեսը:

Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Սկայորդի» կեղծանվամբ:

«Բազմավեպ», 1900, № 10-11 («Զարմայր Սսերյանց»):

-Տաուշ (Թովուզ) գյուղում (Շամշադին) ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, բանասեր
Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյանը (աշխարհիկ անվամբ՝ Գարեգին Գրիգո-
րի Մուրադյան): Վախճ. 1903 թ. հուլիսի 13-ին, Զմյուռնիայում:

«Բազմավեպ», 1903, № 9 («Մելքիսեդեկ Մուրադյան»):

«Լուսն», 1903, № 5 («Մելքիսեդեկ արքեպիսկոպոս Մուրադյան»):

-Ղզլարում ծնվեց մանկավարժ, գրական-հասարակական գործիչ Գեորգ Քանանյանը:
Վախճ. 1897 թ. հունիսի 4-ին, Մոսկվայում:

«Մշակ», 1897, № 66, 68 («Գեորգ Քանանյան»):

-Սունկուռլու գյուղաքաղաքում (Կեսարիա, Թուրքիա) ծնվեց աշուղ Զեքին (Սարգիս
Նուրլյան): Վախճ. 1888 թ. Պոլսում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1556:

-Պոլսում (Խասգյուղ) հիմնվում է վեցդասյա երկսեռ դպրոց «Ս. Ներսիսյան» անվամբ:
Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1905 թ.:

«Հանդես ամսօրյա», 1927, № 8 («Պատմական»):

-Նոր Նախիջևանում (քաղաքային դպրոցում) Թեոդորոս Խաղամյանցի և Սարգիս Տիգ-
րանյանցի նախաձեռնությամբ կազմակերպվում են թատերական ներկայացում-
ներ, գերազանցապես աշակերտների ուժերով:

Թերզիբաշյան Վ., Հայ դրամատուրգիայի պատմություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 239:

-Վենետիկում չորս հատորով, «Մատենագրությունք նախնեաց» մատենաշարով, հրատա-
րակվում է Եփրեմ Խուրի Ասորու ժողովածուն՝ «Մատենագրությունք» խորագրով:

Տեքստաբանական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները՝
Մկրտիչ Ավգերյանի:

Հատոր Ա, «Մեկնություն Արարածոց, Ելից, Ղևտացոց, Թուոց, Օրինաց, Յեսուաց, Դատաւորաց, Թագաւորաց և Մնացորդաց»: 495 էջ:

Հատոր Բ, «Մեկնություն համաբարբառ, որ ըստ չորից աւետարանչաց և թարգմանություն առակաւոր բանից և աւետարանական ճառք», 430 էջ:

Հատոր Գ, «Մեկնություն չորեքտասան թղթոցն Պաւղոսի», 265 էջ:

Հատոր Դ, «Ճառք և աղօթք», 282 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Գաբրիել Ավետիքյանի «Խորհրդածությունք հոգևորք»-ը:

220 էջ:

Պարունակվում է հեղինակի 33 մտածականները, նվիրված արարչագործության, ոգու և բնության, մարդկանց և հասարակության հավիտենական գոյության, կյանքի ծագման, օրգանական և անօրգանական աշխարհի հարաբերության հարցերին:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Քերակա-
նություն գործնական, քիչ ատենի մեջ շարադրության վարժելու համար» գիրքը: 150
էջ:

-Վենետիկում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Գաբրիել Ավետիք-
յանի, Խաչատուր Սյուրմեյանի և Մկրտիչ Ավգերյանի «Նոր բառգիրք հայկազնեան
լեզուի» աշխատության առաջին հատորը (Ա-Կ): XX+1140 էջ:

Երկրորդ հատոր (Հ-Ֆ)՝ 1837 թ., 1037 էջ (ունի նաև «Մնացորդք և յաւելուած»
բաժինը, էջ 1037-1067):

-Վենետիկում, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Հովհան
Մանդակունու գործերի ժողովածուն՝ «Ճառք» խորագրով («Մատենագրութիւնք
նախնեաց»): 212 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Գաբրիել Այվազովսկու «Համառօտ պատմութիւն Ռու-
սաց»-ը: 462 էջ:

Ընդգրկում է Ռուսաստանի պատմությունը սկսած Նովգորոդի ու Կիևի իշխանություններից
(862 թ.) մինչև Նիկոլայ I-ի թագավորության հինգերորդ տարին (1830):

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոե-
մը: 448 էջ:

-Պոլսում հրատարակվում է Հովհան Վանանդեցու «Արվիական Հայաստանի» չափածո
ստեղծագործությունը: 640 էջ:

- Մոսկվայում հրատարակվում է Միքայել Սալլանթյանի «Հրահանգք ճարտասանության կամ ճառագրության» աշխատությունը: 346 էջ:
- Երուսաղեմում հրատարակվում է «Մեկնութիւն տէրունական «Հայր մեր» աղօթից և ճառք խաչելութեան, թաղման և յարութեան և իրատ միանձանց երանելոյն Եղիշէի վարդապետի, հանեալ ի հնագոյն ճառընտրաց մերոց» գիրքը: 82 էջ:
- Էջմիածնում, Մկրտիչ Քարտաշյանցի՝ ռուսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչակրոն հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան (Պոլոժենիա)» կանոնադրությունը: 30 էջ:
- Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Հակոբոս Պոզաճյանի «Քերականություն իտալական լեզվի» աշխատությունը: 200 էջ:

1 8 3 7

Հունվարի 28. Պոլսում (Խասգյուղ) ծնվեց հասարակական գործիչ, բանասեր Ներսես Վարժապետյանը: Վախճ. 1884 թ. հոկտեմբերի 26-ին:

«Արարատ», 1884, № 11 («Ներսես պատրիարք»):
 «Հանդես ամսօրյա», 1927, № 10 («Տեղագրական»):

Փետրվարի 22. Էջմիածնում իր գործունեությունն է սկսում Հայկական եկեղեցական բարձրագոյն հոգևոր ժողովը (սինոդ): Սինոդի գոյությունը թույլատրված և նրա գործունեության սահմանները նախանշված էր «Положение»-ի 3-րդ գլխի համաձայն:

Սինոդի անդամների թիվը (ույթ հոգի, որոնցից երեք արքեպիսկոպոս, մեկ եպիսկոպոս և չորս վարդապետ) հաստատուն էր և նախորոշված էր կայսրի հրովարտակով: Բոլոր վճիռների ու որոշումների հարցում վճռական ձայնը պատկանում էր կաթողիկոսին, որը և համարվում էր սինոդի ցմահ նախագահը:

Երիցյան Ալ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում (մասն Բ), Թիֆլիս, 1895, էջ 410-429:

Մարտի 7. Թիֆլիսում ծնվեց դերասան, թատերական գործիչ, մեմուարիստ Գևորգ Չմշկյանը: Վախճ. 1915 թ. դեկտեմբերի 28-ին, Պետերբուրգում:

Չմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Երևան, 1953:

Ապրիլի 17. Օձուն գյուղում (Լոռի) ծնվեց գրականագետ, պատմաբան Գևորգ Կարապետի Աբովյանը: Վախճ. 1860 թ. նոյեմբերի 1-ին, Թիֆլիսում:

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 23:

Ապրիլի 30. «Положение»-ի 5-րդ հոդվածի համաձայն (տե՛ս 1836 թ. մարտի 11) Երևանում բացվում է Երևանի թեմի կոնսիստորիան: 1846 թ. հունիսի 17-ին կոնսիստորիան Երևանից փոխադրվում է Վաղարշապատ:

Երևանի թեմի մեջ մտնում էին Երևանի նահանգը և Ջանգեզուրի գավառը, իսկ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ավելացվեց նաև Կարսի շրջանը:

Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 132, 165:

Հունիսի 3. Աշտարակում ծնվեց վիպասան, մանկավարժ, թատերական գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Պերճ Պռոշյանը (Հովհաննես Ստեփաննոսի Տեր-Առաքելյան): Վախճ. 1907 թ. նոյեմբերի 23-ին, Բաքվում:

«Գառնեցի», «Պահլավունի» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

ԳԱԹ. Պերճ Պռոշյանի ֆոնդ, № 140:

Տերտերյան Ա., Պերճ Պռոշյան, Երևան, 1955, 248 էջ:

Բաբայան Ա., Պերճ Պռոշյան, Երևան, 1962, 333 էջ:

Մանուկյան Ս., Պերճ Պռոշյան, Երևան, 1964, 197 էջ:

Սեպտեմբերի 2. Երևանում (ս. Սարգիս եկեղեցու բակում կառուցված շենքում), իր գործունեությունն է սկսում Երևանի հայոց Հոգևոր թեմական դպրոցը (նաև՝ Հոգևոր սեմինարիա կամ՝ Հոգևոր ճեմարան): Դպրոցը չորսդասյա էր, սկզբում ուներ 26 (ծաղկուն ժամանակ՝ 175) աշակերտ: Առաջին տեսուչն էր Թովմաս Թևումովը: Դպրոցը, որոշ ընդհատումներով, գոյություն ունեցավ մինչև 1920 թ.:

«Արձագանք» 1889, № 11, 14, 17:

Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 135:

«Արարատ», 1914, № 5 («Երևանի թեմական դպրոցի հոբելյանը»):

Մանթրոսյան Ս., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 400-412:

Հոկտեմբեր. Ռուսչուկում (նաև՝ Ռուսե, Բուլղարիա) ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, բանասեր Կարապետ քահանա Պոյաճյանը: Վախճ. 1911 թ. դեկտեմբերի 10-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 657:

Հոկտեմբերի 16. Պոլսում (Պալաթի) ծնվեց հրատարակիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Հովսեփ Գավաճյանը: Վախճ. 1912 (?) թ. Շումլույում (Բուլղարիա):

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 90:

Նոյեմբերի 4. «Положение»-ի 5-րդ հոդվածի համաձայն (տե՛ս 1836 թ. մարտի 11) Շուշիում բացվում է Ղարաբաղի թեմի կոնսիստորիան:

Ղարաբաղի թեմի մեջ մտնում էին Ղարաբաղի, Շաքիի և Թալիշի գավառները:

Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1915, էջ 115-121:

Դեկտեմբերի 5. Թիֆլիսում վախճանվեց հայագետ, բանասեր, թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն և ֆրանսերենից՝ հայերեն) Հակոբ Սարգսի Շահան-Ջրպետյանը (ֆրանսիական տառադարձությամբ՝ Գեորգ Սիրբիդ): Ծնվ. 1772 թ. դեկտեմբերի 16-ին, Եդեսիայում:

Զարբհանայան Գ., Ուսումնասիրությունք հայոց լեզվի և մատենագրության յԱրևմուտս, Վենետիկ, 1895, էջ 105-129:

«Արձագանք», 1892, № 131 («Հակոբ Շահան-Ջրպետյան»):

«Բանասեր» (Պոլիս), 1851, № 5 («Վարք նշանավոր հարանց»):

Դեկտեմբերի 10. Աստապատ գյուղում (Նոր Նախիջևանի գավառ) ծնվեց բանասեր, եկեղեցական գործիչ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանը: Վախճ. 1914 թ. սեպտեմբերի 12-ին, Էջմիածնում:

«Արարատ», 1914, № 9 («Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանց»):

Դեկտեմբերի 24. Պոլսում (Կետիկ փաշա) վախճանվեց բանաստեղծ, մանկավարժ, լեզվաբան-բառարանագիր Գրիգոր Փեշտիմալճյանը: Ծնվ. 1773 թ. Պոլսում:

«Բառգիրք հայկազեան լեզուի», հատ. Ա, Պոլիս, 1844, էջ Դ:

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 282:

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հատ. 2, Երևան, 1946, էջ 498:

-Ուրբունթալա գյուղում (Իջևանի շրջան) ծնվեց արձակագիր, մեմուարիստ (մասնագիտությամբ բժիշկ) Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը: Վախճ. 1920 թ. փետրվարի 16-ին:

«Քաջբերունի» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Տեր-Հովհաննիսյան Գ., Տեր Սարգիս, Երևան, 1936 (Ռ. Զարյանի առաջաբանը):

Քաջբերունի (1837-1920), Կենսագրական տեղեկություններ, Երևան, 1969 (ալբոմ):

-Դիարբեքիրում (Տիգրանակերտ) ծնվեց հայագետ, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Արշակ Պոյաճյանը: Վախճ. 1912 թ. (?) Պոլսում:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 97:

-Պոլսում (Խասգյուղ) ծնվեց թատերական գործիչ, դերասան Մարտիրոս Մնակյանը: Վախճ. 1920 թ. փետրվարի 22-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1929, էջ 344, 354:

Հովհաննիսյան Հ.Վ., Մարտիրոս Մնակյան, Երևան, 1969, 263 էջ:

-Պոլսում (Խասպուղ) ծնվեց հողվածագիր Տիգրան Փեշտիմալճյանը (մասնագիտությամբ՝
բժիշկ): Վախճ. 1894 թ. դեկտեմբերի 3-ին:

Գալիամաճյան Մ., Պատկերագարդ հավաքածո ընտիր գրվածոց (մասն Բ), Պոլիս, 1906, էջ 313:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 334:

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Հմայակ Եպիսկոպոս Դի-
մաքսյանը: Վախճ. 1919 թ. օգոստոսի 22-ին:

1874-1880 թթ. Պոլսում խմբագրել է «Լույս» հանդեսը:

«Արարատ», 1897, № 9-10 («Կ. Պոլսում գտնվող կուսակրոն հայ հոգևորականները»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 327:

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն)
Կոմիտաս պեյ Մինասյանը: Վախճ. 1903 թ.:

«Ծաղիկ», 1903, № 6 («Մահգույժ»):

«Բազմավեպ», 1904, № 7 («Կոմիտաս պեյ Մինասյան և իր գրական երկասիրությունները»):

-Բողոշան քաղաքում (Մոլդավիա, այժմ՝ Ռումինիա) ծնվեց գրականագետ, պատմաբան,
քերականագետ Ստեփաննոս Հովհաննեսի Պալասանյանը: Վախճ. 1889 թ.
փետրվարի 19-ին, Էջմիածնում:

«Գրիչ» կեղծանունով հանդես է գալիս «Փորձ»-ում, «Սկայորդի»-ով՝ «Մշակ»-ում և «Մեղու Հա-
յաստանի»-ում:

«Լուում», 1896, № Ա-Բ («Ստեփաննոս Պալասանյան»):

-Զմյուռնիայում ծնվեց հրատարակիչ, թարգմանիչ Հովհաննես Մանուկյանը: Վախճ. 1895
թ. հունիսի 25-ին:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 109:

-Ծնվեց դրամատուրգ, դերասան Հովհաննես Գուրգենբեկյանը: Վախճ. 1913 թ. Թիֆ-
լիսում:

ԳԱԹ, Գուրգենբեկյանի ֆոնդ:

-Վենետիկում հրատարակվում է Մանվել Զախջախյանի «Բառգիրք ի բարբառ հայ և
իտալական»-ը: 1508 էջ:

Մայիսի 3. Ախալցխայում վախճանվեց պատմաբան, իրավագետ, բանաստեղծ Եփրեմ Մեթյանը: Ծնվ. 1791 թ. սեպտեմբերի 21-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1814 թ.:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 221:

Մայիսի 10. Էրերին գյուղում (Վանի նահանգ) ծնվեց եկեղեցական պատմաբան, բանասեր, դրամատուրգ, Էջմիածնի միաբանության անդամ Սարգիս Գնունին: Վախճ. 1889 թ. մայիսի 9-ին, Էջմիածնում:

1860-1863 թթ. Պոլսում, իր աշակերտ Թովմաս Թերզյանի հետ մեկտեղ հրատարակել է «Վարդ Մեսրոպյան» հանդեսը:

«Արարատ», 1873, № 5:

Հունիսի 22. Շուշիում բացվում է հայոց թեմական հոգևոր դպրոցը, որն ուներ մոտ 65 աշակերտ: 1861 թ. ապրիլի 12-ին, ներքին քաշքշուկներից հետո, դպրոցը հրատարակում է իր կանոնադրությունը: Իր գոյությունը (զգալի ընդհատումներով) շարունակում է մինչև 1918 թ.:

Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1915, էջ 121:

Հուլիսի 19. Պոլսում (Օրթագյուղ) ծնվեց բանաստեղծ, դրամատուրգ, թարգմանիչ (ֆրանսերենից և անգլերենից՝ հայերեն) Մկրտիչ Աճեմյանը: Վախճ. 1917 թ. մայիսի 21-ին:

«Բազմավեպ», 1901, № 4 («Մկրտիչ Աճեմյան»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1911, էջ 238: 1921, էջ 323:

Հուլիսի 31. Սեն-Պիեր-ը Վիլյոյում (Կենտր. Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի հայագետ Օգյուստ Կարրիերը (Augustus Carrière): Վախճ. 1902 թ. հունվարի 12-ին, Փարիզում:

«Արարատ», 1902, № 9-10 («Օգյուստ Կարրիեր»):

Սեպտեմբերի 13. Պոլսում (Իսկյուտար), Ստեփաննոս պատրիարք Աղավնու ջանքերով, Հովհաննես Սեֆերյան և Կարապետ Պալյան ամիրաների օժանդակությամբ, հիմնվում է արական գիշերօթիկ դպրոց, որն առավել հայտնի է «Իսկյուտարի ազգային վարժարան» անվամբ: Ճեմարանն սկզբում ուներ 50 աշակերտ: Առաջին տեսուչն էր Հովհաննես Սեֆերյանը: Դասերն սկսվում են նույն թվականի դեկտեմբերի 9-ից:

Ամիրաների և արհեստավորության միջև ծագած քաշքշուկների հետևանքով, 1841 թ. հոկտեմբերի 3-ից ճեմարանը փակվում է, ապա վերաբացվում 1846 թ. հոկտեմբերի 1-ին և վերջնականապես փակվում 1860 թ.:

Պերպերյան Ավ., Պատմութիւն հայոց..., Պոլիս, 1871, էջ 496:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Երևան, 1955, էջ 76, 80, 89:

«Սովետական մանկավարժ», 1960, № 1 («Կ.Պոլսի Իսկյուտարի ճեմարանի պատմությունից»):

Մեպտեմբերի 22. Պոլսում ծնվեց բառարանագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն և հայերենից՝ ֆրանսերեն) Սամվել Գանթարյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1859 թ. ապրիլի 24-ից: Վախճ. 1908 թ. հոկտեմբերի 25-ին, Վենետիկում:

«Կեսարյան» և «Կայսերյան» կեղծանուններով ստորագրում էր «Բազմավեպ»-ում հրատարակվող իր թարգմանությունները:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

«Բազմավեպ», 1908, № 11 («Հանգիստ Սամուել Գանթարյանի»):

-Շուշիում ծնվեց աստվածաբան, բանասեր, հայագետ Աբրահամ Ամիրխանյանը: Վախճ. 1913 թ. փետրվարի 3-ին, Վառնայում (Բուլղարիա):

«Մշակ», 1913, № 38 («Աբրահամ Մուրադյան»):

-Պոլսում ծնվեց մանկավարժ, գրական-հասարակական գործիչ Համբարձում Իփեկչյանը: Վախճ. 1883 թ. դեկտեմբերի 3-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1915, էջ 95:

Պարոնյան Հ., Երկերի ժողովածու (տասը հատորով), Երևան, 1964, հատ. 2, էջ 196-205, 370:

-Նոր Նախիջևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Հովհաննես Բերբերյանը: Վախճ. 1917 թ.:

Նալբանդյան Մ., Անտիպ երկեր (խմբ. և ծանոթ. Աշոտ Հովհաննիսյանի), Երևան, 1935, էջ 721:

-Սըվազում ծնվեց գրող, թարգմանիչ (ֆրանսերենից և պարսկերենից՝ հայերեն) Թադևոս Կյոզուրյանը: Վախճ. 1910 թ. օգոստոսի 9-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1911, էջ 377:

-Ծնվեց եկեղեցական գործիչ, հողվածագիր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Սարգիս Բեկնազարյանը: Վախճ. 1894 թ. սեպտեմբերի 15-ին, Թիֆլիսում:

«Դէտ» կեղծանունով ստորագրում էր «Արձագանք»-ում:

«Արձագանք» 1884, № 108:

-Աստրախանում, Մերովբե սրբազանի նախաձեռնությամբ, բացվում է Աստրախանի հոգևոր ճեմարանը (սեմինարիա), որն իր գոյությունը շարունակում է մինչև 1848 թ., ապա փակվում: 1850 թ. մարտի 23-ից հոգևոր ճեմարանը վերսկսում է իր գործունեությունը Հովհաննես Աբգարյանի տեսչությամբ: Հոգևոր սեմինարիան վերջնականապես դադարեցվում է 1864 թ. հունվարի 1-ին:

«Արձագանք» 1892, № 140, («Աստրախանի սեմինարիայի բացման և փակման պատմությունը»):

-Զմյուռնիայում, Հակոբ ամիրա Սարգսյանի ջանքերով, հիմնվում է իգական վարժարան: Այրվելով 1845 թ., վերակառուցվում է Հռիփսիմե Կոստանդյանի ջանքերով և վերանվանվում «Հռիփսիմյան վարժարան»: Իր գոյությունը շարունակում է մինչև 1920 թ.: Վարժարանը ծաղկուն ժամանակ ութդասյա էր և ուներ մոտ 200 աշակերտուհի:

«Հանդես ամսօրյա», 1890, № 5 («Զմյուռնիա և ազգայինք»):

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, մասն Բ, Պոլիս, 1893, էջ 126-142:

-Վենետիկում հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Յաւարտ տպագրութեան մեծի հայ բառագրոց ... տաղ» ձոնը: 6 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Եղիշեի գործերի լիակատար ժողովածուն «Սրբոյ հօրն մերոյ Եղիշեի վարդապետի մատենագրութիւնք» խորագրով («Մատենագրութիւն նախնեաց»): Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Սուքիաս Սոմայլանի և Ներսես Սարգիսյանի: 307 էջ:

-Վենետիկում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Գրիգոր Տղայի և Ներսես Լամբրոնացու նամակների ժողովածուն՝ «Նամականի» խորագրով («Ընտիր մատենագիրք»): 339 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1865 թ.:

-Վենետիկում, աշխարհաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Ստեփաննոս Յազըճյանի «Համառոտ քերականություն գաղղիական լեզվի» աշխատությունը: 128 էջ:

Նույնը՝ 1849 թ.: 156 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ներսես Շնորհալու ժողովածուն՝ «Նամականի» խորագրով («Ընտիր մատենագիրք»): 332 էջ:

- Վենետիկում հրատարակվում է Գրիգոր Լուսավորչի գործերի ժողովածուն՝ «Գրիգորի Լուսավորչի Յաճախապատում և աղօթք» խորագրով («Մատենագրությունք նախնեաց»): 222 էջ:
- Պարունակում է Գրիգոր Լուսավորչի կամ նրան վերագրվող քսաներեք ճառեր:
- Վենետիկում հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Սրբազան պատմություն» աշխատության առաջին հատորը: 705 էջ:
- Երկրորդ հատորը («Պատմություն քահանայապետաց Հռովմայ»)՝ նույն թվականին: 605 էջ:
- Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Մանկավարժ, որ պզտի տղոցը վարժությանը համար աղեկ գրույցներ կընե» գիրքը: 75 էջ:
- Զմյուռնիայում, աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Զբոսարան մանկանց հոգևոր տաղերու և խրատներու և բնական պատմություններու» ժողովածուն: 288 էջ:
- Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Առաջնորդ ծնողաց, որ կը ցուցնե, թե ծնողք ինչ կերպով իրենց զավկները պիտի կրթեն» աշխատությունը: 67 էջ:
- Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է «Վարք նահապետաց և մարգարեից, գեղեցիկ խրատներով և օրինակներով զարդարված, խոսակցության ձևով» աշխատությունը: 292 էջ:
- Մոսկվայում հրատարակվում է Կարապետ Պոպովի (Պապյան?) «Նախադրումն վարժութեան բովանդակիչ համառոտ այբբենարանի, հեզ սաղմուսի, խոստովանություն հաւատոյ և ինչ-ինչ գիտելեաց քերականութեան» աշխատությունը: 115 էջ:
- Մոսկվայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Ալեքսանդր Խուդաբաշյանի երկհատոր «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» աշխատությունը: Հատոր I (Ա-Կ), 33+613 էջ: Հատոր II (Հ-Ֆ), 530+III էջ:
- Պետերբուրգում հրատարակվում է Ալեքսանդր Խուդաբաշյանի «Գիրք նախակրթության հայկազեան լեզուի, յորում համառոտիւ բացատրին սկզբունք գլխաւոր գիտութեանց»-ը: ("Учебная книга Армянского языка, содержащая в себе сокращение пригготовительных наук"). 171 էջ:

Վերջում (էջ 165-171) զետեղված է «Յաղագս ի Մոսկով կառուցեալ Տեարց
Լազարեանց Հայկական ճեմարանի Արեւելեան լեզուաց» հատվածը, ուր համառոտ
տեղեկություններ է հաղորդվում Լազարյան ճեմարանի մասին:

-Թիֆլիսում հրատարակվում է Խաչատուր Աբովյանի «Նախաշավիղ» դասագիրքը: 96 էջ:

Հակոբյան Պ., Աբովյանի «Նախաշավիղ»-ի տպագրության թվականը, («Սովետական գրակա-
նություն և արվեստ», 1952, № 7, էջ 164-171):

-Թիֆլիսում հրատարակվում է Հակոբ և Դավիթ Արզանյանների կազմած «Դարաստան
հատուկտիր գրուածոց հայ մատենագրաց, ի պէտս ընթերցանութեան և թարգմա-
նութեան ի հայոց լեզուէ ի ռուս» ("Хрестоматия армянская, в пользу Закавказских
училищ") դասագիրքը: 150 էջ:

-Պոլսում հրատարակվում է Մարութե դպիր Պողոսյան Վառնացու «Վաճառումն Յով-
սեփայ» չափածո ստեղծագործությունը: 328 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Հովհաննես Տեր-Կարապետյանի (Չամուռճ-
յան) «Ընթացք հայերեն դպրության, կամ դյուրին ոճով ավանդյալ կանոնք հայերեն
գրավոր լեզվի (մասն Ա, Քերականություն)» աշխատությունը: 230 էջ:

Աշխատության հաջորդ՝ Բ և Գ մասերը, չնայած պատրաստ լինելուն, չեն հրատարակվել:

-Վիեննայում հրատարակվում է Ալեքսանդր Պալճյանի կազմած «Վայելչագրութիւն ի
չորս հատուած» ձեռնարկը:

-Վիեննայում հրատարակվում է Հակոբոս Պոզաճյանի «Համառօտ բառարան ի հայէ ի
տաճիկ» (հատոր Ա): 530 էջ:

Հատոր Բ, «Համառօտ բառարան ի տաճկականէ ի հայ» խորագրով (տաճկերեն
բառերը մեկնաբանվում են գրաբարով) 1841թ.: 1023 էջ:

-Էջմիածնում Մեսրոպ Թաղիադյանը գրում է «Երբ թքամանն թանաքաման» երգիծական
բանաստեղծությունը:

«Երբ թքամանն թանաքաման
Դարձեալ ետես յայս վեհարան,
Զի՞նչ այլ քեզ յոյս երջանկութեան,
Փախի՛ր փութով, Մեսրովպ Դավթեան»:

(Հիշյալ քառյակի և նրա հրատարակության հետ կապված բանասիրական պատմությունը տե՛ս **Մեսրոպ Թաղիադյան**, Գեղարվեստական երկեր, Երևան, 1965, էջ 81, 426):

1839

Հունվարի 1. Զմյուռնիայում սկսում է հրատարակվել «Շտեմարան պիտանի գիտելյաց» ամսագիրը: 1842 թ. վերջերից ամսագիրը դադարում է, վերսկսում է հրատարակվել 1844 թ. հուլիսի 1-ից: 1846 թ. հուլիսի 1-ից ամսագիրը կրկին դադարում է և վերսկսում հրատարակվել Պոլսում, 1854 թ. հունվարի 1-ից: Նույն թվականի վերջերին վերջնականապես դադարում է:

Փետրվարի 12. Կեսարիայում վախճանվեց գրական-եկեղեցական գործիչ Կարապետ եպիսկոպոս Դավթյանը: Ծնվ. 1749 թ.:

Գործերը հետագայում տպագրվել են մամուլում՝ «Կարապետ եպ. Կեսարիո» ստորագրությամբ:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 972.:

Փետրվար. «Շտեմարան պիտանի գիտելյաց»-ը (№ 2) աշխարհաբար հրատարակում է «Հարցմունք աստղերուն վրա» բանաստեղծությունը:

Մարտի 23. Բալույում (Տիգրանակերտի գավառ, այժմ՝ Թուրքիա) ծնվեց գրական գործիչ, թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Մ.Ա.Մելքոնը (Մելքոնյան): Վախճ. Կինսբերգում (ԱՄՆ, Կալիֆորնիայի նահանգ), 1910 թ. սեպտեմբերի 16-ին:

«Բազմավեպ», 1910, № 12 («Պրոֆ. Մ.Ա. Մելքոն»):

Ապրիլ. «Շտեմարան պիտանի գիտելյաց»-ը (№ 4) աշխարհաբար հրատարակում է «Պատրաստություն քնանալու» չափածո երկխոսությունը:

Մայիս. «Շտեմարան պիտանի գիտելյաց»-ը (№ 5) աշխարհաբար հրատարակում է «Մայիս» բանաստեղծությունը:

Մայիսի 19. Պոլսում վախճանվեց երաժշտագետ, երաժշտության տեսաբան Համբարձում (Պապա) Լիմոնճյանը: Ծնվ. 1768 թ., Պոլսում:

Ճիվանյան Ն., Առձեռն բառարան պատմական, աշխարհագրական և դիցաբանական հատուկ անվանց, Պոլիս, 1879 (Հավելված):

Ռուբեն Աբեղա, Բաբա Համբարձում Լիմոնճյան և հայ նոտագրության ծագումը, Էջմիածին, 1915, 22 էջ:

Հուլիսի 7. Պատավիճում (Բատավիա, այժմ՝ Ջակարտա, Ինդոնեզիա) վախճանվեց կենսագիր, լրագրող Հակոբոս Ջելայանը: Ծնվ. 1780 թ. հոկտեմբերի 7-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1804 թ.:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 222:

Հոկտեմբերի 15. Երևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, մանկավարժ Նահապետ Գրիգորի Աթանասյանը (հետագայում՝ Ղևոնդ քահանա): Վախճ. 1919 թ. հուլիսի 22-ին, Թաբախմեղայում (Վրաստան):

«Առանձար» և «Խիկար» կեղծանուններով թղթակցել է «Արծվի Վասպուրականի» հանդեսին:

«Ժողովրդի ձայն», 1919, № 154 («Ղևոնդ քահանա»):

Նոյեմբեր. Պոլսում (Խասգյուղ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանասեր Ստեփան Պողոսի Փափագյանը: Վախճ. 1888 թ. մարտի 16-ին:

1863-1868 թթ. Պոլսում հիմնադրել և խմբագրել է «Ժամանակ» կիսամյա հանդեսը: Այստեղ, և այլևայլ պարբերականներում, հանդես է եկել «Պերճ» կեղծանունով:

Զարդարյան Վ., Հիշատակարան..., Պոլիս, 1910, էջ 200:

Թեղդիկ. Ամենուն տարեցույցը, 1910, էջ 228:

-Պոլսում ծնվեց թատերագետ, դրամատուրգ, բանասեր Էմանուել Եսայանը: Վախճ. 1907 թ. օգոստոսի 25-ին:

Թեղդիկ. Ամենուն տարեցույցը, 1908, էջ 261:

«Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 657:

-Պոլսում (Խասգյուղ) ծնվեց գրական-հասարակական գործիչ Բարթող Թելյանը: Վախճ. 1912 թ. դեկտեմբերի 6-ին:

«Ցոլակն ալևոր» կեղծանվամբ հանդես էր գալիս «Բյուզանդիոն»-ում և «Մանգումիե էֆքյար»-ում:

«Մշակ», 1912, № 243 («Բարթող Թելյան»):

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (պարսկերենից՝ գրաբար) Պետրոս Քերեսթեճյանը: Վախճ. 1909 թ. փետրվարի 28-ին:

Պոլսում եղել է «Թերճիմանե ահվալ» օրաթերթի խմբագիրը:

Թեղդիկ. Ամենուն տարեցույցը, 1910, էջ 18:

«Ամսօրյա տեղեկատու», Պոլիս, 1909, պրակ 1 («Անհետացող դեմքեր»):

* Որոշ մանրամասնություններ մեզ հայտնել է Նահապետ Աթանասյանի որդին՝ Պարույր Աթանասյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

- Պոլսում ծնվեց նկարիչ, հայ նկարչության տեսաբան Հակոբ Տամատյանը (Ժորժ Տամատ): Վախճ. 1920 թ. դեկտեմբերի 24-ին, Լոզանում(Շվեյցարիա):
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 242: 1922, էջ 229:
- Պոլսում (Ղալաթիա) ծնվեց հրատարակիչ, գրող Պողոս Քերիշճյանը: Վախճ. 1903 թ. ապրիլի 23-ին:
Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 96:
- Պոլսում (Գուզլունճուք) ծնվեց թատերական գործիչ, դերասան Մանուկ Գրիգորի Սիսակը (Սիսակյան): Վախճ. 1897 թ.:
Շարասան, Թրքահայ բեմն ու իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 93-98:
- Պոլսում (Միջագյուղ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանասեր, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Գևորգ Աբդուլլահյանը (Աբդուլլահ): Վախճ. 1918 թ. ապրիլի 3-ին:
 «Բազմավեպ», 1919, № 1 («Գևորգ Աբդուլլահի կյանքն ու գործունեությունը»):
- Թիֆլիսում ծնվեց թատերական գործիչ Նապոլեոն Ամատունին: Վախճ. 1899 թ.:
ԳԱԹ, Ամատունու ֆոնդ:
- Թիֆլիսում ծնվեց բանաստեղծ, մանկավարժ, լեզվագետ Մարտիրոս Սիմոնյանը: Վախճ. 1883 թ. մարտի 29-ին:
 «Արձագանք», 1883, № 15 («Մարտիրոս Սիմոնյան»):
- Զիֆանոզ գյուղում (նաև՝ Ջեֆանոս, Ստեփաննոս. Տրապիզոնի վիլայեթ) ծնվեց ազգագրագետ, արձակագիր, բանահավաք Սարգիս Հայկունին (Սարգիս Հովհաննեսի Ղազարյանց): Վախճ. 1908 թ. հոկտեմբերի 17-ին, Էջմիածնում:
 «Մշակ», 1909, № 235, 247 («Սարգիս Հայկունի»):
 «Հանդես ամսօրյա», 1909, № 1 («Զգալի կորուստներ»):
- Զմյուռնիայում ծնվեց արձակագիր, բանասեր, թարգմանիչ (հունարենից՝ հայերեն, ֆրանսերենից՝ թուրքերեն, ֆրանսերենից՝ հայերեն) Գրիգոր Հովակիմի Զիլինկիրյանը: Վախճ. 1923 թ. փետրվարի 2-ին:1
 861-1862 թթ. (մինչև 1863 թ. Արմենակ Հայկունու հետ մեկտեղ) Զմյուռնիայում հրատարակել է «Ծաղիկ» հանդեսը, ուր և օգտագործել է «Պերճ» կեղծանունը:
Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 137, 151:
Ղազարյան Հ., Գրիգոր Զիլինկիրյան, Երևան, 1959, 135 էջ:

-Շուշիում ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրական հոդվածների հեղինակ Աբրահամ Ամիրխանյանը: Վախճ. 1914 թ. փետրվարի 3-ին Վառնայում (Բուլղարիա):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1914, էջ 391:

-Կյուրլե գյուղում (Թուրքիա) ծնվեց թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Պողոս Խոլտամյանը: Վախճ. 1913 թ. հունիսի 31-ին, Կեմլեիկում:

Անդ, էջ 396:

-Ալեքսանդրապոլում, Նիկողայոս եպիսկոպոսի ջանքերով, հիմնվում է ազգային հոգևոր ուսումնարան:

Ուսումնարանը 1871 թ. դեռևս գոյություն ուներ և գտնվում էր բարեկարգ վիճակում: Հետագա մանրամասնությունները մեզ պարզել չհաջողվեց:

«Արարատ», 1869, № 5 («Մի քանի տեղեկությունք»), 1871, № 4 («Հայոց հոգևոր ուսումնարան»):

-Պատանիներին ընթերցանության բազմաբովանդակ գրքեր մատուցելու նպատակով Վենետիկի Մխիթարյան միաբանությունը սկսում է թարգմանաբար հրատարակել աշխարհաբար պատմվածքներ և վիպակներ: Ուղեցույց ունենալով գերմանացի մանկագիր Քրիստափոր Շմիդդին (1768-1854) և գերագանցապես թարգմանելով "Jugendbibliothek" ընդհանուր խորագրի ներքո հրատարակվող նրա մատենաշարից, Մխիթարյանները մինչև 1854 թ. հրատարակեցին 15 հատորիկներ (վերահրատարակությունները չհաշված) և հիմք դրեցին «Մատենադարան մանկանց» մատենաշարին:

Ներկա, առաջին տարում հրատարակվում է «Ոթոն կամ կորսված տղու մը պատմություն» վիպակը: 72 էջ («Մատենադարան մանկանց», հատ. Ա: Նույնը անփոփոխ՝ 1853 թ.):

«Ձմեռվա իրիկուններ» պատմվածքների առաջին հատորը, 86 էջ և երկրորդ հատորը, 87 էջ («Մատենադարան մանկանց», հատ. Բ,Գ):

Նույնը անփոփոխ՝ (երկու հատորները միասին) 1858 թ.:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Եփրեմ Սեթյանի «Պատմություն Հայոց» դասագիրքը: 245 էջ:

Նույնը՝ 1843 թ.:

Ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած Հայկ-Բելի առասպելից մինչև Նադիր-Շահի թագավորությունը (1736):

- Վենետիկում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է «Մեկնութիւն գործոց առաքելոց, խմբագիր արարեալ նախնեաց յՈսկերեբանէ և յԵփրեմէ» աշխատությունը («Մատենագրութիւնք նախնեաց»): 458 էջ:
- Վենետիկում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Համառոտ քերականութիւն լատին բարբառոյ»: 148 էջ:
- Վենետիկում հրատարակվում է Մատթեոս Մաղաք-Թեոփիլյանցի «Կենսագրութիւն երևելի արանց» երկհատոր կենսագրական բառարանը: Հատոր առաջին՝ ԺԲ+984 էջ: Երկրորդ հատոր՝ 1071 էջ:
- Վենետիկում հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Առձեռն ճարտասանություն»-ը: 164 էջ:
Նույնը՝ 1856 թ.:
- Վենետիկում հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Առձեռն բանաստեղծություն» գրականագիտական-տեսական աշխատությունը: 204 էջ:
Նույնը համառոտ, նույն թվականին: 43 էջ
Նույնը լրացումներով ու հավելումներով՝ 1867 թ.: 221 էջ:
- Պոլսում վերահրատարակվում է Նարեկացու «Մատենանոցքույթեան» պոեմը «Նարեկ աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, հոգեկիր հռետորի: Բաշխեալ յինսուն և հինգ բանս հոգեսուն մաղթանաց: Նորապէս սրբագրեալ համեմատութեամբ հնագոյն և ընտիր-ընտիր ձեռագիր օրինակաց» խորագրով: 439 էջ:
- Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է Սենեքերիմ Տեր-Մինասյանի «Օրագրություն ճանապարհորդության» ուղեգրությունը:
Աշխատությունը գետեղվել է Զմյուռնիայում նույն թվականին հրատարակված «Եղանակ» օրացույցում (էջ 65-119): Ուղեգրության մեջ հեղինակը տեղեկություններ է հաղորդում Արևմտյան Հայաստանի 26 քաղաքների և գավառների մասին:
- Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Ապաշխարացոյց (Զղջման և ապաշխարության վրա խոսակցություն մը)» գիրքը: 280 էջ:

-Շուշիում հրատարակվում է Գրիգոր Տեր-Ավագյանցի «Համառոտություն փոքր քերականության գրաբառ լեզուի հայոց» աշխատությունը: 92 էջ:

1827 թ. Մոսկվայում հրատարակված Միքայել Սալլանթյանի «Քերականություն գրաբառ լեզուիս հայոց» աշխատության (տե՛ս այդ թվականը) համառոտությունն է:

-Շուշիում հրատարակվում է Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմություն կամ յիշատակ ինչ-ինչ անցից, դիպելոց յաշխարհին Ադուանից» աշխատությունը: 69 էջ:

-Շուշիում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Խաչատուր Տեր-Հոհանյանցի (Շամշադինեցի) «Համառոտ հայկազեան քերականություն» աշխատությունը: 236 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Հովհաննես Աղայանցի (Բայազետցի) «Քերականություն հայկական լեզուի» աշխատությունը: 119 էջ:

-Մոսկվայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Գրիգոր Սուքիասյանցի «Ուսուցիչ ռուսաց և հայոց լեզուաց, յօգուտ ուսումնասէր Հայոց և լեզվասէր այլազգեաց» դասագիրքը: 120 էջ:

-Պետերբուրգում, ռուսերեն և գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է «Գումար բարձրագոյն հրովարտակաց և արձանագրութեանց, վերաբերելոց առ հայկական Լազարեան ճեմարանն, որ ի Մոսկով, գոյգ ընդ ծանօթութեանց զհիմնարկութենէ, զկերպարանաւորութենէ և զնպատակէ ճեմարանին» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն: 259 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Վեցմասնյանի «Կրթություն քրիստոնէական վարդապետության, պատմություններով և խրատներով» աշխատությունը: 640 էջ:

-Վիեննայում գրաբար հրատարակվում է Ալեքսանդր Պալճյանի «Ընդհանուր տեսություն երկրագնտոյ» աշխատությունը: 117 էջ:

1840

Հունվարի 2. Մարաշում ծնվեց եկեղեցական գործիչ, հայ եկեղեցու պատմաբան Մատթեոս եպիսկոպոս Միայանը: Վախճ. 1915 թ., Պոլսում

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. 1, Կահիրե, 1937, էջ 1043-1044:

Հունվարի 20. Թիֆլիսում ծնվեց թատերական գործիչ, դերասան Գևորգ Միրադյանը:

Վախճ. 1875 թ. հունվարի 22-ին:

«Վահունի» կեղծանվամբ հանդես էր գալիս ժամանակի մամուլում:

ԳԱԹ, Միրադյանի ֆոնդ:

Փետրվարի 1. Նոր Նախիջևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Մանուկ Սադաթյանը: Վախճ. 1866 թ. Երևանում:

«Հյուսիսսփայլի պոեզիան», կազմեց Մ.Սադյանը, Երևան, 1956, էջ 347-387:

Փետրվարի 3. Չմյուռնիայում վախճանվեց դյուցազներգակ բանաստեղծ, գրական-հասարակական գործիչ Հովհաննես Վանանդեցին (Ամիրզադե Միրզայի Միրզա-յան): Ծնվ. 1772 թ. Վանում:

«Ոսկի դար Հայաստանի», Չմյուռնիա, 1841, էջ 1-16:

Մարտի 1. Յաշ (այժմ՝ Յասսի, Մոլդավիա) քաղաքի հայկական համայնքը՝ հասարակական-քաղաքական, կրթական, դպրոցական և նման այլ գործեր կարգավորելու նպատակով, ընտրում է հինգ հոգուց բաղկացած խորհուրդ (մեկ երեցփոխան, չորս հոգաբարձու), որը մշակում է գործունեության համապատասխան ծրագիր: Նույն թվականի հոկտեմբերի 8-ին Մոլդավիայի վոյեվոդ Միխայիլ Գրիգորովիչ Ստրուգան ընտրվածներին ճանաչում է որպես հայկական համայնքի ղեկավար և վավերացնում նրանց կազմած ծրագիրը:

«Արշալույս Արարատյան», 1842, № 75:

Ապրիլի 2. Պոլսում ծնվեց պատմաբան, տնտեսագետ, թարգմանիչ (իտալերենից, ֆրանսերենից, լատիներենից՝ հայերեն) Դավիթ Նազարեթյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1860 թ. հունվարի 17-ից: Վախճ. 1911 թ. հունվարի 17-ին, Վենետիկում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 224:

«Բազմավեպ», 1911, № 2 («Հանգիստ... Դավթի Նազարեթյան»):

Ապրիլի 5. Վրաստանի Բոլնիս-Խաչեն գյուղում (այժմ՝ Բոլնիսի) ծնվեց գրող, մանկավարժ, հրապարակախոս Ղազարոս Ստեփանի Աղայանը: Վախճ. 1911 թ. հունիսի 20-ին, Թիֆլիսում:

ԳԱԹ, Ղ. Աղայանի ֆոնդ, № 8:

Սաստրյան Ա., Ղազարոս Աղայան. կյանքն ու գործունեությունը, Երևան, 1940:

Մուրադյան Հ., Ղազարոս Աղայան, Երևան, 1941:

Մայիսի 31. Թիֆլիսում ծնվեց մանկավարժ, մշակութային գործիչ Վարդան Խաչատուրի Աբովյանը: Վախճ. 1896 թ. նոյեմբերի 16-ին, Էջմիածնում:

«Արարատ», 1896, № 11 («Վարդան Աբովյան»):

«Հանդես ամսօրյա», 1941, № 11 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Օգոստոսի 10. Զմյուռնիայում, Ղուկաս Պալղազարյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Արշալույս Արարատյան» (օրագիր քաղաքական, բանասիրական և առևտրական) պարբերականը:

1840 թ. նոյեմբերի 20-ից «Արշալույս Արարատյանը» դառնում է շաբաթաթերթ, 1845 թ. հունիսի 21-ից վերածվում է երկշաբաթաթերթի և 1887 թ. մարտին դադարեցնում իր գործունեությունը: Ղուկաս Պալղազարյանից հետո, 1879-1887 թթ., պարբերականը խմբագրել է Հարություն Սվաճյանը[†]:

Օգոստոսի 26. Պոլսում (Բերա) ծնվեց կատակերգակ-դերասան, լրագրող, թատերական գործիչ Դավիթ Կարապետի Թուրյանը (նաև Թրյանց): Վախճ. 1898 թ. օգոստոսի 20-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1898, № 150 («Դավիթ Թուրյան»):

«Սովետական Հայաստան» (օրաթերթ), («Տաղանդավոր կատակերգակը»), 1965, № 10:

Սեպտեմբերի 5. Աշտարակում ծնվեց բանաստեղծ, հրապարակախոս, գրական-մշակութային գործիչ Սմբատ Սիմեոնի Շահազիզը (Շահազիզյան): Վախճ. 1907 թ. դեկտեմբերի 24-ին, Մոսկվայում:

ԳԱԹ, Ս.Շահազիզի ֆոնդ, № 123:

Веселовский Ю., Армянский поэт С. Шах-Азиз, М., 1905 г.

Մանուկյան Ա., Սմբատ Շահազիզ, Երևան, 1959, 144 էջ:

Հովասափյան Հ., Սմբատ Շահազիզ, Երևան, 1960, 260 էջ:

Հոկտեմբեր. Պոլսում (Առնաուտքոյ) ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (ֆրանսերենից և անգլերենից՝ հայերեն) Կարապետ Գարագաշը: Վախճ. 1902 թ. նոյեմբերի 21-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 673:

Հոկտեմբերի 21. Պոլսում (Բերա) ծնվեց բանաստեղծ, թատերագիր, գրական-մշակութային գործիչ Թովմաս Հակոբի Թերզյանը: Վախճ. 1909 թ. փետրվարի 8-ին:

ԳԱԹ, Թովմաս Թերզյանի ֆոնդ, № 56:

[†] Այս Հարություն Սվաճյանին չպետք է շփոթել նշանավոր հրապարակախոս, Մ. Նալբանդյանի գաղափարական զինակից Հարություն Սըվաճյանի հետ:

«Բազմավեպ», 1909, № 5 («Գրական կորուստներ»): 1936, № 8-12 («Թումաս Թերզյան»):

Նոյեմբերի 30. Պոլսում, Խաչատուր Ոսկանյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Ազդարար բյուզանդյան» (Կազեթա քաղաքական, բանասիրական, առևտրական և զբոսական) շաբաթաթերթը:

Նույն թվականի դեկտեմբերի 2-ից սկսում է հրատարակվել հայատառ տաճկերենով (պահելով հայերեն անվանումը): Դադարում է 1841 թ. վերջին:

Դեկտեմբերի 3. Պոլսում, Գևորգ Գրիգորյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հայտարար գիր լրո մեծի տերությանն Օսմանյան» շաբաթաթերթը, որը «Լրո գիր մեծի տերության Օսմանյան» շաբաթաթերթի շարունակությունն էր: 1846 թ. օգոստոսի 26-ից վերանվանվում է «Հայտարար լրագիր» և շարունակում իր գոյությունը մինչև 1849 թ.:

Դեկտեմբերի 12. Վանում ծնվեց բանահավաք, գրող, գրական-հասարակական գործիչ Գարեգին Ավետիսի Սրվանձտյանը: Վախճ. 1892 թ. նոյեմբերի 5-ին, Պոլսում:

ԳԱԹ, Գարեգին Սրվանձտյանի ֆոնդ, № 153:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Երևան, 1955, էջ 213:

-Վանում ծնվեց բանաստեղծ, թատերագիր Տիգրան Ամիրճանյանը: Վախճ. 1897 թ. մարտի 7-ին, իր ծննդավայրում:

«Գրական թերթ», 1967, № 30 («Պանդխտության երգիչը»):

-Ալեքսանդրապոլում իր գոյությունն է սկսում հայկական հոգևոր երեքդասյա (հետագայում՝ հինգդասյա) դպրոցը, որի հիմնադրման աշխատանքները սկսել էին 1839 թ.: Առաջին տեսուչն էր Հակոբ Շահբազյանը: Դպրոցը սկզբում ուներ 160, իսկ ծաղկուն ժամանակ՝ 850 աշակերտ: Գոյություն ուներ մինչև 1912 թ.: Հետագա մանրամասնությունները մեզ չհաջողվեց պարզել:

«Արարատ», 1869, № 9:

Ղլտճյան Ա., Համառոտ պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի, Ալեքսանդրապոլ, 1912, էջ 204:

-Նուխիում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Կոստանդին Պետրոսի Կամսարականը: Վախճ. 1922 թ. դեկտեմբերի 13-ին, Վիեննայում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1925, էջ 371:

-Արաբկիրում ծնվեց մանկավարժ, դասագրքերի հեղինակ Տիգրան Պոյաճյանը: Վախճ.

1925 թ., Հալեպում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 729:

-Ալեքսանդրապոլում ծնվեց (1842 ?) բանասեր Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարյանը:

Վախճ. 1892 թ. օգոստոսի 3-ին, Թավրիզում:

«Արձագանք», 1892, № 106 («Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարյան»):

-Ալեքսանդրապոլում ծնվեց (1840 ?) բանասեր, Հայաստանի պատմական հնությունների

ուսումնասիրող Հովհաննես Բաբայանը: Վախճ. 1889 թ. փետրվարի 1-ին:

«Արձագանք», 1889, № 4 («Հովհաննես Բաբայան»):

-Թիֆլիսում ծնվեց բանաստեղծ, մանկավարժ, գրական-հասարակական գործիչ, թարգ-

մանիչ (գրաբարից՝ աշխարհաբար, ռուսերենից՝ հայերեն) Խորեն Հարությունի

Ստեփաննես: Վախճ. 1900 թ. նոյեմբերի 14-ին:

1864-1879 թթ.՝ «Մանկավարժանոց» ամսագիրը (Թիֆլիսում, Ախալցխայում, կըր-

կին Թիֆլիսում, ապա Պետերբուրգում):

Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Ստեփաննոս Ստեփանի»,

«Ս.Ս.», «Իշխան Բագրատունի» կեղծանուններով:

«Արարատ», 1900, № 12, 1901, № 1 («Խորեն եպիսկոպոս Ստեփաննես»):

«Հանդես ամսօրյա», 1939, № 1-6 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»):

«Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 688-690:

-**1840** (?) Թիֆլիսում ծնվեց բանասեր, հայագետ Հովսեփ Փոնդոյանցը: Վախճ. 1883 թ.

հուլիսի 5-ին:

«Արձագանք», 1883, № 28 («Հովսեփ Փոնդոյանց»):

-Մամուքա գյուղում (Չահարմահալի գավառ, Պարսկաստան) վախճանվեց աշուղ Հարու-

թյուն Օղլին (Հովհաննես Հարությունյան): Ծնվ. 1760 թ. Ասադաբադ գյուղում (Չա-

հարմահալի գավառ, Պարսկաստան):

Երեմյան Ա., Աշուղ Հարթուն Օղլի, Թեհրան, 1946, 141 էջ:

-Թիֆլիսում ծնվեց արձակագիր, դասագրքերի հեղինակ Ջաքարիա Գրիգորյանը: Վախճ.

1910 թ. նոյեմբերի 11-ին:

«Մշակ», 1910, № 254, 261 («Ջաքարիա Գրիգորյան»):

-Տիգրանակերտում ծնվեց գրական-հասարակական, եկեղեցական գործիչ, լրագրող Գրիգոր Էնֆիեճյանը: Վախճ. 1886 թ., Պոլսում:

Պոլսում հրատարակել է «Մեճմուայի ախպար» («Տեղեկատու լուրերի») լրագիրը:

Պարոնյան Հ., Երկերի ժողովածու (տասը հատորով, հատոր երկրորդ), Երևան, 1964, , էջ 178-187:

-Պոլսում (Պալաթի) ծնվեց լրագրող-խմբագիր, բանասեր Գրիգորիս Ալեաթճյանը: Վախճ. 1899 թ. օգոստոսի 15-ին:

1863-1866 թթ. Պոլսում խմբագրել է «Թռչնիկ Պեգասյան», իսկ 1866-1868 թթ. «Պեգասյան թռչնիկ» վերանվանված լրագիրը:

«Արարատ», 1899, № 9 («Գրիգորիս եպիսկոպոս Ալեաթճյան»):

Տեր-Աստվածատրյան Հ., Բառարան հայ կենսագրութեանց, պրակ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 46:

-Պոլսում ծնվեց գրող, բանասեր, խմբագիր-հրատարակիչ Մինաս Գափամաճյանը: Վախճ. 1892 թ. մարտի 10-ին:

1877 թ. Պոլսում հրատարակել է «Ապագա» օրաթերթը, իսկ 1880-1885 թ.՝ «Լույս» հանդեսը: «Միսակ» կեղծանունով 1870-1879 թթ. թղթակցել է «Մասիս»-ին:

«Արևելք», 1892, № 2493 («Մինաս էֆ. Գաբամաճյան»):

-Երևանում ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Ռուբեն Հասան-Ջալալյանը: Վախճ. 1918 թ.:

«Հյուսիսափայլի պոեզիան», կազմեց Մ.Սաղյանը, Երևան, 1956, էջ 269-275:

-1840 (?) Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց աշուղ Հազիրին (Համբարձում): Վախճ. 1876 թ., իր ծննդավայրում:

«Հայ աշուղներ» (կազմ. Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյանի), Երևան, 1937, էջ 208, 515:

«Հայ գուսաններ» (կազմ. Գ. Թարվերդյան, խմբ. Ա. Նազինյանի), Երևան, 1957, էջ 174-175, 283:

-Վախճանվեց աշուղ Գյուրջի Նավեն: Ծնվ. ?:

«Հայ գուսաններ» (կազմ. Գ. Թարվերդյան, խմբ. Ա. Նազինյանի), Երևան, 1957, էջ 92-98, 282:

-Բուխարեստում (Ռումինիա) ծնվեց թատերական գործիչ, դերասան Գարեգին Ռշտունին: Վախճ. 1879 թ., Սելանիկում:

Շարասան, Թրքահայ բեմն ու իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 99-105:

-Ծնվեց բանահավաք, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Գևորգ Տեր-Ալեքսանդրյանը: Վախճ. 1890 թ., Թիֆլիսում:

1866-1867 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Վաճառական» շաբաթաթերթը:

Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, № 100:

-Պոլսում ծնվեց դրամատուրգ Սրապիոն Թոլյանը: Վախճ. 1919 թ. ապրիլի 30-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1921, էջ 327:

«Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1969, էջ 659-660:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Թեոփիլե Աստվածատուր-Հովսեփյանի

«Վարք սրբոց լատին եկեղեցվո» աշխատությունը: 636 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Սինաս Բժշկյանի «Քերականութին հայկազնեան

լեզուի, բացատրեալ ի ռուսաց բարբառ» աշխատությունը: 278 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Հարություն Ավգերյանի «Բառգիրք ի գաղղիականէ ի

հայ և ի տաճիկ բարբառ»-ը: 739 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների ժողո-

վածուն՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի «Մատենագրու-
թիւնք» խորագրով: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու

ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու («Մատենագրութիւնք նախնեաց»):

535 էջ:

Հիմնականում հանդիսանում է նախորդի (տե՛ս 1827 թ.) վերահրատարակությունը՝ «Բանք խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր առաքինութեան ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադարի» ճառի հավելումով:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Ստեփաննոս Յազըճյանի «Համառոտ

աշխարհագրություն դպրատան տղոց համար» դասագիրքը: 349 էջ:

Նույնը՝ 1847 թ.:

-Վենետիկում, Ֆրանսերեն-գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է Ֆրան-

սուա Ֆենեւոնի «Խրատք կամ տեսութիւն մարդկային կենաց» չափածո ստեղծագոր-
ծությունը:

Նույնը՝ 1841 թ.՝ Ֆրանսերեն-աշխարհաբար համատեղ տեքստերով:

-Վենետիկում, գերմաներենից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատա-

րակվում է «Երանյակ անունով Թանկոյի թագուհվոյն պատմությունը» վիպակը:

«Մատենադարան մանկանց», հատ. Ե, 77 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1859 թ.:

-Վենետիկում հրատարակվում է «Ի բարեբաստ ծնունդ քաջափայլ ասպետի պարոն Ալեքսանդրի Ռափայելի Ղարամեան» ներբողը: 8 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Առձեռն դիցաբանություն կամ առասպելախառն վեպ գրից և գրիւցագանց» աշխատությունը: 146 էջ:

Նույնը՝ 1867, 1885 թթ.:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Գլուխ եկեղեցոյ կամ Հռովմեական եկեղեցիին պահանջմունքները» գիրքը: 77 էջ:

Նույնը՝ Պոլիս 1853 (45 էջ) և 1870 (50 էջ) թթ.:

-Զմյուռնիայում, անգլերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Մայր որդեխնամ» գիրքը: 288 էջ:

-Շուշիում հրատարակվում է «Կրօնագիտություն կամ հոգեվարժություն քրիստոնեական» գիրքը: 200 էջ:

1831 թ. Մոսկվայում հրատարակված Սալլանթյանի «Կրօնագիտություն քրիստոնեական...» աշխատության համառոտությունն է, որը կատարել է Գրիգոր սարկավագ Տեր-Ավագյանը (Նախիջևանցի): Կատարված են նաև լրացումներ ու հավելումներ, այնպես որ հիշյալ աշխատությունը դիտվում է որպես ինքնուրույն գործ:

Վերջում գետեղված է Դերժավինի «Աստված» ներբողի գրաբար թարգմանությունը:

-Շուշիում հրատարակվում է Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյանի (Արցախեցի) «Տրամաբանություն»-ը:

Հեղինակը համառոտել է Անտոն Կովդինի համանուն աշխատությունը, միաժամանակ կատարել հավելումներ ու լրացումներ:

Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 570:

-Կալկաթայում վերահրատարակվում է «Կայսերական կարգադրությունք ի պետս Էջմիածնի» (Положение) գրքույկը: 40 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Մեսրոպեան շարադրիչ հայ և անգղիական լեզուաց, ի պետս դպրոցաց» ձեռնարկը: 72 էջ:

Համաստեղ գետեղված են հայերեն և անգլերեն տեքստերը, թեև հայերենը անգլերենի ճշգրիտ թարգմանությունը չէ, այլ նրա վերաշարադրանքը:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Մեսրոպեան այբբենարան առ ի պետս դպրոցաց» դասագիրքը: 60 էջ:

-Վիեննայում հրատարակվում է «Քաջի և աստուածասէր ասպետի պարոն Աղեքսանդրի Ռափայելի Ղարամեան նուէր սիրոյ» ներքողը:

Նույնը՝ 1843 թ.:

-Մոսկվայում, Շուշիի բողոքականները Լազարյան ճեմարանի տպարանում, երկրորդ տպագրությամբ, վերահրատարակում են մի քանի գրքույկներ արևելահայ աշխարհաբարով (տե՛ս 1832 և 1833 տարեթվերի տակ):

-Մոսկվայում Թովմաս Նազարյանցի, ռուսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Իվան Կայդանովի «Համառօտ գծագրութիւն Ռուսաց պատմութեան» աշխատությունը: 100 էջ:

-Պոլսում հրատարակվում է «Յայտարարութիւն ազգային ճեմարանին Երուսաղէմի որ յԻսկիւտար» գրքույկը: 10 էջ:

-Պոլսում հրատարակվում է Խոսրով Անձևացու «Մեկնութիւն ժամակարգութեան»-ը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Ճանիկ Սիմոնյանի: Է+252 էջ:

Ընդարձակ առաջաբանում հիշյալ գրքի դերը, արժեքն ու նշանակությունը տալուց հետո, Ճանիկ Սիմոնյանն ավելացնում է, որ ձեռքի տակ ունեցել է մեկ «յոյժ հնագոյն ձեռագիր օրինակ», որի հիման վրա էլ, սրբագրություններից հետո, կատարվել է նշված հրատարակությունը:

-Թիֆլիսում հրատարակվում է Հակոբ և Դավիթ Արզանյանցների «Քերականություն հայ համառօտ» աշխատությունը: 276 էջ:

-Վենետիկում Արսեն Բագրատունին գրում է «Անէծք ի ճանճս» երգիծական բանաստեղծությունը:

«Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Ա:

1 8 4 1

Հունվարի 28. Ղրիմի Կարա-Սուլում (նաև՝ Կարասուլաբար, այժմ՝ Բելոգորսկ) ծնվեց բանահավաք, պատմաբան, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Քերովբե Քուշներյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1865 թ. հունիսի 4-ից: Վախճ. 1891 թ. հուլիսի 9-ին, Դոնի Ռոստովում:

«Բազմավեպ», 1931, № 9:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 225:

Փետրվարի 11. Պոլսում (Բերա) ծնվեց եկեղեցական-հասարակական նշանավոր գործիչ, բանասեր Մաղաքիա Օրմանյանը: Ծնվ. 1918 թ. նոյեմբերի 19-ին:

«Տիրայր» կեղծանվամբ ստորագրել է «Մասիս»-ում՝ 1870-1879 թթ: «Քննասեր» և «Դանան եկեղեցացի»-ով՝ ժամանակի այլ պարբերականներում:

«Արձագանք», 1887, № 33 («Գեր. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյան»):

«Հանդես ամսօրյա», 1929, № 8-9 («Ծանոթությունք Մթամպոլո պատմության»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1907, էջ 31, 1921, էջ 325:

Փետրվար. Աբովյանը ձեռնամուխ է լինում իր «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» պատմավեպի գրությանը:

Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, Երևան, 1955, էջ 60-112:

Մարտի 1. Պոլսում, Գեորգ Փեշտիմալճյանի ջանքերով, հիմնվում է «Ուսումնական» ընկերությունը, որն իր առջև նպատակ էր դնում գրքեր և գեղարվեստական ընթերցանության համար «ամեն պիտանի բաները հրատարակելով հայոց մեջ ուսումը կենդանացնել»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1847 թ. կեսերը:

«Արշալույս արարատեան», 1841, № 26, 62, 85, 104:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 671-675:

Ապրիլի 6. Պոլսում, Իսկյուտարի ճեմարանի տնօրեն Հակոբ Մանվելյանի նախաձեռնությամբ, ստեղծվում է «Միական» անունը կրող ընկերությունը, որի նպատակն էր օգնել ճեմարանին: «Միական» ընկերությունը գոյություն ունեցավ մինչև հոկտեմբեր ամիսը:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, , Վիեննա, 1957, էջ 398:

«Ընդարձակ օրացույց», Պոլիս 1910, էջ 192:

Մայիս. Պոլսում (Խասգյուղ) ծնվեց երաժշտագետ, հայ երաժշտության տեսաբան Նիկոլոս Թաշճյանը: Վախճ. 1885 թ. սեպտեմբերի 9-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1909, էջ 241-244, 1923, էջ 255:

Մայիսի 14. Սամոշույվարում (Տրանսիլվանիա) ծնվեց բանասեր Գրիգոր Գովրիկյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1861 թ. մայիսի 9-ից, արքահայր՝ (VI) 1909 թ. հուլիսի 19-ից: Վախճ. 1931 թ. հունվարի 20-ին, Վիեննայում: «Ա.Բ.», «Բ»,

«Հովհան Անեցի», «Ա. Փիբաս», «Թղթակից» կեղծանուններով հանդես էր գալիս «Հանդես ամսօրյա»-ում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 15:
«Հանդես ամսօրյա», 1930, № 11-12 («Գրիգոր Գովրիկյան»):

Մայիսի 16. Շուշիում ծնվեց գրական-հասարակական գործիչ Մատթեոս Հախումյանը:
Վախճ. Թիֆլիսում:

«Լուսնա», 1903, № 6 («Գերմանական Դորպատ համալսարանը և նրա հայ ուսանողները»):

Հուլիս. Զյուռնիայում, Ղուկաս Պալղազարյանի և Ռուբեն Անդրեաս Փափազյանի ջանքերով, ստեղծվում է «Սյունյաց ընկերություն»-ը, որը կոչված էր զարկ տալու դպրոցական, գրական-մշակութային կյանքին հայոց մեջ: «Սյունյաց ընկերություն» իր գոյությունը պահպանեց մինչև 1845 թ.:

«Արշալույս Արարատյան», 1841, № 41, 47:
«Հանդես ամսօրյա», 1904, № 2 («Բժ. Սերգո Կարապետյան»), 1909, №12 («Ստեփան բժ. Գևորգյան»):

Հոկտեմբերի 11. Թիոնվիլում (Հյուսիս-Արևելյան Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի հայագետ Ժան Բատիստ Տանժեն: Վախճ. 1901 թ. հունիսի 28-ին, Պոլսում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1257:

-Օլմյունցում (Ավստրիա) ծնվեց ավստրիացի հայագետ Վիլհելմ Տոմաշեկը: Վախճ. 1901 թ. սեպտեմբերի 9-ին, Վիեննայում:

«Հանդես ամսօրյա», 1901, № 10-11 («Տոմաշեկ հանկարծամահ»):

-Պոլսում ծնվեց դերասան, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Տիգրան Տոմինյանը:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայելյան վարժարանաց»):

-Պոլսում (Խասազուղ) ծնվեց լրագրող, բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Նիկողայոս Թյուլպենտճյանը: Վախճ. 1886 թ. հունիսի 6-ին:

1875-1880 թթ. Պոլսում խմբագրել է «Լրագիր» օրաթերթը:

«Արձագանք», 1886, № 24:
Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1915, էջ 127:

-Պոլսում (Գում-Գաբու) ծնվեց դերասանուհի Արուսյակ Փափազյանը: Վախճ. 1907 թ. ապրիլի 28-ին:

Ստեփանյան Գ., Արուսյակ Փափազյան, Երևան, 1955, էջ 112:

-Պոլսում (Միջագյուղ) ծնվեց արձակագիր, գրական-հասարակական գործիչ Սրբուհի Տյուսաբը (Սրբուհի Սարգսի Վահանյան): Վախճ. 1901 թ. հունվարի 3-ին:

«Արևելք» (Պոլիս), 1901, № 4525 («Ազգային լուրեր»):

Շարուրյան Ա., Սրբուհի Տյուսաբ, Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1963, էջ 251:

-Վաղարշապատում ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ Արսեն քահանա Բագրատունի: Վախճ. 1911 թ. դեկտեմբերի 6-ին, Թիֆլիսում:

«Ընծայեցի» կեղծանունով հանդես էր գալիս «Աղբյուր» և «Տարագ» ամսագրերում:

«Աղբյուրի ակունքը», Թիֆլիս, 1908, պրակ 2, էջ 37:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1913, էջ 388:

-Վենետիկում հրատարակվում է Գաբրիել Այվազովսկու «Պատմութիւն օսմանեան պետութեան» աշխատությունը (Ա հատ.): 672 էջ: Հատ. Բ, 677 էջ:

Ընդգրկում է Թուրքիայի պատմությունը, սկսած Օսման Ա. Ղազիից (1259) մինչև սուլթան Մահմուդ Բ-ի մահը (1839):

Նույն տարում գիրքը հրատարակվում է նաև երեք հատորներով: Հատոր Ա, 637 էջ: Հատոր Բ, 546 էջ: Հատոր Գ, 344 էջ:

-Վենետիկում, Գաբրիել Ավետիքյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Օգոստինոս Հիպոնացու «Յաղագս քաղաքին աստուծոյ» երկհատոր աշխատությունը: Հատոր Ա, 684 էջ: Հատոր Բ, 676 էջ:

-Վենետիկում, Քերովբե Ազնաուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ժակ Բենին Բոսյուեի «Խօսք ի վեպս ազգաց» աշխատությունը: Հատոր Ա, 380 էջ: Հատոր Բ, 436 էջ:

-Վենետիկում, Էմիլ լը Վայյան դը Ֆլորիվալի՝ հայերեն բնագրից կատարված ֆրանսերեն թարգմանությամբ, հայերեն-ֆրանսերեն համատեղ տեքստերով, երկու հատորով հրատարակվում է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը: Հատոր Ա (ընդգրկում է Ա և Բ գրքերը), 389 էջ: Հատոր Բ (ընդգրկում է Գ գիրքը), 297 էջ:

Ֆլորիվալին օգնել է Գաբրիել Այվազովսկին:

-Վիեննայում, Մադաթիա Գարագաշյանի, Հովսեփ Գաթրճյանի և Ղևոնդ Հովնանյանի՝ ֆրանսերենից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ժակ Բենին Բոսյուեի «Խօսք վասն տիեզերական պատմութեան» աշխատությունը: ԺԴ+574 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Պոդոս Հովնանյանի «Հրահանգ աստեղագիտական, ի վերա գիսավոր աստեղաց» աշխատությունը: 202 էջ:

Առաջաբանում (էջ 1-10) պատմա-բանասիրական տեղեկություններ են հաղորդվում աստղաբաշխության մասին:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Մարիամ անուն պզտիկ աղջկան մը պատմությունը» վիպակը: 96 էջ:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Խաչնարածին աղջկանը, Եղիսաբեթին երջանիկ մահը» վիպակը: 47 էջ:

-Զմյուռնիայում հրատարակվում է «Բանալի ընթերցման կամ այբբենարան» աշխարհաբար դասագիրքը: 8 էջ:

-Զմյուռնիայում, անգլերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, դպրոցականների և ուսուցիչների համար հրատարակվում է «Համառոտ աստղաբաշխություն» ձեռնարկը: 100 էջ:

-Զմյուռնիայում հրատարակվում է Հովհան Վանանդեցու «Ոսկի դար Հայաստանի» չափածո վիպերգությունը: Վերջում՝ «Յորդորակ առ հայազգի մանկունս» բարոյախոսական հատվածը: 470 էջ:

Վիպերգությունն ունի «Վարք հեղինակի Ոսկեդարուս» վերնագրով առաջաբան (էջ 1-16), ուր տրված է Վանանդեցու մեզ հասած միակ լրիվ կենսագրությունը:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Պատմութիւն հին Հնդկաստանի, յանյիշատակ դարուց անտի՝ ցյարձակումն Մահմետականաց» աշխատության Ա հատորը: ԺԲ+236 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Ստեփաննոս Եղիազարյանի բանաստեղծությունների ժողովածուն՝ «Մանիշակք, քաղեալք առ ստորոտով Հեղիկունի» խորագրով: 24 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մարտիրոս Մկրտչյան Դավթյանցի կազմած այբբենարանը՝ «Վիկտորիա» վերնագրով: 108 էջ:

Նույնը՝ 1845 թ. Հովհաննես Ավդալյանի հավելումներով ու լրացումներով:

-Պոլսում, Հովսեփ Թավուցյանի՝ իտալերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Փոքր քաղաքներուն մեծ սիրտ մարդիկը» կատակերգությունը (չորս արարված): 104 էջ:

-Պոլսում, Հովսեփ Թավուգյանի՝ աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Բարոյական պատմություններ ի պետս մանկանց» ժողովածուն: 156 էջ:

-Պոլսում հրատարակվում է Միքայել Տեր-Պետրոսյան Պատկանյանի (Բեստեն) «Կրթություն բժշկական արվեստի» աշխատության Ա (210 էջ) և Բ (220 էջ) հատորները:

Գ (126 էջ) և Դ (130 էջ) հատորները՝ 1838 թ.:

Ե (173 էջ) և Զ (159 էջ) հատորները՝ 1839 թ.:

-Պոլսում, Նիկողայոս Զորայանի թարգմանությամբ, հրատարակվում է «Նամականի ընտանեկան»-ը: 135 էջ:

Թարգմանչի մասին գրքում նշված չէ: Տեղեկությունը վերցրել ենք Խ. Գուլանյանի «Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության (XVIII դարի վերջերից մինչև XIX դարի 90-ական թվականները)» աշխատությունից (Երևան, 1959, էջ 182-207):

-Պոլսում, իտալերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Պիետրո Մետաստազիոյի «Սրբազան գործողություններ» թատերական ստեղծագործությունների ժողովածուն: 119 էջ:

Զետեղված են. «Մահ Աբելի», «Իսահակ» և «Հովսեփ Գեղեցիկ կամ Հովսեփա նորեն գտնվիլը ու ճանչրցվիլը» գործերը:

-Պոլսում, գրաբար հրատարակվում է Մանվել Գյումուշխանեցու «Լուծ արմատոյն մերոյ» աշխատությունը: 171 էջ:

-Մոսկվայում, Հակոբ Կարենյանցի թարգմանությամբ, հրատարակվում է Պիետրո Մետաստազիոյի պիեսների ժողովածուն՝ «Եղերերգութիւնք» խորագրով: 160 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Կարապետ Պոպովի «Համառոտ բառարան Ռուսաց և Հայոց, բովանդակիչ 5800 պիտանեգույն բառից» աշխատությունը, 128 էջ:

-Էջմիածնում հրատարակվում է Հովհաննես Վանանդեցու «Կերակուր քահանայից» աշխատությունը: 104 էջ:

Նույնը՝ 1858 թ., 114 էջ:

Հիշյալ աշխատությունը լատիներենից հայերեն է թարգմանվել Վարդան անունով մի կրոնավորի ձեռքով, սակայն Վանանդեցին կատարել է բազմաթիվ հավելումներ ու լրացումներ:

Ապրիլի 15. Կահիրեում ծնվեց տնտեսագետ, բանասեր, բանահավաք Յաղուբ Արթին փաշա Չրաքյանը: Վախճ. 1919 թ. (?):

«Բազմավեպ», 1919, փետրվար:

Անդ, 1936, № 8-12 («Յաղուբ Արթին փաշա Չրաքյան»):

Հունիսի 24. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Ալեքսանդր Ղորղանյանը: Վախճ. 1899 թ. մայիսի 26-ին:

«Մշակ», 1899, № 94:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Հուլիսի 29. Եղիսաբեթուպոլում (Տրանսիլվանիա, այժմ մտնում է Ռումինիայի մեջ) Հովհաննես Գապտեպոլյանի ու Սիմոն Մարդովիչյանի ջանքերով, Ռաֆայել Ղարամյանի ֆինանսական օժանդակությամբ, հիմնվում է արական վեցդասյա դպրոց՝ «Ռափայեյան արական վարժարան»-ը:

«Հանդես ամսօրյա», 1904, № 5 («Պատմական»):

Սեպտեմբերի 22. Թիֆլիսում ծնվեց հայագետ, բանասեր, գրական-հասարակական գործիչ Ալեքսանդր Երիցյանը: Վախճ. 1902 թ. փետրվարի 9-ին:

«Լուսա», 1902, № 2 («Ալեքսանդր Երիցյան»):

Նոյեմբերի 4. Քերեմեթ գյուղում (Թուրքիա, Նիկոմեդիայի գավառ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, խմբագիր-հրատարակիչ Խորեն Աշրգյանը: Վախճ. 1899 թ. հոկտեմբերի 26-ին, Պոլսում (Մաքրի գյուղ):

1864-1878 թթ. Արմաշում հրատարակել «Հույս» ամսագիրը: Այստեղ և ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Ասողիկ» և «Ստեփանե» կեղծանուններով:

«Արձագանք», 1891, № 11 («Խորեն Աշրգյան»)

«Արարատ», 1899, № 12 («Տաճկահայք»):

Նոյեմբերի 19. Երևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանասեր (մասնագիտությամբ բժիշկ) Լևոն Տիգրանյանը: Վախճ. 1906 թ. փետրվարի 16-ին:

«Լուսա», 1906, № 1, էջ 86:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Ղեկտեմբերի 3. Ջմյունիայում ծնվեց բառարանագիր, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից, անգլերենից՝ հայերեն) Մեսրոպ Նուպարյանը: Վախճ. 1929 թ. դեկտեմբերի 4-ին, Մարսելում:

«Տեղեկագիր», 1961, № 6 («Մեսրոպ Նուպարյան»):

Դեկտեմբերի 16. Արմավիրում ծնվեց գրական գործիչ, թարգմանիչ (գերմաներենից, ռուսերենից, անգլերենից՝ հայերեն), լրագրող Փիլիպոս Հարությունի Վարդանյանը: Վախճ. 1916 թ. դեկտեմբերի 18-ին, Նախիջևանում:

"Армянский вестник", 1917, № 3 ("Памяти Ф.А. Вартапяна").

-Անկյուրայում ծնվեց հասարակական-եկեղեցական գործիչ Մկրտիչ Արքեպիսկոպոս Վեհապետյանը: Վախճ. 1910 թ. մայիսի 21-ին, Մարաշում:

«Արարատ», 1897, № 9-10:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 191, էջ 374:

-Զմյուռնիայում ծնվեց թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Սարիամ Մամուրյանը: Վախճ. 1927 թ. հունիսի 17-ին, Աթենքում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1928, էջ 651:

-Պոլսում ծնվեց դերասանուհի, թատերագիր Պայծառ Ֆասուլաճյանը (Փափագյան): Վախճ. 1911 թ.:

ԳԱԹ, Թատերական թանգարան, Ֆասուլաճյանի ֆոնդ:

-Պոլսում (Պալարթի) ծնվեց երաժշտագետ, հայ երաժշտության տեսաբան Ավետիս Խորասանճյանը: Վախճ. 1918 թ. մարտի 30-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1923, էջ 248:

-Պոլսում ծնվեց գրական, բանասիրական հոդվածների հեղինակ Նազար Գորոյանը: Վախճ. 1901 թ. դեկտեմբերի 27-ին, Թավրիզում:

«Բազմավեպ», 1902, № 4 («Նազար Գորոյանց»)

-Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Միքայել Փորթուկայանը (Միքայել փաշա Փորթուկալ): Վախճ. 1897 թ. նոյեմբերի 6-ին:

Ասատուր Հր., Դիմաստվերներ, Պոլիս, 1921, էջ 284:

«Հանդես ամսօրյա», 1930, № 5-6 («Ծանոթությունք Սթամպոլո պատմության»):

-Ծնվեց գրական-հասարակական գործիչ, խմբագիր-հրատարակիչ Նշան Պերպերյանը: Վախճ. 1907 թ. հունվարի 8-ին, Պոլսում (Բերա):

1882-1888 թթ. Պոլսում հրատարակել է «Բուրաստան մանկանց» ամսագիրը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1908, էջ 254:

-Ծնվեց գրական, եկեղեցական գործիչ, բանասեր, Էջմիածնի միաբանության անդամ Վահան վարդապետ Բաստամյանը: Վախճ. 1881 թ. նոյեմբերի 30-ին, Էջմիածնում:

1874-1876 թթ. Էջմիածնում հրատարակել է «Դպրոց» մանկավարժական ամսագիրը:

«Արարատ», 1881, № 12 («Վահան վարդապետ Բաստամյանց»):

-Զմյուռնիայում, Ռուբեն Անդրեաս Փափազյանի նախաձեռնությամբ, հիմնվում է «Հայկազյան ընկերությունը»: Ընկերության նպատակն էր «Այլևայլ գործք, հեղինակություն և թարգմանություն ի լույս ընծայել վասն առաջադիմության ազգիս»: «Հայկազյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1845 թ.:

Փափազյան Ստ., Կենսագրություն Ռուբեն Անդրեաս Փափազյանի, Պոլիս, 1859, էջ 15-16:

-Պոլսում, Պապա Ծերունու, Անդրանիկ Փափազյանի, Քրիստոստուր Ղազարոսյանի ջանքերով, հիմնվում է «Ս. Սահակա ընկերությունը»: Ընկերությունն իր առջև նպատակ էր դնում «դասագրքեր գնել դպրոցին համար, վճարել ուսուցիչներին, մրցանակներ շնորհել առաջադեմ աշակերտաց և ամսագիր մը հրատարակել»: «Ս. Սահակա ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1854-1855 թթ.:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. 1, Վիեննա, 1957, էջ 552-554:

-Պոլսում (Էյուբ) հիմնվում է չորսդասյա երկսեռ դպրոց «Առաքելյան» անվամբ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1905 թ.:

«Հանդես ամսօրյա», 1927, № 3-4 («Ծանոթությունք Սթամպոլոս պատմության»):

«Տարեցույց ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1901, էջ 162, 1904, էջ 329, 1909, էջ 69:

-Վենետիկում հրատարակվում է Կալլիսթենես Ոլյունթացուն վերագրվող «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ» աշխատությունը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու: («Մատենագրութիւնք նախնեաց»), 204 էջ:

Վերջում զետեղված է Խաչատուր Կեչառեցու «Բարատնութիւնք ի մահն Ալեքսանդրի» գործը:

-Վենետիկում հրատարակվում է Եղիշեի «Վասն պատերազմին Վարդանանց»-ը: Տեքստը հրատարակության է պատրաստել Արսեն Բանգրատունին: («Ընտիր մատենագիրք»), 394 էջ:

Վերջում զետեղված է «Բան խրատու յաղագս միանձանց» ճառը:

-Վենետիկում հրատարակվում է «Առակք Մխիթարայ Գոշի» ժողովածուն («Ընտիր մատենագիրք»): 190 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1854 թ.:

Զետեղված է Մխիթար Գոշին կամ նրան վերագրվող 190 առակ: Վերջում (էջ 169-190) «Առակք Ողիմպիանու» խորագրի ներքո զետեղված է Ոլիմպիանոսին վերագրվող 23 առակ:

-Վենետիկում հրատարակվում է Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը: Լատիներեն բնագրից թարգմանությունը, տեքստաբանական աշխատանքները, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Մկրտիչ Ավգերյանի: 96 էջ:

Վերջում զետեղված է «Ժամանակագրութիւնք երեք հազար և մեկ ամաց կարճի կարճոյ հաւաքեալ ի զանազան պատմութեանց հայ, ֆրանկ և Ասորի»:

-Պոլսում, Նիկողայոս Զորայանի աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանկլինի «Ռիքարտոսի իմաստությունը կամ հարստության ճամբան» գիրքը:

-Պոլսում հրատարակվում է Մարուգե դպիր մահտեսի Պողոսյան Վառնացու «Եղերերգութիւնք չարչարանաց Իսրաելացւոց» չափածո ստեղծագործությունը: 64 էջ:

-Պոլսում, Հովհաննես Տեր-Կարապետյանի (Չամուռճյան)՝ իտալերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Մելքիոր ճոայի քառահատոր «Քաղաքավարություն կամ ուսումն քաղաքական կրթության» աշխատության առաջին երեք հատորները: հատոր Ա՝ 221 էջ: Հատոր Բ՝ 275 էջ: Հատոր Գ՝ 270 էջ:

Զորրորդ հատորը՝ 1843 թ.՝ 172 էջ:

-Վիեննայում հրատարակվում է «Երգք առ գեր. Արիստակես Ազարեան» ներբողը: 10 էջ:

-Վիեննայում հրատարակվում է Մատթեոս Մաղաթեյանի «Բնական գիտություն կամ ֆիզիկա» աշխատությունը: 530 էջ:

-Վիեննայում Մաղաթիա Գարագաշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Լյուդովիկոս Ռասինի (Ղ. Հռակինոս) «Երգք վասն կրօնից» գիրքը: Ը+496 էջ:

- Վիեննայում, Ղևոնդ Հովնանյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Կոռնելիոս Նեպոտի «Վարք զօրավարաց անուանեաց» գիրքը: Դ+365 էջ:
- Էջմիածնում հրատարակվում է Հովհաննես Շահխաթունյանցի (Շահրիարցի) «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» երկհատոր աշխատությունը: Ա. հատոր, 290 էջ, Բ հատոր, 400 էջ:
- Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Երկու գառնուկներուն պատմությունը» վիպակը:
- Զմյուռնիայում, Գրիգոր Կոստանդյանի (Հմայակյանց)՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Տրամաբանութիւն հասարակ» աշխատությունը: 100 էջ:
- Թիֆլիսում, Արզանյանց եղբայրների տպարանում, արևելահայ աշխարհաբարով հրատարակվում է Անդրկովկասի գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրությունը խրախուսող ընկերության նախագահ Ե. Տեր-Ղուկասյանի «Կանոնք գործածականք» գրքույկը: 25 էջ:
 Նույն տարիներին, նույն տպարանում դարձյալ արևելահայ աշխարհաբարով, հրատարակվում է մի այլ գրքույկ ևս՝ «Կանոններ Ղրուզինո-Իմերեթինսկի դուբերնիայի» խորագրով (47 էջ), որի վրա, սակայն, տպագրության տարեթիվը չի նշված:
 «Լրաբեր», (ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. (1970, № 2), «Նյութեր արևելահայ գրական աշխարհաբարի պատմությունից»):
- Թիֆլիսում հրատարակվում է Սարգիս վարդապետ Զալալյանի «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» գրքի առաջին հատորը: 236 էջ:
 Երկրորդ հատոր՝ 1858 թ.: 250 էջ:
- Մոսկվայում, ռուսերեն և գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է «Բարձրագոյն հրովարտակք և արձանագրութիւնք վերաբերեալք առ եկեղեցիս դաւանութեան Լուսաւորչական հայոց, որ ի Ռուսաստան» փաստաթղթերի ժողովածուն: 435 էջ:
- Երուսաղեմում հրատարակվում է Ներսես Լամբրոնացու «Խորհրդածութիւնք սրբազան պատարագի»-ն: 191 էջ:

Վերջում գետեղված են Ոսկան Անտիոքցու՝ երեք ժառանգավորներին ուղղված ճառերը:

-Կալկաթայում հրատարակվում է «Դուռն քերականութեան ի պէտս աշակերտաց Մարդասիրական ճեմարանին» գրաբար դասագիրքը: 50 էջ:

1 8 4 3

Հունվարի 15. Թիֆլիսում ծնվեց գրական-թատերական գործիչ Վասիլ Շիրմազանյանը: Վախճ. 1917 թ. մարտի 24-ին:

«Հանդես ամսօրյա», 1938, № 9-12 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»):

Հունվարի 17. Երևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ Գուստավ Քալանթարյանը:

«Հանդես ամսօրյա», 1941, № 7-12 («Դորպատի հայ ուսանողությունը»):

Հունվարի 31. Նոյատինգում (Բավարիա, Հար. Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ Ջոն Շմիդտը (John Schmidt): Վախճ. 1904 թ. հունվարի 20-ին, Ֆրոնթետենում (Բավարիա):

«Հանդես ամսօրյա», 1905, № 8 («Կենսագրական»):

Մարտի 1. Ջմյուռնիայում, Խաչատուր Մելիքսեղւումյանցի, Պապի Պապոնյանի, Գևորգ Մահտեսի Խաչիկյանի ջանքերով հիմնվում է «Արագածունյաց ընկերությունը»: Ընկերության նպատակն էր զիր և գրականություն հրատարակելու միջոցով նպաստել հայ ժողովրդի կրթա-լուսավորական գործին: «Արագածունյաց ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1846 թ. կեսերը:

Գալենքյարյան Գ., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 79:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 136:

Մարտի 1. Գանձասարում (Ղարաբաղ) վախճանվեց հայկաբան, քերականագետ, բառաբանագիր Հովսեփ վարդապետ Տեր-Ավագյանը (Հովսեփ Արցախեցի): Ծնվ. Ղշլաղ գյուղում (Խաչենի գավառ):

Ծննդյան վերաբերյալ մանրամասնություններ մեզ չհաջողվեց գտնել: Հայտնի է, որ վախճանվել է խոր ծերության հասակում:

Լեռ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1915, էջ 85:

Մարտի 21. Մարոշ-Պոկադում (Հունգարիա) ծնվեց պատմաբան, թարգմանիչ (հայերենից՝ հունգարերեն և հունգարերենից՝ հայերեն), խմբագիր-լրագրող Խաչիկ Սոնկոդյանը (Կրիշտո Սոնկոդ): Վախճ. 1907 թ. հունվարի 24-ին, Կեռլայում (Հունգարիա)

1887 թ. մինչև իր մահը խմբագրել է «Արմենիա» հայագիտական ամսաթերթը (հունգարերեն):

«Հանդես ամսօրյա», 1907, № 3 («Խաչիկ Սոնկոդյան»):

Ապրիլի 4. Պոլսում վախճանվեց հայագետ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն, հայերենից՝ իտալերեն) Քերովբե Ազնաուրյանը: Ծնվ. 1791 թ. փետրվարին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1814 թվականից:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 221:

Մայիսի 1. Ախալցխայի Ծին-Ուպան (նաև՝ Ծինուբանի) գյուղում ծնվեց դերասան, գրական-թատերական գործիչ Հովհաննես (հետագայում՝ Միհրդատ) Հովհաննեսի Ամրիկյանը: Վախճ. 1879 թ. փետրվարի 5-ին, Թիֆլիսում:

1872-1873 թթ. «Չաքուշ» ստորագրությամբ ֆելիետոններ է տպագրել «Մշակ»-ում:

Չմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 139-144, 195:

Մայիս. Վենետիկում սկսում է հրատարակվել Վենետիկի Մխիթարյան միաբանության օրգան «Բազմավեպ» (այսինքն՝ բազում բաներ պատմող, բազում իրողություններ վիպող) պարբերականը: Հրատարակությունը նախորոշված էր սկսել 1843 թ. հունվարից, այդ հաշվով էլ կատարված էր նախնական բաժանորդագրությունը, սակայն հետաձգման պատճառ են հանդիսանում ներքին վեճերը: Սրանով հանդերձ՝ մինչև տարվա վերջ հրատարակվում են նաև նախորդ համարները: «Բազմավեպ»-ի հիմնադիր և առաջին խմբագիրն էր Գաբրիել Այվազովսկին: Հրատարակվում է առ այսօր:

1843-1857 թթ. հրատարակվել է որպես երկշաբաթաթերթ:

1858-1872 թթ.՝ որպես ամսագիր:

1873-1889 թ. մարտը՝ եռամսյա հանդես:

1889 թ. ապրիլից առ այսօր՝ ամսագիր:

«Բազմավեպ»-ի խմբագիրները.

Գաբրիել Այվազովսկի - 1843-1848:

Ղևոնդ Ալիշան - 1848-1851:

Օգսենտինիոս Գուրգենյան - 1852-1853:

Գրիգոր Ճելալյան - 1854-1856:

Հմայակ Պապիկյան - 1856-1857:

Գրիգոր Ճելալյան - 1858-1861:

Անտոն Սիոնիկ -	1861-1862:
Գրիգոր Ճեւայան -	1863-1866:
Աթանգինես Ղափթանյան -	1867-1870:
Հակոբոս Իսավերտենց -	1871-1872:
Կոմիտաս Իսկենտերյան -	1873-1875:
Արսեն Սուքրյան -	1875-1876:
Հմայակ Պապիկյան -	1876-1878:
Արիստակես Քասքանտիլյան -	1879-1882:
Աթանաս Տիրոյան -	1883-1888:
Հովհաննես Թորոսյան -	1889:
Թովմաս Էֆոյան -	1890-1892:
Եսայի Տայեցի -	1893-1896:
Հովհաննես Թորոսյան -	1896-1898:
Ստեփան Սարյան -	1898-1899:
Սիմոն Երեմյան -	1899-1905:
Դավիթ Նազարեթյան -	1905:
Աթանաս Տիրոյան -	1906:
Կարապետ Տեր-Սահակյան -	1906-1907:
Ներսես Տիրացոյան -	1908-1909:
Վարդան Հացունի -	1909:
Ներսես Անդրիկյան -	1910-1912:
Հովհաննես Ավգերյան -	1912-1915:
Ներսես Տիրացոյան -	1916-1917:
	1918-1919:
Գաբրիել Նահապետյան -	1919-1920:
Քերովբե Չրաքյան -	1920-1921:
Ղևոնդ Տայան -	1921-1927:
Կյուրեղ Քիպարյան -	1927-1929:
Վահան Հովհաննիսյան -	1929-1930:
Եղիա Փեչիկյան -	1930-1939:
Եսայի Գռուգյան -	1939-1942:
Մեսրոպ Ճանաշյան -	1942-

«Գեղունի» (նվիրված «Բազմավեպ»-ի Ա դարադարձին), Վենետիկ, 1943:
«Բազմավեպ», 1902, № 5 («Բազմավեպ» և յուր խմբագիրներն):

Մայիս 28. Զմյուռնիայում, Խաչատուր Մելիքսելունյանցի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հայրենասեր» (օրագիր քաղաքական, բանասիրական և առևտրական) շաբաթաթերթը: Նույն թվականի հոկտեմբերի 15-ից դադարում է և կրկին վերահրատարակվում 1844 թ. ապրիլի 10-ից: 1845 թ. հունիսի 21-ից «Հայրենասեր»-ը դառնում է կիսամսյա և այդ ձևով շարունակում իր գոյությունը մինչև 1846 թ. մայիսի 10-ը:

Հունիսի 10. Թիֆլիսում ծնվեց դերասան Ստեփաննոս Մատինյանը: Վախճ. 1880 թ.:

ԳԱԹ, Մատինյանի ֆոնդ:

Հունիսի 17. Պոլսում (Բերա) հիմնվում է իգական դպրոց, որը կրում էր «Անարատ հղության քերց վարժարան» անունը: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1922 թ.:

«Հանդես ամսօրյա», 1929, № 3 («Ծանոթությունք Սթամպոլոս պատմության»):

Հուլիսի 25. Պոլսում ծնվեց թատերական գործիչ Թովմաս Ֆասուլաճյանը: Վախճ. 1901 թ. Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

«Ծաղիկ», 1901, № 8 («Մահ Ֆասուլաճյանի»):

Օգոստոսի 3. Սամոշույվարում (Տրանսիլվանիա) ծնվեց աստվածաբան, բանասեր Վարդան Ըստկարյանը: Վիեննայի Միսիթարյան միաբանության արբահայր է ընտրվել (IV) 1884 թ. հուլիսի 12-ին: Վախճ. 1886 թ. հունիսի 15-ին, Տրիեստում:

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 13:

Հոկտեմբերի 3. Զմյուռնիայում ծնվեց հայագետ, թարգմանիչ (հունարենից, գերմաներենից, ֆրանսերենից՝ հայերեն) Թադևոս Թոռնյանը: Վիեննայի Միսիթարյան միաբանության անդամ էր 1861 թ. մայիսի 9-ից: Վախճ. 1928 թ. հունվարի 5-ին, Վիեննայում:

«Հանդես ամսօրյա», 1928, № 1-2 («Թադևոս Թոռնյան»):

Նոյեմբեր. Ադրիանապոլսում ծնվեց հռչակավոր երգիծաբան Հակոբ Հովհաննեսի Պարոնյանը: Վախճ. 1891 թ. մայիսի 27-ին, Պոլսում (Օրթագյուղ):

1871-1872 թթ. խմբագրել է «Եփրատ» շաբաթաթերթը, 1872-1874 թթ.՝ «Մեղու» կիսամյա հանդեսը, 1874-1877 թթ.՝ «Թատրոն» շաբաթաթերթը, 1883 թ.՝ «Ծիծաղ» երգիծաբանական հանդեսը, 1884-1888 թթ.՝ «Խիկար» ամսագրերը:

Նշված պարբերականներում և այլուր հանդես է եկել «Նետ», «Լուսարար», «Հոսհոս», «Մեղու», «Անանուն», «Ես», «Փայլակ», «Դուն», «Անիկա», «Ով է նե», «Դէտ», «Քամ», «Խիկար», «Ա.Ն.Պ.», «Ապտակող», «Փչող», «Թատրոն», «Սպինոզ», «Սպինքս», «Հեռադետ», «Հեռադետ ոմն», «Արգոս», «Զայլամ», «Որոտումն», «Լինկլունկ», «Կայծակ», «Փոթորիկ», «Արքիլիկոս», «Վահանաձուկ», «Զանգակ», «Բելիար», «Կայծորիկ», «Եսթեր», «Օտը սելց», «Հուշարար» կեղծանուններով:

Այս կեղծանուններից մի քանիսի ստուգությունը վիճարկելի է:

«Բազմավեպ», 1900, էջ 311 («Ուսումնասիրություն Պարոնյանի երկասիրությանց»):

«Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1963, № 3 («Հակոբ Պարոնյանին վերագրվող մի քանի ծածկանունների մասին»):

Ստեփանյան Գ., Հակոբ Պարոնյան, Երևան, 1964, 274 էջ:

Նոյեմբեր. «Բազմավեպ»-ը (№21) հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Ազգային երգերու և ուրիշ ավանդություններու վրա» ուսումնասիրությունը (կից գետեղված է «Նավով Աղթամար ելանք» ժողովրդական երգը): Ամսագիրը պարբերաբար սկսում է հրատարակել հայկական ժողովրդական երգեր, հանդիսանալով գիտական բանագիտության հիմնադիրներից մեկը հայ իրականության մեջ:

Դեկտեմբեր. «Արշալույս Արարատյան»-ը (№ 167) Տիգրան Սավալանյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ռասինի «Ֆեդրա»-ի 5-րդ գործողությունը («Նկարագիր մահուանն Հիպպոդիդեայ»):

Վերջեր. Պոլսում ստեղծվում է «Հայկական թանգարանային ընկերություն», որի նպատակն էր գրասիրություն արթնացնել ժողովրդի մեջ: Ընկերությունը հարատևեց մինչև 1868 թ.:

Իր գործունեության ընթացքում ընկերությունը կարողացավ հավաքել 6-7 հազար կտոր գիրք, 5-6 հարյուր ձեռագիր և 7-9 հազարի չափ եվրոպական գրականություն, որոնք ի սպաս դրվեցին Պոլսի հայ հասարակությանը: 1866 թ. այդ ամենը հրդեհի ճարակ դարձավ:

«Արևելյան դար», 1860, № 12, էջ 83:

«Ժամանակ», 1866, էջ 51-52:

-Սթենիայում (Վոսփորի ափ) ծնվեց գրական-հասարակական գործիչ, խմբագիր-լրագրող Հովակիմ Բեիզյանը: Վախճ. 1910 (?) թվականին:

1872-1875 թթ. Պոլսում խմբագրել է «Ասիա» պարբերականը:

Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 118:

-Պոլսում (Խասգյուղ) ծնվեց դրամատուրգ, թատերական գործիչ Թագվոր Նայանը: Վախճ. 1876 թ.:

Շարասան, Թրքահայ բեմն ու իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 109-116:

-Պոլսում (Խասգյուղ) ծնվեց հայագետ, բանաստեղծ Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանյանը: Վախճ. 1905 թ. փետրվարի 5-ին, Երուսաղեմում:

«Հայորդի» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Արարատ», 1905, № 2:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 399:

-Պոլսում վախճանվեց բանաստեղծ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Հովհաննես Եզեկյանը: Ծնվ. ? Պոլսում:

«Բազմավեպ», 1938, № 4-5 («Հովհաննես Եզեկյան»):

-Թիֆլիսում ծնվեց թատերագիր, նովելիստ Ալեքսանդր Հովսեփի Քիշմիշյանը: Ըստ այլ աղբյուրների՝ ծնվել է 1832-ին (տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 615): Վախճ. 1914 թ. փետրվարի 21-ին, Բաքվում:

Աճյունը տեղափոխվեց Թիֆլիս և թաղվեց Խոջիվանքի գերեզմանատանը՝ նույն թվականի մարտի 2-ին:

«Մշակ», 1914, № 40-46:

-Վանում ծնվեց հայագետ, բանասեր, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Խորեն Խրիմյանը: Վախճ. 1914 թ. փետրվարի 23-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1915, էջ 393:

-Զմյուռնիայում ծնվեց բանասեր, փիլիսոփա, հոգեբան Գալուստ Կոստանդյանը: Վախճ. 1898 թ. օգոստոսի 15-ին:

«Գ.Գ.Կ.» ստորագրությամբ (իմա՝ Գալուստ Գրիգորի Կոստանդյան) հանդես էր գալիս «Արշալույս արարատյան»-ում:

«Բազմավեպ», 1898, № 12 («Գալուստ Կոստանդյան»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1921, էջ 209:

-Մարաշում ծնվեց բանաստեղծ, երաժիշտ, եկեղեցական գործիչ Արիստակես Նուսխեճյանը: Վախճ. 1909 թ. դեկտեմբերի 1-ին, Ֆիլադելֆիայում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հատ. Ա, Կահիրե, 1937, էջ 1053-1054:

-Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, արքահայր Արիստակես Ազարյանի և տեղակալ Հակոբոս Պոզաճյանի ջանքերով, հայազգի մի քանի նշանավոր հարուստների (Ալեքսանդր Ղարամյան, Պետրոս Յուսուֆյան, Գրիգոր Աբելյան) նյութական օժանդակությամբ, հիմնում է «Արամյան ընկերությունը»: Ընկերության նպատակն էր՝ հայ ընթերցողների համար հրատարակել գեղարվեստական, հայագիտական-բանասիրական և թարգմանական գրականություն: Ընկերությունն առաջին գիրքը (**Մատաթիա Գարագաշյան**, Նկարագիրը ուսմանց, 364 էջ) լույս ընծայեց 1845 թ. և շարունակեց իր գործունեությունը մինչև 1920 թ.: Հիշյալ ժամանակահատվածի ընթացքում ընկերությունը հրատարակեց 16 անուն աշխատություն:

«Ցուցակ գրոց Մխիթարեան տպարանի», Վենետիկ, 1912, էջ 36:
«Հանդես ամսօրյա», 1937, № 9-10 («Հայտարարություն Արամյան ընկերության»):

- Վենետիկում, Քերովբե Ազնաուրյանի (Ազնավոր)՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Կլոդ Ֆլեորիի «Կենցաղ Իսրաելացուց և քրիստոնեից» պատմագրական աշխատությունը: 639 էջ:
- Վենետիկում, Սամվել Իսկենտերյանի՝ իտալերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Կեսար Գանթուի «Կարոլոսի Մոնթեվեքիացվո բարոյական և օգտակար խրատներ» ստեղծագործությունը: 192 էջ:
- Վենետիկում հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Մաղթանք չափաւ» չափածո աղոթքների ժողովածուն: 172 էջ:
- Վենետիկում, Եղիա Թովմաճանի՝ հին հունարեն բնագրից կատարված չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Հոմերոսի «Եղիական»-ը («Իլիական»): Հատոր Ա, 38+634 էջ, հատոր Բ, 634 էջ:
- Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Ժակ Բարտելեմիի «Ուղևորութիւն Կրտսերոյն Անաքարսեայ յԵլլադա» վեցհատորյա գիրքը: Հատոր Ա, 504 էջ, հատոր Բ, 564 էջ: Երրորդ հատորը՝ 1844 թ., 574 էջ: Չորրորդ հատորը՝ 1845 թ., 558 էջ: Հինգերորդ (530 էջ) և վեցերորդ (446 էջ) հատորները՝ 1846 թ.:

Յուրաքանչյուր հատորի վերջում թարգմանիչը «Տեղեկութիւնք» խորագրի ներքո կցել է գրական-բանասիրական բնույթի ճոխ և բազմակողմանի տեղեկություններ:

- Վենետիկում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Մովսես Խորենացու գործերի ժողովածուն՝ «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մատենագրութիւնք» («Մատենագրութիւնք նախնեաց»): 640 էջ:

Զետեղված են. «Պատմութիւն հայոց», «Թուղթ Սահակայ Արծրունեաց իշխանի առ Մովսէս Խորենացի», «Պատասխանին թղթոյն Սահակայ», «Պատմութիւն Հոնիսիմեանց», «Յաղագս Վարդավառին», «Յաղագս Պիտոյից», «Աշխարհացոյց Մովսիսի Խորենացոյ» գործերը:

- Վենետիկում հրատարակվում է Սուքիաս Սոմայանի «Բառգիրք համառօտ» եռահատոր բառարանը: Հատոր առաջին (անգլերեն-հայերեն-տաճկերեն): 444 էջ: Հատոր

երկրորդ (հայերեն-անգլերեն-տաճկերեն): 237 էջ: Հատոր երրորդ (տաճկերեն-անգլերեն-հայերեն): 239 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Մովսես Ամպերպոյանի չափաձև ստեղծագործությունը՝ «Քրիստոնեական քերթուած»: 150 էջ:

-Զմյուռնիայում, Հայրապետ Տ. Մավալանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ռընե Շատոբրիանի «Ադալա կամ երկու վայրենիներուն սերը» վիպակը:

-Զմյուռնիայում, Գրիգոր Հմայակյանց Կոստանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ֆենելոնի «Արկածք Արիստովնոսի» ստեղծագործությունը: 32 էջ:

-Զմյուռնիայում, անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով, հրատարակվում է Հովհաննես (Ջոն) Պընիանի «Քրիստիանոսին ու Քրիստինեին ճամբորդությունը այս աշխարհես հանդերձյալ աշխարհը, երազի ձևով» վիպասանությունը: 797 էջ:

Նույնը՝ Նյու-Յորքում անփոփոխ՝ 1858 թ.: 532 էջ:

-Զմյուռնիայում, բողոքական քարոզիչները ի թիվս մի շարք արևմտահայերեն կրոնական-դավանաբանական հրատարակությունների, լույս են ընծայում նաև Մաղմոսը՝ արևմտահայերեն և արևելահայերեն լեզուներով: Վերջինս, որ հաճախ կոչվում է նաև «Մաղմոս արարատյան», ունի հետևյալ վերնագիրը. «Գիրք սաղմոսաց, յեբրայական բնագրե ի հասարակ լեզու հայոց թարգմանեալ»: 277 էջ:

-Զմյուռնիայում հրատարակվում է Աբել Արարատյանի «Համառոտութիւն ազգասիրական սխրագործութեանց տեառն Ներսիսի նորընտիր հայրապետի ամենայն Հայոց» գրքույկը: 24 էջ:

Արտատպված է նույն թվականի՝ Զմյուռնիայի «Հայրենասեր» պարբերականից: Տրված է Ներսես Աշտարակեցու հասարակական-եկեղեցական գործունեության նկարագիրը 1808-1843 թթ.:

-Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի տպարանում հրատարակվում է Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը՝ «Սրբոյն Գրիգորն Նարեկայ վանից վանականի ողբերգութիւն» խորագրով: 303 էջ:

- Զմյուռնիայում, Մեսրոպյան վարժարանի տպարանում, հրատարակվում է Կորյունի «Պատմություն վարուց և մահուանն սրբոյն Մեսրոպայայ» աշխատությունը: 53 էջ:
- Վիեննայում հրատարակվում է «Նուէր սիրոյ առ Աղէքսանդր Ռափայել Ղարամէանց ընծայեալ ի մուտս նորոյ տարւոյ» չափածո գրքույկը: 12 էջ:
- Վիեննայում, աշխարհաբար մեկնաբանություններով, հրատարակվում են Ղևոնդ Հովնանյանի «Քերականություն գաղղիերեն լեզվի» եռահատոր աշխատության առաջին երկու հատորները: Հատոր Ա («Քերականություն և գրագիտություն»), 389 էջ: Հատոր Բ («Կրթություն Գաղղիերեն լեզվի»), 367 էջ: Հատոր Գ («Կրթությանց սրբագրածը»), 75 էջ, լույս է տեսել 1844 թ.:
- Նույնը (երեք հատորները միասին)՝ 1855, 1875 թթ.:
- Վիեննայում, Հովսեփ Գաթըրճյանի՝ հին հունարենից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Քսենոֆոնի «Կիրոսի խրատք»-ը: 14+570 էջ:
- Վիեննայում հրատարակվում է Ղուկաս Տերտերյանի «Խոնարհագոյն ուսողութիւն մաթեմատիկական» ձեռնարկի Ա հատորը՝ «Համարողութիւն և նշանագրովի համարողութիւն»: 450 էջ:
- Վերջում**, «Անուանք նշանագրովք համարողութեան» խորագրի ներքո զետեղված է մաթեմատիկական տերմինների հայերեն-գերմաներեն-ֆրանսերեն բառարան:
- Վիեննայում, Հովսեփ Գաթըրճյանի՝ հին հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Մարկոս Տուլիոս Կիկերոնի «Կատոն երեց, կամ թե վասն ծերութեան» աշխատությունը: 40 էջ:
- Թիֆլիսում, Ռոստոմ Երզնկյանցի՝ արևմտահայերենից կատարված գրաբար թարգմանությամբ հրատարակվում է Եփրեմ Սեթյանի՝ 1839 թ. Վենետիկում լույս տեսած «Համառօտութիւն պատմութեանն հայոց, վասն աշակերտաց ուսումնարանաց» դասագիրքը: 199 էջ:
- Պոլսում, Մկրտիչ Աղաթոնյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Քաղաքավարություն համառոտ, դաստիարակություն մանկանց» գրքույկը: 30 էջ:

Նույնը՝ 1846 թ.: 42 էջ:

- Պոլսում, աշխարհաբար բացատրություններով, հրատարակվում է Մարուքե դպիր մահտեսի Պողոսյանի «Քերականություն հայկական, հավաքյալ ի քերականական մատենից երևելի հեղինակաց հնուց և արդեաց» գիրքը: 286 էջ:
- Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Հովհաննես Չամուռճյանցի (Տեր-Կարապետյան) «Ճառ առաջին ժամանակի մարդոց կրոնական և մտավորական և բարոյական կրթությանը վրա» աշխատությունը: 172 էջ:
- Երուսաղեմում հրատարակվում է Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն»-ը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանը՝ Չաքարիա պատրիարք արքեպիսկոպոսի: 272 էջ:
- Մոսկվայում, Հ.Համազասպյանի՝ ռուսերենից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Թարգմանութիւն արձակ և ոտանաւոր, ի ռուսաց լեզուէ ի հայ բարբառ ի ժուկովսկիոյ, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկիոյ և Գնեղիչէ» ժողովածուն: 116 էջ:
- Վենետիկում Եղիա Թովմաճանը գրում է «Տաղերգութիւն ի մեծն Մխիթար Աբբայ» պոեմը:

«Տաղք Մխիթարեան վարդապետաց», հատ. Բ, 1853, էջ 169-175:

1844

Հունվարի 14. Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ Կարապետ Պազրկյան-յանը: Վախճ. 1929 թ. հուլիսի 16-ին, Նիս քաղաքում (Նիցցա, Հար. Ֆրանսիա):

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Կարապետ Պազրկյան»):

Հունվարի 27. Օբերհաուսբերգենում (Ստրասբուրգի մոտ, Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի հայագետ, հեղինակ «ՌԻսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության յարևմուտս» աշխատության, որը փոփոխություններով ու հավելումներով թարգմանել է Գ. Չարբհանայանը, Գուստավ Ադոլֆ Շրումպֆը (Gustaw Adolf Schrumph): Վախճ. 1892 թ. դեկտեմբերի 4-ին, Լոնդոնում:

Չարբհանայան Գ., ՌԻսումնասիրությունը հայ լեզվի և մատենագրության յարևմուտս, Վենետիկ, 1895, Առաջաբան:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1907, էջ 61:

Ալպոյաճյան Ա., Մինաս Չերազ. իր կյանքը և գործը, Կահիրե, 1927, էջ 265:

Մարտի 4. Պոլսում ծնվեց բանասեր, հայագետ Նորայր Բյուզանդացին (Հարություն Թեգոնց, Հարություն Գազեզյան): Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1866 թ. ապրիլի 8-ից (հետագայում հրաժարվեց միաբանությունից): Վախճ. 1916 թ., Վենետիկում:

«Հանդես ամսօրյա», 1921, № 1-2 («Կենսագրական»):

Մարտ. «Արշալույս արարատյան»-ը (№ 183) Մեսրոպյան վարժարանի աշակերտներից մեկի չափածո վերաշարադրմամբ, հրատարակում է Մխիթար Գոշի «Բամբակենի և սավսի» առակը:

Ապրիլի 4. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, գրող, մանկավարժ Սեդրակ Ավետիքի Մանդինյանը: Վախճ. 1915 թ. նոյեմբերի 28-ին:

ԳԱԹ, Սեդրակ Մանդինյանի ֆոնդ, № 104:

«Հանդես ամսօրյա», 1937, № 6-8 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»):

Ապրիլ. «Արշալույս արարատյան»-ը (№ 186) Մեսրոպյան վարժարանի աշակերտներից մեկի չափածո վերաշարադրմամբ, հրատարակում է Մխիթար Գոշի «Յունապի» առակը:

Մայիս. «Արշալույս արարատյան»-ը (№ 191) Մեսրոպյան վարժարանի աշակերտներից մեկի չափածո վերաշարադրմամբ, հրատարակում է Ոլիմպիանոսի «Էջ» առակը:

Ամառ. Պոլսում (Պալաթի) հիմնվում է «Արամյան ընկերությունը», որի նպատակն էր նըպաստել հայ մանուկների կրթական գործին: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1871 թ.:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. Ա, Վիեննա, 1957, էջ 498-500:

Հուլիս. «Արշալույս արարատյան»-ը (№ 199) Հայկ Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Բերանժեի «Աղքատ գինեզեն» բանաստեղծությունը:

«Հայկ Ստեփան Ոսկանյան», «Հ.Ս. Ոսկանյան», «Հ.Ս.Ո.» և »Հ.Ս.» ստորագրություններով «Արշալույս արարատյան»-ում (մինչև 1846 թ.) հանդես էր գալիս հրապարակախոս, խմբագիր Ստեփան Ոսկանյանը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 2, «Ստեփան Ոսկանյանի գրական առաջին փորձերը»):

Օգոստոս. Պոլսում վախճանվեց հասարակական գործիչ, բժշկության պատմության մասնագետ (մասնագիտությամբ՝ բժիշկ) Միքայել Տեր-Պետրոսյան Պատկանյանցը (Բեստեն): Ծնվ. 1774 (?) թ.:

«Հանդես ամսօրյա», 1898, № 12 («Բեստեն Միքայել բժ. Տեր-Պետրոսյան»):
«Լրաբեր», 1966, № 8 («Պատկանյանների տոհմաձառը»):

Օգոստոս. «Արշալույս արարատյան»-ը (№ 204) Հայկ Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Լաֆոնտենի «Ճպտուն եւ մրջին» առակը:

Դեկտեմբերի 23. Ալեքսանդրիայում (Եգիպտոս) վախճանվեց դիվանագետ, գրական-հասարակական գործիչ Պողոս Յուսուֆյանը: Ծնվ. 1774 թ. Զմյուռնիայում:

«Բազմավեպ», 1844, № 6 («Պողոս պեյ Յուսուֆյան»):

Տարեվերջեր. Պոլսում (Օրթագյուղ) ստեղծվում է «Թարգմանչաց ընկերություն» գրական-հասարակական կազմակերպությունը: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1856 թ. կեսերը:

Ընկերությունն իր առջև նպատակ էր դնում՝ «Նույն գեղին (Օրթագյուղի – Ս.Շ.) վարժարանը բարեկարգել և հայկաբանության ու գաղղիական լեզվին համար արժանավոր ուսուցիչներ հաստատելն էլ զատ, մեկ երկու օգտակար արհեստից համար ալ վարժապետներ կարգել»:
«Արշալույս արարատյան», 1845, № 224:

-Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ (մասնագիտությամբ իրավաբան) Գեորգ Գրիգորի Եվանգուլյանը: Վախճ. 1901 թ. սեպտեմբերի 16-ին:

ԳԱԹ, Գեորգ Եվանգուլյանի ֆոնդ, № 43:
«Մշակ», 1901, № 206 («Գեորգ Եվանգուլյան»):

-Զմյուռնիայում ծնվեց (1844 ?) խմբագիր, բանասեր Սրբուհի Երիցյանը: Վախճ. 1917 թ., Թիֆլիսում:

Պողոսյան Ե., Հայ խմբագրուհիներ, Վիեննա, 1953, 64 էջ:

-Կեյվե գյուղաքաղաքում (Թուրքիա) ծնվեց բանասեր, Էջմիածնի միաբանության անդամ Կյուրեղ եպիսկոպոս Սրապյանը: Վախճ. 1895 թ. մարտի 8-ին, Նոր Նախիջևանում:

«Արարատ», 1895, № 3 («Կյուրեղ եպիսկոպոս Սրապյան»):

-Թիֆլիսում ծնվեց աշուղ Բյուշուկ Մահճուլյին (Հովհաննես): Վախճ. 1899 թ., Պոլսում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1567-1578:

-Վանում ծնվեց քննադատ, լեզվագետ, դրամատուրգ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Եղիազար Մուրադյանը: Վախճ. 1891 թ. սեպտեմբերի 4-ին, Պոլսում:

«Արևելք», 1891, № 2291 («Եղիազար Մուրադյան»):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1927, էջ 566:

-Աղաբազարում (Թուրքիա) ծնվեց Բանասեր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հակոբոս Ճեճիզյանը: Վախճ. 1924 թ. հոկտեմբերի 5-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 725:

-Պոլսում ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Մկրտիչ Տասոյանը: Վախճ. 1911 թ. նոյեմբերի 15-ին, Փարիզում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1912, էջ 359:

-Պոլսում ծնվեց գրող, հասարակական գործիչ (մասնագիտությամբ՝ բժիշկ) Ռուբեն Ճելայանը: Վախճ. 1907 թ. ապրիլի 3-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1908, էջ 255:

-Վենետիկում, Անդրեաս Ծովիզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Կլոդ Ֆլետրիի «Քրիստոնեական վարդապետության պատմական» աշխատությունը: 392 էջ:

-Վենետիկում, անգլերենից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Չատագովություն ուղղափառ հավատո ընդդեմ նորադանդից, որ շարադրել է նորադանդութենե դարձած անգղիացի ասպետ մը» աշխատությունը: 276 էջ:

-Վենետիկում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Արիստակես Լաստիվերցու «Պատմություն»-ը («Մատենագրությունք նախնեաց»): 124 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Քերականություն բազմալեզու, յոթում բովանդակին սկզբունք արաբացի, պարսիկ, օսմանեան և թաթար բարբառաց, հանդերձ ծանօթութեամբ այլ և այլ լեզուաց» աշխատությունը: 192 էջ:

-Վենետիկում, Մկրտիչ Ավգերյանի՝ իտալերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Թաստնիի «Ապացոյցք կրօնի և պատասխանատուութիւնք» աշխատությունը: 1036 էջ:

-Վենետիկում վերահրատարակվում է «Գրիգորի Նարեկայ վանից վանականի ողբերգություն»-ը: 666 էջ:

- Վիեննայում, աշխարհաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Քերովբե Սպենյանցի «Քերականություն գերմաներեն լեզվի» աշխատությունը: 79 էջ:
- Վիեննայում, Հովսեփ Գաթրըճյանի՝ հին հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Կվինտոս Կուրտիոս Ռուփոսի «Վասն գործոց և արութեանց Ադեքսանդրի Մեծի» աշխատությունը: Հատոր Ա, 14+632, հատոր Բ, 512 էջ:
- Վիեննայում, Փիլիպոս Ճամճյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆոնսո Հոռդերիկոսի «Հրահանգք կատարման (ճառք երեք)» գիրքը: 316 էջ:
- Վիեննայում հրատարակվում է Մադաթիա Գարագաշյանի «Ճարտարախօսութեան արուեստ կամ ճարտասանութիւն» աշխատությունը: ԻԲ+300 էջ:
- Վաղարշապատում, Աբել Մխիթարյանի՝ ռուսերենից կատարած թարգմանությամբ, հրատարակվում է Իվան Կայդանովի «Հրահանգ համաշխարհական պատմութեան» աշխատությունը: 139 էջ:
 - Համառոտակի ներկայացված է համաշխարհային ամբողջ պատմությունը՝ սկսած քարե դարից մինչև XVIII դարի վերջը:
- Երուսաղեմում հրատարակվում է Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցու «Զանազանության բառարան արաբերեն և պարսկերեն բառերու» աշխատությունը: 41 էջ:
 - 1828-1840 թթ. Երուսաղեմում, հայատառ թուրքերենով հրատարակված նույն հեղինակի եռահատոր «Զանազանություն հինգ դարուց» աշխատության մեջ գործածված արաբերեն և պարսկերեն բառերի բառարանն է, բացատրված հայերենով և թուրքերենով:
- Պոլսում, Զարմայր Հովհանյանի՝ իտալերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Հարյուր բարոյական առակներ պզտի տղոց համար» ժողովածուն:
- Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Սերվիլչենի (Սերովբե Վիչենյան) «Բարոյական սկզբունք» գրքույկը: 48 էջ:
 - Նույնը՝ 1846, 1851 թթ.:
- Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 588 էջ:

-Պոլսում, Հովհաննես Չամուռճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Բլեզ Պասկալի «Խորհրդակցությունք» աշխատությունը: 541 էջ:

-Պոլսում հրատարակվում է Գրիգոր Փեշտիմալճյանի «Բառգիրք հայկազեան լեզուի, ի պէտս դիրութեան համբակաց վարժելոց ի հայկական ուսմունս» գրքի առաջին հատորը: Ը+764 էջ:

Երկրորդ հատոր՝ 1846 թ., 952 էջ:

Հատորները վերջում ունեն «Մնացորդք բառիս առաջին հատորոյս» և «Մնացորդք բառիս երկրորդ հատորոյս» հավելվածները:

-Զմյուռնիայում, Տիգրան Սավալանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ռընե Շատոբրիանի «Ռենադոս» («Ռենե») վիպակը: 78 էջ:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Գերմանիո եկեղեցական դիպվածները» («Թղթակցություն երկու բարեկամներու») գրքույկը: 16 էջ:

«Երկու բարեկամներից» մեկը Մկրտիչ Աղաթոնն է, իսկ մյուսն ունի Հ.Ա.Խ. ստորագրությունը, որի ով լինելը չկարողացանք պարզել:

1845

Հունվար. «Արշալույս արարատյանի» № 255-ում Գրիգոր Մարկոսյանի՝ պարսկերենից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Սաադիի «Արծիւ ինքնահաւան» առակը:

Փետրվարի 12. Պոլսում (Գուր-գաբու) ծնվեց եկեղեցական-հասարակական գործիչ, բանասեր Մատթեոս Իզմիրլյանը: Վախճ. 1910 թ. դեկտեմբերի 11-ին, Էջմիածնում:

«Հանդես ամսօրյա», 1911, № 1 («Մատթեոս Բ. Իզմիրլյան»):

Շիրվանզադե Ալ., Մատթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյան, Նոր Նախիջևան, 1908, 54 էջ:

Փետրվարի 27. Մոսկվայում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս, քննադատ Գրիգոր Երեմիայի Արծրունին: Վախճ. 1892 թ. դեկտեմբերի 19-ին, Թիֆլիսում:

1872 թ. Թիֆլիսում հիմնել է «Մշակ» լրագիրը և այն խմբագրել մինչև իր մահը:

«Ասիացի» և «Նիոբե» ստորագրությամբ ֆելիետոններ և թատերական գրախոսություններ էր տպագրում «Մշակ»-ում:

«Է շատ իրավացի» ստորագրությամբ հանդես էր գալիս «Մեղու»-ում:

Լեռ, Գրիգոր Արծրունի, հատ. Ա, Թիֆլիս, 1902, 477 էջ: Հատոր Բ, Թիֆլիս 1903, 551 էջ:

Փետրվար. «Արշալույս արարատյան»-ը (№ 226), Հայկ Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Լաֆոնտենի «Գորտն որ ջանայ գլել զեզն մեծութեամբ» առակը:

Մարտ. «Բազմավեպ»-ը (№5) սկսում է հրատարակել Պետրոս Մինասյանի «Յաղագս օգտակարութեանց և վնասուց թատերական հանդիսից» ուսումնասիրությունը:

Ավարտվում է հաջորդ համարում:

Հունիսի 15. Ալեքսանդրապոլում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հողվածագիր Սենեքերիմ Հայկազունին: Վախճ. 1897 թ. հունիսի 12-ին, Դաքքայում (Հնդկաստան):

«Հանդես ամսօրյա», 1923, № 1-2 («Բժիշկ դոկտոր Սեթ. Սամ.»):

Հունիս. «Արշալույս արարատյան»-ը (№ 234), Հայկ Ստեփան Ոսկանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած թարգմանությամբ, հրատարակում է Լաֆոնտենի «Կաղնի եւ եղեզն» առակը:

Հուլիսի 16. Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի և Սարգիս Շիրխոռյանի ջանքերով, հիմնվում է «Արարատյան ընկերությունը» (անդամներ՝ Հ. Սարգսյանց, Հովսեփ Աղաբեգյան, Մանուկ Զորարյան, Ավետիք Գալստանյան, Թաղևոս Ավետումյան): Ընկերությունը նպատակ էր դրել «Մատարել ոևէ կերպիվ ազգային գրականության զարգացմանն ի Հնդկահայս»: Գոյություն ունեցավ մինչև 1848 թ. հունիսը:

«Ազգասեր», 1846, № 69 («Ազգային»):

«Հանդես ամսօրյա», 1896, № 12 («Սարգիս բժիշկ Միքայելյան Շիրխոռյանց»):

Օգոստոսի 16. Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի խմբագրությամբ, սկզբում աշխարհաբար, հետագայում՝ գրաբար, հրատարակվում է «Ազգասեր» (օրագիր քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելյաց) շաբաթաթերթը: Իր գոյությունը շարունակում է մինչև 1848 թ. հունիսի 24-ը:

Գալենքյարյան Գ., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 81-88:

Օգոստոսի 23. Խալաֆլու գյուղում (Երևանի նահանգ) ծնվեց բանասեր, բանահավաք, Էջմիածնի միաբանության անդամ Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանը: Վախճ. 1906 թ. նոյեմբերի 10-ին, Աստրախանում:

«Արարատ», 1906, № 8-11, 1907, № 1:

ԳԱԹ, Սեդրակյանի ֆոնդ, № 144:

Օգոստոս. «Ազգասեր»-ը (№ 2) հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Տնտեսական» բանաստեղծությունը:

Օգոստոս. «Շտեմարան պիտանի գիտելյաց»-ը (№ 62) աշխարհաբար հրատարակում է «Բանաստեղծության երեք հռչակավոր սահմանները» ուսումնասիրությունը:

Քննում է Արիստոտելի, Բեկոնի և Ֆենելոնի տեսությունները պոեզիայի մասին:

Սեպտեմբերի 20. Թիֆլիսում, Իվանե Կերեսելիձեի «Կախարդված պրինց» պիեսի ներկայացումով, իր գործունեությունն է սկսում Անդրկովկասի ռուսական պրոֆեսիոնալ դրամատիկ թատրոնը: Վերջինս գտնվում էր փոխարքա Միխայիլ Սեմյոնիչ Վորոնցովի անձնական հովանավորության ներքո: Թատրոնը ներկայացումներ էր տալիս նաև ֆրանսերեն և իտալերեն լեզուներով: Գոյություն ունեցավ մինչև 1874 թ.:

«Բազմավեպ», 1934, № 4 («Ռուսահայ թատրոնի պատմությունը»):

Սեպտեմբեր. «Շտեմարան պիտանի գիտելյաց»-ը (№ 63) հրատարակում է «Հոմերոս» հոդվածը:

Սեպտեմբեր. «Ազգասեր»-ը (№ 7) հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Ի տես Գեորգայ յաշխարհին հնդկաց» բանաստեղծությունը:

Նոյեմբեր. «Ազգասեր»-ը (№ 16) հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Բարոյականք» քառյակը և (№ 13-ում) «Ծոյլ աշակերտ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 25. Թալասում (Կեսարիա, Թուրքիա) ծնվեց բանասեր, թարգմանիչ (պարսկերենից՝ հայերեն) Հարություն Թիրաքյանը: Վախճ. 1919 թ. մարտի 1-ին, Նյու-Յորքում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 2046-2048:

Դեկտեմբեր. «Արշալույս արարատյան»-ը (№ 249) ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Մալերբի «Արձանագիր» բանաստեղծությունը և, չափածո վերաշարադրությամբ, Ոլիմպիանոսի «Կաքաւ և որսորդ» առակը:

-Կեսարիայում (Թուրքիա) ծնվեց աշուղ Նադիրին (Նազարեթ Պոհզաճյան): Վախճ. 1904 թ.:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1572-1574:

- Կեսարիայում ծնվեց աշուղ Ճերիտին (Կարապետ Տաքեյան): Վախճ. 1922 թ. օգոստոսի 13-ին, Պոլսում:
 Անդ, էջ 1564-1655:
- Պոլսում (Պալաթի) ծնվեց թատերական գործիչ, դերասան Խաչիկ Փափազյանը: Վախճ. 1877 թ.:
Շարասան, Թրքահայ բեմն ու իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 109-112:
- Պոլսում (Սամաթիա) ծնվեց բանասեր, հոդվածագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Միսակ Արամյանը: Վախճ. 1909 թ. դեկտեմբերի 23-ին, Սալիանում:
- Պոլսում (Ղալաթիա) ծնվեց թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Երվանդ Խորասանը: Վախճ. 1925 թ. ապրիլի 14-ին:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 730:
- Պոլսում ծնվեց խմբագիր-հրատարակիչ, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Գրիգոր Պաղտասարյանը: Վախճ. 1919 թ. մարտի 29-ին, Պրուսայում:
 1869-1871 թթ. Պոլսում խմբագրել է հայերեն և հայաստառ թուրքերեն «Արարատ» շաբաթաթերթը:
 1897-1915 թթ.՝ «Ընդարձակ տարեցույց Արևելյան Ռբբանոցի»-ն:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1913, էջ 372, 1921, էջ 326:
- Աստրախանում վախճանվեց աշուղ Չերքեզը (Մկրտիչ Կարապետի Չերքեզյանց): Ծնվ. 1763 թ., Աստրախանում:
 «Հայ աշուղներ» (կազմեց Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյանի), Երևան, 1937, էջ 49, 504:
- Ծիպեռ գյուղում (Շապին-Գարահիսարի վիլայեթ) ծնվեց գրական-հասարակական գործիչ Եղիշե քահանա Գնունին: Վախճ. 1922 թ. հունվարի 31-ին, Զմյուռնիայում:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1923, էջ 414:
- Թիֆլիսում ծնվեց հասարակական գործիչ, արձակագիր Մարիամ Խատիսյանը: Վախճ. 1914 թ., փետրվարի 9-ին:
 «Մարիսյան» կեղծանվամբ հանդես էր գալիս «Մուրճ»-ում և այլուր:
 «Մշակ», 1914, № 31, 33:
- Վենետիկում վախճանվեց աստվածաբան, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Մեսրոպ Աղաչադյանը: Ծնվ. 1769 թ. հունիսի 4-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1791 թ.:

«Համառոտ տրամաբանութիւն» (հեղ. Տիւ Մարտէ), թարգ. Մեսրոպ Աղաչբաղյան, Վենետիկ, 1845 (Առաջաբանը):

-Մելիքքյանդ գյուղում (Ղազախ, այժմ՝ Ծաղկավան) ծնվեց դերասանուհի Քեթևան Արամյանը: Վախճ. 1878 թ. Քուրախիում:

«Թատրոն» (երկրորդ տարի), 1895, № 2 («Քեթևան Արամյան»):

-Ղարասուբագարում (Ղրիմ, այժմ՝ Բելոգորսկ) ծնվեց առակագիր Առաքել Նալբանդյանը: Վախճ. 1910 թ., Թիֆլիսում:

«Բազմավեպ», 1910, № 11 («Առաքել Նալբանդյան»):

"Бакы", 1910, № 214.

-Վիեննայում հրատարակվում է Մատթիա Գարագաշյանի «Նկարագիր ուսմանց, որ է բնութիւն, պատմութիւն, հարկ և օգուտ իւրաքանչիւր մասանց գրագիտութեան» ժողովածուն («Մատենադարան Արամյան ընկերության», հատ. Ա): 364 էջ:

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ լատիներեն բնագրից կատարված չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Պուրլիոս Վիրգիլիոսի «Էնեական» ստեղծագործությունը: 631 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Պետրոս Մինասյանի «Թատրերգութիւնք» ժողովածուն: 40+156+157 էջ:

Առաջաբանում (էջ 3-40) հեղինակն անդրադառնում է թատրոնի օգտակարության և վնասակարության հետ առնչվող մի շարք հարցերի:

-Վենետիկում, գրաբար և լատիներեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Հարություն Ավգերյանի «Դաւանութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց» աշխատությունը: 160 էջ:

-Վենետիկում, Մեսրոպ Աղաչբաղյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Դյու Մարսէի «Համառոտ տրամաբանութիւն» -ը: 95 էջ:

-Վենետիկում, Մկրտիչ Ավգերյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Մարկոս Տուլիոս Ցիցերոնի «Յաղագս պատշաճից» երկը: 153 էջ:

-Վենետիկում, Գեորգ Ջաքարյանի (Ջուղայեցի)՝ անգլերենից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է չինական բարոյախոսական առակների ժողովածուն՝ «Տնտեսութիւն մարդկային կենաց» խորագրով: 103 էջ:

Նույնը՝ 1865 թ., անփոփոխ:

- Վենետիկում հրատարակվում է Ռափայել Թրյանցի ճառերի ժողովածուն «Ճառք և ներբողեանք» խորագրով: 241 էջ:
- Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Ընտանի խոսակցություններ անգղիարեն, հայերեն, հունարեն և գաղղիերեն լեզուներով» խոսակցական բառարանը: 224 էջ:
- Պոլսում հրատարակվում է Գրիգոր Փեշտիմալճյանի «Դիմառնություն ի չարչարանս Քրիստոսի փրկչին մերոյ» չափածո ստեղծագործությունը: 311 էջ:
- Պոլսում, Հովհաննես Տեր-Կարապետյանի (Չամուռճյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Ճանապարհ երջանկության, որ է մարդս երջանկացնելու արվեստը» աշխատությունը: 376 էջ:
- Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը և մի քանի այլ գործեր: 389 էջ:
- Կալկաթայում աշխարհաբար հրատարակվում է Թադևոս Խաչիկ Ավետույանցի «Ճան ի վերա ազգային առաջադիմության» աշխատությունը: 109 էջ:

Սույն գործը առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպում» (1844, №№ 13, 18, 20), գրաբար («Բազմավեպում» առաջին մասն ունի «Յառաջադիմություն ազգային», իսկ հաջորդ երկու մասերը՝ «Ազգային յառաջադիմություն» վերնագրերը) և պատկանում է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ստեփաննոս Յազըճյանի գրչին: Նույն թվականին աշխարհաբար թարգմանությամբ վերահրատարակել է «Արշալույս արարատյանը» (№№ 217-220): Չնայած Թադևոս Խաչիկ Ավետույանցը, ըստ էության, առանձին գրքույկով վերահրատարակել է «Արշալույս արարատյանում» եղածը, բայց կատարել է բազմաթիվ հավելումներ այնպես, որ արդեն ինքնուրույն աշխատություն է:

- Էջմիածնում հրատարակվում է Պետրոս Աղամալյանի (Բերդումյան) «Աղբիր բացեալ»-ը: 12+158 էջ:

Աշխատությունը վեց ձեռագրերի հետ բաղդատել, սրբագրել և հրատարակության է պատրաստել Աբել Մխիթարյանը: Կազմի վրա «Տպագրելի մատեանք» խորագրի ներքո զետեղված են հրատարակության համար պատրաստ հետևյալ գրքերի վերնագրերը. «Իսահակ և Մեսրոպ. թատերգությունք ի գիւտ հայկական գրոց, ոտանաւոր, ամփոփ», «Աշխարհագրություն Կոստանդէայ Արսենեանց, թարգմանեալ ի Ռուսաց», «Արկած ի Հայաստան. ողբերգութիւն ի ռազմն Վարդանանց»: Այս գրքերի մասին ուրիշ տվյալներ մեզ հայտնի չեն:

- Էջմիածնում հրատարակվում է «Երգարան աղօթից, ի պէտս վաճառականաց եւ ճանապարհորդաց» ժողովածուն: 95 էջ:

Ժողովածուն կազմել է Պետրոս Աղամալյանը, հրատարակության է պատրաստել և ինքնուրույն ու այլ կրոնական բանաստեղծություններով ճոխացրել է Հովհաննես Շահխաթունյանը:

Զետեղված են 21 անուն չափածո և արձակ կրոնական գործեր:

1 8 4 6

Հունվարի 10. Պոլսում ծնվեց լեզվագետ, թարգմանիչ (հունարենից և լատիներենից՝ հայերեն) Սերովբե Տերվիշյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1866 թ. դեկտեմբերի 23-ից: Վախճ. 1891 թ. հունվարի 1-ին:

«Հանդես ամսօրյա», 1891, № 2 («Հ.Ս.Վ. Տերվիշյան»):

«Հուշարձան» (գրական ժողովածու), Վիեննա, 1911, էջ 37-39:

Հունվարի 12. Թիֆլիսում, գրաբար, Հակոբ Կարենյանի և Միքայել Պատկանյանի համատեղ խմբագրությամբ (հետագայում միանում է նաև Հակոբ Արզանյանը), սկսում է հրատարակվել «Կովկաս» (լրագիր քաղաքական և բանասիրական) շաբաթաթերթը: Հրատարակությունը շարունակվում է մինչև 1848 թ. սկզբները:

Փետրվարի 10. Վենետիկում վախճանվեց գրականագետ, բառարանագիր Սուքիաս Սոմալյանը: Ծնվ. 1776 թ. հունվարի 24-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1804 թ. դեկտեմբերի 9-ից: 1824 թ. հունիսի 4-ից արքահայր (4-րդ):

«Բազմավեպ», 1846, № 7 («Փոխումն յաշխարհես... Սուքիասայ Սոմալեանի»):

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 220:

Փետրվարի 15. Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի և նրա կնոջ՝ Շուշան Թաղիադյանի ջանքերով, հիմնվում է երկսեռ 4-դասյա (հետագայում հինգդասյա) վարժարան «Ս. Սանդուխտ» անվամբ: 1852 թ. գարնանը վարժարանը փոխադրվում է Չիչրա և պահպանում իր գոյությունը մինչև 1857 թ. կեսերը:

«Հանդես ամսօրյա», 1896, № 12 («Մարգիս բժ. Միքայելյան-Շիրխոռյան»):

Սանթրոսյան Ս. Մեսրոպ Թաղիադյանը մանկավարժ, Երևան, 1959, 128 էջ:

Փետրվարի 19. Խարբերդում ծնվեց բանասեր, պատմաբան Միքայել Խաչատուրյանը: Զոհվեց 1915 թ. հունիսին, Մալաթիայում:

«Հանդես ամսօրյա», 1910, № 1-3 («Հայ կաթողիկե կղերին նահատակները»):

Մարտի 17. Պոլսում (Բերա) տեղի է ունենում «Համազգյաց ընկերության» հիմնադիր ժողովը, որը հռչակում է հիշյալ ընկերության գոյության փաստը: «Համազգյաց ընկերությունը» պաշտոնապես սկսում է գործել 1846 թ. ապրիլի 1-ից: Ընկերության հիմնադիր-նախագահն էր Պետրոս Մինասյանը, անդամներ՝ Մկրտիչ Սամանձյանը, Հակոբ Դավուդյանը, Արմեն Լյուֆթյանը, Խաչատուր Գազազյանը, Հովսեփ Վարդանյանը, Կարապետ Թյուլպենտձյանը, Սարգիս Ասկերյանը, Սերովբե Ազնավուրյանը, Մկրտիչ Պեշիկթաշյանը (քարտուղար): «Համազգյաց ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1852 թ. սեպտեմբերը:

«Հայաստան» (Պոլիս), 1846, օգոստոսի 17:
«Արշալույս արարատյան», 1846, № 257:
«Մասիս», 1852, № 33:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1915, էջ 98:

Մայիսի 1. Պոլսում (Բերա), Ստեփան Ասլանյանի ջանքերով, ստեղծվում է «Նարեկյան ընկերություն»-ը, որի նպատակն էր նյութապես և բարոյապես նպաստել հայ մանուկների դաստիարակությանն ու ազգային կրթության զարգացմանը: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1850 թ.:

«Հանդես ամսօրյա», 1905, № 3 («Բժ. դոքտոր Ստեփան փաշա Ասլանյան»):
Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1957, էջ 56-57:

Մայիս. «Արշալույս արարատյան»-ը (№№ 258-262) աշխարհաբար սկսում է հրատարակել Գրիգոր Խապարաջի Կարապետյանի «Անտոն Գալլանտ (օրինակ բարի վարուց և ուսումնասիրության)» վիպակը:

Մայիս. «Ազգասեր»-ը (№ 39) Ջնթլում Մալխասյանցի՝ անգլերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Տաղերգութիւն» բանաստեղծությունը:

Հուլիսի 1. Պոլսում, Հովհաննես Տեր-Կարապետյան Չամուռձյանի (Տերոյենց) և Մկրտիչ Աղաթոնի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հայաստան» (Լրագիր քաղաքական, ազգային, բանասիրական և առևտրական) շաբաթաթերթը:

1848 թ. սեպտեմբերից մինչև 1849 թ. հուլիսը «Հայաստանը» հրատարակվում է առանց խմբագրի և Ազգային պատրիարքարանի միջոցներով: 1849 թ. հուլիսից շաբաթաթերթի պաշտոնական խմբագիր է նշանակվում Մկրտիչ Աղաթոնը, նույն թվականի դեկտեմբերի 17-ին դադարում է:

1850 թ. փետրվարի 6-ից, Հովհաննես Չամուռճյան-Տերոյենցի խմբագրությամբ «Հայաստանը» նորից սկսվում է հրատարակվել իբրև շաբաթաթերթ և 1852 թ. հունվարի 21-ին վերջնականապես դադարում է:

Գալենքյարյան Գ., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 93-98:

Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, № 6:

Հուլիսի 29. Տրիեստում (Հս. Իտալիա) վախճանվեց դրամագետ, գրական-հասարակական գործիչ Պետրոս Յուսուֆյանը: Ծնվ. 1778 թ. Զմյուռնիայում:

«Բազմավեպ», 1846, № 20 («Ազգային տեղեկությունք»):

Օգոստոս. «Ազգասեր»-ը (№ 53), Մեսրոպ Թաղիադյանի՝ անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Բայրոնի «Միայնակուրթին» բանաստեղծությունը:

Օգոստոս. «Արշալույս արարատյանը»-ը (№ 265) աշխարհաբար հրատարակում է «Բերանժե» հոդվածը:

Հոկտեմբերի 23. Թիֆլիսում, Գաբրիել Պատկանյանին թույլատրվում է ունենալ տղաների մասնավոր պանսիոն: Պանսիոնն իր գոյությունն սկսել է 1847 թ. հունվարի 16-ից, հարատևել է մինչև 1850 թ., ծաղկուն ժամանակ ունեցել է 19 աշակերտ և 5 ուսուցիչ:

Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 251-252:

Հոկտեմբերի 25. Փարիզում իր առաջին տարեշրջանն է սկսում Պաղուայից (Հս. Իտալիա) այստեղ տեղափոխված Մուրադյան վարժարանը: Նույն թվականի հունիսի 11-ին թագավոր Լուի Ֆիլիպը պաշտոնական հրովարտակով թույլատրում է այդ հաստատության գոյությունը: Առաջին տեսուչն էր Սարգիս Թեոդորյանը: Վարժարանը գոյություն ունեցավ մինչև 1870 թ. հուլիսի 24-ը, ապա փոխադրվեց Վենետիկ:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ-Ռափայեյան վարժարանաց»):

Հոկտեմբեր. Պոլսում ստեղծվում է «Իսկյուտարի ազգային ճեմարանի ընկերություն»-ը, որն իր առջև նպատակ էր դնում նպաստել Իսկյուտարի ճեմարանի գոյությանն ու գործունեությանը: Ընկերության նախագահն էր Հովհաննես Հովույանը, քարտուղարը՝ Մկրտիչ Աղաթոնը, իր շարքերում ուներ 80 անդամ: Գործունեությունը դադարեցնում է 1851 թ.:

«Կանոնադրութիւն Ընկերութեան Ազգային ճեմարանի Իւսքիւտարու, հաստատեալ հաւանութեամբ տեառն Մատթէոսի պատրիարզի», Պոլիս, 1847:

Դեկտեմբեր. Թիֆլիսում ուսերեն սկսում է հրատարակվել «Кавказ» քաղաքական և գրական թերթը: Իր գոյությունը շարունակեց մինչև 1917 թ.: Թերթի էջերում պարբերաբար գետեղվում էին հայ իրականությանը, մշակույթին, գրականությանը, հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող հոդվածներ, հրատարակվում էին հայ մտավորականների ուսումնասիրությունները:

«Акты...», т. 2, стр. 830 (доку. № 775).

Դեկտեմբեր. «Կովկասը» (№ 49) Խաչատուր Աբովյանի՝ գերմաներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակում է Ավգուստ-Ֆրիդրիխ Կոցեբուի «Ադելայիդայ ֆոն Դուֆինգենեան կամ արձանագիր բարբարոսության երեքտասաներորդ դարու» եղերերգությունը:

Շարունակվում է «Կովկաս»-ի 1847 թ. հունվարի 4-ի (№ 1) համարում և անավարտ է (տե՛ս **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Երևան, 1948, էջ 323-335, 366-368):

-Կարծախ գյուղում (Ախալքալաքի շրջան, Վրացական ՍՍՀ) ծնվեց նշանավոր աշուղ Ջիվանին (Սերովբե Լևոնյան): Վախճ. 1909 թ. փետրվարի 24-ին, Թիֆլիսում:

«Ջիվանու քնարը», լիակատար հավաքածու, հատ. Ա և Բ, Վաղարշապատ, 1900-1904, էջ 119-138:

«Ջիվանի» («Հայ նոր գրականության պատմություն», IV հատ.), Երևան, 1972, էջ 710-723:

Դեկտեմբեր. Չմյուռնիայում Վիեննայի Մխիթարյան միաբանությունը Մատթեոս Սաղաթեյանի տեսչությամբ, հիմնում է հայկական դպրոց: Դպրոցն իր դասատվությունն սկսեց 1847 թ. հունվարի 1-ից և գոյություն ունեցավ մինչև 1915 թ.:

«Արշալույս Արարատյան», 1847, №№ 274, 276, 282:

«Հանդես ամսօրյա», 1896, № 8 («Դպրոցական հանդես...»), 1903, № 6 («Թղթակցություն»):

-Տրապիզոնում Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Պետրոս Մինասյանի ջանքերով ստեղծվում է հայկական դպրոց, որը կանոնավորապես սկսում է գործել 1847 թ. և ծաղկուն ժամանակ ուներ 100 աշակերտ: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1848 թ. վերջերը:

Սարգիսյան Բ., Երկուհարյուրամյա կրթական գործունեություն Վենետիկ Մխիթարյան միաբանության, Վենետիկ, 1936, էջ 63:

-Պոլսում (Բերա) հիմնվում է երկսեռ վարժարան, որը կրում էր «Նարեկյան վարժարան» անունը: Գոյություն ունեցավ մինչև 1870 թ.:

«Հանդես ամսօրյա», 1929, № 2 («Ծանոթությունք Սթամպոլոս պատմության»):

-Պոլսում, Հովհաննես Գասպարյանի նախաձեռնությամբ, ստեղծվում է «Արամյան ընկերությունը»: Ընկերության նպատակն էր օժանդակել Պոլսում և գավառներում կայացող թատերական ներկայացումներին: «Արամյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1867 թ.:

«Արևելք», 1899, № 4-5:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերությունների, Վիեննա, 1957, էջ 57-59:

-Պոլսում (Բերա) ստեղծվում է արական դպրոց՝ «Համազգյաց վարժարան»-ը («Համազգյաց ընկերության» ֆինանսական և հոգևոր օժանդակությամբ): Վարժարանը գոյություն ունեցավ մինչև 1898 թ.:

«Հանդես ամսօրյա», 1929, № 3 («Ծանոթությունք Սթամպոլոս պատմության»):

-Պոլսում (Սամաթիա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, դրամատուրգ Ռուբեն Թութունջյանը: Վախճ. 1917 թ. հունվարի 7-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 677:

-Պոլսում (Գում-գաբու) ծնվեց գրական-հասարակական գործիչ, հայագետ, բանասեր Արահամ Այվազյանը: Վախճ. 1909 թ. սեպտեմբերի 5-ին:

1869-1882 թթ. եղբոր՝ Գևորգ Այվազյանի հետ մեկտեղ, Պոլսում հրատարակել է «Մամուլ» գավեշտական հանդեսը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1910, էջ 243, 1911, 366:

-Ծնվեց (1846 ?) գրական-եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ Սահակ վարդապետ Բաղդասարյանը: Վախճ. 1908 թ. հունվարի 24-ին, Թիֆլիսում:

1881-1883 թթ. եղել է «Արարատ» ամսագրի խմբագիր:

«Արարատ», 1908, № 2:

-Տիգրանակերտում ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, թարգմանիչ (թուրքերենից՝ հայերեն) Մաղաքիա Տերունյանը: Վախճ. 1922 թ. սեպտեմբերի 28-ին, Պոլսում (?):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1923, էջ 418:

-Զմյուռնիայում ծնվեց թարգմանիչ (ֆրանսերենից, իտալերենից՝ հայերեն), լրագրող, գրական-հասարակական գործիչ Գրիգոր Մսերյանը: Վախճ. 1893 թ. օգոստոսի 15-ին:

1880-1882 թթ. Զմյուռնիայում հրատարակել է «Մետեորա» տարեգիրքը:

Ժամանակի պարբերականներում և առավելապես «Արևելյան մամուլ»-ում (1872 թվականից) հանդես է եկել «Սյունի», «Գր. Մսեր», «Ասողիկ» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1911, էջ 274:

«Տեղեկագիր» (Հայկական ՄՍՀ ԳԱ հաս. գիտ.), Երևան, 1962, № 6:

-Նոր-Ջուղայում ծնվեց աշուղ Մարտիրոս Մանուկյանը (աշուղ Մատուկ): Վախճ. 1922 թ.

հունիսին:

«Հանդես ամսօրյա», 1926, № 5-6 («Պարսկահայ նորագույն աշուղներ»):

-Կալկաթայում հրատարակվում է Թաղևոս Խաչիկ Ավետումյանի «Արամայիս որ է բարոյական ստեղծաբանություն» վիպակը: 160 էջ:

Հատվածաբար հրատարակվում է «Ազգասեր»-ի 1845-1846 թթ. համարներում: Քանի որ վերջինս սկզբում լույս էր տեսնում աշխարհաբար, և հետո միայն փոխվեց գրաբարի, այդ պատճառով էլ «Արամայիս»-ի լեզուն սկզբում նույնպես աշխարհաբար է (մինչև 51-րդ էջը), որից հետո շարունակվում է գրաբար:

-Կալկաթայում հրատարակվում է Գևորգ Ավետյան Զաքարյանցի «Յանդիմանություն անձին» չափածո ստեղծագործությունը: 53 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Ստեփաննոս Սյունեցի Օրբելյանի «Ողբք և հառաչանք ի դիմաց մօրս սրբոյ աթոռոյն էջմիածնի, ... ըստ ինդրոյ վարդապետին Խաչատրոյ Կեչառեցոյ, ի ՉԽԸ թուիս մերոյ» աշխատությունը: 48 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Վեր Վարդգիսի տեան Տուհաց» երկը: 168 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Պատմություն Պարսից»-ի առաջին հատորը: 281 էջ:

Պատմության երկրորդ հատորը չի հրատարակվել:

-Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի՝ պարսկերեն բնագրից կատարված թարգմանությունամբ, հրատարակվում է «Զուարճախօս առակք պարսից» ժողովածուն: 84 էջ:

Թարգմանիչը կատարել է բազմաթիվ հավելումներ ու լրացումներ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Արսեն Բագրատունու «Տարերք հայերեն քերականության, դպրատանց տղոց համար» աշխատությունը: 309 էջ:

Նույնը՝ 1848, 1850, 1856, 1860, 1864, 1869, 1874 թթ.:

-Վենետիկում, գերմաներենից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Իռլանտիայի տնակը» վեպը: Հատոր Ա, 96 էջ, հատոր Բ, 107 էջ: («Մատենադարան մանկանց», հատ, Զ, Է)

Նույնը անփոփոխ (երկու հատորները միասին)՝ 1867 թ.:

-Վենետիկում, գրաբար Բառերի՝ աշխարհաբար (արևմտահայերեն) և հայատառ թուրքերեն մեկնաբանություններով, հրատարակվում է Մկրտիչ Ավգերյանի «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» գիրքը: 800 էջ:

Նույնը՝ նորանոր Բառերի հավելումով՝ 1865 թ.: 849 էջ:

-Վենետիկում, Մկրտիչ Ավգերյանի՝ լատիներեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Մեծին Գրիգորի առաջնոյ սրբոյ քահանայապետի կանոն հովուական»-ը: 172 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Աբրահամ Ճարյանի «Սկզբունք պատմության ազգաց, քրիստոսի թվականեն ինչվան մեր օրերը» աշխատությունը: 1131 էջ:

Զետեղված են. Արևելյան կայսրերի (Բյուզանդիա), Արևմտյան կայսրերի (Հունաստան-Հռոմ), Օստգոթերի, Լոմբարդիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Սկոտիայի, Իռլանդիայի, Հոլանդիայի, Դանեմարքայի, Շվեդիայի, Ռուսաստանի, Լեհաստանի, Գերմանիայի, Մաճառստանի (իմա՝ Հունգարիայի), Իսպանիայի, Պորտուգալիայի, Աֆրիկայի, Եթովպիայի, Չինաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի, Պարսկաստանի, Թաթարների, Արաբների, Ամերիկայի, Մեքսիկայի և Պերուի համառոտ պատմությունները:

-Վենետիկում, Մանուկ Մահտեսի Տեր-Աստվածատրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Բեռնարդեն դը Սեն-Պիերի «Պողոս և Վիրգինիա» վեպը: 330 էջ:

Նույնը՝ 1859, 1894 թվականներին, անփոփոխ:

-Զմյուռնիայում, ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Մեռլ ԴՕպինիեի «Պատմություն վեշտասաներորդ դարու բարեկարգութեանն ի Գերմանիա» աշխատության առաջին հատորը: 592 էջ:

Երկրորդ հատոր՝ 1848 թ.: 594 էջ:

-Զմյուռնիայում հրատարակվում է «Բարեգործության օգուտը» գրքույկը: 40 էջ:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Հավաքումն բրոտեսթանդ ըսված քրիստոնեից գործած հավատո դավանությանց և քրիստոնեականաց» գիրքը: 261 էջ:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Պատասխան ավետարանական քրիստոնեից դեմ հրատարակված առաջին հայտարարության» գիրքը: 96 էջ:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Պատասխան հաղորդության ճառին առաջին տետրակին» գրքույկը: 79 էջ:

Ընդդիմախոսական է, գրված «Գերմանիո եկեղեցական դիպվածները» (տե՛ս 1844 թ.) գրքի առթիվ: Գրքի հեղինակն իրեն կոչում է «Հ.Ա.Խ.»: Մեզ չհաջողվեց պարզել նրա ով լինելը:

-Վիեննայում հրատարակվում է Փիլիպոս Ճամճյանի «Նոր բառարան իտալերեն-գաղղիերեն-հայերեն-տաճկերեն լեզվաց»-ը: 1120 էջ:

-Վիեննայում, Հովսեփ Գաթրճյանի՝ հին հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Կիպրիանոս Փիրմիլիանոս Կարթագենացու «Գիրք վասն միութեան եկեղեցւոյ»-ն: 24 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Հովհաննես Չամուռճյանի «Համառոտ հնախոսություն կամ պատմություն նախնի տերությանց, որ հետո անկան ընդ տերութեամբ հռովմեայեցվոց» գիրքը: 381 էջ:

-Պոլսում, Ավետիս Կարապետյանի անգլերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆ. Ռիեյլենդի «Սկզբունք բարոյական գիտության» աշխատությունը: 287 էջ:

Նույնը՝ 1859 թ., անփոփոխ:

-Պոլսում հրատարակվում է «Յայտարարութիւն և համառոտ դաւանութիւն Հայաստանեայց Աւետարանական եկեղեցւոյ» գրքույկը: 12 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է «Հայտարարություն առաջին ընդդեմ նորադանդից» գրքույկը: 47 էջ:

Նույն տարում հրատարակվում է նաև «Հայտարարություն երկրորդ»-ը, որը մենք չենք տեսել:

-Պոլսում, հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով, հրատարակվում է «Համազգայց ընկերության հայտարար նախակարգություն» գրքույկը: 12 էջ:

-Մոսկվայում, գրաբար մեկնաբանություններով, հրատարակվում է Մկրտիչ Էմիլի «Քերականություն հայկական լեզուի» աշխատությունը: 200 էջ:

1 8 4 7

Հունվար. Վենետիկում վախճանվեց բանասեր, կենսագրական բառարանների հեղինակ Մատթեոս Մաղաքյանը (նաև՝ Մաղաք-Թեոփիլյանց): Ծնվ. 1767 թ. սեպտեմբերի 16-ին: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1876-ից:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 219:

Հունվար. «Ազգասեր»-ը (№ 73) Մեսրոպ Թադիադյանի՝ պարսկերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Սաադիի «Յիմարաց օշարակ, վարդաջուր և շաքար...» բանաստեղծությունը:

Փետրվարի 1. Պոլսում, կանանց նախաձեռնությամբ, ստեղծվում է «Բարեպաշտական ընկերություն» մշակութային-կրթական կազմակերպությունը: Գոյություն ունեցավ մինչև 1859 թ.:

«Հայաստան», Պոլիս, 1847, № 32 («Ազգ»):

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. Ա, Վիեննա, 1957, էջ 454-455:

Փետրվար. «Արշալույս արարատյան»-ը (№ 278) ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Լաֆոնտենի «Լեառն որ երկն է» առակը:

Ապրիլ. «Արշալույս արարատյան»-ը (№ 282) ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ հրատարակվում է «Փոքրիկ թռչուն» բանաստեղծությունը:

Ապրիլի 28. Սուչավայում (Ռումինիա) ծնվեց հայագետ, գրող Ռափայել Պարոնչը (Հովսեփ Պարոնյան): Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1867 թ. դեկտեմբերի 22-ից: Վախճ. 1912 թ. նոյեմբերի 29-ին, Վիեննայում:

1887 թ. մինչև մահը խմբագրել է «Հանդես ամսօրյա»-ն:

«Հանդես ամսօրյա», 1913, № 1-2 («Ռափայել Պարոնչ»):

Մայիսի 9. Պոլսում, Մատթեոս պատրիարք Չուխաճյանի նախաձեռնությամբ, ստեղծվում են ազգային Հոգևոր և Գերագույն ժողովները: Հոգևոր ժողովը պետք է զբաղվեր հայ ժողովրդի եկեղեցական-հոգևոր կազմակերպության հետ կապված հարցերով,

իսկ Գերագույն ժողովը՝ քաղաքական-հասարակական: Մայիսի 20-ին տեղի է ունեցնում հիշյալ երկու ժողովների առաջին նիստը:

Մրմրյան Հ., 19-րդ դար և Հովհաննես Պրուսացի Տերոյենց, Պոլիս, 1908, էջ 80-89:
«Ընդարձակ օրացույց», Պոլիս, 1910, էջ 311:

Մայիսի 10. Ջիդդեում (Արաբիա, այժմ՝ Սաուդական Արաբիա) վախճանվեց գրական-եկեղեցական գործիչ, բանասեր, վիպասան Իսահակ վարդապետ Գրիգորյանը (Անկյուրացի): Ծնվ. 1770 (?) թվականին:

«Յովսեփայ Գեղեցկի գրոյցք ընդ Ասանթայ ամուսնոյ իւրոյ», Երուսաղեմ, 1849 («Ազդ»)

Մայիս. «Ազգասեր»-ը (№ 90) գրաբար հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Նուագ» բանաստեղծությունը:

Մայիս. «Ազգասեր»-ը (№ 91) անգլերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Բայրոնի «Այսօր ավարտեմ 36 ամ կենացս» բանաստեղծությունը:

Հունիսի 17. Վիեննայում սկսում է հրատարակվել «Եվրոպա» (շաբաթական լուրեր) շաբաթաթերթը: 1858 թ. դառնում է երկշաբաթաթերթ, և ենթավերնագրվում է «Քաղաքական և ուսումնական կիսամյա լրագիր»: Դադարել է 1863 թ. վերջերին:

«Եվրոպա»-ի առաջին՝ փորձնական համարը հրատարակվել է 1847 թ. ապրիլի 20-ին:

Գալենքարյան Գր., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 99-107:

Հունիսի սկիզբ. Պոլսում (Սամաթիա), հայ կաթոլիկների նախաձեռնությամբ, հիմնվում է «Մեսրոպյան ընկերություն»-ը, որի նպատակն էր «նպաստել հայ մշակութային զարգացումին»:

«Հայաստան», Պոլիս, 1847, № 54:

Հունիս. «Բազմավեպ»-ը (№ 12) «Ազգային բանաստեղծություն» ընդհանուր խորագրի ներքո, անստորագիր հրատարակում է Ալիշանի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությունը:

Հուլիսի 1. Բեռլինում ծնվեց գերմանացի հայագետ, պրոֆեսոր Հենրիխ Գելցերը (Henrich Gelzer): Վախճ. 1906 թ. հուլիսի 11-ին, Ենայում (Կենտ. Գերմանիա):

«Հանդես ամսօրյա», 1907, № 1 («Ուսուցչապետ դր. Հենրիկոս Գելցեր»):

Հուլիսի 15. «Բազմավեպ»-ը (№ 14) Ղևոնդ Ալիշանի առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակում է Հովհաննես Սարկավազի (Բան իմաստութեան... առ ձագն... որ կոչի սարիկ) պոեմը:

Լրիվ վերնագիրն է. «Յովհաննու Սարկավազի իմաստասիրի եւ վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց առ ձագն որ զաղօթանոցաւ նորա ճռուողէր քաղցրաձայն, որ կոչի սարիկ»:

Հուլիսի 22. Հրատարակվում է ցարական կառավարության օրենքը՝ Կովկասի կաթոլիկ հայերին ինքնուրույն համայնք համարելու և նրանց արտոնություններն ու իրավունքները մյուս կրոններին հավասար ճանաչելու մասին:

«Մշակ», 1888, № 26... (Հայ-կաթոլիկության մուտքը Վրաստան և վրացախոս հայ-կաթոլիկները):

Հուլիս. «Ազգասեր»-ը (№ 103) հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Աւա՛ղ ստորին կարգի մահացուաց» բանաստեղծությունը:

Օգոստոսի 30. Ֆիեսսոյում (Իտալիա) վախճանվեց պատմաբան, բնագետ, թարգմանիչ (իտալերենից՝ հայերեն) Սամվել Սամսարյանը: Ծնվ. 1788 թ. օգոստոսի 2-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1810 թ.:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 220:

Սեպտեմբեր. «Ազգասեր»-ը (№ 108) Մեսրոպ Թաղիադյանի՝ սանսկրիտ բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակում է «Գիտուն եւ արքայք ոչ ևս են հաւասար» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 7. Քյաֆթառլու գյուղում (Շիրակի գավառ, այժմ՝ Արթիկի շրջան, Փանիկ գյուղ) ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, «Արարատի» (Էջմիածնի) թղթակից Սարտիրոս Տեր-Հովհաննիսյանը: Էջմիածնի միաբանության անդամ էր 1866 թ. սեպտեմբերի 4-ից: Վախճ. 1869 թ. սեպտեմբերի 24-ին, Էջմիածնում:

«Արարատ», 1869, № 6 («Մահացուցակ»):

Հոկտեմբերի 18. Ելիզավետպոլում (Հունգարիա) ծնվեց կրոնական-եկեղեցական գործիչ Ղուկաս Ավետիքյանը: Վախճ. (?):

«Հանդես ամսօրյա», 1894, № 3 («Հունգարահայ եկեղեցականները»):

Հոկտեմբեր. «Բազմավեպ»-ը (№ 19) աշխարհաբար հրատարակում է Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմը՝ «Նահապետ» ստորագրությամբ:

Նոյեմբերի 15. Մոսկվայում ծնվեց գրական-հասարակական գործիչ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, «Մշակ»-ի թղթակից Անդրեաս Երեմիայի Արծրունին: Վախճ. 1898 թ. սեպտեմբերի 10-ին, Հոհենհոննեֆում (Գերմանիա):

Աճյունը Գերմանիայից Թիֆլիս է տեղափոխվում սեպտեմբերի 29-ին և թաղվում Խոջիվանքի գերեզմանատանը (հոկտեմբերի 1-ին):

«Մշակ», 1898, № 165-179:

Նոյեմբերի 17. Գեռլայում (Հունգարիա) ծնվեց պատմաբան, բանասեր, մշակութային գործիչ, թարգմանիչ (հայերենից՝ հունգարերեն, ֆրանսերենից՝ հայերեն) Անտոն Մուլնարյանը: Վախճ. 1902 թ. փետրվարի 6-ին, Բուդապեշտում:

«Հանդես ամսօրյա», 1895, № 1, 1902, № 3:

Դեկտեմբերի 6. Ադրիանապոլսում ծնվեց խմբագիր-հրատարակիչ, բանասեր, արձակագիր Ղևոնդ Փափագյանը:

1892-1894 թթ. Գալացում (Ռումինիա) հրատարակել է «Արօր» շաբաթաթերթը, ուր հանդես է եկել «Անտոն Ռշտունի» կեղծանունով:

Մահվան վերաբերյալ մանրամասնություններ չկարողացանք գտնել. հաջողվեց միայն պարզել, որ 1912 թ. կենդանի էր և ապրում էր Գալացում:

Թեոդիկ, Տիպ ու տառ, 1912, էջ 143:

-Պոլսում (Պալաթի) հիմնադրվում է «Խորենյան ընկերություն» կրթական-հասարակական կազմակերպությունը: Գոյություն ունեցավ մինչև 1856 թ.:

Ընկերության հիմնական նպատակներից մեկն էլ համանուն վարժարանի (տե՛ս 1816 թ.) պահպանման խնդիրն էր:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատ. Ա, Վիեննա, 1957, էջ 500-502:

-Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Կոստանդին Ալեքսանդրի Բեհբուդյանը: Վախճ 1907 թ. հուլիսի 25-ին, Բեռլինում: Աճյունը տեղափոխվել է Թիֆլիս և թաղվել նույն թվականի սեպտեմբերի 16-ին:

Հիմնադրել է «Тифлисский вестник» թերթը, ուր և հանդես է եկել բազմաթիվ հոդվածներով:
«Հանդես ամսօրյա», 1939, № 1-6 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»):
«Մշակ», 1907, №№ 107, 108, 109:

-Պոլսում (Իսկյուտար) ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերեն-նից` հայերեն) Եվփիմե Օսյանը: Վախճ. 1918 թ. հուլիսի 12-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1910, էջ 92, 1921, էջ 325:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի կազմած «Կարգ ու կանոնք սուրբ Սանդուխտ դպրոցի օրհորդաց և պարոնկաց» դպրոցական կանոնադրությունը: 38 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի բանաստեղծությունների ժողովածուն «Թութակ Թաղիդեանց» խորագրով: 38 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության Ա հատորը: Զ+382 էջ:

Առաջաբանում հեղինակը ծանուցում է, որ արդեն ավարտել է II հատորը և այն պատրաստ է տպագրության: Այնուհանդերձ` II հատորը չի հրատարակվել:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Վկայաբանութիւն սրբոյն Սանդիստոյ» գրվածքը: 10 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Վէպ Վարսենկան սկայուհոյ Ադուանից» երկը: 177 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Սոս և Սոնդիպի» պոեմը: 245 էջ:

Նույնը` Պոլիս, 1871 թ.: 234 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Մեսրովբեան առաջնորդ մանկանց» դասագիրքը: 198 էջ:

-Կալկաթայում հրատարակվում է Մեսրոպ Թաղիադյանի «Ճառ դաստիարակութեան օրհորդաց» գրքուկը: 75 էջ:

-Վիեննայում հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Գիտութիւն տէրութեանց Եւրոպայ, այսինքն է նկարագիր արդի հանգամանաց Եվրոպական տէրութեանց» աշխատությունը («Մատենադարան Արամեան ընկերութեան» հատ. Բ): Ժ+422 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Թադևոս Մուրադյանի «Ճառ հուղարկավորության մեծանուն և հոյակապ Հակոբա Չելեպլո Տյուզյանց» դամբանականը: 15 էջ:

-Վիեննայում հրատարակվում է Պողոս Հովնանյանի «Պատմութիւն Տիեզերական ժողովոց որք յարևելս գումարեցան» աշխատությունը: ԽԸ+598 էջ:

-Պոլսում հրատարակվում է «Կանոնադրութիւն ընկերութեանն Ազգային ճեմարանի Իւսթիւտարու» գրքույկը: 20 էջ:

-Պոլսում վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատեան ողբերգութեան» պոեմը: 415 էջ:

-Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Թովմաս Վիլիամ Մարշալի «Քսաներկու պատճառք կաթողիկե եկեղեցին ընդունելու համար» գիրքը: 91 էջ:

Սկզբում (էջ 3-69), ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, գետեղված է Ֆրանսուա Ֆենելոնի «Թուղթ առ նորադանդ անձինս, հաղագս իշխանության եկեղեցվո» աշխատությունը:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Հովհաննես Հիսարյանի «Կարճառոտ պատկեր Նաբոլեոն Պոնաբարթեին վարուցը» աշխատությունը: 109 էջ:

-Պոլսում հրատարակվում է Համազգյաց ընկերության հայտարարությունն ու հաշիվները: 4 էջ (մեծադիր):

Վերնագիր` «Ընկերութիւն Համազգեաց հաստատեալ ի 24 փետրվար 1846, ի Կոստանդնուպոլիս»:

Հրատարակության հետ կապված այլևայլ մանրամասնությունների մասին տե՛ս **Հ. Դավթյան**, Հայ գիրքը 1801-1850 թթ.: Երևան, 1967, էջ 530:

-Զմյուռնիայում, Անդրեաս Փափազյանի թարգմանությամբ և ամերիկացի բողոքական քարոզիչ Իլիաս Բիկզի (Elias Riggs) օժանդակությամբ, սկսում է տպագրվել Աստվածաշնչի առաջին ամբողջական աշխարհաբար (արևմտահայերեն) հրատարակությունը:

Հատոր Ա, 1847, 680 էջ: Հատոր Բ, 1848, 840 էջ: Հատոր Գ, 1849, 662 էջ: Հատոր Դ,
1850, 892 էջ:

-Զմյուռնիայում, անգլերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ,
հրատարակվում է Մարկ Հապկինսի «Ապացույց քրիստոնեական հավատո»
աշխատությունը: 188 էջ:

-Զմյուռնիայում, աշխարհաբար մեկնաբանություններով, հրատարակվում է «Անգղիա-
րեն քերականություն հայազգի ուսումնասեր պատանյաց համար որ և կը պա-
րունակե շատ անգղիարեն ընտիր ոճեր» աշխատությունը: 264 էջ:

-Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ լատիներեն բնագրից կատարված չափածո թարգ-
մանությամբ, հրատարակվում է Կվինտոս Հորացիոս Ֆլակկոսի «Արուեստ քերթո-
ղական» ստեղծագործությունը: 40 էջ:

-Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ լատիներեն բնագրից կատարված չափածո թարգ-
մանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Պուբլի-
ոս Վիրգիլիոսի «Մշակականք» ստեղծագործությունը: 166 էջ:

-Վենետիկում, Եղիա Թովմաճանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ,
հրատարակվում է Տրլաֆորեի «Եղծ աղանդոյն Լութերի և Կալվինի» աշխատու-
թյունը: 188 էջ:

-Վենետիկում, հրատարակվում է Ներսես Լամբրոնացու «Խորհրդածութին ի կարգս
եկեղեցոյ և մեկնութին խորհրդոյ պատարագին» աշխատությունը: 357 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Հովհաննես Մյուհենտիսյանի «Հայտարա-
րություն վասն նորակերտ տառից» գրքույկը: 16 էջ:

1848

Հունվարի 13. Մերդինում (Թուրքիա) ծնվեց գրական-եկեղեցական գործիչ, լրագրող
Անդրեաս Չելեայանը: Զոհվեց 1915 թ., իր ծննդավայրում:

«Հանդես ամսօրյա», 1920, № 1-3 («Հայ կաթողիկե կղերին նահատակները»):

Փետրվարի 2. Քյաֆթառլու գյուղում (Շիրակի գավառ, այժմ՝ Արթիկի շրջան, Փանիկ գյուղ)
ծնվեց պատմաբան, բանասեր, ժամանակագիր, թարգմանիչ (գերմաներենից՝

հայերեն) Ներսես Ջնտոյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1873 թ. օգոստոսի 24-ից: Վախճ. 1919 թ. հուլիսի 28-ին, Կարինում:

«Բազմավեպ», 1909, № 9-10 («Հանգիստ... Ներսես գերապատիվ ճնտոյանի...»):

Ապրիլ. «Ազգասեր»-ը (№ 135) Մեսրոպ Թաղիադյանի թարգմանությամբ, հրատարակում է «Պեստալ» բանաստեղծությունը:

Բանաստեղծությունը վերաբերում է ռուս դեկաբրիստ Պավել Իվանովիչ Պեստելին:

Ապրիլ. «Արշալույս արարատյան»-ը (№ 310) Հայրապետ Թ. Սավալանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակում է Լամարթինի «Ի դիմաց կանանցն Գալապրիոյ» բանաստեղծությունը:

Մայիսի 19. Թիֆլիսում ծնվեց դերասան, լրագրող Ամիրան Մանդինյանը: Վախճ. 1913 թ. մայիսի 28-ին:

«Մշակ», 1913, № 199 («Ամիրան Մանդինյան»):

«Հանդես ամսօրյա», 1938, № 5-8 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»):

Հունիսի 2. Ներսես Աշտարակեցու կոնդակը Կոնստանդնուպոլիսի թաղամասերում գտնվող եկեղեցիների գավիթներում հայկական դպրոցներ բանալու մասին: Ուսուցիչներ էին կարգվում քահանաները, դպիրներն ու սարկավագները:

Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 248:

Հունիսի 14. Մադրասում, գրաբար, Ս.Պ. Հովհաննեսի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Բանասեր» (քաղաքական, գրասիրական և առևտրական) տասնօրյա թերթը: Դադարում է 1849 թ. հունիսի 15-ին:

Գալեմբյարյան Գ., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 109:

«Արձագանք», 1882, № 21 («Հայ պարբերական հրատարակությունները»):

Հունիսի 22. Կալկաթայում վախճանվեց բանասեր, հնդկահայ գրական-հասարակական գործիչ Սամյան Սեթը: Ծնվ. 1771 թ. սեպտեմբերի 22-ին, Մադրասում:

«Ազգասեր արարատյան», 1848, № 1, էջ 6:

Հուլիսի 1. Էրֆուրտում (Պրուսիա) ծնվեց հայագետ Հենրիխ Հյուբշմանը (Heinrich Hub-schmann): Վախճ. 1908 թ. հունվարի 28-ին, Ֆրայբուրգում (Հար. Գերմանիա):

«Հանդես ամսօրյա», 1909, № 1 («Հենրիկոս Հյուբշման»):

Հուլիս. «Արշալույս արարատյան»-ը (№ 315) հրատարակում է Ռուբեն Անդրեաս Փափազյանի «Ի հայրենասեր ջանս հայկազանց Զմիռնացուց հիմնադրաց Մեսրոպեան Վարժարանի» ներբողականը:

Օգոստոսի 23. Էջմիածնում ծնվեց հայագետ, բանասեր, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն) Բարդուղիմեոս Գևորգի Գևորգյանը (Ճուղուրյան): Էջմիածնի միաբանության անդամ: Վախճ. 1927 թ.:

«Գերեզմանի մարդ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

ԳԱԹ. Բարդուղիմեոս Գևորգյանի ֆոնդ, № 33:

Օգոստոսի 23. Վենետիկում վախճանվեց հայկաբան, բանաստեղծ, թարգմանիչ (հունարենից, իտալերենից, լատիներենից՝ հայերեն) Եղիա Թովմաճանը (Թովմաճանյան): Ծնվ. 1777 թ. դեկտեմբերի 18-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1798 թ.:

«Բազմավեպ», 1848, № 18 («Հանգիստ հավիտենից Եղիա Թովմաճան»):

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 220:

Օգոստոս. «Բազմավեպ»-ը (№ 16) աշխարհաբար հրատարակում է Ալիշանի «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ» բանաստեղծությունը, «Նահապետ» ստորագրությամբ:

Սեպտեմբերի 16. Կալկաթայում, Մեսրոպ Թաղիադյանի խմբագրությամբ, գրաբար հրատարակվում է «Ազգասեր արարատեան» (հանրապատում տասնօրագիր) թերթը:

1849 թ. սեպտեմբերի 15-ից՝ երկշաբաթաթերթ («Հանրապատում կիսամսագիր»): Դադարում է 1852 թ. հուլիսի 15-ին:

Սեպտեմբեր. «Ազգասեր արարատյան»-ը (№ 2) Մ. Թաղիադյանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Բայրոնի «Իցէ թէ տղա միամիտ էի...» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 9. Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր-հրատարակիչ Մկրտիչ Ռափայելի Փորթուկալյանը: Վախճ. 1921 թ. սեպտեմբերի 27-ին, Մարսելում:

1885-1923 (?) թթ. Մարսելում հրատարակել է «Արմենիա» եռօրյա լրագիրը:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 158:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 417:

Հոկտեմբեր. «Արշալույս արարատյան»-ը (№ 322) աշխարհաբար հրատարակում է Հովհաննես Հիսարյանի «Պատկեր բարեկարգ նորոգության մը հասարակաց կրթության» հոդվածը:

Հոկտեմբեր. «Բազմավեպ»-ը (№ 20) աշխարհաբար հրատարակում է Ալիշանի «Հրագրան» բանաստեղծությունը՝ «Նահապետ» ստորագրությամբ:

Նոյեմբերի 28. Ախալցխայում ծնվեց բանասեր, գրական-եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ Նահապետ եպիսկոպոս Նահապետյանը: Վախճ. 1906 թ. հոկտեմբերի 1-ին, Նոր Նախիջևանում:

«Արարատ», 1907, № 1 («Նահապետ եպիսկոպոս Նահապետյան»):

Նոյեմբեր. «Արշալույս արարատյան»-ը (№ 16) Ռուբեն Անդրեաս Փափագյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակում է Լամարթինի «Խորհրդածություն» բանաստեղծությունը:

Դեկտեմբեր. Պոլսում, Գրիգոր Աղաթոնի նախագահությամբ, Կարապետ Փանոսյանի, Հակոբ Կրճիկյանի, Սերվիլչենի, Գեորգ Սթիմարձյանի, Նիկողայոս Զորայանի, Մկրտիչ Աղաթոնի և այլոց անդամակցությամբ, հիմնվում է «Երկրագործական ընկերությունը»: Վերջինս նպատակ ուներ «Ծաղկեցնել երկրագործությունը հայոց մեջ, երկրագործության վրա գիրքեր և թերթերու մեջ հոդվածներ հրատարակել»:

«Հայաստան» (Պոլիս), 1848, օգոստոսի 129:

«Արշալույս արարատյան», 1849, № 325:

«Հանդես ամսօրյա», 1905, № 5 («Բժ. դոկտ. Ստեփան փաշա Ասլանյան»):

Դեկտեմբերի 18. Նիկոլայ կայսեր հրամանագիրը՝ Կովկասում ուսուցման և դասավանդման միասնական ձև մտցնելու մասին:

Ամբողջ Կովկասում ստեղծվում է մեկ ընդհանուր վարչություն՝ «Կովկասի ուսումնական շրջան» (Кавказский учебный округ), որին ենթարկվում էին բոլոր ուսումնական հաստատությունները, և որը համապատասխան կանոններ էր մշակում նրանց համար:

«Акты...», т. 10, стр. 126 (док. № 104), стр. 897 (приложение).

- Պոլսում, Թալասի (Կեսարիա) հայերի նախաձեռնությամբ, ստեղծվում է «Մամիկոնյան» ընկերությունը, որի նպատակն էր «ուսում և գիր տարածել Կեսարիայի հայոց մեջ»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1880 թ.:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Ա հատ., Կահիրե, 1937, էջ 12, 51:

- Նոր Բայազետի Ղշլաղ (այժմ՝ Արծվաքար, Կամոյի շրջան) գյուղում ծնվեց աշուղ Սա-
գային (Աղաջան Առաքելի Փարոյան): Վախճ. 1917 թ. դեկտեմբերի 29-ին:
«Սագայի և Ենգի» (երգերի ժողովածու), գրի առավ և կազմեց Շ. Գրիգորյան, Երևան, 1958, 360
էջ:
- Պոլսում (Սկյուտար) ծնվեց դերասանուհի, թատերական գործիչ Երանուհի Գարագաշը:
Վախճ. 1924 թ. մարտի 16-ին, Թիֆլիսում:
Շարասան, Թրքահայ բեմն ու իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 86-90:
- Պոլսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (հայերենից՝ թուրքերեն)
Ատոմ Հովհաննեսի Տերոյենցը: Վախճ. 1925 թ. օգոստոսին, Բելգիայում:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1926, էջ 732:
- Շուշիում (Լեոնային Ղարաբաղ) ծնվեց մանկավարժ, դպրոցական-կրթական գործիչ
Առաքել Բահաթրյանը: Վախճ. 1883 թ. փետրվարի 5-ին, Խարկովում:
«Արևելք», 1883, № 7 («Առաքել Բահաթրյան»):
«Արարատ», 1883, № 3 («Առաքել Բահաթրյան»):
Շավարշյան Ա., Առաքել Բահաթրյանի մանկավարժական գործունեությունը և հայացքները,
Երևան, 1956, 19 էջ:
- Կեսարիայում ծնվեց բանասեր, լրագրական գործիչ Տիգրան Ճիվելեկյանը: Վախճ. 1907
թ. փետրվարի 13-ին, Պոլսում (Բերա):
1885-1907թթ. Պոլսում խմբագրել է «Ճերտիեի Շարգիյե» («Արևելյան լրագիր») օրաթերթը:
1899-1908 թթ. Պոլսում հրատարակել է «Սուրհանդակ» օրաթերթը:
- Բուխարեստում ծնվեց դերասան, թատերական գործիչ Միքայել Չափրաստճյանը:
Վախճ. 1907 թ. փետրվարի 2-ին, Պոլսում:
Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1908, էջ 25:
Շարասան, Թրքահայ բեմն ու իր գործիչները, Պոլիս, 1914, էջ 127-137:
- Շուշիում ծնվեց գրական-հասարակական գործիչ, իրավաբան Ներսես Ներսեսյանը:
Վախճ. 1894 թ. մարտի 14-ին, Մոսկվայում:
«Մշակ», 1894, № 31, 35:
- Պոլսում (Խասգյուղ) ծնվեց գրող, գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, թարգ-
մանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Ռեթեոս Պերպերյանը
(ըստ այլ աղբյուրների ծնվել է 1851-ին, տե՛ս «Հայ նոր գրականության պատմու-
թյուն», հատ. 3, Երևան, 1964, էջ 720): Վախճ. 1907 թ. ապրիլի 8-ին:

«Աբայ», «Հրաչյա» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում, «Հրահատ»-ով՝ «Երկրագունդ» հանդեսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1908, էջ 256, 1913, էջ 9:
«Հանդես ամսօրյա», 1907, № 6 («Օտղկեփունջ»):
«Բազմավեպ», 1907, № 6 («Ռեթեոս Պերպերյան»):

-Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց աշուղ Ջամալին (Մկրտիչ): Վախճ. 1921 թ.:

«Հայ աշուղներ» (կազմեց Գ. Թարվերդյան, խմբ. Գ. Լևոնյանի), Երևան, 1937, էջ 204, 514:

-Նոր Բայազետում (այժմ՝ Կամո) ծնվեց գրական-հասարակական գործիչ, բանասեր, թարգմանիչ Սենեքերիմ Արծրունին: Վախճ. 1920 թ.:

Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1957, էջ 510-511:

-Վենետիկում հրատարակվում է «Հատընտիր պատմությունք վարուց օսմանեան թագաւորաց և վեզիրաց» գիրքը: 160 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է «Սկզբունք պատմության հին ազգաց» գիրքը: 231 էջ:

Տրված են

1. Հին Եգիպտոսի պատմությունը մինչև Կամբիոսի՝ Եգիպտոսին տիրելը:
2. Ասորեստանի ու Բաբելոնի պատմությունը մինչև Կյուրոսի՝ Բաբելոնը գրավելը:
3. Մարերի, Պարսիկների (Կյուրոս) և Լյուդացիների (մինչև Կրեսոսի անկումը) պատմությունը:
4. Փյունիկեցիների պատմությունը:
5. Հույների պատմությունը մինչև Օլիմպիանոս ու Մակեդոնացի:
6. Աթենացիների պատմությունը մինչև պարսիկների առաջին հարձակումը:
7. Սպարտայի պատմությունը մինչև Պելոպոնես:

-Վենետիկում հրատարակվում է Իգնատիոս Փափագյանի «Պատմութիւն եկեղեցական, հաւաքեալ յարժանահաւատ մատենագրաց»-ը: 1015 էջ:

Ընդգրկում է Քրիստոսի ծննդից մինչև XIX դարն ընկած ժամանակահատվածը:

-Վենետիկում, Եղիա Թովմաճանի՝ հին հունական բնագրից կատարված չափածո թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակվում է Հոմերոսի «Ոդիսականը»: Հատոր Ա, 380 էջ: Հատոր Բ, 447 էջ:

- Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Համագասպ Թերճիմանյանի «Համառոտ պատմություն հայոց» դասագրքի առաջին մասը: 116 էջ:
Երկրորդ մասը՝ նույն թվականին, 274 էջ:
Նույնը (երկու մասերը միասին)՝ 1858, 1860, 1864, 1871, 1880 թթ.:
- Վենետիկում, Եղիա Թովմաճանի՝ հին հունական բնագրից կատարված թարգմանությունամբ, հրատարակվում է Նիկոլո Ավանկինիի «Վարք և վարդապետություն Յիսուսի Քրիստոսի»-ն: ԺԱ+655 էջ:
- Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Փիլիպոս Ճամճյանի «Գիրք խոսակցության գաղղիերեն, անգղիերեն, հայերեն (աշխարհաբար, տաճկերեն), գերմաներեն, իտալերեն, որուն մեջը կան գործածական բառից հավաքում, խոսքի ձևով, լծորությունք, սկզբնական խոսքեր, ամեն կերպ նյութերու վրա խոսակցություններ և ստակներու համեմատություն» գիրքը: XIX+749 էջ:
- Վիեննայում հրատարակվում է Արիստակես և Ստեփանոս Ազարյանների «Նոր բառգիրք հունարեն, իտալերեն, հայերեն, տաճկերեն»-ը: 919 էջ:
- Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Ղուկաս Տերտերյանի «Գիտություն վաճառականության» աշխատությունը («Մատենադարան, Արամյան ընկերություն», հատ. Գ): Զ+420 էջ:
- Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Նիկողայոս Զորայանի «Նկարագիր ազգային դաստիարակության կամ ազգային դաստիարակության գլխավոր թերությունները» աշխատությունը: 83 էջ:
- Պոլսում հրատարակվում է Գրիգոր Փեշտիմալճյանի «Լուսաշավիղ, որ է բացատրություն Նիկիական հանգանակին, որ պաշտի ամենայն եկեղեցիս քրիստոնեից» աշխատությունը: 240 էջ:
- Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Հակոբ Տիվիթճյանի «Առաքինության հարկավորությունը, օգուտներն ու ծագումը. ճառ բարոյական» գրքույկը: 66 էջ:
- Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Հակոբ Տիվիթճյանի «Մարդկություն» գրքույկը: 41 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է «Պապականք և Բրոթեսթանդք կամ պապականներուն և բրոթեսթանդներուն մեջ եղած գլխավոր տարբերություններն» աշխատությունը: 363 էջ:

-Զմյուռնիայում հրատարակվում Դիոնիսիոս եպիսկոպոս Պալատցու (կամ՝ Գարթայցու) «Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից նորոյ կտակարանի, այբբենական կարգաւ շարադասեալ» աշխատությունը: 604 էջ:

-Կալկաթայում, Թադևոս Իսաչիկ Ավետումյանցի՝ անգլերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Օլիվյեր Գոլդսմիտի «Փոխերեցն Վեկֆիլդայ» վեպը: 312 էջ:

1 8 4 9

Հունվարի 14. Ծնվեց հայագետ, մանկավարժ Կարապետ Հովսեփի Կոստանյանը: Վախճ. 1920 թ. հունվարի 13-ին:

ԳԱԹ, Կոստանյանի ֆոնդ, № 82:

Հունվար. «Արշալույս արարատյան»-ը (№ 329) Տիգրան Սավալանյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակում է Լամարթինի «Երգ առասական» բանաստեղծությունը:

Փետրվարի 13. Պաշպալովում (Հունգարիա) վախճանվեց թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Անդրեաս Ծովիզյանը: Ծնվ. 1796 թ. հուլիսի 7-ին, Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1791 թ.:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 220:

Մարտի 1. Շահրիար գյուղում (այժմ՝ Հոկտեմբերյանի շրջան) վախճանվեց եկեղեցական գործիչ, բանասեր Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը: Ծնվ. 1799 թ. մայիսի 20-ին:

Սեդրակյան Ար., Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, Պետերբուրգ, 1898:

«Акты...», т. ІО, стр. 831.

Մարտի 25. Եղեգիս գյուղում (Խարբերդի գավառ) ծնվեց բանասեր, բանաստեղծ Սահակ Խապայանը: Վախճ. 1939 թ. նոյեմբերի 8-ին, Անթիլիասում:

1871-1877 թթ. Երուսաղեմում խմբագրել է «Միօն» ամսագիրը:

«Արձագանք», 1892, № 32, («Սահակ Խապայան»):

«Բազմավեպ», 1939, № 11-12 («Հանգիստ... Սահակ Խաչատրյանի»):

Մարտ. «Բազմավեպ»-ը (№ 6) «Նահապետ» ստորագրությամբ հրատարակում է Ալիշանի «Մասիսու սարերն» բանաստեղծությունը:

Ապրիլ. «Արշալույս արարատյան»-ը (№ 335) աշխարհաբար հրատարակում է Նիկողայոս Ջորայանի «Արգո բարեկամ» հոդվածը:

Ընդդիմախոսություն է ուղղված նույն թերթի № 333-ում տպագրված Հովհաննես Չամուռճյանի «Մարդու բարոյական շտկելու միջոցը ո՞րն է» հոդվածի դեմ:

Ապրիլ. «Բազմավեպ»-ը (№ 7) հրատարակում է Մուրադյան վարժարանի աշակերտ Մկրտիչ Պեշիկթաշյանի «Դիցազունք հայոց» բանաստեղծությունը:

Ապրիլի 13. Վարդաբլուր գյուղում (Լոռու գավառ) ծնվեց լրագրող (մասնագիտությամբ բժիշկ) Հարություն Աբելյանը: Վախճ. 1921 թ. հոկտեմբերի 11-ին, Ցյուրիխում:

«Հանդես ամսօրյա», 1922, № 2-3 (պրոֆ. Հարություն Աբելյան):

Ապրիլի 13. Փարիզում, Նահապետ Ռուսինյանի ջանքերով, Խաչատուր Պարտիզյան-յանի, Խաչատուր Միսաքյանի, Հարություն Պալյանի, Կարապետ ՌԻթուջյանի, Ծերենցի և այլոց ուժերով, ստեղծվում է կրթական-դաստիարակչական «Արարատյան ընկերությունը»:

«Արշալույս արարատյան», 1850, № 366:

Մայիսի 15. Թիֆլիսում ծնվեց գրական-հասարակական գործիչ, քննադատ, հրապարակագիր, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն և հայերենից՝ գերմաներեն) Աբգար Հարությունի Հովհաննիսյանը: Վախճ. 1904 թ. ապրիլի 15-ին, Բաթումիում (աճյունը տեղափոխվել է Թիֆլիս և ապրիլի 20-ին թաղվել Խոջիվանքում):

1876-1881 թթ. Թիֆլիսում հրատարակել է «Փորձ» հանդեսը, 1882-1898 թթ.՝

«Արձագանք» լրագիրը: Այստեղ էլ հոդվածներ է գրել «Մալխաս» կեղծանվամբ:

«Ռուբենյի» կեղծանունով ստորագրել է «Քանդած օջախ»-ի՝ իր կատարած գերմաներեն թարգմանությունը:

«Լուսա», 1904, № 2 («Աբգար Հովհաննիսյան»):

«Հանդես ամսօրյա», 1939, № 1-6 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»):

Մայիսի 15. Պետերբուրգում վախճանվեց գրական-հասարակական գործիչ, թարգմանիչ (հայերենից՝ թուրքերեն և թուրքերենից՝ հայերեն) պրոֆեսոր Հովհաննես Ամիդին: Ծնվ. 1798 թ. հուլիսի 3-ին:

Լենինգրադի Սմոլենսկյան հայկական գերեզմանատան արխիվ, «Ամիդի»:

Հունիսի 9. Յարական կառավարության հրամանագիրը Երևանի նահանգ ստեղծելու մասին:

Երևանի նահանգի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի, Օրդուբադի, Նոր Բայազետի և Ալեքսանդրապոլի գավառները: Նահանգապետը նշանակվում կամ փոխվում էր թագավորի հրամանով, իսկ գավառապետները՝ նահանգապետների:

Иваненко В., Гражданское управление Закавказьем..., Тифлис, 1901, стр. 377.

Հուլիսի 1. Մինգապուրում, գրաբար, Գրիգոր Գալստյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «ՌԻսումնասէր» (լրագիր քաղաքական, գրականագիտական և առևտրական) երկշաբաթաթերթը: Դադարում է 1853 թ. մայիսի 27-ին:

«Հանդես ամսօրյա», 1896, № 12 («Մարգիս բժիշկ Միքայելյան-Շիրխոռյանց»):

Հուլիս. «Ազգասեր արարատյան»-ը (№ 348) աշխարհաբար հրատարակում է «Գուրգեն և Հուրան» պատմվածքը:

Դեկտեմբեր. «Բազմավեպ»-ը (№ 23) հրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշյանի «Զբօսանք Արտաշիսի առաջնոյ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 27. Պոլսում ծնվեց հռչակավոր դերասան, բանաստեղծ, թատերագետ Պետրոս Հերոնիմոսի Ադամյանը: Վախճ. 1891 թ. հունիսի 2-ին:

«Մշակ», 1891, № 63:

Հացունի Վ., Քերթվածք և կենսագրություն Պետրոս Ադամյանի, Վենետիկ, 1895, 225 էջ:

Զարյան Ռ., Ադամյանի կյանքը, Երևան, 1961, 534 էջ:

Զարյան Ռ., Ադամյան, Արվեստը: Երևան, 1960, 414 էջ:

-Պոլսում, Գևորգ Գրիգորյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Լրագիր Տերու-թյանն օսմանյան» շաբաթաթերթը: Դադարում է 1850 թ.:

«Հայտարար գիր լրո մեծի տերության օսմանյան» շաբաթաթերթի շարունակությունն է (տե՛ս 1840 թ. դեկտեմբերի 3):

-Շուշիում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս Սպանդար Ամիր-ջանի Սպանդարյանը: Վախճ. 1922 թ. հուլիսի 28-ին Վիսրադենում (Կենտ. Գերմա-նիա):

1883-1917 (?) թթ. հիմնադրել և խմբագրել է «Նոր դար» քաղաքական և գրական լրագիրը: Թղթակցում էր «Մշակ»-ին՝ «Յունիուս» կեղծանվամբ:

Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1923, էջ 417:

Սպանդարյան Ա., Երկեր, հատ. 1, 2, Երևան, 1959:

-Պոլսում ծնվեց պատմաբան, աշխարհագրագետ, գրական գործիչ Գևորգ Ասլանյանը:
Վախճ. 1922 թ. հուլիսի 30-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1923, էջ 417:

-Տիգրանակերտում ծնվեց մանկավարժ, լրագրող Ավետիս Սուրենյանը: Վախճ. 1926 թ.
դեկտեմբերի 27-ին, Պոլսում:

1890-1893 թթ. Հովհաննես Փալազաշյանի հետ մեկտեղ, Պոլսում խմբագրել է «Ծաղիկ» շաբաթաթերթը: 1909 թ. «Ծիածան» թերթը:

-Թիֆլիսում ծնվեց դերասանուհի Սաթենիկ Չմշկյանը (Եղիսաբեթ Տեր-Աբրահամյան):
Վախճ. 1907 թ. դեկտեմբերի 30-ին:

«Մշակ», 1907, № 198, 1908, № 1:

«Արարատ», 1908, № 1 («Սաթենիկ Չմշկյան»):

-Մարզվանում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հայագետ Կարապետ Հակոբյանը: Վախճ. 1926 թ. հունիսի 3-ին, Լոնդոնում:

Թղթակցել է անգլիական «Թայմս» թերթին «An Armenian» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1927, էջ 625:

-Վիեննայում, Միսիթարյան միաբանության վարդապետների ուժերով, հիմնադրվում է ինքնուրույն և թարգմանական հատորիկներից բաղկացած՝ «Կրթական և զբոսայի տետրակներ» ընդհանուր խորագիրն ունեցող մատենաշարը: Հարատևում է մինչև 1860 թ. և այդ ժամանակահատվածում լույս է տեսնում քառասուներկու անուն ստեղծագործություն (վերահրատարակությունները չհաշված):

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Խոսք վասն հայրենասիրության» գրքույկը («Կրթական և զբոսայի տետրակներ», հատ. Ա): 36 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1862 թ.:

-Վիեննայում հրատարակվում է Հովսեփ Գաթըրճյանի «Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչև ցմեր ժամանակս աշխատության Ա հատորը («Հին պատմութիւն»): Ի+820 էջ:

Բ հատոր («Միջին պատմութիւն»), 1852 թ.: Ի+608 էջ:

-Վիեննայում, Փիլիպպոս Ճամճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Պիեր Կլարիս Ֆլորիանի «Տոլբիթ» ստեղծագործությունը: Ժ+13 էջ:

-Վիեննայում, Հովսեփ Գաթըրճյանի՝ հին հունարեն բնագրից կատարված թարգմանությամբ և առաջաբանով, հրատարակվում է «Քաղուածոյք ի թարգմանութեանց նախնեաց, հանդերձ յոյն բնագրաւ» ժողովածուն (համատեղ տրված են հայերեն և հունարեն տեքստերը): Ժ+496 էջ:

-Մոսկվայում հրատարակվում է Մկրտիչ Էմինի կազմած «Ընտիր հատուածք քաղեալք ի գրոց նախնի և արդի մատենագրաց հայոց, հանդերձ բառագրովք ի հայկականէ ի ռուսաց բարբառ» ժողովածուն: 405 էջ:

Ժողովածուում զետեղված որոշ գործեր թարգմանել և առաջին անգամ ընթերցողներին է ներկայացրել կազմողը:

-Մոսկվայում, Հարություն քահանա Կյոկչյանցի՝ ռուսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, ռուսերեն-գրաբար համատեղ տեքստերով, հրատարակվում է «Ծաղկաքաղ յառակացն Քոիլովի, Տմիթրիևի և Խեմնիցերի» ժողովածուն: 147 էջ:

-Պոլսում, Նիկողայոս Չորայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Հիսուսի համառոտ պատմություն»-ը: 70 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Նիկողայոս Չորայանի «Քաղաքական տնտեսության վրա քանի մը տեղեկությունք» տնտեսագիտական աշխատությունը: 352 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է «Կանոնադրություն Մամիկոնյան ընկերության Վարդ-Պատրիկյանի վարժարանին Թալասու, ի Կեսարիա» գրքույկը: 30 էջ:

-Երուսաղեմում հրատարակվում է Իսահակ վարդապետ Գրիգորյանի (Անկյուրացի) «Յովսեփայ Գեղեցկի գրոյցք ընդ Ասանթայ ամուսնոյ իւրոյ» վիպասանությունը: 358 էջ:

Հեղինակի մահվան պատճառով գիրքը հրատարակության է պատրաստել և լեզվա-ոճական որոշ սրբագրություններ կատարել Տ.Ճ.Թ. Մավալանյանը:

-Վենետիկում հրատարակվում է Աբրահամ Ճարյանի «Պատմութիւն Գաղղիացոց» երկհատոր աշխատությունը: Հատոր Ա, 595 էջ: Հատոր Բ, 520 էջ:

Ընդգրկում է Ֆրանսիայի պատմությունը սկզբնական ժամանակներից մինչև Նապոլեոն Ա-ի անկումը:

-Վենետիկում, Մկրտիչ Ավգերյանի՝ լատիներեն բնագրից կատարած թարգմանությամբ, հրատարակվում է Լուկիոս Աննեոս Սենեկայի ճառերի ժողովածուն՝ «Ճառք իմաստասիրականք»: 680 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Վրթանես Պոտուրյանի «Պատմություն Գենովափեի դիցուհվոյն Բրիտանվո» աշխարհաբար, չափածո ստեղծագործությունը: 133 էջ:
Նույնը՝ 1858 և 1872 թթ., անփոփոխ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Ամբրոսիոս Գալֆայանի «Պատմություն հին և նոր ազգաց» աշխատության Ա հատորը (ընդգրկում է հրեաների, բարելացիների, ասորեստանցիների, եգիպտացիների, փյունիկեցիների, հույների և ասորասելենկյանների ընդհանուր պատմությունը): 512 էջ:

Երկրորդ հատոր (ունի «Համառոտ պատմություն հռովմայեցվոց» ենթավերնագիրը): Ընդգրկում է հին Հռոմի պատմությունը մինչև Թեոդոս Մեծի մահը: 1850, 452 էջ:

Երրորդ հատոր (ունի «Համառոտ պատմություն միջին դարու» ենթավերնագիրը): Ընդգրկում է Թեոդոս Մեծի մահվանից մինչև Կոստանդնուպոլսի գրավումը թուրքերի կողմից ընկած ժամանակը: 1850, 524 էջ:

Չորրորդ հատոր (ընդգրկում է Պոլսի առումից մինչև ֆրանսիական 1789 թ. հեղափոխությունն ընկած ժամանակը): 1851, 495 էջ:

Հինգերորդ հատոր (ընդգրկում է 1789 թ. ֆրանսիական հեղափոխությունից մինչև 1852 թ. երկրորդ կայսրությունն ընկած ժամանակը), 1851, 237 էջ:

-Վենետիկում հրատարակվում է «Աշխարհագրութիւն բնական, ուսումնական և քաղաքական» գիրքը: 368 էջ:

Նույն թվականին հրատարակված «Ատլաս աշխարհացոյց պատկերաց աշխարհագրական քարտեզների ներածականն է, որի հեղինակը Ղ. Ալիշանն է (տե՛ս «Հայկական աշխարհագիտություն...», Վենետիկ, 1881, էջ 53, «Բազմավեպ», 1849, № 20, հոկտեմբերի 15):

-Կալկաթայում հրատարակվում է Թովմաս Խոջամալյանի «Պատմութիւն Հնդկաց»-ը, որը սրբագրել և հրատարակության է պատրաստել Մեսրոպ Թաղիադյանը: 148 էջ:

Թաղիադյանն այս գիրքը դիտում է որպես իր «Պատմութիւն հին Հնդկաստանի...» աշխատության (տե՛ս 1841 թ.) շարունակությունը: Այդ պատճառով էլ հիշյալ ուսումնասիրությունն իր վրա ունի «Մասն երկրորդ» նշումը:

-Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է «Հավաքումն վկայությանց սուրբ գրոց» գիրքը: 618 էջ:

Հունվարի 2. Երևանում իր գոյությունն է սկսում Հռիփսիմյան իգական երեքդասյա դըպրոցը: Դպրոցը սկզբում ուներ 21 աշակերտուհի (հետագայում՝ 37), առաջին տեսուչն էր Աննա Ալեքսեյի Բյերկվիստը: Գործել է մինչև 1884 թ.:

"Кавказский календарь", 1851, стр. 604.

«Սովետական մանկավարժ», 1959, № 9 («Երևանի դպրոցները 1828-ից մինչև 80-ական թթ.»):

Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 97-99:

Հունվարի 3. Պոլսում ծնվեց քանասեր Արշակ Ալթունյանը: Վախճ. 1904 (?) թ.:

Տեր-Աստվածատրյանց Հ., Բառարան հայ կենսագրությանց, Թիֆլիս, 1904, էջ 51-52:

Մարտ. «Արշալույս արարատյան»-ը (№ 359) հրատարակում է Հովհաննես Հիսարյանի «Թատրոն» հոդված-գրախոսականը:

Մարտ. «Արշալույս արարատյան»-ը (№ 361) հրատարակում է Խաչատուր Աբովյանի «Աշխարհիկ բարբառ երևանցի հայոց» գրվածքը:

Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Երևան, 1947, էջ 34-35:

Մարտ. «Բազմավեպ»-ը (№ 6) հրատարակում է Ալիշանի «Բա՛մ. փորոտան» (լրիվ վերնագիրն է. «Զօրացն հայոց, երթալով ընդ Վահանայ Մամիկոնենոյ ի Շաւարշական դաշտին վրէժք. օ՛ն անդր յառաջ») բանաստեղծությունը:

Մայիսի 1. Նիկոմեդիայում, Աբրահամ Մուրադյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հայրենասեր» (լրագիր քաղաքական, ազգային և բանասիրական) շաբաթաթերթը: Դադարում է 1853 թ. հուլիսի սկզբներին:

Մայիսի 28. Հռոմի՝ Հավատի տարածման ժողովը («Պրոպագանդա ֆիդելի») բացասաբար է արտահայտվում Պոլսի «Համազգյաց ընկերության» մասին և կոնդակով Անտոն Հասունյանից պահանջում է խափանել նրա գոյությունը (տե՛ս 1846 թ. մարտի 17):

Պերպերյան Ավ., Պատմութիւն հայոց..., Պոլիս, 1871, էջ 352-356:

Հունիսի 14. Պոլսում (Գում-գաբու) ծնվեց քանասեր, թարգմանիչ (գրաբարից՝ աշխարհաբար) Սահակ Արապյանը:

Սահվան վերաբերյալ մանրամասնություններ չկարողացանք գտնել: Հայտնի է, որ 1914 թ. դեռ կենդանի էր և ապրում էր Պոլսում:

Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1915, էջ 121:

Հունիս. «Բազմավեպ»-ը (№ 12) հրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշյանի «Վիրգիլի ի Պինդոսէ առ Բագրատունին մեծ» բանաստեղծությունը:

Հունիս. «Ազգասեր արարատյան»-ը (№ 50) Մեսրոպ Թաղիադյանի՝ անգլերեն բնագրից կատարված չափածո թարգմանությամբ, հրատարակում է Բայրոնի «Տեսի քեզ, ո՛ր հյարտասուս...» բանաստեղծությունը:

Հուլիս. «Ազգասեր արարատյան»-ը (№ 53) հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Հարց» բանաստեղծությունը:

Հուլիս. «Բազմավեպ»-ը (№ 14) հրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշյանի «Երգ հայրենի (նմանողություն)» բանաստեղծությունը:

Հուլիս 13. Պոլսում (Պեշիկթաշ) ծնվեց բանասեր, լեզվաբան, բանաստեղծ Հակոբ Գուրգենը (Հակոբ Անտոն Պիպեռճյան): Վախճ. 1914 թ. հուլիսի 12-ին:

Թղթակցում էր «Մանգումեի էֆքյար»-ին՝ «Գուրգեն» կեղծանվամբ: «Սմբատ» և «Վահե» կեղծանուններով հանդես էր գալիս «Արևելյան մամուլ»-ում: «Արետ» կեղծանվամբ ստորագրում էր 1898-1904 թթ. «Արևելք»-ում տպագրվող իր հոդվածները:

Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, 1911, էջ 252, 1915, էջ 397:
«Հանդես ամսօրյա», 1914, № 1 («Այլևայլ»):

Հուլիսի 14. Օբերգետտինգեն գյուղում (Հար. Գերմանիա) ծնվեց գերմանացի հայազետ Պաուլ Ֆետտերը: Վախճ. 1906 թ. սեպտեմբերի 21-ին, Տյուբինգենում (Հար. Գերմանիա):

«Հանդես ամսօրյա», 1906, № 12 («Կենսագրական»):

Օգոստոսի 25. Թիֆլիսում ծնվեց դերասան, Վրացական ՍՍՀ ժող. արտիստ (1925 թ.-ից) Գևորգ Զաքարի Տեր-Դավթյանը: Վախճ. 1934 թ. նոյեմբերի 13-ին:

«Խորհրդային Հայաստան», 1934, №№ 262, 264:

Օգոստոս. «Ազգասեր արարատյան»-ը (№ 55) հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Ի Կալկաթա, օգոստոսի 1850» երգիծական բանաստեղծությունը՝ «Հեթում» ստորագրությամբ:

Օգոստոս. «Արշալույս արարատյան»-ը (№ 370) հրատարակում է Ռուբեն Անդրեաս Փափազյանի «Արշալույսն ի բարերարս իւր» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 1. Թիֆլիսում, Գաբրիել քահանա Պատկանյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Արարատ» (լրագիր քաղաքական, առևտրական և բանասիրական)

շաբաթաթերթը: Շարունակվում է մինչև 1851 թ. ապրիլի վերջը և հրատարակվում է 33 համար:

Գալեմքյարյան Գ., Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 119-121:
«Հայ նոր գրականության պատմություն», «Գաբրիել Պատկանյան», հատ. 1, Երևան, 1962, էջ 502-527:

Հոկտեմբեր. «Արշալույս արարատյան»-ը (№ 375) հրատարակում է Ազգար Ադամի «Տաղ» («Ով որ չունի մեկ սիրական աշխարհումը») բանաստեղծությունը:

Նոյեմբեր. «Արշալույս արարատյան»-ը (№ 376) սկսում է հրատարակել Կարապետ Շահնազարյանի «Պատասխանիք գրաբանութեան պարոն Իվանովի» հոդվածը:

Շարունակվում է № 378-380-ում: Ընդդիմախոսություն է, Թիֆլիսի «Кавказ» լրագրի № 36-37-ում հրատարակված Իվանովի "К происхождению армянского народа" հոդվածի:

-Բերդ գյուղում (Շամշադինի շրջան) ծնվեց թատերական գործիչ, դերասան, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Մկրտիչ Ավայանը (Մելիք-Ավայան): Վախճ. 1909 թ. մայիսի 18-ին, Բաքվում:

ԳԱԹ, Ավայանի ֆոնդ:

-Թալասում (Կեսարիա) ծնվեց բանասեր, հայագետ, բանահավաք Տրդատ Պալանը: Վախճ. 1923 թ. հուլիսի 2-ին, Աթենքում:

«Հանդես ամսօրյա», 1923, № 11-12 («Տրդատ եպ. Պալան»):
Թեղդիկ, Ամենուն տարեցույցը, 1925, էջ 323:

-Երևանում ծնվեց գրական-հասարակական գործիչ Մարիամ Մելիք-Աղամալյանը: Վախճ. 1895 թ. հուլիսի 17-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1895, № 81 («Մարիամ Մելիք Աղամալյան»):

-Թալասում ծնվեց մանկավարժ, բանասեր Շավարշ Եսայանը:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Օշին» կեղծանվամբ:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարո, Ա հատոր, Կահիրե, 1937, էջ 1200-1201:

-Պարտիզակում ծնվեց բանասեր, գրական գործիչ Վահան Տեր-Մինասյանը (Պարտիզակցի): Վախճ. 1904 թ. հոկտեմբերի 18-ին:

1878-1879 թթ. Թիֆլիսում խմբագրել և հրատարակել է «Մանկավարժական թերթ» ամսագիրը:

«Մշակ», 1904, № 230, 235 ...:

-Ծնվեց մանկավարժ, դրամատուրգ Մակար Տեր-Սարգսյանը: Վախճ. 1912 թ.:

«Փառնակես» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Զմշկյան Գ., Իմ հիշատակարանը, Երևան, 1953, էջ 191:

-Օնվեց (1850?) մանկավարժ, բառարանագիր, արձակագիր Աբիսողոմ Հովհաննիսյանը:

Վախճ, 1914 թ. հունվարի 29-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1914, № 23 («Աբիսողոմ Հովհաննիսյան»):

-Օնվեց գրական-եկեղեցական գործիչ Աստվածատուր վարդապետ Տեր-Հարությունյանը:

Վախճ. 1902 թ. օգոստոսի 18-ին, Չարեքում (Գանձակի շրջան):

«Արարատ», 1902, № 11-12:

-Սանգիբարան գյուղում (Փերիայի նահանգ, Պարսկաստան) ծնվեց աշուղ Պետրոսը (Պետրոս Նուրիջանյան): Վախճ. 1932 թ.,

Մինասյան Լ.Գ., Փերիայի հայ աշուղները, Թեհրան, 1964, էջ 53:

-Վենետիկում հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Հոգեսնունդ որդեկաց սիրելեաց աշակերտեցելոց ի Ռափայելեանն վարժարանի, յաւարտ ուսման մարզից» չափածո ճառը: 26 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Առ ազնուափայլ սեպուհն Աբրահամ Աղանուրեան, ի թոռն իւր Ալեքսանդրոս, յառաջնում տարեկանի ծննդեան» չափածո ներբողը: 13 էջ:

-Վենետիկում հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Ի սէր նախահայաստանեայց գրգարանին Ադենայ, որ ի Բնագաւառն Հայաստանեայց» պոեմը: 24 էջ:

-Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ֆենելոնի «Տելեմաքայ արկածք» վիպասանությունը: 692 էջ:

Նույնը՝ 1863, 1882 թթ., որոշ ուղղումներով:

-Վենետիկում, Ամբրոսիոս Գալֆայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Ֆենելոնի «Հրահանգք դաստիարակության աղջկանց» գիրքը: 334 էջ:

Նույնը՝ Փարիզում, 1856 թ. ֆրանսերեն-հայերեն համատեղ տեքստերով:

-Վենետիկում, Ռափայել Թրյանցի՝ իտալերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ռոզմինիի «Ֆելիչե Ռոպոլին ետքի օրերը» վիպակը: 136 էջ:

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Մինաս Բժշկյանի «Համառոտ նկարագիր վարուց երևելի արանց» կենսագրական բառարանը: 966 էջ:

-Վենետիկում վերահրատարակվում է «Երզնկայ Կողբացոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ Աղանդոց» գիրքը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Արսեն Բագրատունու: 334 էջ:

Ինչպես վերնագիրը, այնպես էլ հրատարակության տեղը, թվականը, էջաքանակը նույնն է, ինչ 1826 թ. հրատարակությունը: Մակայն ապացուցված է, որ վերջինս իրոք հրատարակվել է 1850 թ. (տե՛ս **Ա. Ղազիկյան**, Հայկական նոր մատենագիտություն..., էջ 553):

-Վենետիկում աշխարհաբար հրատարակվում է Արսեն Բագրատունու «Նոր այբբենաբան և հեգերեն, հայերեն, շիտակ հեգել սորվելու» դասագիրքը: 84 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Ղուկաս Տերտերյանի «Յովհաննա դ'Արքկամ Օռլեանի օրիորդին պատմությունը» ստեղծագործությունը («Կրթական և զբոսալի տետրակք», հատ. Ը): 98 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1893 թ.:

-Վիեննայում, աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Բարոյական վեպեր, կամ տղայոց սիրտը կրթելու հարմար պատմություններ» ժողովածուի Ա հատորը: 84 էջ:

Նույնը՝ 1899 թ.:

Բ հատ. 1851, 83 էջ: Գ հատ. 1852, 115 էջ: Դ հատ. 1856, 1899 թթ., 120 էջ: Ե հատ. 1857, 1899 թթ., 630 էջ:

-Վիեննայում, «Բարոյական թատրոնի տղոց կրթության համար» ընդհանուր խորագրի ներքո, աշխարհաբար հրատարակվում է Միաբանության թատերագիրների ժողովածուի Ա հատորը: 103 էջ:

Բ հատոր՝ 1852, 132 էջ:

-Վիեննայում աշխարհաբար հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Մարտինոս Լուրերին վարուց և նորոգության պատմություն»-ը: 418 էջ:

-Վիեննայում, ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, «Կրթական և զբոսալի մատենադարան» մատենաշարով, հրատարակվում է «Քրիստափոր Կոլումբոս, կամ Ամերիկայի գտնվիլը» գիրքը: 204 էջ:

Նույնը՝ 1880 թ., 290 էջ:

-Վիեննայում հրատարակվում է Եփրեմ Չագրճյանի «Նոր բարբառարան համառոտ հայերեն-տաճկերեն» աշխատությունը: 465 էջ:

-Պոլսում արևմտահայերենով հրատարակվում է Գասպար Թույսուզյանի «Հետազոտություն ճշմարտության» աշխատությունը: 69 էջ:

-Պոլսում աշխարհաբար հրատարակվում է Անդրեաս Պոպովիչի բժշկական-փիլիսոփայական աշխատությունը՝ «Արվեստ երկայնակեցության, որ է առողջ, երկայնու երջանիկ ապրելու ուսմունքը» խորագրով: 400 էջ:

-Պոլսում, Նիկողայոս Ջորայանի՝ ֆրանսերենից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Քրիստափոր Շմիդտի «Աղեքսանդր կամ Ռուպենսոն գերմանացի» վիպակը: 132 էջ:

-Պոլսում հրատարակվում է Հակոբ պատրիարք Կոստանդնուպոլսեցու «Թուղթ խրատական բանից, առ ամենայն հոգևոր առաջնորդս» գրքույկը: 44 էջ:

Նույնը՝ 1851 թ., անփոփոխ:

Լրիվ վերնագիրն է. «Թուղթ խրատական բանից, առ ամենայն հոգևոր առաջնորդս և առ համայն եկեղեցական դասս կարգավորաց հովվաց եկեղեցվոյ, և առ աշխարհիկ իշխանս և առհասարակ բոլոր ժողովուրդս»: Գրքի սկզբի մասը (էջ 1-30), գրված է գրաբար, իսկ շարունակությունը՝ արևմտահայերեն:

-Պոլսում հրատարակվում է Մկրտիչ Խրիմյանի «Հրաւիրակ Արարատեան» չափածո ստեղծագործությունը: 96 էջ:

Նույնը՝ 1876 թ., Զ+136 էջ:

-Պոլսում (Արապյանների տպարանում) վերահրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 384 էջ:

Նույնը՝ նույն թվականին (Հովհ. Մյուհենդիայանի տպարանում), 370 էջ:

- Պոլսում հրատարակվում է «Տաղարան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ» ժողովածուն:
365 էջ:
- Մոսկվայում հրատարակվում է Մկրտիչ Էմինի «Վեպք հնոյն Հայաստանի» ուսումնասիրությունը: 98 էջ:
- Կալկաթայում, Հովհաննես Սարգսյանցի՝ անգլերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ամբրոս Սերլայի «Ճանապարհ երջանկութեան» ստեղծագործությունը: 106 էջ:
- Կալկաթայում, Խաչիկ Ավետումյանցի՝ անգլերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է «Ռուպենսոն համառոտ» վիպակը:
- Կալկաթայում հրատարակվում է «Երախայրիք Ս. Սանդուխտ դպրոցի, թարգմանեալ և շարադրեալ յաշակերտաց նորին, ի պատիվ ազգիս հայոց» ժողովածուն: 25 էջ:
- Զմյուռնիայում հրատարակվում է «Հոգևոր երգեր» ժողովածուն: 460 էջ:

Ոտանավորներից շատերի տակ դրված են հայ կամ օտարազգի թարգմանիչների կամ հեղինակների անունները: Դրանք, անշուշտ, ժամանակի Զմյուռնիայի բողոքական գործիչներն են: Ամենից հաճախ հանդիպում ենք. Elias Riggs, C.C. Tracy, Գ. Շմավոնյան, Հո. Շմավոնյան, Հ. Գայայան, Ս. Մանուկյան, Մ. Քիրեքճյան, ինչպես նաև Նար-Պեյ և Հ. Պեշկոթուրյան:
- Երուսաղեմում հրատարակվում է Պետրոս Բերդումյանցի «Մեկնութիւն թղթոյն Պողոսի առ Եփեսացիս» աշխատությունը: 804 էջ:
- Թիֆլիսում հրատարակվում է Ալեքսանդր վարդապետ Արարատյանի «Ճակատ անմահից, զեղերական արկածից Յովբայ արդարոյն, հազներգութեամբ չափաւորեալ ի համբերութիւն և ի խրատ» չափածո երկը: 169 էջ:
- Փարիզում, Գաբրիել Այվազովսկու՝ ֆրանսերեն բնագրից կատարված թարգմանությամբ, հրատարակվում է Լամարթինի «Ալփոնսոսի Լամարթինեայ ի կիսանդրին իւր, քերթուած առ կոմսն դ' Օրսէ» բանաստեղծությունը (համատեղ տրված են ֆրանսերեն և հայերեն տեքստերը:
- Պետերբուրգում հրատարակվում է Մկրտիչ Բերոյանի «Սկզբունք հայկական լեզվի» ("Начальная основания гайканского языка") աշխատությունը: 390 էջ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան	1
1801	55
1802	57
1803	59
1804	62
1805	63
1806	64
1807	65
1808	67
1809	69
1810	70
1811	75
1812	76
1813	80
1814	82
1815	84
1816	88
1817	90
1818	93
1819	96
1820	98
1821	101
1822	104
1823	106
1824	109
1825	113

1826	118
1827	123
1828	128
1829	131
1830	135
1831	142
1832	145
1833	150
1834	153
1835	157
1836	161
1837	165
1838	169
1839	174
1840	179
1841	187
1842	193
1943	198
1844	207
1845	212
1846	218
1847	226
1848	232
1849	239
1850	245
Բովանդակություն	252